

ՀՀ ՓԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСКУССТВ НАН РА
INSTITUTE OF ARTS NAS RA

ԿԱՆԹԵՂ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐ

КАНТЕХ
НАУЧНЫЕ ТРУДЫ

KANTEGH
ARTICLES

3 (64)



«ԱՍՈՂԻԿ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2015

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Կ 203

Կ 203 Կանթեղ: Գիտական հոդվածներ /Գլխ. խմբ.՝ Ա.Ասատրյան. - Եր.: Ասողիկ,
272 էջ:

Գլխավոր խմբագիր՝ Աննա Գ. ԱՍԱՏՐՅԱՆ

Խմբագրական խորհուրդ

**ԱՂԱՍՅԱՆ Արարատ, ԱՎԵՏԻՍՅԱՆ Պավել, ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ Լիլիթ, ԳԱՍՊԱՐՅԱՆ
Սեդա, ԶԱՔԱՐՅԱՆ Անուշավան, ԽԱՌԱՏՅԱՆ Ալբերտ, ՀԱՍՐԱԹՅԱՆ Մուրադ,
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հենրիկ, ՂԱԶԱՐՅԱՆ Վիգեն, ՄԵԼՔՈՆՅԱՆ Աշոտ, ՄԿՐՏՉՅԱՆ
Մանե (գլխավոր խմբագրի տեղակալ), ՅՈՒՐԵՎԱ Տատյանա, ՆԵՐՍԻՍՅԱՆ Աշոտ,
ՊՈԿՐՈՎՍԿԱՅԱ Նադեժդա, ՍԱՀԱԿՅԱՆ Արմեն,
ՍԱՐԳՍՅԱՆ Լևոն, ՕՀԱՆՅԱՆ Քաջիկ**

Главный редактор Анна Г. АСАТРЯН

Редакционная коллегия

**ԱԳՏԻՅԱՆ Արարատ, ԱՎԵՏԻՍԻՅԱՆ Պավել, ԱՐՅՈՒՄԱՆԻԱՆ Լիլիթ, ԱՏՐԱՅԱՆ Մուրադ,
ԳԱՏՔԱՐԻՅԱՆ Սեդա, ԶԱԿԱՐԻՅԱՆ Անուշավան, ԿԱՅԱՐԻՅԱՆ Վիգեն, ՄԵԼԿՈՆԻՅԱՆ Աշոտ,
ՄԿՐՏՉԻՅԱՆ Մանե (заместитель главного редактора), ՆԵՐՏԻՍԻՅԱՆ Աշոտ, ՕԳԱՆԵՏԻՅԱՆ
Գենրիկ, ՕԳԱՆԻՅԱՆ Կադժիկ, ՍԱՀԱԿՅԱՆ Նադեժդա, ՏԱԿԱՐԻՅԱՆ Արմեն, ՏԱՐԳՏԻՅԱՆ Լևոն,
ԽԱՐԱՏԻՅԱՆ Ալբերտ, ԵՐԵՎԱՆԻ Տատյանա**

Editor-in-Chief Anna G. ASATRYAN

International Editorial Council

**ԱԳՏԻՅԱՆ Արարատ, ԱՐՅՈՒՄԱՆԻԱՆ Լիլիթ, ԱՎԵՏԻՍԻՅԱՆ Պավել, ԳԱՏՔԱՐԻՅԱՆ Սեդա,
ԳԱՅԱՐԻՅԱՆ Վիգեն, ԽԱՏՐԱՅԱՆ Մուրադ, ԽՈՎՀԱՆՆԻՍԻՅԱՆ Գենրիկ, ԽԱՐԱՏԻՅԱՆ Ալբերտ,
ՄԵԼԿՈՆԻՅԱՆ Աշոտ, ՄԿՐՏՉԻՅԱՆ Մանե (Deputy Editor-in-Chief), ՆԵՐՏԻՍԻՅԱՆ Աշոտ,
ՕԳԱՆԻՅԱՆ Կադժիկ, ՍԱՀԱԿՅԱՆ Արմեն, ՏԱՐԳՏԻՅԱՆ Լևոն,
ԵՐԵՎԱՆԻ Տատյանա, ԶԱԿԱՐԻՅԱՆ Անուշավան**

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ՀՈԳԻԻ ԹԵՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԵՎ ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀԱՅԱՐՓԻ ԽԱՂԱՏՐՅԱՆ

Հայրենիքի ողբերգության շահարկման թեմայում, ահավասիկ, տեսնում ենք հոգու անփոխարինելի դերը:

Հովհաննես Թումանյանը և Վահան Թեքեյանը պատանեկան տարիքից կանգնեցին հոգին և նյութը եզրագծող սահմանների առջև՝ պատրաստ քննելու և տարբերակելու դրանք: Թեքեյանի պատանեկան մտածումների մեջ առկա էին հայրենիքի կարոտով, երազներով ապրող, բնագուրկ, ճնշված, աստանդական, ցավ ունեցող հայ մարդու մասին մտքերը:

Հիրավի «...երկու բանաստեղծների ներգործության խնդիրը հայեացքի ուղղության մեջ պետք է փնտռել, այլ գրական նիւթի, սևեռուն գաղափարների խորագնայ, փոխճանաչուած մշակման ու արտայայտման համահունչ եղանակների ընտրության ակունքներում:

Դրանք Արուեստագետի եւ Աստուծոյ անժամանցելի յարաբերութիւններն են, Հայրենիքի քաղաքական ճակատագրի ու Բանաստեղծի կոչումի ներքին հակոտնեան, մարդկային գութի խորխորատը: Իսկ այս ամէնի ակունքը տանում էր դէպի ոգու յայտնութիւն՝ դէպի «*հայու հոգին*», դէպի դարասկիզբ, դէպի 10-20-ական թթ.»¹:

Հովի. Թումանյանի խոր միտքն անընդհատ դեգերում է ժողովրդի պատմության և արդիականության կամուրջների ոլորտում՝ ամբողջացնելու երազանքը, գտնելու ժողովրդի հոգեբանության հարազատ տարրերը: Այս որոնումների մեջ էլ հառնեց Մեծ հույսի գաղափարը:

Բնորոշ է, որ Հովի. Թումանյանն ազգային գոյության մաքառումներում փարեց ոչ թե պատմության վերախմբագրված լեգենդին՝ Երկիր Նաիրիի տեփլներին, ոչ թե հանձնվեց հոգեբանական ներաշխարհի կաղապարված

¹ **Դանիէլեան Սուրէն**, Միջուկի տրոհումը / Սփիւռքահայ գրականութեան պատմութիւն, գիրք 1, Ներածութիւն, Երևան, «Զանգակ 97» հրատ., 2011, էջ 71:

ոյութանքին, այլ նայեց առաջ, ժողովրդի տարերքին, կյանքի հորդաբուխ ընկալմանը: Այս որոնումների մեջ հառնեց կենդանի Հայաստանը, որն իր համար Արևմտյան Հայաստանի ապրող էությունն էր:

Նրա առթած վիշտն արդեն «հոգու» ծառայություն ունի: Վիշտը բանաստեղծի հոգին է, գուցե և սրտի հոմանիշը, որ տապակվում է մեծ վշտի մեջ, լողում անհույս:

Մերթ զայրացկոտ ծառս է լինում
Մինչև երկինք կապուտակ,
Ու մերթ հոգնած սուզվում, իջնում
Դեպի խորքերն անհատակ²: /գրվել է 1902-ին/

Թումանյանը, դարասկզբի քաղաքական թոհուրոհն աչքի առաջ ունենալով, տեսնելով հայ ժողովրդի անհանգրվան դժոխային վիճակը, իրատեսորեն ընկրկում է. վախ կար գալիք մուգ օրերի հանդեպ, որն անհիմն չէր.

Ոչ հատակն է գտնում անվերջ
Ու ոչ հասնում երկնքին...
Հայոց վշտի մեծ ծովի մեջ
Տառապում է իմ հոգին³:

Նա ուզում էր շրջել բանաստեղծության հունը, «գրանցել» լավատեսության բաբախումը, բայց ելքերի բացակայությունը թույլ չի տալիս դա անել: Իրեն մնում է վեհորեն խոնարհվել մեծ վշտից ծնունդ առած տառապանքին: XX դարի տասական թթ. արդեն շատ բան ուրիշ է, ինչպես ինքը կասեր՝ «շուտ է գալիս ծանր քարը...»⁴: Հայրենիքի ու կորսվող ժողովրդի հարաբերությունը հանճարեղ բանաստեղծը լուծում է իմաստուն վեհությանմբ, ողբերգության դիմագրավության աստվածային ներուժով:

Եվ իսկապես, եթե հետադարձ հայացք նետենք մեր բանաստեղծությանը, կտեսնենք, որ այն ավեափ լցված է վշտով: Այս առումով Հովի. Թումանյանն ուզում է ցույց տալ, որ բանաստեղծը զոհաբերում է ժողովրդի վշտին

² Թումանյան Հովի., ԵԼԺ, 10 հատորով, հ. 1, Երևան, ԳԱ հրատ., 1988, էջ 200:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 275:

և հոգու տառապանքին իր բանաստեղծական բոլոր իդեալները: Հրդեհումի այս պահին և մեկընդմիջտ նա ժողովրդի, հայրենիքի հետ է:

1918 թ. Վ. Թեքեյանը գրեց իր «Հայու հոգին» ծրագրային բանաստեղծությունը, որի ակունքները հասնում են առաջին հերթին Հովհ. Թումանյանի գրական շահագրգռություններին: Բայց որքա՞ն ջրեր էին հոսել, չմոռանանք, որ «Հայոց վիշտը» բանաստեղծությունը գրվել էր 15 տարի առաջ՝ 1903-ին:

«Հայու հոգին» ցույց է տալիս, որ Թեքեյանն իրերի ու երևույթների մեջ թափանցելու բացառիկ կարողություն ունի: Ժամանակին, երբ պոլսահայ գրականությունը (քննադատությունը) թնդում էր Վարուժանի ու Սիամանթոյի բոցաշունչ բանաստեղծություններով, Թեքեյանը դեռ գտնվում էր, այսպես ասած, ստվերում:

Եղեռնից հրաշքով փրկված մտավորական սերնդի բեկորներն ամեն ինչ արեցին փրկելու «Հայ հոգին»՝ ջանալով հուսահատության ու անորոշության մատնված սերնդակիցներին վերադարձնել իրենց իսկ աչքերի առջև հոշոտված երագի դժվար վերագտնվող փշրանքները, որովհետև հավատում էին, որ «Արուեստի մեջ, որքան կրօնքին՝ կը պատրաստովին հոգիները»:

Այդ օրերին կար այն մտավախությունը, որ եղեռնի սարսափներից ուշքի չեկած, հուսահատ, լլկված սերունդը կարող է նյութապաշտությամբ տարվել՝ նոր պայմաններին համակերպվելու վազքից շնչահեղձ երագելու ժամանակ ու տրամադրություն չլինելու պատճառով: Այս փաստը Թեքեյանին ու իր սերնդակիցներին մղեց բոլոր ճակատների վրա (գրականություն, մանկավարժություն, հրապարակախոսություն, լրագրավարություն և այլն) գործելով փրկել **Հայ Հոգին**:

Ըստ Թեքեյանի՝ «Յեղերը ոչ միայն կը յիշովին իրենց արուեստով, այլև կ'ապրին անով: Արուեստը որքան կ'արտայայտէ անոնց հոգին՝ նոյնքան ալ կը կազմէ զայն, եւ կը տարածէ, եւ հաղորդակից կ'ընէ տիեզերքի, մարդկութեան ու ժամանակի հոգիին: Ինչ ալ ըլլայ արուեստի էութիւնը՝ իր ընկերային արդիւնքը վիճելի չէ»⁵:

Հավատալով արվեստի մոգական ուժին՝ Թեքեյանը գիտեր, որ հենց դրանով պետք է կրթել ու ազնվացնել, հուսադրել ու հպարտություն ներարկել անկայմ ու անհանգրվան մնացած, աշխարհի տարբեր անկյուններում ու որբա-

⁵ Դոկտ. **Ղազարեան Վաչէ**, Մամուլի մեջ տպուած եւ անտիպ երկեր ու նամակներ Վահան Թեքեյանէն, Պէյրուֆ, 1987, էջ 65:

նոցներում պատահ-պատահ եղած Հայ Հոգին: Ճշմարիտ բանաստեղծն ու բանաստեղծությունը ժամանակին հասցված ամենալավ սպեղանին են:

Թեքեյանը գրում էր. «Բանաստեղծությունը նախ զգացում մը, յետոյ գրական կտոր մը եւ գրական սեռ մըն է: Կեանքը նախ այն ուժն է, որ էակը կ'ապրեցնէ, յետոյ այն ժամանակաշրջանը, որ էակին ծնունդէն մինչեւ անոր մահը կը տեւէ: Եւ ինչպէս բանաստեղծութիւններ կան առանց բանաստեղծութեան, այնպէս ալ կեանքեր կան՝ գրեթէ առանց կեանքի...»⁶:

Թերևս այստեղ արժե հիշատակել, որ ոգու ու հոգու հարաբերակցված որոնումը հայ բանաստեղծության մեջ դարերի հոլովոյթ ունի: Ուշադրություն դարձնենք քերթվածի առաջին վեցյակին: Առաջին երկու տողում Վ. Թեքեյանը հենց հարցն իրեն է ուղղում.

*Ի՞նչ է Հոգին, Հայր՛ւ Հոգին՝ հարցուցի մերթ ինքզինքիս,
Եւ մերթ լացաւ ու մերթ խնդաց իմ հոգիս,
Անյո՛յս լացաւ եւ յոյսերով խօլարշաւ
Մըրըրկաթեւ մինչեւ ի փա՛ռք խոյացաւ,*

*Որմէ՛ յետոյ նորէն ըսի փխրագին՝
Ի՞նչ է Հոգին, Հայր՛ւ Հոգին ...»⁷:*

Նախ, Վ. Թեքեյանի հարցումն ունի անբռնազբոս, անհավակնոտ նպատակ և նյութը բացելու ճանապարհ է:

Պատասխանը հնչում է «ներսից». հոգու բռնկման պաթոնն է դա, որ, նկատենք, միշտ ուղեկցել է մեր գրականությանը, սակայն քչերն են հասել անկեղծության ու ազնվության խտացումի նման հոգեվիճակի: Բանաստեղծները կարողանում են բացահայտել ոգին, բայց հայի հավաքական հոգու ճանաչումն ավելի դժվարին, տքնալից աշխատանք է: Ինչպես Հովի. Թումանյանի մոտ, այստեղ ևս տեսնում ենք «հոգու» վայրէջքն ու խոլարշավ թռիչքը, որոնք չափում են վշտի համապարփակ մեծությունը.

*Եւ մերթ ճերմակ ու վարդագոյն՝ թերթ առ թերթ
Կը փարածուի երեսն ամբողջ երկնքին,*

⁶ «Չուարթնոց», 1929, թիւ 6-7, էջ 243-244:

⁷ **Թեքեան Վահան**, Կէս-գիշերէն մինչեւ արշալոյս, Փարիզ, 1920, էջ 40:

Անհո՛ւն Հոգին, Հայր՛ւ Հոգին...⁸:

Երկրորդ վեցյակում «երկնային» որոնումներն են: 1915-ի աղետը ծանրագույնն է. կորուսյալ հայ հոգիները երևում են իբրև ճերմակ ու վարդագույն ամպի ծվեններ, որ ծավալվում են «երեսն ամբողջ երկնքին»:

Հոգու որոնման մեջ մենք մեզ հետ պետք է մինչև վերջ անկեղծ լինենք: Մենք կարողանո՞ւմ ենք բացահայտել ոգին. ի՞նչ է սիրելը. հոգին գտնելը որոնման միջոցով:

Այս վեցյակում Աստծու խորհուրդն ամպի տեսքով է գալիս: Երկնքի վրա տարածված երկգույն ամպի թերթերը մեր նահատակների, հատկապես երեխաների ու կանանց մաքրությունն են խորհրդանշում: Համանման մի պատկեր կա անցյալ դարի 60-ական թթ. Ջարեհ Խրախունու «Լեռն ի վեր» բանաստեղծության մեջ, որտեղ երկնքում հրեշտակները նահատակված մեր երեխաներն են («Ուր մորթուած աղանիներն հրեշտակի կը փոխուին»⁹):

Երկու ազնվագույն բանաստեղծները կարող են հայտարարել, թե իրենց հոգին է այնտեղ, ժողովրդի հավաքական հոգին:

Մի՞թե աշխարհը չի տեսնում մեր վիշտը, երկնքով մեկ տարածված ամպերի թերթերը: Չուսպ, գրեթե աննկատ բողբոջ Վ. Թեքեյանի բանաստեղծությանը հաղորդում է պատարագի հնչյունների համազոր վեհություն:

Մենք հասել ենք XX դար, բայց նորից պրպտում ենք, թե ինչ է հոգին: Հոգին հայ երգն է, ո՞ր է այն, և ինչո՞ւ մենք ևս մեկ անգամ գտնելու ենք ցեխի մեջ կիսաթաղ, հոգնած, բայց Սուրբ Հոգուն կարեկիր:

Բանաստեղծը վշտի մեջ պայքարի ու հավատի, գոյության գաղափարն է առաջ տանում նորոյա փրկության ճանապարհը ամրագրելով այստեղից ածանցված այլ երգերի մեջ ևս («Պիտի խնդանք», «Հպարտութիւն», «Ըմբոստութիւն սրբազան», «Յարութեան շունչն է սիս» և այլն): Եզրափակիչ ակորդը հնչում է այսպես.

*Բայց զերդ զինուոր մ՛որ կը կռուի անդադար՝
Յեխն ալ, կ՛ըսեն զայն աղտոտելի չի կրնար,
Եւ ընդմէջէն իր այդ ցեխին, սարսազին
Կը համբուրեն Հայու յոգնած, Սո՛ւրբ հոգին...¹⁰:*

⁸ Նույն տեղում:

⁹ **Խրախունի Ջարեհ**, Տոնազանգ, Երևան, «Ձանգակ 97» հրատ., 2007, էջ 34:

¹⁰ **Թեքեյան Վ.**, նշվ. աշխ.:

Մինչդեռ ազգային ոգու քննության ճանապարհին 1910 թ. ապրիլին «Հայի ոգին» հոդվածում Թումանյանը փորձել է բնութագրել մեր ազգային կյանքի ու բնավորության յուրահատուկ գծերն ու նրանց պատմական աղբյուրները: Այդ կապակցությամբ հիշատակվում են նաև հոգևոր և նյութական կյանքի այնպիսի երևույթներ, որոնք ուղղակի գծով կապվում են Նարեկացու անձի և խոսքի հետ:

Այն միտքը, թե որտեղ պետք է որոնել հայ ազգային ոգու ամենից բնորոշ դրսևորումները, շարունակվում է այսպիսի հոետորական հարցերով, որոնք նաև հասարակական պատասխաններ են: Արդյոք «ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» խոսողի երկնաչու պաղատանքների մեջ, թե՞ «Վերք Հայաստանի» հայրենասիրական ողբի հառաչանքների ու մորմոքների մեջ¹¹:

Անշուշտ, Նարեկացու «Մատյան»-ի ու Աբովյանի «Վերք»-ի զուգադրությունը պատահական չէր: Թումանյանն այդ երկու գրքերը համարում էր հայ ժողովրդի ազգային տառապանքի և ձգտումների բարձրագույն արտահայտություններ՝ մեկը հոգևոր մղումների անհաս բարձունքներում, իսկ մյուսը՝ ազգային-ազատագրական մաքառումների մեջ:

Ժամանակագրական առումով հոգու քննության եզրափակիչ ակորդը դնում է Վահան Թեքեյանը՝ 1932-ին գրելով «Հայ հոգիին» քերթվածը, որ տարիների հեռվից, սակայն այդ ձմեռային ցուրտ օրվա պես լավ է հիշում այն (1915 թ. ապրիլի 24 – Հ. Խ.) գարնանային առավոտը: Ի՞նչ է խորհում քերթողը.

Ես կը խորհիմ ճնճղուկներու ճըւոցին,
Սոխակներու դայլայլիկին ցայգային՝
Որ անվըհատ կոճղին զարթումն ոգեցին:

Հեղեղներո՛ւն, կայծակներո՛ւն անհամար
Ես կը խորհիմ, որ իր զարթմանը համար
Արմատներուն քրքրեցին հողը խաաար¹²:

Ճնճղուկներն ու սոխակները մեր այն մտավորականներն էին, որոնց համար 1915-ի գարունը վերջինն էր:

¹¹ Տե՛ս Թումանյան Հովհ., ԵԼԺ 10 հատորով, հ. 6, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 194-195:

¹² Թեքեյան Վ., Սէր, Փարիզ, 1933, էջ 43:

Ու չնայած տեղի ունեցածը, ինչպես Թեքեյանն է բնորոշում «ահաւոր բան մը այնտեղ», սակայն հայ հոգին իրավունք չուներ հանձնվելու, իսկ ծառի քրքրված արմատի, «բունի գորշ մոխիրէն հըրափայլող» այն կայծերը բանաստեղծի հոգու լույսերն են.

Եւ այդ լոյսին, այդ լոյսին մէջ կը տեսնեմ,
Բացուած ընդդէմ ովկէանին ժանտաղէմ,
Հայ հոգիին հողմակոծ ծա'ղը վըսեմ...¹³:

Երկու բանաստեղծների մոտ ցավը նույնն է՝ եղերական 1915 թվականը և այնտեղ դեգերող հայի տանջահար հոգին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայրենիքի ողբերգության շահարկման թեմայում, ահավասիկ, տեսնում ենք հոգու անփոխարինելի դերը:

Հովհաննես Թումանյանը և Վահան Թեքեյանը պատանեկան տարիքից կանգնեցին հոգին և նյութը եզրագծող սահմանների առջև՝ պատրաստ քննելու և տարբերակելու դրանք: Թեքեյանի պատանեկան մտածումների մեջ առկա էին հայրենիքի կարոտով, երազներով ապրող, բնազուրկ, ճնշված, աստանդական, ցավ ունեցող հայ մարդու մասին մտքերը:

Հովհ. Թումանյանի խոր միտքն անընդհատ դեգերում է ժողովրդի պատմության և արդիականության կամուրջների ոլորտում՝ ամբողջացնելու երազանքը, գտնելու ժողովրդի հոգեբանության հարազատ տարրերը: Այս որոնումների մեջ էլ հառնեց Մեծ հույսի գաղափարը:

Բանալի բաներ – Հովհաննես Թումանյան, Վահան Թեքեյան, հոգի, հայրենիք, Հայ Հոգին, հայ, ողբերգություն, բանաստեղծ, ժողովուրդ, վիշտ, Ապրիլի 24:

ТЕМА ДУШИ АРМЯНИНА В ПРОИЗВЕДЕНИЯХ ВААНА ТЕКЕЯНА И ОВАННЕСА ТУМАНЯНА

АЙАРПИ ХАЧАТРЯН

В развитии темы трагедии Родины роль души незаменима.

Великие армянские поэты 20-го века Ованнес Туманян и Ваан Текеян с

¹³ Նույն տեղում:

юношеских лет стремились осмыслить и распознать грань, разделяющую душу и материю. Юношеские думы Текеяна были переполнены мыслями об угнетенном и страдающем, лишенном родного очага армянине, живущем мечтаниями и тоской по Родине.

Недремлющая мысль великого Туманяна постоянно блуждала в глубинах истории армянского народа, пытаясь найти на стыке событий прошлого и настоящего и свести воедино составляющие психологии родного народа. В бездне этих поисков зародилась Великая Надежда.

Ключевые слова – Ованнес Туманян, Ваан Текеян, душа, Родина, армянин, поэт, трагедия, народ, Великая Надежда, скорбь, 24-е апреля.

THE ARMENIAN SPIRIT IN VAHAN TEKEYAN'S AND HOVHANNES TUMANYAN'S OEUVRES

HAYARPI KHACHATRYAN

The invincible role of the soul in the time of the tragedy of the motherland. The two great Armenian poets of the 20th century, Vahan Tekeyan and Hovhannes Tumanyan since youth were on the dividing line between the spiritual and material, disposed to consider and differentiate one from the other. In young Tekeyan prevailed thoughts about the Armenian who longs for his homeland, is deprived of it, distressed, lives by dreaming, homesick and suffering pain.

Tumanyan's profound thoughts were engaged in his people's history and in the possibilities to work out the dream of his time in order to find out the elements of his people's psychology. In his pursuits the Great Hope was born.

Key words – Hovhannes Tumanyan, Vahan Tekeyan, the tragedy of the Motherland, the soul of the nation, tragedy, the history of Armenian people, the Great Hope, poet, psychological elements.

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱԶՄԱԲԱՂԱԴՐԻՉ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ-ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՆԱՐ-ԴՈՍԻ ԱՐՁԱԿԻ ԼԵԶՎԻ

ՍԱԹԵՆԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

Հիմնվելով հայ քերականագիտության մեջ կատարվող ավանդական դասակարգման վրա (որի համաձայն առանձնացվում են բբն-ների ենթաստորադաս, համաստորադաս, տարաստորադաս, հանրաստորադաս տիպերը)՝ այս հոդվածում փորձել ենք կատարել բբն-ների կառուցվածքային-գործառական յուրահատկությունների ուսումնասիրություն՝ ըստ Նար-Դոսի արձակի լեզվի: Բբն-ները, մասնավորապես բբհն-ները, նկարագրվում և տեսակավորվում են **ըստ նախադասությունների գերադաս անդամների քանակի և ըստ ստորադասության աստիճանի:**

Նախքան վերոնշյալին անդրադառնալը անհրաժեշտաբար պետք է նշել **նախադասության՝** որպես շարահյուսական միավորի, մասնավորապես բն-ի տեսությանը վերաբերող մի հանգամանք:

Ակադեմիկոս Է. Աղայանը, Ս. Աբրահամյանը, Գ. Գարեգինյանը, Բ. Վերդյանը, Ա. Պապոյանը, Խ. Բաղիկյանը և ուրիշներ նախադասությունը սահմանելիս առաջնորդվում են գրեթե նույն սկզբունքներով: Դրանցում նախադասությանը որպես էական հատկանիշներ վերագրվում են խոսքի նվազագույն միավոր լինելու, **ստորոգում** և ավարտուն հնչերանգ ունենալու, նաև այլ հատկանիշներ: Այս առումով նշելի է հատկապես Գ. Զահուկյանի բնորոշումը. «Նախադասության էական կողմը ստորոգումն է. առանց ստորոգման նախադասությունը լոկ բառակապակցություն է»¹: Մ. Աբեղյանը ևս այդ կարծիքին էր. «Բանն ինքը մենակ է՝ խոսքը կամ նախադասությունը»²:

Սակայն բոլոր այդ սահմանումներն ըստ էության վերաբերում են պարզ կամ «միաստորոգումային նախադասություններին»: Բն-երը թեև մեկ միտք են արտահայտում, բայց ունեն երկու կամ ավելի ստորոգումներ:

¹ **Զահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, 1974, էջ 333:

² **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Ը, Երևան, 1985, էջ 601:

Բն-ը սահմանելիս վերոնշյալ հեղինակները նշում են, որ այն կազմված է երկու և ավելի բաղադրիչ պարզ նախադասություններից, որոնք փոխկապակցված են քերականորեն, իմաստով, հնչերանգով և արտահայտում են մեկ միտք:

Բ. Վերոյանը գրում է. «Բարդ նախադասության բաղադրիչները պարզ նախադասություններ են պայմանականորեն բաժանելի, սակայն էապես իրարից անբաժան, փոխադարձաբար միմյանցով պայմանավորված, իբրև լեզվամտածողական մի ամբողջության անքակտելի բաղադրիչներ» կամ «Բարդ նախադասությունը դիալեկտիկական մի ամբողջություն է իր մասերի հակադրամիասնությամբ»³:

Համադրելով սահմանումները՝ նկատում ենք, որ հակասություններ են առաջանում պարզ ու բարդ նախադասությունների սահմանումների միջև.

1) մի կողմից՝ **մեկ** ստորոգյալ = **մեկ** միտք = **պարզ** նախադասություն

2) մյուս կողմից՝ **երկու** (և ավելի) ստորոգյալ = **մեկ** միտք = բարդ նախադասություն:

Հակասություն է առաջանում, երբ ասվում է, որ բարդ նախադասությունը կազմված է երկու (և ավելի) պարզ նախադասություններից. նախադասությունը կազմված է նախադասությունից:

Կասկած չկա, որ բն-ն պարզ նախադասությունների մեխանիկական գումար չէ, և բն-ների բաղադրիչ «նախադասություններն» էլ ըստ էության նախադասություններ չեն, թեկուզ և ունեն (կամ կարող են ունենալ) ենթակա, ստորոգյալ, լրացումներ:

Բն-ների բաղադրիչները միասին արտահայտում են այն, ինչ չի կարող արտահայտվել բաղադրիչներից յուրաքանչյուրի առանձին գործածության դեպքում: Այսինքն՝ կարևոր է իրավիճակը, իրադրությունը, որում գործածվում են դրանք: Եթե այլ իրավիճակում դրանք ինքնուրույն գործածվեն, ապա կհամարվեն նախադասություն:

Բն-ները, քերականորեն և տրամաբանորեն միմյանց հետ կապակցված լեզվական միավորների ամբողջություն լինելուց բացի, ունեն միասնական հաղորդակցային արժեք:

³ Վերոյան Բ., Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն, Երևան, 1970, էջ 14, 18:

Եվս մեկ նկատառում: **Բն-ի սահմանումից դուրս են բբն-ները**, քանի որ սահմանումը վերաբերում է միայն երկբաղադրիչ բն-ներին:

Թերևս շեշտենք, որ մեր նպատակը լոկ սահմանումների հակասությունների, թերությունների վերհանումն է և ոչ դրանց վերջնական լուծումներ առաջարկելը: Ուստի և բաց թողնելով բն-ների դասակարգումը՝ հատուկ կանդրադառնանք միայն բբն-ներին:

Վերադառնալով խնդրո առարկային՝ հիշենք, որ բազմաբաղադրիչ բարդ նախադասություն եզրույթը հայ քերականագիտության մեջ առաջին անգամ գործածել է Ս. Աբրահամյանը. Մանուկ Աբեղյանը գործածել է բազմաբարդ, Գևորգ Ջահուկյանը՝ հայ լեզվաբանություն, Եղիշե Չարենցը՝ հարաբարդ եզրույթը:

Բբն-ները, ինչպես բն-ները, իրենց հերթին լինում են համաստորդասական (բբին) և ստորադասական (բբսն):

«Բբին է կոչվում այն նախադասությունը, որն իր կազմում ունենում է 3 կամ ավելի համադաս բաղադրիչներ կամ ավելի այնպիսի համադաս բաղադրիչներ, որոնցից մեկը, երկուսը կամ բոլորն աչքի են ընկնում կապակցությունների բազմազանությամբ»⁴:

Բբն-ներն առավել հատուկ են բանավոր խոսքին: Մարդիկ որևէ իրադարձության, երևույթի նկարագրության, մտքերի փոխանակման ժամանակ հիմնականում դիմում են ոչ թե բին-ներին կամ բսն-ներին, այլ գերազանցապես բբն-ներին: Վերջիններս մանրամասն նկարագրությունների, տարբեր առարկաների ճշգրիտ ու ճշմարտացի նկարագրության համար առավել մեծ հնարավորություններ են ընձեռում, քան երկբաղադրիչ նախադասությունները:

Գեղարվեստական գրականությունն էլ իր հերթին հիանալի դաշտ է բբն-ների իրացման համար: Բայց նախադասությունների այս կամ այն տեսակի նախընտրությունն առաջին հերթին գրողի լեզվին, նրա անհատական ոճին քնորոշ առանձնահատկությունն է:

Որպես օրինակ բերենք հայ դասականներից Նար-Դոսի լեզուն: Այդ լեզուն դյուրընկալելի է կանոնավոր, նույնիսկ ամենաբժախնդիր ընթերցողի համար: Ի դեպ, **գրական և ժողովրդախոսակցական լեզուների տարբերությունը**, որ հայերենի դեպքում բավականին զգալի է, **Նար-Դոսի արձակում հասցվել է նվազագույնի**: Գրողի այս նվաճումը և հատկապես լեզվամտա-

⁴ **Պապոյան Ա., Բաղիկյան Խ.**, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2003, էջ 377:

ծողությունը նկատի ունենալով՝ կարող ենք բն-ների, մասնավորապես **բբն-ների**՝ Նար-Դոսի արձակում **գործածության հաճախականությունն** ընդհանրացնել **որպես առհասարակ հայոց լեզվում այդ տիպի նախադասությունների գործածության հաճախականություն**: Նար-Դոսի արձակի բնորոշ առանձնահատկություններից է բբն-ների բացարձակ գերակշռությունը բարդ, առհասարակ նախադասության նաև մյուս տեսակների նկատմամբ: Բբն-ները մեծամասնություն են թե՛ հեղինակային, թե՛ կերպարների խոսքուգրույցում: Մեր կարծիքով այն, որ գրողը նախընտրում է բբն-ները, բխում է նախ նրա լեզվամտածողությունից, ապա նաև իր ընտրած գրական ուղղությունից: Նար-Դոսն այսպես կոչված հոգեբանական ռեալիզմի ներկայացուցիչ է: Եվ բնական է, որ վերջինս հոգեբանական դժվարին ու ծայրահեղ իրավիճակներում հայտնված իր հերոսների հոգեբանական հակասությունները, մարդկային բարդ փոխհարաբերություններն ու տրամադրությունները նկարագրելու համար դիմեր հատկապես բբն-ներին:

Նշենք, որ բբն-ների կապակցությունը նման է բին-ներին, սակայն առաջիններն աչքի են ընկնում կապակցությունների բազմազանությամբ:


Առաջին՝ ըստ բաղադրիչների արտահայտած իմաստային հարաբերությունների՝ տարբերվում են 1) նույնաբնույթ, որոնցում առկա է շարահյուսական հարաբերություններից միայն մեկը, 2) տարաբնույթ բբն-ներ: Երկրորդ՝ ըստ բաղադրիչների կառուցվածքային արտահայտության ներկայացնելիս հաշվի է առնվում այն հանգամանքը, թե բաղադրիչներից յուրաքանչյուրը մեկ պարզ նախադասություն է, թե բաղադրիչներից մեկը, երկուսը կամ բոլորը բարդված են ստորադասական կապակցությամբ:

Նախ խոսենք նույնաբնույթ և տարաբնույթ նախադասությունների մասին:


Նույնաբնույթ բբն-ներում առկա է բին-ներին բնորոշ շարահյուսական հարաբերություններից միայն մեկը: Հիմնականում գերիշխող են միավորական, հավելական կամ տրոհական հարաբերությունները:

Տարաբնույթ բբն-ների առանձնահատկությունը երկբևեռ լինելն է: Բևեռներից մեկը կարող է լինել մեկ, մյուսը՝ երկու և ավելի, կամ երկու բևեռն էլ կարող են կազմված լինել երկու և ավելի նախադասություններից.

1) Ես կգսպեմ ինձ, ² Ես կքաշվեմ ահա այն անկյունը, ³ կուչ կգամ ծեծված շան պես ⁴ և ամենևին չեմ մոտենալ քեզ, ⁵ միայն մի գնա: (Պ., 458)




2) ¹ Մանեն զգվանքով ու ատելությամբ նայեց եղբոր ծիծաղից դողդողացող կախ ընկած կզակին ² և, առանց այլևս մի խոսք արտասանելու, դիմեց դեպի իր սենյակը, ³ բայց կիսաճանապարհին կանգ առավ հանկարծ ⁴ և դառավ դեպի Վահանը: (Պ., 471)




Վերոնշյալներից թվաքանակով անհամեմատ ավելի շատ են այն **բբինները**, որոնց բաղադրիչներից մեկը, երկուսը կամ բոլորը **բարդված են ստորադասությամբ**: Սրանց նվազագույն կաղապարն է կամ :

Կախված բբինների բաղադրիչների շարադասությունից՝ թվերի հերթականությունը կարող է այլ լինել: Օրինակներ՝

1) ¹Մոր համբույրը նրան երեխայի դրության մեջ էր դնում, ² և այդ բանն էր, ³ որ նրան չափազանց անախորժություն էր պատճառում: (Մ., 31)




2) Շահյանը զգաց, ²որ արդեն անտանելի է դառնում այդ երկար ու բարակ հարցուփորձը, ³ բայց և այնպես այդ հարցին էլ պատասխանեց: (Մ.14)



Որևէ գերադասի ստորադասված բաղադրիչներն իհարկե կարող են լինել և մեկից ավելի:


¹Շառայից իմանալով, ²որ Բաղամյանը տանն է, ¹նա կառապանին պատվիրեց, ³որ սպասի ⁴և, ճամպրուկը թողնելով կառքի մեջ, ներս մտավ: (Պ.,439)




Իսկ մեկից ավելի ստորադաս այդ բաղադրիչները կարող են և հավասարազոր լինել (համաստորադասություն):

1) ¹Նա ուզում էր գնալ Մանեի մոտ, ²ուզում էր ասել նրան, ³որ գիշերվա իր վերաբերմունքի գիտակցությունը սպանում է իրեն, ⁴որ այդ գիտակցության


պատճառած անտանելի տանջանքից իրեն ազատել կարող է միայն նրա ներումն ու մոռացումը: (Պ., 477)



2)Միթե կարելի է այդպես անխիղճ և անտարբեր կերպով քարերի ու հողի տակ ջարդել մի արարած, ²որ երբեմն մեզ պես շնչել, ³զգացել, ⁴մտածել է...⁵մարդիկ գազանացած էին թվում այդ թուպեին: (Պ., 473)




3) 1Հիվանդի վիճակը մի առ մի քննելուց հետո չորս բժիշկները նստած էին սեղանի շուրջը ²և խորհրդակցում էին, ³որի ժամանակ երկուսը ծխում էին, ⁴մեկը մատիտով գանազան նկարներ էր գծում սեղանի վրա ընկած լրագրի լուսանկարների վրա ⁵և շուտ-շուտ հորանջում էր, ⁶մյուսը՝ զինվորականը, երկու ձեռքով ոլորում էր բեղի ծայրը, ⁷ներքին շրթունքով բարձրացնում էր վերին շրթունքը ⁸և ցած նայելով աշխատում էր իր աչքով տեսնել իր բեղը: (Պ., 510)




Նման ստորադասությունը կանվանենք **առաջին աստիճանի, այսինքն՝ երկրորդականը չունի իրեն լրացնող երկրորդական նախադասություն:** Եվ այս տիպի նախադասությունների մեջ կարելի է առանձնացնել այնպիսի նախադասություններ, որոնց **գերադաս 2 բաղադրիչներն էլ ունեն իրենց լրացնող ստորադաս երկրորդական կամ երկրորդականներ:**

1)՝ Եվան դարձյալ սպասեց, ² որ նա կշարունակի, ³ բայց տեսնելով, ⁴ որ էլ ոչինչ չի ասում, ² դարձյալ ինքը խոսեց: (Մ., 68)



2)՝ Նա չէր իմանում՝ ²ինչ է պատահում իրեն, ³միայն պարզ որոշ զգում էր, ⁴որ ինչ-որ մի բան՝ բողոքի զգացումների պես զորեղ մի բան, արագաբար


բարձրանում, ⁵ուռչում է իր կրծքի մեջ ⁶ և ուզում է պայթեցնել իր ամբողջ ներքինը հրաբխի լավայի պես: (Պ., 431-432)




Եթե գերադասին լրացնող երկրորդականն իր հերթին ունի լրացում երկրորդական, ապա այդպիսի նախադասությունները կանվանենք երկրորդ աստիճանի ստորադասությամբ բարդված բեին-ներ: Նույն տրամաբանությամբ էլ կարող ենք առանձնացնել երրորդ և այլ աստիճանի ստորադասությամբ բարդված բազմաբաղադրիչ համադասական կառույցներ:

Նար-Դոսի արձակում տարածված են երկաստիճան, եռաստիճան, նաև քառաստիճան ստորադասությամբ բեին-ները:

¹Սանթրոսյանի երերուն ծայնից, արտասանած խոսքերից նա հասկա-նում էր, ²թե որքան տանջվում էր հոգեպես այդ մարդը, ³և նրան թվում էր, ⁴թե ինքն էլ մասնակից է իր քրոջ հանցանքին, այդ դժբախտ մարդու առաջ, ⁵որ այդպես չարաչար տանջվում էր բոլորովին անարդար կերպով: (Պ., 519)




Ի դեպ, **գերադաս բաղադրիչներն** իրենց հերթին կարող են լինել երկու և երկուսից ավելի: Վերջիններիս էլ համապատասխան՝ կառանձնաց-նենք երկբաղադրիչ, եռաբաղադրիչ, քառաբաղադրիչ և այլ գերադասով բեին-ներ: Եվ սրանցում էլ կկատարենք դասակարգում ըստ գերադաս բա-ղադրիչներից միայն մեկի կամ երկուսի (և այսպես շարունակ) լրացում ունե-նալու: Ընդ որում՝ ա) օրինակ՝ եռաբաղադրիչ բեին-ների գերադասներից որևէ մեկն ունի մեկ լրացում: Նվազագույն կաղապարներն են՝



(Օրինակ՝

¹Երբ որ այդպես է, հայրի՛կ, ²միացնում եմ իմ ծայնը մայրիկի ծայնի հետ, ³այսինքն՝ ուզում եմ պահպանել status-quo, ⁴և զրկում եմ քեզ Ռուզանի դերում տեսնելու հաճույքից: (Մ., 56)




բ) գերադաս բաղադրիչն ունի մեկից ավելի լրացումներ, որոնք համազոր են կամ համազոր չեն, գ) համադասական եռաբաղադրիչ նախադասության երեք գերադասներից երկուսն ունեն լրացում. պարզ է՝ վերջիններս կարող են լինել մեկը, երկուսը և ավելին, երկու և ավելի լինելու դեպքում կարող են լինել ու չլինել համազոր: Եվ վերջապես գերադաս բաղադրիչներից երեքն էլ ունեն լրացումներ՝ մեկ, երկու և ավելի, երկու և ավելի լրացումներն էլ կա՛մ համազոր են, կա՛մ համազոր չեն:




Նույն տրամաբանությամբ առաջնորդվում ենք քառաբաղադրիչ և ավելի բաղադրիչներով բբին-ների դասակարգման ժամանակ: Ի դեպ, չմոռանանք ընդգծել, որ սրանցում ևս կատարվում է աստիճանական ստորաբաժանում՝ առաջին աստիճանի, երկրորդ աստիճաի և այսպես շարունակ....

Այժմ բբսն-ների մասին. բբսն-ներն այն նախադասություններն են, որոնց կազմում կան մեկ գլխավոր և երկու կամ ավելի ստորադաս բաղադրիչներ, կամ որոնց երկու կամ ավելի գլխավոր նախադասությունները միաժամանակ լրացվում են միևնույն կախյալ բաղադրիչով կամ բաղադրիչներով:

Բբսն-ներում դրսևորվում են բոլոր այն շարահյուսական առանձնահատկությունները, որոնք բնորոշ են բսն-ներին:


Բբսն-ների եզրերի՝ բաղադրիչների միջև առկա են ինչպես միայն ստորադասություն, այնպես էլ նաև ստորադասություն՝ բարդված համադաս բաղադրիչներով: Այդ իսկ պատճառով էլ բբսն-ները ստորաբաժանվում են.






Վերջինս առաջին անգամ առանձնացրել է Արտաշես Պապոյանը: Հանրաստորադաս է երկու կամ ավելի գերադաս բաղադրիչներին միաժամանակ լրացնող երկրորդական նախադասությամբ նախադասությունը: Այս տիպի նախադասությունների գերադաս բաղադրիչները, ինչպես նաև ստորադասները, կարող են լինել երկուսից ավելի, օրինակ՝

1) ¹ Ինչո՞ւ համար մեր գլխի մեջ գործում է այս ուղեղը, ² մեր կրծքի մեջ բաբախում այս սիրտը, ³ երբ մենք էլ անասունների պես պիտի ման գանք չորս ոտի վրա ⁴ և կույր, կոպիտ, ստոր բնագրից զատ ուրիշ ավելի բարձր, ավելի վեհ, ավելի նվիրական ու կարող ձայնի ղեկավարություն չպիտի ճանաչենք: (Պ., 357)



2) ¹ Մինչդեռ երեկ էր, ² այսօր էր, ³ սրանից մի երկու ժամ առաջ էր, ⁴ որ ես ոչինչ չգիտեի, ⁵ ոչինչ չէի կասկածում: (Պ., 519)



Եզրափակելով հողվածը՝ ստորև բերվող աղյուսակների միջոցով ներկայացնում ենք Նար-Դոսի արձակում բբն-ների գործածությունը տոկոսային հարաբերությամբ: Գործածվող բբն-ների **55.35%-ը** կազմում են **բբն-**

ները, իսկ մնացած 44.65%-ը՝ բբսն-ները: Առաջին՝ Ա) բբին-ներն իրենց հերթին դասակարգել ենք 1) ըստ նույնաբնույթ և 2) տարաբնույթ լինելու, Բ) ըստ գերադաս բաղադրիչների քանակի, Գ) ըստ նրա, թե գերադաս-ներից քանիսն ունեն լրացում և Դ) ըստ ստորադասության աստիճանի:

I.

Ա)

ԲԲՀՆ	
Նույնաբնույթ	Տարաբնույթ
32.46%	67.54%

Բ)

2 գերադասով	75.03%
3 գերադասով	17.59%
4 գերադասով	4.09%
5 գերադասով	1.82%
6 գերադասով	0.82%
7 գերադասով	0.33%
8 գերադասով	0.16%
9 գերադասով	0.16%

ԵՐԿՈՒ ԳԵՐԱԴԱՍՈՎ ԲԲՀՆ	
2-ից մեկն ունի լրացում	2-ն էլ ունեն լրացում
74.84%	25.16%

որից



որից



Դ)

Ա.

Առաջին աստիճանի	82.57%	Առաջին աստիճանի	62.19%
Երկրորդ աստիճանի	17.49%	Երկրորդ աստիճանի	32.93%
Երրորդ աստիճանի	2.55%	Երրորդ աստիճանի	4.88%

2)

ԵՐԵՔ ԳԵՐԱԴԱՍՈՎ ԲԲՀՆ		
3-ից մեկն ունի լրացում	3-ից երկուսն ունի լրացում	3-ն էլ ունեն լրացում
73.29%	15.82%	10.89%
որից	որից	որից
Դ) բ. ↓	↓	↓
Առաջին աստիճանի 89.18%	Առաջին աստիճանի 81.25%	Առաջին աստիճանի 72.72%
Երկրորդ աստիճանի 10.22%	Երկրորդ աստիճանի 18.75%	Երկրորդ աստիճանի 18.18%
Երրորդ աստիճանի 1.28%	Երրորդ աստիճանի -	Երրորդ աստիճանի 54.54%

Դ) գ.

ՉՈՐՍ ԳԵՐԱԴԱՍՈՎ ԲԲՀՆ
Առաջին աստիճանի 82.35%
Երկրորդ աստիճանի 17.65%

Դ) դ.

ՀԻՆԳ ԳԵՐԱԴԱՍՈՎ ԲԲՀՆ
Առաջին աստիճանի 54.54%
Երկրորդ աստիճանի 36.36%
Երրորդ աստիճանի 10.1%

II. Բբսն-ները բաժանվում են չորս խմբի.

ԲԲՍՆ	
Ենթաստորադաս	34.98%
Հանրաստորադաս	4.53%
Համասեռ (Համաստորադաս)	46.23%
Տարասեռ (Տարաստորադաս)	14.26%

ԲԲՍՆ	
Համասեռ (Համաստորադաս)	Տարասեռ (Տարաստորադաս)
Առաջին աստիճանի 63.08%	Առաջին աստիճանի 51.51%
Երկրորդ աստիճանի 23.36%	Երկրորդ աստիճանի 33.33%
Երրորդ աստիճանի 7.48%	Երրորդ աստիճանի 12.12%
Չորրորդ աստիճանի 1.4%	Չորրորդ աստիճանի 3.04%
Հինգերորդ աստիճանի 0.93%	

Համառոտագրություններ

Մ. «Մահր»

Պ. «Պայքար»

Բն բարդ նախադասություն

Բհն բարդ համադասական նախադասություն

Բսն բարդ ստորադասական նախադասություն

Բբն բազմաբաղադրիչ բարդ նախադասություն

Բբհն..... բազմաբաղադրիչ բարդ համադասական նախադասություն

Բբսն բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննվում է բբն-ների կառուցվածքային-գործառական առանձն-----նահատկությունները՝ ըստ Նար-Դոսի արձակի լեզվի:

Անհրաժեշտաբար անդրադարձ է արվել նախադասության՝ որպես շարահյուսական միավորի, մասնավորապես պարզ և բարդ նախադասությունների սահմանումների հակասություններին:

Ապա քննվում են բբն-ները իրենց ենթատեսակներով՝ բբհն-ներ և բբսն-ներ:

Հոդվածը եզրափակվում է Նար-Դոսի արձակում բբն-ների կառուցվածքային-գործառական առանձնահատկություններն արտացոլող վիճակագրական աղյուսակներով:

Բանալի բաներ – նախադասություն, ստորոգում, պարզ նախադասություն, բարդ նախադասություն (բն), բազմաբաղադրիչ բարդ նախադասություն (բբն), բազմաբաղադրիչ բարդ համադասական նախադասություն (բբհն), բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություն (բբսն), առաջին (երկրորդ, երրորդ,...) աստիճան, երկբաղադրիչ (եռաբաղադրիչ, քառաբաղադրիչ, ...) գերադաս նախադասություն, նույնաբնույթ, տարաբնույթ, երկբևեռ, տոկոսային հարաբերություն:

СТРУКТУРНО-ФУНКЦИОНАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ МНОГОКОМПОНЕНТНЫХ СЛОЖНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ В ПРОЗЕ НАР-ДОСА

САТЕНИК БАДАЛЯН

В статье делается попытка изучения структурно-функциональных особенностей многокомпонентного сложного предложения (МСП) по прозе Нар-Доса.

По необходимости рассматриваются противоречия в определении предложения как синтаксической единицы, в частности, в определениях простого и сложного предложений.

Изучаются также подвиды МСП: многокомпонентные сложносочиненные предложения (МССП) и многокомпонентные сложноподчиненные предложения (МСПП).

В завершение статьи приводятся статистические таблицы, отражающие структурно-функциональные особенности многокомпонентного сложного предложения в прозе Нар-Доса.

Ключевые слова – предложение, предикация, простое предложение, сложное предложение (СП), многокомпонентное сложное предложение (МСП), многокомпонентное сложносочиненное предложение (МССП), многокомпонентное сложноподчиненное предложение (МСПП), первая (вторая, третья, ...) степень, подчинительный, сочинительный, однородный, разнородный, дуполярный, главное (двухкомпонентное, трехкомпонентное, четырехкомпонентное, ...) предложение, процентное соотношение.

THE STRUCTURAL-FUNCTIONAL SINGULARITIES OF MULTI-COMPONENT COMPLEX SENTENCES IN THE PROSE OF NAR-DOS

SATENIG BADALYAN

This article is an attempt to examine the language of Nar-Dos' prose, the structural-functional singularities of its multiple complex sentences.

Badalyan, as a necessity, has studied the sentence as a syntactical unit, mainly considering the inconsistency between the definitions of simple and complex sentences. Complex sentences consisting of multiple coordinative and subordinative clauses are also studied.

Badalyan concludes his article with statistical tables reflecting the structural-functional singularities of the multiple complex sentences of Nar-Dos' prose.

Key words – sentence, simple sentence, complex sentence, multiple-component complex sentence, multiple-component compound-complex sentences, first (second, third) degree, two-component, (three-component, four-component...), superior sentence, similar, different, bipolar, percentage relationship.

**ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԵՎ ՄԱՍՆԻԿԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ԿԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գերմաներենը «իրադրությանը և համատեքստին ուղղված» լեզու է /Coseriu, 1980: 206/: Դա նշանակում է, որ գերմաներենում բացահայտ նշվում է այն, ինչը այլ լեզուներում, մասամբ նաև հայերենում, հասկանալի է դառնում միայն համատեքստից: Օրինակ կարող են ծառայել տեղի մակբայները կամ նախաձանցավոր բայերը: Հմմտ.¹

Er stolperte und fiel *hin*.

Plötzlich fiel er *um*.

Das Glas fiel *herunter*.

Նա սայթաքեց և *վայր* ընկավ:

Հանկարծ նա *ուշագնաց վայր*
ընկավ:

Բաժակը *վայր* ընկավ:

Ինչպես տեսնում ենք, հայերենը նույն իմաստն արտահայտելու համար օգտագործում է բացահայտ բառային միջոցներ:

Անդրադառնալով եղանակավորող մասնիկներին¹ Հ. Թունը մանրամասնում է՝ նշելով, որ ակնառու կապ կա ԵՄ-ների և նախաձանցավոր բայերի միջև, որոնք իրադարձությունները, գործողությունները, վիճակները ոչ թե պարզապես անվանում են, այլ դրանք դնում են որոշակի հարաբերությունների մեջ /Thun H., 1984: 22/:

Ընդհանուր առմամբ հայերենից գերմաներեն թարգմանություններ կատարելիս օգտակար կլիներ իմանալ, թե հայերենի որ երևույթներն են, որ կարող են նշել, համապատասխանել գերմաներենի ԵՄ-ներին: Գերմաներենում ԵՄ-ների կիրառությունը հաճախ պայմանավորված է որոշակի իրադրությամբ և համատեքստով:

ԵՄ-ներից «աղբատ» լեզուներից գերմաներեն կատարվող թարգմանությունների ժամանակ կարևոր է, որ թարգմանիչը ծանոթ լինի գերմաներենում ԵՄ-ների ընդունված գործառույթին և դրանց իրացման հնարավորություններին: Քանի որ ԵՄ-ները երկար ժամանակ իմաստազուրկ և ավելորդ բառեր են համարվել, դրանք անտեսվել են նաև թարգմանիչների կողմից:

¹ Այսուհետև՝ ԵՄ:

Մասնիկներին նվիրված լեզվաբանական գրականության մեջ ընդհանուր է այն հարցադրումը, թե ինչ դժվարություն է առաջանում ԵՄ-ները նկարագրելիս, ինչ խնդիրներ են հարուցում նրանց բառարանագրումը, յուրացումը և ակտիվ օգտագործումը որպես ոչ լեզվակիրներ, ինչպես նաև նրանց վերարտադրումն օտար լեզվով: «Մասնիկներն իրենց էությամբ վերհատույթային են, և նրանց նկարագրությունն ավելի բարդ է, քան հնչերանգինը կամ շարադասությամբ, քանի որ վերջինների էությունն այս կամ այն չափով փոխանցելի է գիտական վերացարկման լեզվով» /Николаева Т., 1985: 15/:

Այս առումով նշենք, որ ԵՄ-ների համատեքստից անկախ, ընդհանուր իմաստը չափազանց անորոշ է, որպեսզի այն կարողանա տարբեր լեզուների՝ միմյանց հետ զուգադրման ընդհանուր հիմք ծառայել: Անհրաժեշտ է ներառել, իհարկե, գործաբանական մոտեցումները, սակայն ԵՄ-ների գործաբանական կամ տեքստալեզվաբանական գործոնները չափազանց բազմատարր են: Թերևս գոյություն չունի համակողմանի նկարագրության գոհացուցիչ կադապար զուգադրական վերլուծության համար:

Գերմաներենում առավել հաճախ հանդիպող եղանակավորող մասնիկներից է ja-ն, որի իմաստագործառական առանձնահատկություններին և հայերեն վերարտադրման հնարավորություններին կանդադարառնանք այս հոդվածի շրջանակում:

Եղանակավորող մասնիկ լինելուց բացի, ja-ն կարող է հանդես գալ որպես պատասխան մասնիկ: Այն կարող է նաև կիրառվել «իմաստային սաստկացման նպատակով»: Mut, ja Verwegenheit – էսիզախություն, *ինչու չէ*, հանդգնություն: Այդ կիրառությամբ ja-ն կարող է դիտվել որպես աստիճանավորող մասնիկ, որովհետև այն կարելի է փոխարինել selbst-ով և sogar-ով (Weydt/ Hentschel E., 1983: 13, 156): Այդ կիրառության համար հնարավոր հայերեն տարբերակներ կարող են լինել այնպիսի ձևեր, ինչպես՝ *ինչու ոչ, նույնիսկ*:

Ja ԵՄ-ը քննարկելիս նախ հարկավոր է առանձնացնել նրա շեշտված և անշեշտ տարբերակները: Շեշտակիր ja-ն առավելապես հանդիպում է հորդորական, արգելական հրամաններում և այդ խոսքային գործունեության մեջ ունի «իլոկուցիան ձևափոխող գործառույթ, այն ընդգծում, շեշտում է ասույթը, մասնավորապես սպառնալիքի և զգուշացման իմաստով» /Franck D., 1980: 228/: ԵՄ ja-ի կիրառությամբ խոսողը հասկանալ է տալիս, որ հրամանի կատարումն ունկնդրի սեփական շահերից է բխում, և որ չենթարկվելն անցանկալի, տհաճ հետևանքներ կարող է ունենալ:

Շեշտակիր ja-ով հրամանները պատահիր չէ, որ իրականացվեն հրամայական եղանակով, նրանք կարող են արտահայտվել նաև եղանակավորող բայերով և dass- նախադասություններով.

Du sollst ihm *ja* nicht widersprechen. *Հանկարծ* նրան չհակաճառես:
Sie dürfen den Schlüssel *ja* nicht vergessen. *Հանկարծ* բանալին չմոռանաք:
Dass du *ja* fleißig arbeitest! Ջանասիրաբար կաշխատես, հա' /Helbig G., 1988: 168/:

Շեշտակիր ja-ի կիրառությունը, սակայն, չի սահմանափակվում միայն հրամայական նախադասություններով կամ հրամանի խոսքային գործառույթներով: Հետևաբար ja-ն չի կարող դիտարկվել որպես խոսքային գործունեության միանշանակ ցուցիչ: Հենչելը ցույց է տվել, որ ja-ն կարող է հանդես գալ նաև Ich will ja nichts falsch machen /Դե ես չեմ ուզում ոչ մի բան սխալ անել/ տեսակի հաստատական- պատմողական նախադասություններում, հավաստիական հարցականներում /գրեթե միշտ auch-ի հետ/ և նպատակի բաղադրիչ պարունակող երկրորդական նախադասություններում:

Er prüfte, ob seine Hand auch *ja* nicht zitterte (Kehlmann D., 2005: 78).
Նա ստուգեց, թե արդյոք ձեռքը չի՞ դողում /Քելման Դ., 2010: 50/:

Հավաստիական հարցականներում auch ja-ն նպաստում է ակնկալվող հավանության մեջ հավաստիանալուն. խոսողը շատ է ուզում, որ հարցի մեջ արտահայտված իրողությունն իրականանա: ԵՄ ja-ով ընդգծվում է խոսողի կողմից գերադասվող պատասխանի կարևորությունը:

Hast du auch *ja* richtig zugehört? Իսկ դու լա՞վ ես լսել:

Շեշտակիր ja-ի բոլոր կիրառություններում գոյություն ունի ընդհանրություն. թե՛ հրամայական և թե՛ երկրորդական նախադասություններում խոսքն այն մասին է, որ տվյալ պայմաններում նշվող իրողությունը հատկապես կարևոր է: Հրամանները, հորդորները, մտադրության հայտարարությունները կամ ցանկությունները շեշտված ja-ով ավելի արտահայտիչ և անհետաձգելի են դառնում /Hentschel E., 1986: 156/:

Das hab ich dir noch gar nicht gesagt- vergiss *ja* nicht, Mutti, wenn sie dich zu Bett bringt, einen Gutenachtkuss zu geben! (Kästner E., 1998: 184)

- Ես քեզ դեռ մի բան էլ չեմ ասել, *հանկարծ* չմոռանաս մայրիկին բարի գիշերվա համբույր տալ, երբ նա քեզ տանի քնեցնելու:

Վերը բերված օրինակում շեշտված ja-ն կարելի է փոխարինել նաև bloß-ով: Բացառություն է կազմում նպատակի պարագա երկրորդական նախադասությունը, քանի որ bloß-ը համատեղելի չէ nur-ի հետ: ԵՄ ja-ն

կարելի է փոխարինել *nur*-ով այն դեպքում, երբ գերադաս նախադասությունը ժխտում է պարունակում: Հաստատական նախադասություններում *ja*-ն *nur*-ով փոխարինելը կարող է փոխել ասույթի հաղորդակցական իմաստը, քանի որ *nur*-ով անժխտական հրամանները և հորդորներն ունեն մեղմացնող, հանգրստացնող բաղադրիչ, այնպես, ինչպես *ruhig*-ով ասույթները: Եթե համեմատելու լինենք *Geh j'a/ bloß nach Hause!* և *Geh nur nach Hause!* նախադասությունները, ապա կարելի է ասել, որ *ja*-ով հրամանը նշում է, որ հասցեատերն արդեն մեկ անգամ ցանկություն է արտահայտել կամ ցույց է տվել, որ ուզում է տուն գնալ, կամ էլ խոսողն ինքն է ենթադրում, որ դա այդպես է: Հայերենում *ja*-ի նման կիրառությունները կարելի է արտահայտել *դե* եղանակավորող բառով: Շատ դեպքերում շեշտված *ja*-ն հայերենում կարելի է արտահայտել *հանկարծ* մակբայով, որը, մեր կարծիքով, այդ կիրառությամբ չունի մակբայական նշանակություն, և այս դեպքում հայերենում նույնպես կարելի է խոսել մասնիկային գործառույթի մասին, քանի որ ինչպես գերմաներենում, հայերենում նույնպես այն դուրս թողնելու դեպքում չի խախտվում նախադասության իմաստային ամբողջականությունը, սակայն փոխվում է հաղորդակցական իմաստը:

Պատմականորեն *ja*-ն առաջացել է ցուցչային արմատից /Hentschel E. 1986: 40/: Մասնիկների ուսումնասիրությանը նվիրված առկա գրականության մեջ գոյություն ունի միասնական կարծիք, որ *ja*-ն ունի ծանոթ իրադրությանը, թեմային հղելու գործառույթ: Դա կարելի է բացատրել նրա ցուցչային ներուժով, քանի որ որևէ բանին հղելը հնարավոր է միայն այն դեպքում, երբ հղելու առարկան հայտնի է: Այս առումով որոշ նմանություն կա ԵՄ-ների և դերանունների միջև, քանի որ դերանուններով /ցուցական/ հղելը նույնպես իրականանում է այն ժամանակ, երբ կա ընդհանուր տեղեկույթ: Այն հարցին, թե ինչը պետք է ծանոթ լինի, կախված համատեքստից՝ կարելի է պատասխանել տարբեր կերպ: Քանի որ *ja*-ն արտահայտում է ընդհանուր գիտելիք կամ որևէ բանին ծանոթ լինելը, ապա նա կապ է ստեղծում խոսողի գիտելիքի կամ դիրքորոշման և մյուս անձի գիտելիքի կամ դիրքորոշման միջև: Այդպիսով, խոսողը լսողին հասկանալ է տալիս, որ այդ ընդհանուր գիտելիքը պետք է հաշվի առնել ասույթը մեկնաբանելիս: ԵՄ *ja*-ի հղելու այդ գործառույթով է բացատրվում, թե ինչու *ja*-ն չի կարող հանդես գալ հարցերում:

Անշեշտ *ja*-ն կարող է հանդես գալ պատմողական և բացականչական, ինչպես նաև որոշ երկրորդական նախադասություններում:

Անշեշտ *ja*-ն կարող է արտահայտվել «wie wir beide wissen/ wie man weiß/ bekanntlich» /ինչպես մենք գիտենք, ինչպես հայտնի է/ հարասույթներով:

Ծանոթ լինելը կարող է պայմանավորված լինել նրանով, որ հաղորդակցության ընթացքում արդեն խոսվել է տվյալ իրողության մասին: Այս դեպքում ja-ով ստեղծվում է տեքստափրադրային կապ նախորդ ասույթի հետ: ԵՄ ja-ի հարակրկնական այդ գործառույթը, որի մեջ դեռևս գործում է նրա ցուցչային ծագումը, թույլ է տալիս ասելու, որ ԵՄ-ները կարող են հանդես գալ որպես տեքստակազմիչ միջոցներ: Այդ գործառույթով դրանք կարելի է համեմատել դերանունների հետ: Կապակցական դերը հատկապես կարևոր է պատմողական տեքստերում, որովհետև պատմվող աշխարհից միայն բացահայտ ասվածն է ծանոթ: ԵՄ ja-ի օգնությամբ կարելի է անդրադարձ կատարել նախկինում հիշատակվածին և, այդպիսով, ակտիվացնել լսողի կամ ընթերցողի գիտելիքը: Պատմողական տեքստերում ja-ն կարելի է փոխարինել հետևյալ հարասությամբ՝ wie bereits weiter oben gesagt – ինչպես նշվել է վերը /Franck D., 1980: 234/: Դա հնարավոր է դարձնում ներառել ընթերցողին, քանի որ, այդպիսով, պատմողն անմիջականորեն դիմում է ընթերցողին: ԵՄ ja-ն կիրառելով՝ խոսողը հուշում է, որ իր ասույթի նախադրույթը որպես այդպիսին նոր չէ, և որ ինքը գիտակցաբար է նշում ծանոթը: ԵՄ ja-ի այդ գործառույթը կարելի է համեմատել գիտական գրականության մեջ հղումներ կատարելու հետ /Reiter N., 1980: 344/:

Պատմողական և բացականչական նախադասություններում ԵՄ ja-ն իր նույն հիմնական նշանակությունն ունի: Ja-ի կիրառությամբ խոսողը նշում է զրուցակիցների ընդհանուր շրջանակներում գտնվող իրողության ակնհայտությունը: Նա բառերով արտահայտում է երկուսի կողմից անմիջականորեն նկատվող իրողությունը, ինչպես՝ Es schneit ja! -Քայց ձյուն է գալիս: Նախադասության մեջ տեսանելի ակնհայտության մասին է խոսքը, որը կարելի է հարասունությամբ նաև ասել. Wie wir beide sehen ... /ինչպես որ մենք երկուսս էլ տեսնում ենք.../:

Հաճախ այն կարծիքն է արտահայտվում, որ հաստատական նախադասություններում ja-ն նշում է, որ խոսողը նրանցում արտահայտված իրողությունը զարմանալի կամ դիտարժան է համարում: Խոսողը զարմանում է իրողության գոյության վրա և ոչ թե «այն աստիճանի կամ չափի, որի մեջ է այդ իրողությունը» /Helbig G., 1988: 167/: Հաստատական և բացականչական նախադասություններում ja-ն թեև ծառայում է խոսողի սպասելիքներից կամ պատկերացումներից շեղվող իրողության վերաբերյալ զարմանք արտահայտելուն, սակայն զարմանք արտահայտվում է նաև և ամենից առաջ հուզական հնչերանգի միջոցով:

Քանի որ հաստատական նախադասություններում *ja*-ն անմիջական կապ է ստեղծում իրադրության հետ, ԵՄ-ը ձեռք է բերում համատեքստային բնույթ: ԵՄ *ja*-ն, սակայն, չի մատնանշում իրադրությունը, ինչպես դա անում են տեղի ցուցաբառերը, այլ մատնանշումը տեղի է ունենում այնպես, որ խոսողը լսողին հուշում է, որ ինքը տիրապետում է ասույթի բովանդակությանը, և որն անմիջականորեն ընկալելի, ըմբռնելի է: ԵՄ *ja*-ն, ինչպես մյուս ԵՄ-ները, հնարավոր են դարձնում ավելին նկատի ունենալ, հասկանալ, քան ասվում է /Lewandowski Th., 1994: 431/: *Ja*-ն այստեղ ազդանշան է լսողի համար, որպեսզի նա ասույթն ընդունի ոչ որպես նոր տեղեկույթ, լսողի ուշադրությունը հրավիրվում է այն բանին, որ խոսողն ինքը նույնպես միայն նոր է նկատել իրադրությունը: «Հետևաբար կարելի է ասել, որ ներկայացված գործառույթը դառնում է արտահայտչական գործառույթ» /Franck D., 1980: 230/:

Նախորդ ասույթներին հղելը և զրուցակիցների ունեցած գիտելիքն ու իմացությունը ծառայում են խոսողին, որպեսզի նա համոզված լինի հաղորդակցության ընդհանուր հիմքի առկայության և հաղորդակցությունը շարունակելու մեջ: Հետևաբար փոխգործողության մեջ *ja*-ն ունի համաձայնություն ստեղծելու կամ դրա առկայությունն ընդգծելու և լսողի դիրքորոշումը հաշվի առնելու իմաստ /Franck D., 1980: 233/: Հաջորդ օրինակում խոսողը, *ja* օգտագործելով, նշում է, որ գալիք իրողության մասին տեղյակ է նաև իր խոսակիցը.

Die Schwierigkeiten sind **ja** bald vorüber. -Դե շուտով դժվարությունները կանցնեն:

ԵՄ *ja*-ն հաճախ արտահայտում է զիջում, որին հաջորդում է *aber*-ով սկսվող սահմանափակումը: Այդպիսի կիրառությամբ *ja*-ն հիշեցնում է ԵՄ *schon*-ի և *zwar* շաղկապի կիրառությունը:

Er wisse **ja** nicht, wie es in Berlin sei. Gauß stand auf. *Aber* in Göttingen habe er keinen jungen Wissenschaftler getroffen, der kein Esel sei. /Kehlmann D., 2005: 239/:

... ինքը, *իհարկե*, չգիտի, թե ինչպես է Բեռլինում, *բայց* Գյոտինգենում երիտասարդ այնպիսի գիտնականի չի հանդիպել, որը ավանակ չլիներ /Քելման Դ., 2010: 164/:

Բերված օրինակում գերմաներենի *ja*-ն հայերենում արտահայտվել է, իհարկե, եղանակավորող բառով:

Այս և որոշ ԵՄ-ների համերաշխություն, համաձայնություն արտահայտելու գործառույթը, սակայն, կարող է չարաշահվել, *ja*-ի դեպքում նրանով, որ

ծանոթ, անվիճելի է ներկայացվում մի իրողություն, որի մասին լսողը գաղափար չունի: Եթե խոսողը ja-ի օգնությամբ «ձևացնում» է, թե իրադրության վերաբերյալ համաձայնություն կա, և դրանով իր փաստարկները պաշտպանում է, լսողի առարկությունը սկզբից ևեթ բացառում, ապա զրկում է զրուցակցին իրեն դրանից պաշտպանելու կամ հակառակվելու հնարավորությունից: ԵՄ ja-ի «անազնիվ» կիրառությունը կարող է պայմանավորված լինել ոչ թե միայն փաստարկելու ռազմավարական շարժառիթներով, այլև միտումնավոր անազնիվ մղումով: Երբ խոսողին պարզ է դառնում, որ լսողի մոտ բացակայում է որոշակի գիտելիք, ապա ja-ի կիրառությամբ նա նպատակ է հետապնդում լսողի չիմացությունն ակնհայտ դարձնելը և նրան մերկացնելը /Burkhardt A., 1986: 262/:

Գրականության մեջ հաճախ է նշվում, որ ja-ն փաստարկային հարաբերություն է ցույց տալիս գերադաս և նախորդ նախադասության մեջ /օր.՝ Franck D., 1980: 232/: Դա պայմանավորված է ja-ի իմաստով. նախ հայտնի և ակնհայտ իրողությունները հատկապես հարմար են փաստարկների համար: Խոսողն օգտվում է դրանցից այն հույսով, որ լսողին կամ զրուցակիցներին ավելի շուտ կհամոզի ծանոթը՝ քիչ խնդրահարույցը նշելով: Եվ հետո, քանի որ ja-ն ծանոթն է նշում, որը բացառում է ասույթը որպես նոր տեղեկույթ մեկնաբանելը, ապա առիթ է տալիս խոսելու «լեզվական նյութը»՝ խնայելու ԵՄ-ների գործառույթի մասին /Krivonosov A., 1983: 40/: Փաստարկներին, ինչպես նաև առօրյա խոսակցություններին ընդհանուր առմամբ բնորոշ է չարտահայտել անպայմանորեն այն ամենը, ինչ անհրաժեշտ է հասկանալու համար:

ԵՄ ja-ի բոլոր կիրառությունների ընդհանրությունը ja-ի հատկապես բացահայտորեն չարտահայտված իրողությունները որպես ճիշտ և դիպուկ բնութագրելու հատկանիշի մեջ է: Դա հատկապես երևում է պատասխան մասնիկի դեպքում, որով հաստատվում է հարցվող իրողությունը: Հենչելը հետևյալ կերպ է ամփոփում ja-ի ընդհանուր իմաստը. «Ja-ն արտահայտում է իրողության ճիշտ և դիպուկ լինելը: Լսողի իրողության մասին գիտելիքը /կամ իմանալու հնարավորությունը/ նախապայման է» /Hentschel E., 1986: 163/:

Այն, որ հաստատական իրողությունն անմիջականորեն ընկալելի է, և հաստատական նախադասությունների հաղորդակցական իմաստը խոսակցին այն բանի հաղորդելն է, որ խոսողը հենց նոր է նկատել իրողությունը, երևում է հետևյալ օրինակում.

- Du isst **ja** heute gar nichts, bemerkt Resi vorwurfsvoll (Kästner E., 1998: 223):

- Ախր դու այսօր ոչինչ չես ուտում...

ԵՄ ja-ի արտահայտած եղանակային իմաստը հայերենում արտահայտվում է «ախր» եղանակավորող բառով և հնչերանգով:

Հաստատական նախադասություններին մոտ են ենթադրություններն ու հետևությունները, քանի որ դրանք հաճախ բխում են անմիջականորեն դիտվող իրողությունից: Այդ կիրառության ժամանակ ja-ն մեծ մասամբ հանդես է գալիս müssen և können մոդալ բայերի կամ werden-ի հետ միասին, որտեղ այն ենթադրություն կամ եզրակացություն է նշում, և որ խոսակիցը համաձայն է դրան: Օրինակ՝

Gaus faltete die Zeitung zusammen. Dann könne er **ja** heimgehen. (Kehlmann D., 2005: 152) Գաուսը թերթերը ծալեց: Նա կարող է տուն գնալ /Քելման Դ., 2010: 102/:

Հայերենում ja-ն պարզապես բաց է թողնված: Մենք կառաջարկեինք ja-ն այստեղ թարգմանել «այդ դեպքում» բառակապակցությամբ, որը նշում է նոր, փոփոխված իրադրությունից բխող գործողություն: Հնարավոր տարբերակ կարող էր լինել նաև «Այժմ նա արդեն կարող է տուն գնալ» թարգմանությունը:

ԵՄ ja-ն հատկապես հաճախ է հանդիպում հիմնավորումների մեջ, այնպես որ ja-ն սկզբունքորեն կարելի է դիտել որպես հիմնավորումների ցուցիչ: Ja-ի կապը հիմնավորումների հետ բխում է նրա իմաստից: Ja-ն նշում է հնարավոր ակնհայտ, հայտնի լինելը, իսկ ակնհայտ կամ հայտնի լինելը հատկապես հարմար է հիմնավորման համար: Հիմնավորման նպատակ արտահայտելիս կիրառվում են գրեթե բացառապես պատմողական նախադասություններ ja-ով: Ja-ով հաստատական նախադասությունները դիտվում են նաև որպես խոսողի զգացողությունների ոչ բացահայտ հիմնավորումներ:

A: Ich warte auf Hans. Ա. Ես Հանսին եմ սպասում:

B: Da kommt er **ja**. Բ. Ահա, նա գալիս է: (Այստեղ ja-ն արտահայտում է ուրախություն, թեթևություն, քանի որ նա արդեն գալիս է):

ԵՄ ja-ով հիմնավորումները կարող են հետևել ամենատարբեր նախորդող նախադասությունների: Այսպես, նրանք կարող են լինել պատասխան warum պարունակող հարցերին, ինչպես, օրինակ՝

Warum hast du mich nicht mit ihnen zusammengebracht?

Du warst **ja** kaum hier, ... (Böll H., 1997: 82)

Ինչո՞ւ ինձ նրանց հետ չձանթացրիր:

Դե, դու համարյա այստեղ չէիր լինում:

Ինչպես արդեն ասվել է, ja-ն նշում է ընդհանուր իմացությունը և, այդպիսով, հաճախ ձեռք է բերում տեքստը կապակցող գործառույթ՝ ստեղծելով հիմնավորման և պատճառային կապեր և նշելով հիմնավորման գործառական դերը: Այդպիսի դեպքերում ja-ով նախադասությունը կարելի է փոխարինել պատճառի երկրորդական weil կամ denn շաղկապներ պարունակող նախադասություններով.

Oh, sagte der Professor mitleidig, die Zähne, schlimm? Er selbst habe **ja** Glück gehabt, ihm fehlen bloß fünf /Kehlmann D., 2005: 83/.

Պրոֆեսորը կարեկցանքով նայեց նրան և ասաց՝ ատամները, սարսափելի է: Իր բախտը բերել է, ինքն ընդամենը հինգ ատամ չունի /Քելման Դ., 2010: 54/:

Վերը բերված ja պարունակող նախադասությունը կարելի է ասել weil – հարասությամբ.

Ich habe **ja** Glück, weil mir bloß fünf Zähne fehlen.

Ich habe **ja** Glück, denn mir fehlen bloß fünf Zähne.

Թե ja պարունակող գերադաս նախադասությամբ ինչ է հիմնավորվել, կարող է լինել շատ տարաբնույթ և ja-ի նկարագրության համար ոչ կարևոր, սակայն այն հարցը, թե արդյոք պատճառական հարաբերությունը հնարավոր է փոխարինել շաղկապով, կարևոր նշանակություն ունի գերմաներենից հայերեն թարգմանելիս, քանի որ այդ ընթացքում երբեմն շաղկապներ կարող են ավելացվել: Օրինակ.

Um die könne sich einstweilen er kümmern, sagte Rose diensteifrig, daran solle es nicht scheitern, dafür sei er **ja** mitgereist! /Kehlmann D., 2005: 269/.

Իրոզն պատրաստական ասաց, որ ինքն այդ ամենի մասին առայժմ կհոգա, նրանք իրավունք չունեն ձախողելու, քանի որ ինքը դրա համար է եկել այդտեղ /Քելման Դ., 2010: 185/:

Պատճառական շաղկապի առկայության դեպքում թարգմանության ժամանակ որպես կանոն ja-ն համապատասխանություն չունի հայերենում: Պատճառական հարաբերությունների ժամանակ հաճախ կարող է ավելացվել շաղկապ: Եվ քանի որ ja-ն չի կարող դիտվել որպես շաղկապ, ապա հայերենի շաղկապը չի կարող դիտվել որպես համարժեք: Օրինակ.

- Was sonst sollen wir glauben. Denn im Krieg kommt **ja** keine legale Post von drüben /Hilsenrath E., 1989: 37/.

- Այլպես ինչ պիտի մտածեինք: Քանի որ պատերազմի ժամանակ ոչ մի օրինական փոստ այն կողմից չի գալիս /Հիլզենրաթ Է., 1998: 39/: Կամ՝

Չէ՞ որ պատերազմի ժամանակ ոչ մի օրինական փոստ այն կողմից չի գալիս:

ԵՄ ja-ն հաճախ հանդիպում է wissen, իսկ ավելի հազվադեպ նաև kennen-ի հետ այն ասույթներում, որոնցում արտահայտվում է իրողության հայտնի լինելը: Դրան ավելանում է ja-ով ներակա մատնանշումը, այդպիսով, ասույթը հավաստի է դառնում, և ընդգծվում է զրուցակիցների համաձայնությունն ընդհանուր տեղեկույթի վերաբերյալ: Ծանոթ իրողությունն այս դեպքում նախադասության մեջ միշտ նշվում է, և խոսողն անմիջականորեն դիմում է խոսակցին, այսինքն՝ wissen /իմանալ/ բայը դրվում է 2-րդ դեմքով:

«... Mutter hatte damals schon den Schlankheitsfimmel – du *weißt ja*, sie war immer ihrer Zeit voraus – ... » (Böll H., 1997: 181).

Դեռ այն ժամանակ մայրիկը նիհարելու այդ մարմաջն ուներ - *դե* գիտես, նա միշտ իր ժամանակից առաջ էր

Այսպիսի դեպքերում ja-ն կարող է հիմնականում հայերեն թարգմանվել *դե* ձայնարկությամբ, որն այստեղ մեր կարծիքով եղանակավորող բառի իմաստ է ձեռք բերում:

Ասույթի հաստատումը և խոսակցի հետ կապ ստեղծելը, որը գերմաներենում տեղի է ունենում ja-ի միջոցով, հայերենում առկա թարգմանություններում կամ առհասարակ բաց է թողնվում, կամ արտահայտվում է տարբեր միջոցներով: Պարզ է, որ միայն առանձին դեպքերում կարելի է խոսել ja-ի մասնակի համապատասխանությունների, համարժեքների մասին: Իմացական բայերի հետ ja-ն հաճախ հանդես է գալիս իր հարասությունների հետ: Հաճախ էլ ja-ն ներառվում է հարասության մեջ: Հայերեն թարգմանվում են հիմնականում հարասույթները, բայց ոչ ԵՄ ja-ն:

Եթե բացահայտորեն մատնանշվում է այն, ինչը տվյալ հաղորդակցության ընթացքում կամ զրուցակիցների նախորդ զրույցներում արդեն հիշատակվել է, ապա ja-ն հանդես է գալիս ասողական բայերի հետ: Խոսողը ja-ով հասկանալ է տալիս, որ ինքը հիշում է ընդհանուր հաղորդակցության նախապատմությունը և նույնը ենթադրում է լսողի համար: Այնպիսի արտահայտություններում, ինչպիսիք են՝ Ich sage *ja* immer կամ Ich hab's *ja* gleich gesagt, գրեթե հնարավոր չէ պատկերացնել առանց ja ԵՄ-ի:

Խոսողի կողմից ոչ հեռու անցյալին վերաբերող ասույթը մատնանշելը կարող է պարունակել նաև նախատինքի հավելիմաստ: Խոսակցին քննադատում են, որովհետև նա մատնանշվող ասույթը ճիշտ չի հասկացել կամ էլ դրանից համապատասխան հետևություններ չի արել: Օրինակ.

Hat es euch je an etwas gefehlt?

Ja, /... /, ich sag's **ja**: an Essen – und außerdem am Taschengeld (Böll H., 1997: 181).

Դուք ինչ-որ բանի պակաս ունեցե՞լ եք:

Այո՛, ... , ասում եմ է/ի, ուտելիքի և գրպանի փողի:

Նախնական տեղեկություն հղելն ասացական և իմացական բայերի հետ համակցված լինելու դեպքում ja-ն հայերեն թարգմանվում է նաև է/ի եղանակավորող բառով, որը միշտ հետադաս է:

ԵՄ ja-ով գերադաս նախադասությանը բավականին հաճախ հաջորդում է aber-ով սկսվող նախադասություն: Կիրառության այս տեսակը զուգահեռներ ունի schon-ի հետ: Ja-ով գերադաս ասույթն արտահայտում է զիջում, որով խոսողն ընդգծում է իր համաձայնությունը գրուցակցի հետ, սակայն այդ ընդհանրությունն ապահովելը միաժամանակ ծառայում է առարկություն նախապատրաստելուն: Օրինակ.

Ich widerlegte sie mit dem Neuen Testament, meinte, es könnte **ja** sein, daß der Gott im Alten Testament Feierabend gehabt habe, aber ein Christus mit Feierabend wäre mir unvorstellbar (Böll H., 1997: 111).

Ես նրան հակադարձեցի Նոր Կտակարանով, ասացի, որ շատ հնարավոր է, որ Աստված Հին Կտակարանում հանգստացել է, բայց ես չեմ կարող պատկերացնել հանգստացող Քրիստոսի:

Ինչպես արդեն նշվել է, ja-ի կիրառումով անդրադարձ է կատարվում ընդհանուր հիմքին, իմացությանը, և ընդգծվում է գրուցակցների միջև առկա համաձայնությունը: Այդ պատճառով Հերինգերն առաջարկում է ja-ի ընդհանրացված իմաստը «միասնությունը, համերաշխությունը» համարել /Heringer H., 1988: 741/:

Օրինակների քննությունը նաև ցույց է տալիս, որ ja-ն հաճախ առարկության տարր է պարունակում և կիրառվում է նախորդ ասույթը մերժելու, չընդունելու դեպքում: Խոսողը քննադատում է խոսակցին, որովհետև նա հաշվի չի առել հայտնի իրողությունը, անհրաժեշտ հետևություններ չի արել կամ սխալ նախադրյալներից է ենթադրություններ արել: Նման դեպքերում ja-ն փոխարինելի է doch-ով: Doch-ն ասույթին տալիս է ավելի նախահարձակ բնույթ:

Հետևյալ օրինակում չի ընդունվում լսողի սխալ ենթադրությունը: Նախորդ ասույթը չընդունելը, մերժելը արտահայտվում են նաև aber շարկապով: Այստեղ ja-ն կարելի է փոխարինել doch-ով: Հայերեն թարգմանվում է չէ որ

բառակապակցությամբ, որն ավելի շուտ կիրառվում է doch-ի թարգմանության ժամանակ: Այսպես.

Ich sagte zu Marie: «Hübsch, die Rosen, behalt sie», und sie sah mich an und sagte: «Aber sie sind ja für mich.» (Böll H., 1997: 78).

- Վարդերը գեղեցիկ են: Պահի՛ր դրանք քեզ:

- Բայց դրանք *չէ՞ որ* ինձ համար են:

Ամփոփելով կարելի է ասել, որ անշեշտ ja-ով ասույթները հանդիպում են նույն խոսողի մեկ հատվածի մեջ: Առանձին դեպքերում դրանք կարող են սկսել զրույցը հատկապես հաստատական նախադասությունների դեպքում: ԵՄ ja-ով մերժումներն անմիջական արձագանքներ են:

Անշեշտ ja-ի առկա թարգմանությունների օրինակները և մեր կողմից կատարված փորձերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն դեպքերի մեծ մասում համապատասխանություն չի գտնում: Հատկապես հաստատականներում, հիմնավորումներում, ենթադրություններում, հետևություններում և առաջարկներում ԵՄ ja-ն բաց է թողնվում: Մնացած դեպքերում շատ են հանդիպում դիպվածային թարգմանություններ, որոնց՝ իրենց տարաբնույթ լինելու պատճառով հնարավոր չէ տալ ամբողջական բնութագիր: Միայն առանձին դեպքերում կարելի է խոսել իսկական համապատասխանությունների մասին: Ծանոթին, հայտնիին, նախօրոք հիշատակվածին կամ ակնհայտին հղելը, երբ անմիջական դիմում կա զրուցակցին և ja-ն համակցվում է ասացական և իմացական բայերի հետ, բավականին հաճախ ja-ն վերարտադրվում է *դե, չէ որ* արտահայտություններով, որոնք հայերենում նույնպես կարող են հայտնի և ծանոթը նշել: Հետևաբար, մեր կարծիքով, այստեղ կարելի է խոսել մասնակի համապատասխանության մասին: Իրողությունը ja-ով դիպուկ դարձնելը և դրանից բխող հաստատումը հայերենում դարձյալ կարող է վերարտադրվել *չէ որ* -ով: Հաճախ ja-ն վերարտադրվում է *ոո, դե* ծայնարկությունների միջոցով, որոնք մեր կարծիքով ձեռք են բերում եղանակավորող մասնիկի իմաստ:

Գրականություն

1. Հիլգենրաթ Է., Վերջին մտքի հեքիաթը, Երևան, «Նաիրի», հ.1, 1993:
2. Քելման Դ. Աշխարհի չափագրումը, Երևան, ԻԿԿ, 2010:
3. Böll H. Ansichten eines Clowns, München, dtv, 1997.
4. Burkhardt A. Abtönungspartikeln und Konversation in Hofmannsthals «Der Schwierige» //Burkhardt A/ Körner K. (Hg.). 1986, S. 257-267.

5. Coseriu, E. Partikeln und Sprachtypus. Zur strukturell – funktionellen Fragestellung in der Sprachtypologie //Brettschneider G.v/ Lehmann G (Hgg.) Wege der Universalienforschung, Tübingen, Gunter Narr Verlag, 1980, S. 199-207.
6. Franck D. Grammatik und Konversation, Königstein /Ts., Scriptor Verlag, 1980.
7. Helbig G. Lexikon deutscher Partikeln, Leipzig, Verlag Enzyklopädie 1988.
8. Hentschel E. Funktion und Geschichte deutscher Partikeln. Ja, doch, halt und eben RGL, Tübingen, Niemeyer, 1986.
9. Heringer H. J. «Ja, ja, die Partikeln! Können wir Partikelbedeutungen prototypisch erfassen?» //Zeitschrift f3r Phonetik, Sprachwissenschaft und Kommunikationsforschung 41/6, 1988, S. 730- 754.
10. Hilsenrath E. Das Märchen vom letzten Gedanken“, München, Wilhelm H. Verlag, 1989.
11. Kästner E. Das doppelte Lottchen //Kästner E. Romane für Kinder, Bd II, München Wien, Carl Hanser Verlag 1998, S. 161-254.
12. Kehlmann D. Die Vermessung der Welt, Reinbeck bei Hamburg, Rohwolt Verlag GmbH, 2005.
13. Krivososov A. Zur Rolle der Partikeln bei der Einsparung des Sprachmaterials //Weydt, H. (Hrsg.), 1983, S. 40-45.
14. Lewandowski Th., Linguistisches Wörterbuch, UTB, Heidelberg. Wiesbaden, Quelle u. Meyer, 1994.
15. Reiter N. „Das Perfide des deutschen ja“ //Deutsche Sprache 8, 1980, S. 342-355.
16. Weydt H./Hentschel E. Kleines Abtönungswörterbuch //Weydt, H. (Hg.), 1983, S. 3-24.
17. Thun H. Dialoggestaltung im Deutschen und Rumänischen: eine strukturell-kontrastive Studie zu den Existimatoren, Tübingen, Narr, 1984.
18. Thurmair M. Modalpartikeln und ihre Kombinationen, Tübingen, Niemeyer, 1989.
19. Николаева Т.М. Функции частиц в высказывании, М., “Наука”, 1985.

ԱՄՓՈՓՈՒՄ

Գերմաներենում ասույթը եղանակավորելու բազմաթիվ միջոցներից են եղանակավորող մասնիկները: Հոդվածում քննարկվում են գերմաներենի ja եղանակավորող մասնիկի իմաստագործառական առանձնահատկությունները, տարբեր տեսակի նախադասություններում նրա դրսևորումները և հնարավոր թարգմանությունները: Գոյություն չունի ԵՄ-ների իմաստի ընդունելի սահմանում, քանի որ նրանց իմաստը պարզորոշ տարբերվում է մյուս խոսքի մասերին բնորոշ բնութագրերից: Նրանց իմաստն ավելի ընդհանրական է ու վերացական և հիմնականում կախված է նախադասության մեջ նրանց կիրառությունից: ԵՄ ja-ն ունի ծանոթ իրադրությանը, թեմային հղելու գործառույթ, ինչը և առկա է նրա գրեթե բոլոր կիրառություններում:

Բանալի բառեր - եղանակավորում, եղանակավորող մասնիկ, գործառույթ, կիրառություն, նախադասության տեսակ, ասույթ, ընդհանուր տեղեկույթ/գիտելիք, ցուցչայնություն:

СЕМАНТИКО-ФУНКЦИОНАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ МОДАЛЬНОЙ ЧАСТИЦЫ И ВОЗМОЖНЫЕ ВАРИАНТЫ ЕЕ ПЕРЕВОДА

КАРИНЭ ОГАНЕСЯН

Одним из многочисленных средств для выражения модальности в немецком языке являются модальные частицы. В статье обсуждаются семантико-функциональные особенности модальной частицы *ja*, ее проявления в различных видах предложений и возможные варианты перевода. Не существует общепринятого определения модальных частиц, поскольку их значения существенно отличаются от характерного описания значений слов других частей речи. Значение частиц более обобщенно и абстрактно и проявляется в основном в определенной коммуникативной ситуации. Модальная частица *ja* во всех вариантах употребления имеет функцию указания ситуации, темы, известной говорящему и слушателю.

Ключевые слова – модальность, модальные частицы, функция, употребление, вид предложения, высказывание, общие сведения/знание, дейктичность.

SEMANTIC AND FUNCTIONAL CHARACTERISTICS OF THE GERMAN MODAL PARTICLE JA AND ITS POSSIBLE ARMENIAN EQUIVALENTS

KARINE HOVHANNISYAN

Modal particles (MP) are one of the various ways of expressing modality in German. This article analyses the semantic functional characteristics of *ja*, the German modal particle, its various meanings in different sentences and possible renderings into Armenian. There is no precise acceptable definition for German modal particles because their meanings clearly differ from the distinctive meanings of other parts of speech. The meanings of these modal particles are more general and abstract and they mainly depend upon how they function in the sentence. The modal particle *ja* serves to refer to familiar circumstances, themes and this occurs in almost all cases.

Key words – modality, a modal particle, pragmatic function, application, sentence type, utterance, common knowledge, deixis.

**ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ, ԱՌԱՐԿԱ ԱՆՎԱՆՈՂ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ
ԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ,
ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

ՀԱՍՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Դարձվածային միավորները, որոնք վերաիմաստավորված նշում են որևէ առարկա, երևույթ կամ հատկանիշ, ըստ ձևաբանական և շարահյուսական կիրառության, կարող են ունենալ անվանական արժեք: Յուրաքանչյուր դարձվածային միավոր կազմվում է տվյալ լեզվի քերականական օրենքներով՝ հաշվի առնելով ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները: Անվանական արժեք ունեցող դարձվածային միավորները հարաբերակից են որևէ խոսքի մասի և հանդես են գալիս այդ խոսքի մասին բնորոշ առանձնահատկություններով: Դրսևորելով իրենց ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները՝ դարձվածային միավորները հանդես են գալիս որպես նախադասության ամբողջական անդամներ: Անվանական դարձվածային միավորներից ամենամեծաքանակը բայական կառույցներն են, քանի որ շատ անվանական դարձվածային միավորներ հնարավորություն ունեն համալրվելու անորոշ դերբայով և վերածվելու բայականի¹:

Բայական դարձվածային միավորների ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները: Բայական դարձվածային միավորների կազմում միշտ առկա է դարձվածքի գերադաս անդամ բայ բաղադրիչ: Բայ բաղադրիչին հատկանշական են սեռի, եղանակի, ժամանակի, դեմքի ու թվի քերականական կարգերը, հաստատական և ժխտական ձևերը: Բայական դարձվածային միավորների կազմում հանդես են գալիս անվանական բաղադրիչներ՝ իրենց հատկանշական քերականական կարգերով: Բայ բաղադրիչը բառակապակցություններում և դարձվածքներում կարող է հանդես գալ տարբեր սեռերով՝ փոխելով խնդրառությունը: Անցողական բայերը ներգործական և պատճառական սեռի են, իսկ անանցողականները՝ կրավորական և չեզոք: Հանդիպում են բայեր, որոնք սովորաբար գործածվում են ներգործական սեռով, բայց դարձվածքում վերածվում են չեզոք սեռի բայերի: Այս բայերի շարքում է դասվում կտրել բայը, որը ներգործական է, բայց որոշ

¹ **Բաղիկյան Խ.**, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան, 1986, էջ 161:

դարձվածքներում վերածվում է չեզոք սեռի՝ *ջուր կտրել, քար կտրել, կրակ կտրել*՝ կազմելով բայական հարադրություններ և կորցնելով խնդրառության հատկանիշը: Չեզոք սեռի (անանցողական) բայերը կարող են վերածվել ներգործական (անցողական) բայերի և պահանջել կրող խնդիր. դառնալ բայը անառարկա գործողություն է հաղորդում *հող ու մոխիր դառնալ* դարձվածային միավորին, ցույց է տալիս, որ ինչ-որ գործողություն ենթական ինքն է կատարում, առանց ուրիշի ներգործության, բայց պատճառական ձևով իմաստափոխվում է, ներկայացնում միջնորդավորված գործողություն՝ *հող ու մոխիր դարձնել*, որտեղից հասկացվում է, թե ինչ-որ մեկի պատճառով է մի բան ոչնչացել: Նմանատիպ հատկանիշներ են ցուցաբերում նաև *կրակի բաժին դառնալ-կրակի բաժին դարձնել, կրակի զոհ դառնալ-կրակի զոհ դարձնել, հողին հավասարվել-հողին հավասարեցնել, յոթերորդ երկինք բարձրանալ-յոթերորդ երկինք բարձրացնել, ամպերից իջնել-ամպերից իջեցնել, հոդս ցնդել-հոդս ցնդեցնել* դարձվածային միավորները: Որոշ դարձվածքներ կիրառական են միայն *ցն* պատճառական բայածանցով, որը իմաստատարբերակիչ դեր է կատարում, և բայասեռի փոփոխության դեպքում կարող են կորցնել վերահիմաստավորումը՝ բամբակի քթով ջուր խմեցնել: Դարձվածային միավորների չեզոք-պատճառական սեռային հակադրությունը կարող է կատարվել բայ-բաղադրիչի փոփոխության միջոցով: Միևնույն իմաստի արտահայտման համար կարող են գործածվել տարարմատ բայեր՝ *այն աշխարհը գնալ-այն աշխարհը ուղարկել, երկինք գնալ-երկինք ուղարկել, ջրից չոր դուրս գալ-ջրից չոր դուրս բերել, կարմիր արևից ընկնել-կարմիր արևից գցել*: Սեռային հակադրություն կարող է ստեղծվել *տալ* բայի հարադրությամբ, որը, արտահայտելով պատճառականի իմաստ, ընդգծում է գործողության կատարման միջամտությունը՝ *գլխին քար ու կարկուտ աղալ - գլխին քար ու կարկուտ աղալ տալ*: Բազմաթիվ բայական դարձվածային միավորներ ձևավորված են *տալ* բայով և սեռային հակադրություններ չեն կազմում՝ *(մեկին)օր ու արև չտալ, փեփուրները քամուն տալ, խեղը քամուն տալ*: Ներգործական կառուցվածքով որոշ դարձվածքներ կարող են սեռափոխվել կրավորականի, որտեղ իմաստատարբերակիչ դեր է խաղում *վ* կրավորական ցուցիչը, և նպատակ ունեն չընդգծել գործողություն կատարողին՝ *գեպին գլորել-գեպին գլորվել, գեպին փռել-գեպին փռվել, երկինքը կապել-երկինքը կապվել*: Երբեմն *վ* ցուցիչի առկայությունը չի փոխում դարձվածքի իմաստը՝ *կրակ թափել-կրակ թափվել, կրակ կտրել-կրակ կտրվել*, կարող է ունենալ չեզոք սեռի արժեք՝ *այն աշխարհը ջքվել*: Բայական դարձվածային միավորներում հանդիպում են նաև սեռային եռանդամ

հակադրություններ՝ չեզոք-ներգործական-կրավորական՝ նայած ինչն է առաջ-նային՝ գործողության վիճակը, կատարողը, թե՞ այդ գործողության կրողը՝ *յոթերորդ երկինք բարձրանալ-յոթերորդ երկինք բարձրացնել-յոթերորդ երկինք բարձրացվել, հոդս ցնդել-հոդս ցնդեցնել-հոդս ցնդեցվել*:

Ավելի հաճախ են հանդիպում սահմանական եղանակով ձևավորված դարձվածքները, որոնցում ժամանակի, դեմքի, թվի ցուցիչները փոխկապակցված են՝ *գլխին ամպեր են կուտակվել*: Եղանակաժամանակային ամբողջական հարացույց ունեցող դարձվածքները (*բերանը ջուր առնել, կարպեպը ջրից հանել, կրակի հետ խաղալ, հող փչել աչքերին*) բոլոր եղանակներով և ժամանակներով նույն հաջողությամբ չեն հանդես գալիս, ավելի հաճախ են հանդիպում մեկ եղանակով ու ժամանակով կազմված դարձվածային միավորները: Հրամայական եղանակի դարձվածքներում՝ *լավություն արա՛ ջո՛րը գցիր, սառը ջուր խմի՛ր*, խոսողի կամքը ի կատար է ածվում բայ բաղադրիչի դեմքի ու թվի միջոցով: Ենթադրական եղանակով կիրառվող դարձվածքները նկարագրում են որևէ իրավիճակ կամ ենթադրություն են անում որևէ երևույթի վերաբերյալ՝ *այդ խմորը շապ ջուր կվերցնի, ջուրը իր ճամփով կգնա*: Ըղձական եղանակով են ձևավորված դարձվածային արժեք ստացած օրինանքներն ու անեծքները՝ *աստված երկար արև փա, գլխիդ ծյուն գա, կյանքդ ջրի պես երկար լինի, գեպինը մտնես, հողը խաբար չփանի* և այլն: Բայական գերադաս բաղադրիչով դարձվածքներն ունենում են խոնարհման լրիվ կամ թերի հարացույց: Սակավաթիվ դարձվածային միավորներ կարող են հանդես գալ ներկայով, անցյալով և ապառնիով, մյուսները գործածվում են խոնարհման թերի հարացույցով՝ *կուժը ջրի ճամփին է կտրվում, գլխին ամպեր են կուտակվել, դեռ շապ ջրեր են հոսելու, մնացել է երկու կրակի արանքում, արևը վապ փեղ է մայր մտել*: Ընդհանրական ժամանակի իմաստ են արտահայտում այն դարձվածքները, որոնք բնութագրում են անձ, առարկա, վիճակ, գործողություն՝ *ջուրն ընկնողը ձեռքը գցում է փրփուրների*: Բայական դարձվածային միավորները հիմնականում կիրառվում են է էական բայի երրորդ դեմքով՝ *արևի մերը մեռել է, մի ուրը այս աշխարհում է, մյուսը՝ հողի փակ*, համեմատաբար քիչ են երկրորդ դեմքով հանդես եկող դարձվածքները՝ *լավություն արա, ջուրը գցի՛ր, անջուր փեղը մի՛ բոբիկանա* (հրամայական են), *երկար արև ունենաս* (ըղձական): Բարդ ստորադասական նախադասության կառուցվածքով հանդես եկող որոշ դարձվածքներում գլխավոր նախադասության բայ գերադաս անդամն արտահայտվում է երրորդ դեմքով, իսկ ստորադասականինը դրվում է երկրորդ դեմքով՝ *կրակն ածես՝ շորահոպ չի գա, կրակ փաս՝*

խանձահող չի գա, թքում ես երեսին՝ ասում է անձրև է գալիս: Բայական դարձվածային միավորների մեծ մասում եզակի-հոգնակի հակադրությունը կարող է ունենալ իմաստային տարբերություն՝ *ոտքը գեպինից կտրվել (ոտաբորիկ չլինել)-ոտքերը գեպինից կտրվել (շար ոտախանայ), ջուրն ընկնել-ջրերն ընկնել*, հանդիպում են անենթակա նախադասություններ, որտեղ խոսքը վերաբերում է ընդհանուրին՝ *կրակի առաջ չախմախի չեն տա* (խոսողը կամենում է նշել միայն գործողությունը, կատարողը տվյալ դեպքում կարևոր չէ?): Բայ գերադաս անդամով անվանական բաղադրիչները դարձվածքներ կարող են ձևավորել հոլովական վերջավորություններով, կապով, կապական բառերով, հարադրությամբ՝ *կրակին/կրակի վրա յուղ լցնել, հողին/հողի հետ հավասարեցնել, գեպինի տակ/գեպինն անցնել/մտնել, կրակի հետ խաղալ/խաղ անել:* Բայական դարձվածքների հատուկ է գերադաս բայական անդամի հաստատական-ժխտական հակադրությունը, երբ բայ-բաղադրիչին ավելանում է չ ժխտական մասնիկը՝ *այս աշխարհից չլինել, երկնքից աստղեր վեր չբերել:* Որոշ դարձվածքներ կարող են կիրառվել թե՛ հաստատական և թե՛ ժխտական ձևերով՝ *անջուր տեղը բորիկանալ-անջուր տեղը չեն բորիկանա, կրակի վրա յուղ լցնել-կրակի վրա յուղ չեն լցնի:* Որոշ դարձվածային միավորներ ժխտական ձևով կիրառվելիս ստանում են հաղորդակցական արժեք և հանդես են գալիս հարցական հնչերանգով՝ *կրակը ջանն ընկնել-հո ջանդ կրակ չի՞ ընկել, աշխարհը քանդվել - աշխարհը հո չքանդվե՞ց:* Մեծաքանակ են այն դարձվածային միավորները, որոնցում բայը կիրառվում է դրական ձևով՝ *ոտքերը ջուր անել՝ խմել, հող ու մոխիրը քամուն տալ, պղպոր ջրում ծուկ որսալ* և այլն, դրական-ժխտական հակադրություններ հազվադեպ են կազմում:

Ռուսերենում, ինչպես հայերենում և անգլերենում, մեծաքանակ են բայական դարձվածային միավորները, որոնք հիմնականում գործողություն են արտահայտում, կարող են հանդես գալ որպես ստորոգյալ և ստորոգյալի լրացում³: Բայական դարձվածային միավորներին հատուկ են դեմքի, թվի, ժամանակի, եղանակի, սեռի և կերպի քերականական կարգերը; Ռուսերենում բայական դարձվածքների մեծ մասը կարող է գործածվել թե՛ անորոշ ձևով, թե՛ խոնարհված՝ տարբեր ժամանակներով ու դեմքերով. հանդիպում են դարձվածային միավորներ, որոնք կիրառելի են միայն մեկ խոնարհված ձևով

² Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, Երևան, ԳԱ հրատ., հ. 2, 1964, էջ 13:

³ Молотков А.И. Основы фразеологии русского языка, Ленинград, изд. "Наука", 1977, с. 132.

(*ветер свистит в карманах*): Հանդիպում են դարձվածքներ, որոնցում բայը հանդես է գալիս միայն կատարյալ (*стереть с лица земли, пройти огонь и воду*) կամ միայն անկատար (*лить воду на мельницу, витать в облаках, тучи сгущаются*) կերպերով, բայց ավելի հաճախադեպ են այն դարձվածքները, որոնցում բայերը գործածվում են թե՛ կատարյալ (*совершенный вид*), թե՛ անկատար (*несовершенный вид*) կերպերով՝ *бросать (бросить) на ветер слова, бросать (бросить) деньги на ветер, пускать (пустить) по миру, выходить (выйти) сухим из воды, подливать (подлить) масла в огонь, перевозносить (перевознести) до небес, прятать (спрятать) концы в воду* և այլն: Միայն բայի անկատար կերպով գործածված դարձվածային միավորները կարող են հանդես գալ ներկա, անցյալ, ապառնի ժամանակներով (*небо с овчинку кажется, небо с овчинку казалось, небо с овчинку покажется; почва колеблется под ногами, почва колебалась под ногами, почва будет колебаться под ногами*), իսկ բայի կատարյալ կերպով կազմված դարձվածքները կարող են դրվել անցյալ և ապառնի ժամանակներով (*с луны свалился, с луны свалится*): Թվի քերականական կարգը ոչ մի սահմանափակում չունի, բայը միևնույն դարձվածքում կարող է կիրառվել և՛ եզակիով, և՛ հոգնակիով: Տարբեր եղանակային ձևերը հավասարապես կիրառվում են բայական դարձվածքներում, փոքր-ինչ առանձնանում են սահմանական և հրամայական եղանակով կիրառվող կապակցությունները, որոնք համեմատաբար ավելի շատ են (*тучи сгущаются, ищи ветра в поле*): Ռուսերենում հանդիպող բնության երևույթ, առարկա անվանող բաղադրիչներով բայական դարձվածքներում բայերը հիմնականում ներգործական սեռի են (*терять почву под ногами*), կրավորական կառույցները գործուն չեն: Բայական դարձվածքներում գործածվում են նաև ժխտական ձևերը (*от земли не видать, мир не производил*):

Անգլերենում հանդիպող բայական դարձվածային միավորները հանդես են գալիս բայ խոսքի մասին հատկանշական բոլոր առանձնահատկություններով: Դարձվածքների մեծ մասը ձևավորված է անորոշ դերբայով (*հաճախ to be, to have, to get, երբեմն to make*) *be in hot water, be in smooth water, have one's head in the clouds, make smb's mouth water, get wind of, keep one's head above water, play with fire, dance on a volcano*, բայերը որոշ դարձվածքներում չեն գործածվում շարունակական և վաղակատար շարունակական կերպերով, ուստի և չեն կիրառվում այդ կերպերով կազմվող ժամանակային ձևերով, բայ բաղադրիչը կարող է հանդես գալ ժամանակային խոնարհման լրիվ, ավելի հաճախ թերի հարացույցով՝ *a lot of water has flown, it's raining*

cats and dogs: Բայական դարձվածքներում հողը իմաստազատիչ դեր չի խաղում (*beat the air, steal smb's thunder, dance on a volcano*), բայց կարևորվում են նախդիրները, որոնք իմաստային նրբերանգներ են հաղորդում դարձվածքներին՝ *pull smb out of the fire, drive out fire with fire, cut the ground from under smb's feet, praise smb to the skies, be on top of the world*: Բնության երևույթ, առարկա անվանող բաղադրիչները բայական դարձվածքներում կարող են կիրառվել թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվով, այնպես, ինչպես ձևավորված է պատրաստի դարձվածային միավորը (*cut the ground from under one's feet, kill two birds with one stone, carry water on both shoulders, see stars, hitch one's wagon to a star*): Անգլերենում առավել հաճախ են հանդիպում բայի սահմանական եղանակով կազմված բայական դարձվածքներ (*the fat's in the fire*), սակայն կիրառական են նաև ըղձական եղանակով կազմվածները (պայմանական)՝ *if it rains, it rains on all alike*, երբեմն հանդիպում են բայի հրամայական եղանակով կազմված դարձվածային միավորներ (*make hay while the sun shines*): Սեռի քերականական կարգը, որ խիստ կարևոր ու հատկանշական է անգլերեն դարձվածքներին, պարզաբանում է, թե ով է կատարում կամ կրում գործողությունը: Ավելի հաճախ հանդիպում են ներգործական կառույցներ, հազվադեպ՝ կրավորական՝ *the moon is made of green cheese*: Հաստատական-ժխտական հակադրություններում ժխտական մասնիկը կարող է վերաբերել բային (*not, don't*), դարձվածքի կազմում եղած գոյականին (*no*) կամ լինել դարձվածքի բաղադրիչ ժխտական անդամ՝ *puff not against the wind, feel like nothing on the earth*: Բայական դարձվածքների համար կարևոր նշանակություն ունեն փոփոխելի որոշարկիչները (*one's, somebody's, something, somebody, one, oneself*), որոնք անհրաժեշտության դեպքում փոխարինվում են համապատասխան դերանուններով, գոյականներով՝ ելնելով համատեքստի պահանջներից: Հանդիպում են նաև հարցական կառուցվածքով կաղապարված դարձվածային միավորներ՝ *what wind brings you here?, what is in the wind?* և այլն:

Բնության երևույթ, առարկա անվանող բաղադրիչներով բայական դարձվածային միավորները հայերենում, ինչպես նաև ռուսերենում և անգլերենում նախադասության մեջ կարող են կատարել շարահյուսական տարբեր պաշտոններ՝ ստորոգյալի, ենթակայի, որոշչի, խնդիրների, պարագաների: Օրինակ՝

Նրա ամբողջ ունեցվածքը *կրակի բաժին դարձավ*: (ստորոգյալ)

Պետք չէ *ծուկը ջրում* բազար անել: (ենթակա)

Ինչ է, դու ինձ *այն աշխարհը ուղարկելու* ճանապարհի ես ցույց տալիս:
(որոշիչ)

Խեղճ Վարոսը *վաղ աստղի փակ ծնվելուց* էր բողոքում: (անուղղակի խնդիր)

Ուրիշի ձեռքով կրակից շագանակներ հանելով՝ շատ հեռու չես գնա:
(ձևի պարագա)

Երկու կրակի մեջ մնալուց հետո էլ ինչ պետք է ասես: (ժամանակի պարագա)

-Я никогда в азартные игры не играю,- заметил Санин.- В самом деле? Да вы совершенство. Впрочем и я не играю. Глупо *бросать деньги на ветер*. (Тургенев, Вешние воды).(ենթակա)

-Чего же вы – *воды в рот набрали?* – досадуя, спросил Иван Алексеевич (Шолохов, Тихий Дон).(ստորոգյալ)

Душой общества являлся Ястребов..., опытный человек, *прошедший сквозь огонь, воду и медные трубы* (Мамин-Сибиряк, Золото). (որոշիչ)

Тогда рухнет призрачная сила сильных своей жадностью, *уйдет земля из-под ног* их и не на что будет опереться им (М.Горький “Мать”).(ստորոգյալ)

“I’ll be damned if he *isn’t stealing most of my thunder*,” thought Mason to himself at this point (Th. Dreiser).(ստորոգյալ)

He was wise enough to make no immediate attempt *to recover lost ground* (A.Christie “Dumb Witness” ch. VIII).(նպատակի պարագա)

I had no wish *to draw the enemy’s fire* upon myself (A.J.Cronin “Shannon’s Way” book II ch. X).(խնդիր)

The audience knew that he was *on slippery ground* and not sure of his facts (DEI).(տեղի պարագա)

His cordial agreement with all I said *cut the ground from under my feet* (W.S.Maugham “The Moon and Sixpence” ch.XII).(ստորոգյալ)

Բայական դարձվածքների շարահյուսական առանձնահատկությունները դիտարկվող լեզուներում հիմնականում համընկնում են, նրանք կարող են գործածվել ինչպես բայական, այնպես էլ անվանական անդամների և դրանց լրացումների պաշտոններում: Նախադասություններն արտացոլում են դարձվածային միավորների ձևաբանական և շարահյուսական կիրառությունները և դրանց յուրահատկությունները՝ ելնելով լեզուների կառուցվածքային ինքնատիպությունից:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ներկայացվում են նշված բաղադրիչներով բայական դարձվածային միավորների ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները դիտարկվող լեզուներում: Բայական դարձվածային միավորներին հայերենում հատկանշական են սեռի, եղանակի, ժամանակի, դեմքի, թվի քերականական կարգերը, հաստատական և ժխտական ձևերը, ռուսերենում հատկանշական է նաև կերպի քերականական կարգը: Անգլերենում, բացի նշված առանձնահատկություններից, կարևորվում են նախդիրները, երբեմն՝ հոդերը: Նշված բաղադրիչներով բայական դարձվածային միավորները դիտարկվող լեզուներում նախադասության մեջ կարող են կատարել բայ խոսքի մասին հատուկ շարահյուսական պաշտոններ:

Բանալի բաներ – բայական դարձվածային միավորներ, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկություններ, քերականական կարգեր, նախդիրներ և հոդեր, շարահյուսական պաշտոններ:

ГЛАГОЛЬНЫЕ ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ ЕДИНИЦЫ С КОМПОНЕНТАМИ, ОБОЗНАЧАЮЩИМИ ЯВЛЕНИЯ И ОБЪЕКТЫ ПРИРОДЫ В АРМЯНСКОМ, РУССКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

АСМИК ПЕТРОСЯН

Представлены грамматические (морфологические и синтаксические) особенности глагольных фразеологических единиц с компонентами, обозначающими явления и объекты природы в армянском, русском и английском языках. Глагольным фразеологизмам в армянском языке свойственны грамматические категории залога, наклонения, времени, лица, числа, утвердительные и отрицательные формы, в русском языке – еще и вида. В английском языке, кроме перечисленных особенностей, важную роль играют предлоги и артикли. В данных языках глагольные фразеологизмы с упомянутыми компонентами могут занимать синтаксическую должность глагола как части речи в предложении.

Ключевые слова – глагольные фразеологические единицы, морфологические и синтаксические особенности, грамматические категории, предлоги и артикли, синтаксическая должность.

**VERBAL PHRASEOLOGICAL UNITS WITH COMPONENTS COVERING NAMES
OF PHENOMENA OF NATURE AND OBJECTS IN ARMENIAN,
RUSSIAN AND ENGLISH**

HASMIG PETROSSIAN

Morphological and syntactical features of verbal phraseological units with names of phenomena of nature and objects in Armenian,

Russian and English have been presented. The grammatical categories of voice, mood, time, person, number, positive and negative forms are characteristic to the verbal phraseological units of the Armenian language, while the category of aspect is typical for the Russian language as well. Besides the above mentioned features, prepositions and sometimes articles are of considerable significance in the English language. In the considered languages, verbal phraseological units with the above mentioned components can perform syntactic functions characteristic to the verb as a part of speech in a sentence.

Key words – verbal phraseological units, morphological and syntactical features, grammatical categories, prepositions and articles, syntactical positions.

ՀԱՄԱԴԱՆԻ ՀԻՆ ԲԱՐՔԱՌԻ ՈՐՈՇ ԲԱՌԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

ՍԵՅԵԴԵ ՇՈՀՐԵ ՍԱԶԱԴԴԻ (ԻՐԱՆ)

Համադանի հին բարբառը, որ Համադանի ֆահլավիյաթների լեզուն է, այժմ մոռացված է: Վերջինիս տեղը զբաղեցրել է մի բարբառ, որ կրում է ժամանակակից պարսկերենի ազդեցությունը: Այս բարբառով գրված կարևորագույն հուշարձանը Բաբա Թահերի¹ դրբեյթիներն են, որոնք, նույնպես կրելով պարսկերենի ազդեցությունը, ժամանակի ընթացքում փոփոխություններ են կրել: Փոփոխություններն այնքան շատ են, որ այս դրբեյթիները չեն կարող համարվել հատուկ խոսվածքով գրված, չնայած հին օրինակներում դրանց բարբառային առանձնահատկություններն ակնհայտ են: Քերականական, բառապաշարային և հնչյունական առանձնահատկությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս որոշելու այս բարբառի տեղը իրանական լեզուներում. այն պատկանում է հյուսիսարևմտյան խմբին: Ժամանակակից լեզուներից Համադանի հին բարբառի հետ բառային, հնչյունական ընդհանրություններ ունի թաթերենը:

Հոդվածում ներկայացվելու են Համադանի հին բարբառից որոշ բառեր, որ վերցված են Բաբա Թահերի ֆահլավիյաթներից և այսօր գործածություն չունեն:

Az «ես»² < Ավ. azəm³, հին պրսկ. adam «ես»⁴, պահլ. az⁵: Այս դերանունը Համադանի ներկայիս բարբառում, ինչպես նաև նոր պարսկերենում չի պահպանվել, սակայն գործածվում է թաթերենում az «ես»⁶, ինչպես նաև քրդերե-

¹ **Bābā Tāher**, Dobeytihā, tashih Dastgardi, H. V. , Tehrān, 1390:

² **Hasan Dust M.** Farhang-e tatbiqi-ye mozu-ye zabānhā va guyešāh-ye īrāni-ye no, Farhangestān-e zabān va adab-e fārsī, Tehrān, 1389, s. 1045-46 (այսուհետև՝ Farhang-e tatbiqī):

³ **Bartholomea Ch.** Altiranisches Wörterbuch, Berlin:Walter de Gruyter & Co, 1961, p. 225 (այսուհետև՝ AiW):

⁴ **Kent, Roland J.** Old Persian Grammar, Texts, Lexicon, Tehran, Tahouri, 1953, p. 166 (այսուհետև՝ OP.):

⁵ **MacKenzie, D. N.** A Concise Pahlavi Dictionary. Oxford, 1971, p. 15 (այսուհետև՝ CPD):

⁶ **Maaraji Lord, J.** Farhang-e mozui-ye tāti be fārsi, Rašt, Bolur, 1388, s. 162 (այսուհետև՝ Farhang-e mozui-ye tāti):

նում, Արիանեի, Ամորեի, Աշթիանիի, Դանեսֆահանիի, Էշթեհարդիի բարբառներում:

از (من) آن اسپیده بازم همدانی ای (که) تنهایی کنم نجیروانی (نجیربانی)

azān espēdā bāz-om hammadānī e tanhāyī karom na:čīrvānī

Ես Համադանի այն սպիտակ արծիվն եմ,

Որ միայնակ եմ որս անում:

Barāmān «լացելով»⁷ (ենթակայական դերբայ) < barāmīdan «լացել» (անորոշ դերբայ) < հնդեվրոպ. *b^hrem «գոռալ, ողբալ»⁸, հին իր. *bram «լացել, ողբալ»⁹, պահլ. brāmīdan, brām «լացել»¹⁰, խանսարի boroftan, borm «լացել»¹¹, թաթ. bəramānesan «լացեցնել»¹², barmār «լացելով», միմե berma «լաց»¹³, մահալաթի burmā «լաց», աֆթարի burmā, burm «լացել»:

پنج روژی هنی خرم جهان بی زمین خندان برامان آسمان بی

panj rōž-ē hanī xorram gahān bē zamin xandān barāmān āsamān bē

Հինգ օր է՝ աշխարհը ուրախ է,

Երկիրը ծիծաղում է, երկինքը՝ լացում:

Bašn «մարմին»¹⁴ հավանաբար < հին իր. *baršnu «բարձրություն»¹⁵, barz «բարձր լինել», Ավ. barəšnu «բարձրություն», հին պրսկ. baršan «բարձր, խորը»¹⁶, պահլ. bašn¹⁷, պարթ. bašn¹⁸ «զլուխ, գազաթ, կազմվածք», պրսկ.

⁷ **Hasan Dust M.** Farhang-e tatbiqi, s. 909:

⁸ **Reichert, L.** Lexicon Der Indogermanischen Verben, Weisbaden, editor Rix, H, 2001, p. 94 (այսուհետև՝ LIV):

⁹ **Cheung, J.** Etymological Dictionary Of The Iranian Verbs, Leiden-Boston, Brill, 2007, p. 24 (այսուհետև՝ EDIV):

¹⁰ **MacKenzie, D. N.** CPD, p. 19:

¹¹ **Ašrafī Xānsāri, M.** Guyeš-e Xānsāri, Tehrān, Pažuhešgāh-e olum-e ensāni va motāleāt-e farhangī, 1383, s. 41:

¹² **Maaraji Lord, J.** Farhang-e mozui-ye tāti, s. 204:

¹³ **Fathi, Š.** Guyeš-e Mime-yi, Tehrān, Pažuhešgāh-e olum-e ensāni va motāleāt-e farhangī, 1392, s. 188 (այսուհետև՝ Guyeš-e Mime):

¹⁴ **Hasan Dust, M.** Farhang-e rišešenaxti-ye zabān-e fārsi, Farhangestān-e zabān va adab-e fārsi, Tehrān, 1389, s. 204:

¹⁵ **Bartholomea, Ch.** AiW, p. 951:

¹⁶ **Kent, Roland J.** OP., p. 200:

¹⁷ **MacKenzie, D. N.** CPD, p. 39:

¹⁸ **Durkin-Meisterernst, D.** Dictionary of Manichaeic Texts, Vol. III, Texts from Central Asia and China, edited by Nicholas Sims-Williams, Part I. Dictionary of Manichaeic Middle Persian and Parthian, Belgium, Brepols, 2004, p. 111 (այսուհետև՝ DMMPP):

bašan «մարմին, կազմվածք», միմե bašn «մարմին»¹⁹, Համադանի բարբառում bašn «մարմին, կազմվածք»²⁰:

گر او بَشَنَش نِهِي آن دار شمشاد گر اُ روشن کری آواج بِلِيلِ

gar o bašn-aš nehē ān dār-e šemšād / gar o rōn-aš karē āvāj-e belbel

Եթե այգումը տոսախ տնկես,

Եթե տխասկի երգին ականջ դնես:

Gyān «հոգի»²¹ < Ավ. vyānā «գիտակցություն»²², պահլ. gyān (vyāna²³ ձևից) «հոգի»²⁴, պարթ. gyān «հոգի»²⁵, ամորեի giyō, ֆարիզիանդի gun, հար-զանդի gun, վաֆսի gan, զազաքի gān, գուրանի gyān:

گیان و اویان دو زانستن روانی زانک گیان و اویان از هم ودا نی

gyān-oōyān do zānestan ravā ni zān-ka gyān , oōyān do zānestan ravā ni

Սիրահարին ու հոգին թույլատրելի չէ առանձնացնել

Զգիտեմ՝ հոգին ո՞րն է, սիրահարը՝ ո՞րը:

Dim «դեմք», պարթ. և ման. պրսկ. dēm, պահլ. dēm «դեմք» < հին իր. *dima-, *daiH- արմատից: Պրսկ. dim, ամորեի, անարաքի, աշթիանի, չալի, էբրահիմ աբադի, համադանի²⁶, Սպահանի հրեական բարբառում²⁷ dim «դեմք, երես»:

Dim բառը «դեմք» իմաստով օգտագործվում է Իրանի հյուսիսային և կենտրոնական բարբառներում, իսկ հարավ և հարավարևմտյան բարբառներում հազվադեպ է վկայված: Այդտեղ գործածվում է ru բառը, որ հանդիպում է նաև Շահ Դայի Շիրազի ստեղծագործություններում, որ հավանաբար վերցված է ոչ թե Շիրազի բարբառից, այլ պարսկերենից:

که ما خود عاشقان را و اشناسیم که دیم عاشقان را رنگ نگو

¹⁹ Fathi, Š. Guyeš-e Mime, s. 187:

²⁰ Grosin, H. Važename-ye Hamadāni, Tehrān, Hirmend, 1384, s. 67:

²¹ Hasan Dust M. Farhang-e tatbiqī, s. 351:

²² Bartholomea, Ch. AiW, p. 1478:

²³ Nyberg, H. S. A Manual Of Pahlavi, Tehran, Asatir, 2002, p. 106 (այլուհետև՝ Man.Pah):

²⁴ MacKenzie, D. N. CPD, p. 39:

²⁵ Durkin-Meisterernst, D. DMMPP, p. 168:

²⁶ Grosin, H. Važename-ye Hamadāni, Tehrān, Hirmend, 1384, s. 147:

²⁷ Kalbāsi, Ī. Guyeš-e Kalimiān-e Esfahān, Tehrān, Pažuhešgāh-e olum-e ensāni va motāleāt-e farhangī, 1385, s. 214:

ke mā xod āšeqān rā vā-šenāsīm ke dim-e āšeqān rā rang nabu

Մենք էլ սիրահարներին դեմքից ենք ճանաչում,

Քանի որ նրանց դեմքը գույն չունի:

Harzē «ազատում ես»²⁸ (սահմանական եղ. ներկա Ժ., 2-րդ դեմք, եզ. թիվ), անորոշ դերբայը heleštan «ազատել, թույլ տալ», որի ներկայի հիմքը պարսկերենում, ինչպես նաև Համադանի բարբառում hel կամ hal է: Heleštan <հնդեվրոպ. *selǵ «հեռացնել», հին իր. *harz²⁹, Ավ. haršta «ազատված»³⁰, հին պրսկ. hard «առաջ ուղարկել, լքել»³¹, սանսկ. srj «առաջ ուղարկել», պահլ. hištan, hil- «ազատել, թողնել»³², ֆարսի-է դարի heleštan, haštan «ազատել», Աբխանի բարբառում hārz, hašta «թողնել»: Համադանի նոր բարբառում գործածվում է հարավարևմտյան haštan, hal- «թողնել»³³ ձևը:

سرانجامان بشی، به یا بهرزی یای ته گور و ماوای ته گل

saranjāmān bašē, ba yā baharzē yāy-e te gōr ve māvā-ye te gel

Վերջում կգնաս (կմեռնես), մի տեղ կթողնես,

Տեղը քո գերեզման է, օթևանդ՝ կավ:

Hāxtan, hāž «հակում ունենալ»: Պարսկերենում hāxtan/hāž բայն ունի «թափառել» իմաստը, իսկ hāzidan բայը՝ «իմանալ, հետևել» իմաստը, պահլ. hāxtan, hāž «առաջնորդել, ուղղորդել»³⁴: Ներկայի hāz-/hāž հիմքը ցույց է տալիս բարբառային երկու՝ հյուսիսային և հարավային ձևերը, որոնք հավանաբար մեկ ընդհանուր *hač արմատից են: Համադանի նոր բարբառում hāxtan անորոշ դերբայ գոյություն չունի:

پنج روژی هنی هازید سامان نه جینان نام و نه ژ آنان نشان بی

panj rō-yē hani hāžēd sāmān / na j-ēnān na/m-o na-ž ānān nešān bē

Հինգ օր է՝ աշխարհը ուրախ է,

Նրանցից ոչ անուն կա, ոչ էլ նշան:

²⁸ Hasan Dust M. Farhang-e tatbiqī, s. 933:

²⁹ Reichert, L. LIV, p. 133:

³⁰ Bartholomea, Ch. AiW, p. 1792:

³¹ Kent, Roland J. OP., p. 214:

³² MacKenzie, D. N. CPD, p. 528:

³³ Grosin, H. Važename-ye Hamadāni, Tehrān, Hirmend, 1384, s. 256:

³⁴ Nyberg, H. S. Man.Pah, p. 43:

Kardan, kar- «անել, կատարել»³⁵, հին իր. *kar- «անել, իրականացնել»³⁶, հնդեվրոպ. *k^wer «կատարել, իրականացնել», Ավ. kar «կատարել», հին պարսկ. kar «անել», պահլ. kardan, kun «անել», պրսկ. kardan «անել»: Աշթիանիի բարբառում kard, kar- , Խանսարիի բարբառում kertan, ker- «իրականացնել»³⁷: Բաբա Թահերի ստեղծագործություններում ներկայի kar- հիմքի գործածությունը վկայում է , որ Համադանի բարբառը պատկանում է իրանական լեզուների հյուսիսարևմտյան խմբին:

از آن اسپیده بازم همدانی ای (که) تنهایی کرم نچیروانی

azān espēdā bāz-om hammadāni e tanhāyi karom na:čirvāni

Ես Համադանի այն սպիտակ արծիվն եմ,

Որ միայնակ եմ որս անում:

Katan, kap-/f- «ընկնել», հին իր. *kap/f- «ընկնել» արմատից, պահլ. kaftan, kaf- «ընկնել»³⁸, պարթ. kaf- «ընկնել», պարսկ. kaftan «ընկնել», Սպահանի հրեական բարբառում kafdan, dar-k-, աֆթարի kat, ko-, լասգերդի bekaton³⁹, միսեի dar-, dar-ke-, katan «ընկնել»⁴⁰:

یا از این بند در از ناو کتیم خوئم اخوردُ در خوناوه کتیم

yā aẓ ēn band dar aznāva katēm xōn-om adxord-o dar xōnāva katēm

Հանուն այս գերու մինչև հասա Ազանավա,

Շատ տանջվեցի:

Kež «որևէ մեկը», Ավ. kascit, հին պրսկ. kašciy⁴¹, պահլ. kas, պարթ. kež, Համադանի նոր բարբառում kas, Համադանի հրեական բարբառում kiji.

که نه وا کیژ بی اید بیانه بومان دانه زیونده مانوم یا نمانوم

ke ne vā kež be in biyāne būmān dānē zivanda mānom yā nemānom

Այս աշխարհում մեկը չպե՛տք է լինի,

Որ իմանա՛ կենդանի եմ, թե՛ ո՛չ:

Ō «դեպի», Ավ. ava⁴², հին պրսկ. avā⁴³, պահլ. ō⁴⁴: Այս կապը Համադանի ներկայիս բարբառում չի գործածվում:

³⁵ Hasan Dust M. Farhang-e tatbiqī, s. 890:

³⁶ Reichert, L. LIV, p. 391:

³⁷ Ašrafi Xānsāri, M. Guyeš-e Xānsāri, s. 119:

³⁸ Ghilain, A. Essai Sur La Langue Parthe, Louvian-Leuven, 1939, p. 56 :

³⁹ Heydaryān, A., Heydaryān, H. Guyeš va vāženāme-ye Lāsgerdi, Semnān, 1391, s. 174 :

⁴⁰ Fathi, Š. Guyeš-e Mime, s. 173:

⁴¹ Bartholomea, Ch. AiW, p. 424:

وقت مردن به یاسینم چه حاجت سه چارم پهلوی اوسر بخوانند

vaqt-e mordan be yāsin-om ce hājat se čār-om pahlavi ō sar be-xānand

Մեռնելու ժամանակ յասինի⁴⁵ կարիք չկա,

Երեք-չորս ֆահլավիյաթ թող կարդան:

Run «կողմ, ուղղություն», պահլ. rōn «կողմ, ուղղություն»⁴⁶ < Ավ. raven-

«գետի հունը»: Համադանի ներկայիս բարբառում չի գործածվում:

گر او بشنشد نهی آن دار شمشاد گر ارونش کری آواج بلبل

gar o bašn-aš nehē ān dār-e šemšād gar o rōn-aš karē āvāy-e belbel

Եթե այգումդ տոսախ տնկես,

Եթե սոխակի երգին ականջ դնես:

Tehra «մոայլ, մութ», Ավ. təθra «մթություն»⁴⁷, պահլ. tērag «մութ»⁴⁸:

شو ار چه تهره بی هم بامشی پی دل ار چه سوته بی هم کامشی پی

šow ar če tehra bi ham bāmaši pey del ar če sūta bi ham kāmaši pey

Չնայած գիշերը մութ է, իրենից հետո առավոտ ունի:

Չնայած սիրտը այրված է, ցանկություն ունի:

Այս բեյթը վկայված է Ադիբ Թուսիի մոտ, ով կարծում է, որ բեյթը Բաբա Թահերի ստեղծագործություններից է:

Vāšame «զլխաշոր, չադոր» * var «հազցնել» արմատից, հնդեվրոպ.

*Huer-, Ավ. var- «ծածկել»⁴⁹, սանսկ. var- «հազցնել»⁵⁰, սողդ. wāšāme «զլխաշոր, չադոր»⁵¹: Համադանի նոր բարբառում չի գործածվում:

سیا واشامه پیشین اما کژ وا در آن چه کرد و این چبو

siyā vāšāme-ye pišin-e amā kaž vā dar ān če kard-o in če bu⁵²

⁴² Bartholomea, Ch. AiW, p. 163:

⁴³ Kent, Roland J. OP., p. 172:

⁴⁴ Nyberg, H. S. Man.Pah, p. 143:

⁴⁵ Ղուրանի սուրահներից մեկը, որ կարդում են մահացողի զլխավերևում:

⁴⁶ MacKenzie, D. N. CPD, p. 72:

⁴⁷ Bartholomea, Ch. AiW, p. 650:

⁴⁸ MacKenzie, D. N. CPD, p. 83:

⁴⁹ Reichert, L. LIV, p. 227:

⁵⁰ Pokorny, J. Indogermanisches Etymologisches Wörterbuch, Bern- Stuttgart, 1959, p. 1160:

⁵¹ Qarib, B. Farhang-e soğdi, Tehrān, Farhangān, 1383, v. 9865:

⁵² Այս դրբեյթի իմաստը հասկանալի չէ:

Vašāndan, vašan «թափել, սփռել» va նախածանցից և šāndan անորոշ դերբայից < հին իր. * šan «շարժել», խորեզվ. šyn «դողայ»⁵³, պարթ. wišan «հեռու շարտել»⁵⁴, պահլ. afšāndan, afšan-«թափել, սփռել»⁵⁵, պարսկ. afšāndan, šāndan «սփռել, շաղ տալ», ռամսարի šāndan, šān«սփռել»⁵⁶, թաթ. ašāndan «շաղ տալ»⁵⁷, համ. ešāndan «զցել»⁵⁸:

بشم بَ الوند دامان مَو نشانم دامن اژ هر دو گیتی هاوشانم

bašom b-alvand dāman mō nešānom dāman až har do gēti hāvašanom

Գնամ Ավվանդի լանջին մազերս բաց թողնեմ

Եվ երկու աշխարհից էլ ձեռք քաշեմ⁵⁹:

Vātan, vāj «խոսել», հին իր. *vak- «խոսել, ծայն տալ», Ավ. vac- «խոսել», սանսկ. vac- «խոսել», պահլ. wāxtan, wāž «խոսել», պարսկ. āvāxtan- āvāz, āvā , խանսարի vātant, vāž «խոսել, զրուցել»⁶⁰, Սպահանի հրեական բարբառում vājan «խոսել»⁶¹, թաթ. vājār «խոսող»⁶²:

ديم آلاله‌ای در دامن خار واتم آلالیا کی چينمت بار

dim ālāle-i dar damen-e xār vātom ālāliyā key činomet bār

Փշի կողքին հրատուկ տեսա,

Ասացի է-յ հրատուկ, ե՞րբ քաղեմ քեզ:

Živande «ողջ, կենդանի», հնդեվրոպ. *g^{wei} , հին իր. *jiva, ներկայի հիմքը *jiv- «ապրել», հին պարսկ. jiv- «ապրել»⁶³, սանսկ. jiv- «ապրել», պահլ. zī(wi)stan, zīw- «ապրել»⁶⁴, պարթ. zīwandag «ողջ, կենդանի», պրսկ. zende «ողջ, կենդանի», միսե janda⁶⁵, Սպահանի իր. բարբառում jande «կենդանի»:

ب شهر واجن وهشت و دوژ هی نی من ژيونده با/وا چشمان خود دی

⁵³ **Samadi, M.** Das Chwaresmische Verbum, Weisbaden, Verlag, 1986, p. 198:

⁵⁴ **Bāğ Bidi, R.** Rāhnemā-ye zabān-e pārti, Tehrān, Qoqnuş, 1385, s. 207:

⁵⁵ **MacKenzie, D. N.** CPD, p. 5:

⁵⁶ **Šakari, G.** Guyeš-e Ramsari, Tehrān , Pažuhešgah-e olum-e ensāni va motāleāt-e farhangi, 1385, ,s. 143:

⁵⁷ **Maaraji Lord, J.** Farhang-e mozui-ye tāti, s. 202:

⁵⁸ **Grosin, H.** Važenname-ye Hamadāni, Tehrān, Hirmend, 1384, s. 50:

⁵⁹ Այս տողի իմաստն այնքան էլ պարզ չէ:

⁶⁰ **Ašrafi Xānsāri, M.** Guyeš-e Xānsāri, s. 122:

⁶¹ **Kalbāsi, Ī.** Guyeš-e Kalimian-e Esfahān, s. 124:

⁶² **Maaraji Lord, J.** Farhang-e mozui-ye tāti, s. 159:

⁶³ **Kent, Roland J.** OP., p. 185:

⁶⁴ **MacKenzie, D. N.** CPD, p. 99:

⁶⁵ **Fathi, Š.** Guyeš-e Mime, s. 206:

be šahr vājen vehešt-o dužahi ni man-e žiwande [bā/vā] češmām-e xod di
 Քաղաքը, ասում են, դրախտ է, և դժոխք չկա,
 Ես այն ասքերովս եմ տեսել:

Zārej «կաքավ»⁶⁶, պրսկ. zarij, խոտաներեն ysara⁶⁷, Ավ. zaranya «դե-
 դին»⁶⁸, քրդ. žarēš, փաշտոո zarka, գիլաքի zaraj, խոյինի zarāj, սանգ. zaraž
 «կաքավ»:

زارچُم دی ودایِ مورجِ ادخورد مورجانِ دو دستیش اُ خوا دَرَد
 zārej-om di vedā-ye mōrej adxard morejān-e do dastaš o xodā dard
 Կաքավ տեսա, որ ուտում էր մրջյունների կերը,

Այն մրջյունը երկու ձեռքը դեպի աստված էր տարածել:

Վերոնշյալ բառերից Համադանի նոր բարբառում միայն չորսն են օգ-
 տագործվում, որոնք ցույց են տալիս այն բառապաշարային փոփոխություն-
 ները, որ տեղի են ունեցել այս լեզվում: Բաբա Թահերի դրեյթիներից մի
 քանիսում բայի ներկայի հիմքում հին իրանական Շ-ն, պահլավերենում z,
 դարձել է j կամ ž, իսկ Համադանի ներկայիս բարբառում՝ z: Բերենք մի քանի
 բայի օրինակ Բաբա Թահերի ֆահլավիյաթներից, որտեղ ներկայի հիմքը
 վերջանում է j- ով. āmuxtān, ն. հիմքը āmuj- < *ā-mauč-a «սովորեցնել»,
 godaxtan- godāj-< *wi-tāč-a- «հավելել», navāxtan- navāj- < *ni-vāč-a «խոսել», rixtan-
 rij- < *raič-a- «թափել», sāxtan- sāj- < *sāč-a- «կարողանալ, պատրաստել»,
 suxtan, - suj- < sauč-a «այրել, այրվել», vāxtan-vāj- < *vāč-a- «խոսել»: Այս օրինա-
 չափությունը նկատվում է նաև այլ բարբառներում, օրինակ՝ թաթերեն afsustan
 -afsuj «այրվել», āpātan - āpāj «կաշին հանել», սարի teten - taj «վարգել, սուրալ»,
 ուսմասրի vorut-en - voruj- «փախչել», dot-en - duj- «կարել»:

Համադանի բարբառը, երկար ժամանակ գտնվելով պարսկերենի ազ-
 դեցության տակ, կորցրել է որոշ քերականական առանձնահատկություններ:
 Օրինակ՝ էրգատիվ կառույցը, որ այսօր այլևս գործածություն չունի: Ալի Աշրաֆ
 Սադեդին, ուսումնասիրելով Համադանի ֆահլավիյաթները, կարծում է, որ
 Համադանի հին բարբառը տարածված է եղել X դարի վերջից XI դարի սկիզբը:
 Համադանի հրեական բարբառը, որ մեկուսացված է եղել, մինչ այժմ
 պահպանել է բառապաշարային հին բառեր (օր.՝ masdar «մեծ», kasdar
 «փոքր», հմմտ. պահլ. meh «մեծ», keh «փոքր»), որոնք Համադանի այսօրվա

⁶⁶ Hasan Dust M. Farhang-e tatbīqī, ss. 246-47:

⁶⁷ Bailey, H. Dictionary Of Khotan Saka, Cambridge, Cambridge University Press, 1979, pp. 346-47:

⁶⁸ Bartholomea, Ch. AiW, pp. 1680-81:

բարբառում չեն գործածվում, կամ նրանց տեղը զբաղեցրել են պարսկերեն ձևերը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացված են որոշ բառեր Համադանի հին բարբառից: Այդ բառերի ստուգաբանական քննությունը հնարավորություն է տալիս որոշելու այս բարբառի տեղը իրանական լեզուների շարքում և հետևելու Համադանի բարբառի պատմական զարգացման ընթացքում առաջացած քերականական, բառապաշարային փոփոխություններին:

Բանալի բառեր - Համադանի բարբառ, բառ, ստուգաբանություն:

ИССЛЕДОВАНИЕ НЕКОТОРЫХ СЛОВ ДРЕВНЕГО ГОВОРА ХАМАДАНА

СЕЙЕДЕ ШОХРЕ САДЖАДДИ (ИРАН)

В статье представлены некоторые слова из старого говора Хамадана. Этимологический анализ этих слов помогает уточнить место этого говора среди иранских языков, а также проследить грамматические и словарные изменения, которые происходили в ходе исторического развития хамаданского говора.

Ключевые слова – Хамаданский говор, слово, этимология.

INVESTIGATION OF CERTAIN WORDS FROM THE OLD DIALECT OF HAMADAN

SEYEDE SHOHRE SAJADDI

Certain words from the old dialect of Hamadan are presented and considered in this article. The etymological survey of these words helps to define the specific place of this dialect among the Iranian languages and comprehend as well the undergone grammatical and lexical changes during its historical evolution.

Key words – The dialect of Hamadan, word, etymology.

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՎՐԱ

ՇԱՎԱՐՇ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ուսումնասիրությունն իրականացվել է 1998 թվականի համապետական ընտրություններից սկսած, քանի որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելությունների իրականացրած մշտադիտարկումներում, որոնք սկսել են արվել 1996 թվականի նախագահական ընտրություններից¹, մեղիայի մասին հիշատակվել է 1998թ. նախագահական ընտրությունների մասին զեկույցում:

1998 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի և 30-Ի ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպես, ԵԱՀԿ դիտորդական առաքելության՝ 1998 թվականի ապրիլի 9-ի զեկույցում նախ շեշտվում է այն հանգամանքը, որ զգալի բարելավում է նկատվում նախորդ ընտրությունների համեմատ, ավելին՝ ընդգծվում է առաջինից երկրորդ փուլ լուսաբանման բարելավման հանգամանքը, ապա համառոտ մոտ մեկ տպագիր էջի սահմաններում նկարագրվում է, թե որ թեկնածուին ինչ ծավալի և նշանային ինչ բնութագրիչով է ուշադրություն դարձվել Հայաստանի պետական հեռուստատեսությամբ: Ընտրազանգվածին ներկայանալու համար նախագահի բոլոր թեկնածուներին պետական լրատվամիջոցներից անվճար ու վճարովի օգտվելու հնարավորություն տրվեց: Այդուհանդերձ, մեղիա լուսաբանումը չհամապատասխանեց ու չբավարարեց Կոպենհագենյան փաստաթղթի 7.8 կետի պահանջներին՝ ոչ խտրական հիմունքներով ապահովել թեկնածուների անարգել մուտքը մեղիա: Մշտադիտարկման մեջ հեռուստաընկերությունների մասին անդրադարձ կա միայն Հայաստանի պետական հեռուստատեսությամբ: Իսկ իբրև մեղիայի ոլորտին ուղղված երաշխավորություններ /առաջարկներ/ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զեկույցում նշվում է, որ պետական լրատվամիջոցները

¹ Տե՛ս ՀՀ Նախագահի ընտրություններ 1996 թվականի սեպտեմբերի 22, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելություն վերջնական զեկույց//<http://www.osce.org/odihr/elections/armenia/14150?download=true>:

պետք է դառնան իսկապես ապաքաղաքականացված /depoliticized/, իսկ մեդիան պետք է ստանդարտ որդեգրի, որը թույլ կտա քվեարկողներին կատարել տեղեկացված ընտրություն, ինչպես նաև խրախուսվում են հավասարակշռված խմբագրական լուսաբանումն ու թեկնածուների բանավեճերը²:

1999 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի ՀՀ ԱԺ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1999 թվականի մայիսի 30-ի խորհրդարանական ընտրությունների մասին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ վերջնական զեկույցը դարձյալ ծավալուն չէ, այս անգամ ևս տպագիր մեկ էջի շրջանակներում նկարագրված է, որ ընտրությունների լուսաբանումներում ոչ մի կոպիտ խախտում չի արձանագրվել, եղել են աննշան խախտումներ և անհամապատասխանություններ գործող օրենսդրությանն ու ընդունված միջազգային չափորոշիչներին, որոնք չեն ազդել քարոզարշավի ընդհանուր լուսաբանման որակի վրա: Ընտրությունների լուսաբանման պրոֆեսիոնալիզմը գնահատվել է զգալիորեն ավելի բարձր, քան նախորդ ընտրությունների ժամանակ: Պետհեռուստաընկերությամբ և մյուս լրատվամիջոցներով քաղաքական կուսակցությունների լուսաբանումը հիմնականում բալանսավորված ու էպպես չեզոք էր: Մեծամասնական համակարգով առաջադրված թեկնածուներն անվճար եթերաժամանակի իրավունք չունեին, բայց փոխարենը սահմանափակում չկար նրանց վճարովի եթերաժամանակի վրա: Հնարավորություն, որն օգտագործվում է քարոզարշավի նպատակներով: Պետհեռուստաընկերությունը կատարեց իր պարտականությունը և տրամադրեց քաղկուսակցություններին անվճար և մատչելի հեռարձակման եթերաժամանակ: Այդուհանդերձ, որոշ հեռուստաընկերությունների մոտ ընտրարշավի հաշվին եկամուտ ապահովելու միտում է նկատվել:

Իսկ մեդիայի ոլորտին ուղղված երաշխավորություններ /առաջարկներ/ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ նշված զեկույցում չեն արվել³:

² Տե՛ս ՀՀ Նախագահի ընտրություններ 1998 թվականի մարտի 16 և 30, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելություն վերջնական զեկույց// <http://www.osce.org/odihr/elections/armenia/14192?download=true>:

³ Տե՛ս ՀՀ ԱԺ ընտրություններ 1999 թվականի մայիսի 30, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելություն վերջնական զեկույց// <http://www.osce.org/odihr/elections/armenia/14203?download=true>:

**2003 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի ԵՎ ՄԱՐՏԻ 5-Ի ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Առաջին փուլ. հունվարի 21-ից մինչև փետրվարի 17-ը և փետրվարի 21-ից մինչև մարտի 3-ն ընկած ժամանակահատվածում Եվրոպական դիտորդական առաքելությունը մոնիթորինգի է ենթարկել հինգ հեռուստակայան և վեց օրաթերթ՝ կիրառելով որակական և քանակական վերլուծություններ. հանրային հեռուստաընկերությունը, մասնավոր չորս այլք՝ Պրոմեթևսը, Արմենիան, ԱԼՄ-ն և Շանթը: Ձեկույցի՝ մեդիային վերաբերող հատվածն այս դեպքում արդեն մոտ 4 էջ ծավալ ունի և բավականին սուր քննադատական է: Այսպես, զեկույցի համաձայն՝ պետական ֆինանսավորմամբ մեդիան չի կատարել օրենսդրությամբ պահանջված իր պարտականությունները, այն է՝ ապահովել ընտրողներին թեկնածուների մասին տեղեկությամբ՝ առանց կանխակալ վերաբերմունքի կամ նախատրամադրվածության: Պետհեռուստաընկերությունը ենթարկվել է իրավական դրույթներին, որոնք վերաբերում են քաղաքական բոլոր մրցակիցներին հավասարապես անվճար գովազդային ժամանակ տրամադրելուն: Ինչ վերաբերում է լրատվական հաղորդումներին, ապա պետական հեռուստաընկերության լուրերի մեկնաբանությունները, վերլուծական և մի շարք այլ ծրագրեր մի փոքր շեղվածություն են ունեցել: Դրանք ակնհայտորեն աջակցել են գործող նախագահին, որին ավելի շատ են մեկնաբանել, այդ թվում՝ որպես երկրի գործող նախագահ: Մասնավոր հեռարձակողներն ավելի շատ են շեղվել հօգուտ գործող նախագահի՝ շատ հաճախ ընդդիմադիր թեկնածուներին նույնիսկ չանդրադառնալով:

Քաղաքական վճարովի գովազդի արժեքը՝ 120 ԱՄՆ դոլլար/րոպես, զեկույցի համաձայն, տեղական չափանիշներով շատ բարձր է եղել: Այն սահմանափակել է թեկնածուների հնարավորությունները՝ մեդիայով իրականացնել նախընտրական քարոզարշավը. «Այդ փոխարժեքը առաջացել է մասնավոր հինգ հեռուստաընկերությունների և հանրային հեռուստաընկերության միջև կնքված գին որոշող անսովոր պայմանագրից, որը եթերաժամ է առաջարկում քաղաքական գովազդի համար: Այդ փոխարժեքը մոտավորապես երեք անգամ ավելի բարձր էր, քան մասնավոր հեռուստաընկերություններում կոմերցիոն գովազդի համադրելի գները: Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը՝ ՀՌԱՀ-ը, զեկույցել է 54 բողոք ստանալու և դրանք քննելու մասին: Դեպքերից երկուսում մասնավոր հեռուստաընկերությունները տուգանվել էին հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքը և ԿԸՀ-ի հունվարի 15-ի

որոշումը խախտելու համար. հեռարձակվել էին վճարովի գովազդներ առանց համապատասխան նշումների»:

Երկրորդ փուլ. առաջին և երկրորդ փուլերի միջև ընկած ժամանակահատվածում հանրային հեռուստաընկերությունը, համաձայն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զեկույցի՝ չի կարողացել համակողմանիորեն կատարել պարտականությունները և քվեարկողներին թեկնածուների մասին առանց նախապատվության, օբյեկտիվ տեղեկատվություն տրամադրել: Հանրայինն իր լրատվական և վերլուծական ծրագրերը հիմնականում հատկացրել է գործող նախագահին, որը շարունակել է ստանալ ընդգծված լուսաբանում: Զեկույցում նշված է նույնպես, որ հանրայինը նաև փրայմ թայմ հաղորդումների ժամանակ ընդդիմադիր թեկնածուին վարկաբեկող ծրագիր է եթեր հեռարձակել: Ըստ զեկույցում հրապարակված տվյալների և որակումների՝ հանրային հեռուստաընկերությունը, որը պետքինանսավորմամբ է գործում, ընդհանուր առմամբ, քարոզարշավի ամբողջ ընթացքում չի ծառայել Հայաստանի քաղաքացիների ընտրական շահերին: Բայց որպես դրական տեղաշարժ դիտվում է այն փաստը, որ Հայաստանի նախագահական ընտրությունների պատմության մեջ առաջին անգամ երկու հիմնական թեկնածուների միջև հեռուստաբանավեճ է տեղի ունեցել, այն էլ հանրային հեռուստաընկերությամբ, որը, սակայն, հեռարձակվեց մի քանի այլ հեռուստաընկերություններով ևս: Թեկնածուներին հարցեր տալու էին հրավիրված վեց լրագրողներ, այդ թվում՝ մասնավոր հատվածից: Փաստացի, բոլոր լրագրողներն այն հեռուստաընկերություններից էին, որոնք աջակցում էին գործող նախագահին: Զեկույցում արձանագրված դրական մյուս առաջընթացն այն է, որ մի քանի այլ հեռուստաընկերություններ ևս կազմակերպեցին դեբատներ թեկնածուների ներկայացուցիչների միջև, սակայն մոնիթորինգի ենթարկված մասնավոր հեռարձակողներն ընդդիմության թեկնածուի համար չկարողացան խաղի կանոններ ապահովել և ակնբախ շեղվածություն ցուցաբերեցին գործող նախագահի օգտին՝ իրենց փրայմ թայմ լուսաբանումներում երկու փուլերի միջև ընկած ժամանակահատվածում: Ի տարբերություն առաջին փուլի՝ մասնավոր հինգ հեռուստաընկերությունները որոշում ընդունեցին եթերաժամ չառաջարկել քաղաքական վճարովի գովազդի համար, ինչն էլ սահմանափակեց ընդդիմադիր ներկայացուցչի հնարավորությունը՝ ներկայանալ հավուր պատշաճի: Ինչ վերաբերում է մեդիայի ոլորտին ուղղված երաշխավորություններին /առաջարկներին/, ապա ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զեկույցում այս անգամ առաջարկվել է հեռարձակման ոլորտը կարգավորող մարմնի ձևավորմանն առնչվող օրենսդրությունում կատարել լրացումներ՝ հանրային հեռուստառադիոխոր-

հրդում և ՀՌԱՀ-ում հավասարակշռված անդամություն ապահովելու համար. «Խորհուրդը պետք է վերահսկի հանրային հեռուստատեսությունն ու ռադիոն՝ առանձին, որպեսզի հանրային մեդիան հնարավորություն ունենա չեզոք վերաբերմունք դրսևորելու: Հանրային մեդիան պետք է ապահովի չեզոք, օբյեկտիվ և տեղեկատվական խմբագրական գիծ, որի լուսաբանումները պետք է լինեն հավասարակշռված, այդ թվում՝ կառավարական իրադարձություններն ընտրական շրջանում լուսաբանելու ժամանակ: Իշխանությունները պետք է զերծ մնան ընտրությունների վրա ազդեցություն ունենալու նպատակով լրագրողների գործունեությանը միջամտելու»⁴:

2003 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի ՀՀ ԱԺ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2003 թվականի մայիսի 25-ի խորհրդարանական ընտրություններին նվիրված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զեկույցում ևս բավականին ծավալուն անդրադարձ կա մեդիային՝ մոտ 4 էջ: Որպես կարևոր և դրական զարգացում՝ նախորդ ընտրությունների համեմատ զեկույցում նշվում է Հ1-ի օրենքով նախատեսված պարտավորությունների կատարումը: Կուսակցություններին և դաշինքներին Հ1-ը հավասար պայմաններով անվճար եթերաժամանակ է տրամադրել, որը հիմնականում մատուցվել է անկողմնակալ փրայմ թայմ լրատվական և վերլուծական ծրագրերում՝ թե՛ քանակական, թե՛ որակական առումներով: Եթե Հ1-ով քաղաքական ուժերին անվճար և վճարովի կարգով տրվել է քարոզչության հնարավորությունից օգտվելու հավասար իրավունք, ապա պատկերն այլ է եղել մասնավոր հեռուստաընկերությունների պարագայում: Խոսքը Պրոմեթևսի, Արմենիայի, Շանթի և ԱԼՄ-ի մասին է: Նշված մասնավոր հեռուստաընկերությունների եթերում քաղաքական ուժերի քարոզարշավի լուսաբանումների հաշվեկշռի խնդիր է արձանագրվել:

Բացասական նկատառումների կողքին զեկույցում նշվում է նաև նախորդ ընտրությունների փորձից ելնելով թե՛ հանրային հեռուստատեսության և թե՛ մասնավոր հեռուստաընկերությունների կողմից կազմակերպված բանավիճային հաղորդումների կազմակերպման փաստը:

Որպես երաշխավորություն կամ առաջարկ այս զեկույցում շեշտադրվել նախընտրական քարոզարշավի ժամանակաշրջանում օբյեկտիվ և անկողմնա-

⁴ Տե՛ս ՀՀ Նախագահի ընտրություններ 2003 թվականի փետրվարի 19, մարտի 5, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելություն վերջնական զեկույց// <http://www.osce.org/odihr/elections/armenia/14054?download=true>:

կալ լուսաբանման հիմնական պահանջներին համապատասխանեցվելու անհրաժեշտությունը, ինչպես նաև համապատասխան օրենսդրական փոփոխության անհրաժեշտությունը, ըստ որի՝ ՀՌԱՀ-ը ունենա ավելի անկախ կազմ⁵:

2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի ՀՀ ԱԺ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2007 թվականի մայիսի 12-ի խորհրդարանական ընտրություններին նվիրված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ գեկույցում ևս բավականին ծավալուն անդրադարձ կա մեդիային՝ մոտ 9 էջ, որից ընդամենը 4 էջն է անդրադարձը նախընտրական մոնիթորինգին: Մշտադիտարկման է ենթարկվել 7 հեռուստաալիք՝ Հ1, ԱԼՄ, Արմենիա, Հ2, Կենտրոն, Շանթ, Երկիր Մեդիա: Ուշադրության արժանի բաղադրիչը քաղաքական գովազդի արժեքն է: Համաձայն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ գեկույցի. «Համապետական հեռարձակողների գովազդի գնադրույքները տեղական չափանիշներով բարձր էին թվում. ամենաբարձր գինը՝ մեկ րոպեի դիմաց 130,000 դրամ (մոտ 260 եվրո), սահմանել էր Արմենիա հեռուստաալիքը, հատկապես եթե այդ գինը համեմատենք քարոզչության շրջանից դուրս գովազդի համար սահմանված սովորական գների հետ: Զգալի թվով քաղաքական ուժեր քննադատեցին այդ բարձր գները՝ դրանք համարելով արգելափակ, ընդ որում, առաջարկվող ժամերը մեծ մասամբ ոչ այնքան գրավիչ ժամերի էին, այսինքն՝ մինչև ժամը 19:00»: Այսպիսով, վճարովի գովազդից օգտվողների ամենափոքր թիվը գրանցվել է Կենտրոն հեռուստատեսությունում՝ 5, իսկ ամենամեծը Հ2-ով՝ 8:

Բուն մշտադիտարկման մեջ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը գնահատել է, թե արդյոք լրատվամիջոցներն անկողմնակալ և հավասարակշիռ կերպով են լուսաբանել ընտրությունների մասնակիցների և պետական իշխանությունների գործունեությունը, և թե արդյոք քաղաքական ուժերը կարողացել են անարգել օգտվել լրատվամիջոցներից: Նախքան պաշտոնական քարոզչության մեկնարկը, ինչպես գեկույցում է արձանագրված, զգալի չափով մեղմացվել է խոշոր հեռուստաալիքների վաղուց կիրառվող խմբագրական այն քաղաքականությունը, ըստ որի՝ սահմանափակ չափով կամ ընդհանրապես չէր լուսաբանվում ընդդիմադիր գործիչների գործունեությունը: 2007 թ. մայիսի 14-ին 19 հասարակական կազմակերպություններ հանդես եկան հրապարակային հայտարարությամբ:

⁵ Տե՛ս ՀՀ ԱԺ ընտրություններ 2003 թվականի մայիսի 25, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելություն վեբքնական գեկույց/<http://www.osce.org/hy/odihr/elections/armenia/42371?download=true>:

Ընդունելով, որ նախընտրական քարոզչության պաշտոնական ժամանակահատվածի ընթացքում լրատվամիջոցների հասանելիությունը որոշ չափով բարելավվել է, նրանք միաժամանակ մտահոգություն հայտնեցին լրատվամիջոցների և հավաքների ազատության վերաբերյալ՝ քարոզչության մեկնարկից առաջ այս ոլորտում իրենց դիտարկումների և արձանագրած հիմնախնդիրների ու խախտումների հիման վրա⁶:

Ինչ վերաբերում է ընտրությունների լուսաբանման բովանդակությանը, ապա հեռուստաալիքներն իրենց հիմնական լրատվական թողարկումներում ներկայացնում էին բացահայտ դրական և չեզոք տեղեկություններ՝ նվազագույնի հասցնելով քննադատական մեկնաբանությունները կամ բացասական տեղեկությունները:

Պաշտոնական քարոզչության մեկնարկի օրվանից հանրային հեռուստատեսությունը փորձել է խմբագրական այնպիսի դիրքորոշում պահպանել, որը կերաշխավորի հավասար պայմաններ ընտրությունների մասնակիցներին՝ որդեգրելով հիմնականում խոշոր կուսակցությունների, Խորհրդարանում ներկայացվածների և ակտիվ քարոզարշավ իրականացնողների գործունեությունը լուսաբանելու սկզբունքը: Համապետական սփռում ունեցող բոլոր մասնավոր հեռուստաալիքների, այդ թվում՝ Հ2-ի, Արմենիայի և ԱԼՄ-ի լրատվական հաղորդումներում լուսաբանված քաղաքական սուբյեկտների թվում ամենամեծ մասը բաժին էր հասել կառավարությանը:

Երաշխավորություն կամ առաջարկ բաժնում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 2007 թվականի մայիսի 12-ի ՀՀ ԱԺ ընտրությունների մասին զեկույցում լրատվամիջոցների անելիքների վերաբերյալ որոշակի պահանջներ են շարադրված: «Հանրային լրատվամիջոցները պետք է որդեգրեն չեզոք, անաչառ և տեղեկացնող խմբագրական դիրքորոշում իրենց բոլոր ծրագրերում. հանրային լրատվամիջոցների լրատվությունը պետք է լինի հավասարակշռված և ըստ փաստերի, ներառյալ ընտրական շրջանում իշխանությունների գործունեության լուսաբանումը: Հեռարձակվող մասնավոր լրատվամիջոցները պետք է հետևեն քարոզչությունն անկողմնակալ և արդարացի լուսաբանելու հիմնարար պահանջներին:

Հանրային լրատվամիջոցներից պետք է պահանջել, որ նրանք տարբեր ձևաչափերով ընտրողներին ներկայացնեն համապարփակ տեղեկատվություն

⁶ Տե՛ս օրինակ՝ 19 ՀԿ-ների ասուլիսը Կենտրոն, Հայկական երկրորդ և Երկիր Մեդիա հեռուստաալիքներով// 2007. – 14 մայիսի:

ընտրական գործընթացի բոլոր առանձնահատկությունների մասին, ներառյալ ընտրողների իրազեկումը, ինչպես նաև բողոքարկման համակարգի մասին տեղեկացումը:

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը պետք է դիտարկի նախընտրական քարոզչության շրջանում լրատվամիջոցների իր մոնիթորինգն անցկացնելու նպատակահարմարությունը՝ բացահայտելու համար լրատվական թողարկումներում անհավասար և նախապատվելի լուսաբանման դեպքերը: Հանձնաժողովի մոնիթորինգի եզրակացությունները պետք է ժամանակին հրապարակվեն, որպեսզի հանձնաժողովը և կիրարկող համապատասխան մարմինները կարողանան կանխարգելիչ միջոցառումներ նախաձեռնել և իրականացնել:

Հեռարձակման կարգավորման անկողմնակալությունն ապահովելու նպատակով հարկ է լրացուցիչ փոփոխություններ կատարել հեռուստատեսության և ռադիոյի հեռարձակման մասին օրենքում՝ նախատեսելու հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի ավելի բազմազան կազմ՝ ներառելով լրատվական գործի մասնագետների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների: Նմանապես հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհուրդը չպետք է ընտրվի քաղաքական մեկ խմբավորման կամ միայն քաղաքական ուժերի կողմից»⁷:

2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2008 թվականի փետրվարի 19-ի ՀՀ Նախագահի ընտրություններին նվիրված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զեկույցը ծավալային առումով պակաս է նախորդից, քանի որ նոր ասելիք առանձնապես չկա: Նախորդ՝ 2007 թվականի մայիսի 12-ի ՀՀ ԱԺ ընտրություններից շատ ժամանակ չի անցել: Այս զեկույցի մեդիայի վերաբերող բաժինը 5 էջի սահմաններում է, որից բուն մշտադիտարկման հատվածն ընդամենը 1 էջի վրա է: Մշտադիտարկման է ենթարկվել 7 հեռուստաալիք՝ Հ1, ԱԼՄ, Արմենիա, Հ2, Կենտրոն, Շանթ, Երկիր Մեդիա:

Հունվարի 11-20-ն ընկած ժամանակահատվածում (քարոզարշավի պաշտոնական մեկնարկից առաջ) չորս հեռուստաալիքների լուրերի թողարկումներում, ըստ զեկույցում զետեղված տվյալների, վարչապետ Սերժ Սարգսյանին

⁷ Տե՛ս ՀՀ ԱԺ ընտրություններ 2007 թվականի մայիսի 12, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելություն վերջնական զեկույց// <http://www.osce.org/hy/odihr/elections/armenia/26606?download=true>:

հատկացվել է բոլոր թեկնածուներին տրամադրված ժամանակի մոտ կեսը, իսկ լուսաբանումը եղել է դրական կամ չեզոք: Թեկնածուներից Լևոն Տեր-Պետրոսյանին հաճախ պատկերել են բացասական կամ չեզոք:

Քարոզարշավի պաշտոնական ժամանակահատվածում լրատվամիջոցները նախընտրական միջոցառումները լայնորեն լուսաբանել են լուրերի թողարկումներով, թեկնածուներին պատկերող կտորներով և թոք-շոուններով: Հեռուստաալիքները թեկնածուներին հնարավորություն են ընձեռել հայտնվելու իրենց հաղորդումներում: Պարոն Տեր-Պետրոսյանը չի ընդունել նման ոչ մի առաջարկ, իսկ վարչապետ Սարգսյանն ընդունել է միայն մեկը: Չնայած որոշ լրատվամիջոցների՝ օրինակ, Երկիր Մեդիայի ջանքերին՝ թեկնածուների միջև ոչ մի բանավեճ տեղի չի ունեցել: Բանավեճերի բացակայությունը զեկույցում բացատրված է թեկնածուների կողմից հետաքրքրվածության պակասի հանգամանքով:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից մոնիթորինգի ենթարկված հեռարձակվող լրատվամիջոցների մեծ մասը նախընտրական քարոզարշավի ընթացքում քաղաքական լուսաբանմամբ հավասարություն չեն ցուցաբերել. «Լևոն Տեր-Պետրոսյանը ստացել է բացասական լուսաբանման մեծ ծավալ, մինչդեռ վարչապետ Սերժ Սարգսյանը՝ ամենաշատ լուսաբանված թեկնածուն, ստացել է դրական լուսաբանում: Մյուս թեկնածուները ներկայացվել են դրական կամ չեզոք: Շատ լրատվամիջոցներ որդեգրել էին հակադիր մոտեցումներ մի կողմից պարոն Տեր-Պետրոսյանի, իսկ մյուս կողմից վարչապետ Սարգսյանի քարոզարշավների լուսաբանման հարցում: Այս գործոնները ցուցադրում էին լրատվամիջոցների կողմնակալությունը, որը քարոզարշավային առավելություն էր տալիս վարչապետ Սարգսյանին»:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զեկույցի դիմում-բողոքներին վերաբերող ենթաբաժնում տեղ է գտել թեկնածուներից Լևոն Տեր-Պետրոսյանի՝ Սահմանադրական դատարան բերված գործը, որում նա պնդում էր, որ հանրային հեռուստատեսության կողմից քարոզարշավային անհավասար պայմանների ստեղծման պատճառով ինքն անհաղթահարելի խոչընդոտի առաջ է կանգնել: Դատարանը վճռեց, որ բողոքը սահմանադրության տեսանկյունից անհաղթահարելի խոչընդոտ չէր պարունակում, բայց նշեց, որ բողոքը պատկանում է այլ պաշտոնյաների և մարմինների իրավասությանը:

Որպես երաշխավորություն կամ առաջարկ այս զեկույցում էլ նշված է ՀՌԱՀ անդամության բազմազանություն ապահովելու օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունը՝ նույնն առաջարկելով նաև հանրային հեռուստա-

նադիոխորհրդի կազմի ձևավորման մասով: Եվ մի նոր առաջարկ՝ վերաբերող Հ1-ով քաղաքական անվճար գովազդի հեռարձակման ժամին. «Հանրային լրատվամիջոցներով թեկնածուների քարոզարշավի համար անվճար տրամադրվող եթերաժամը պետք է լինի երեկոյան գլխավոր լուրերի թողարկումից հետո, այդպիսով մեծացնելով ընտրողների՝ թեկնածուների տեսակետներին ծանոթանալու հնարավորությունը»⁸:

2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի ՀՀ ԱԺ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ ԱԺ ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զեկույցը ծավալային առումով ավել է նախորդից՝ 2008-ի փետրվարի 19-ի ՀՀ Նախագահի ընտրությունների մասին զեկույցից: Ձեկույցի՝ մեդիային վերաբերող բաժինը նախկին 5-ի փոխարեն 8 էջի սահմաններում է, բայց բուն մշտադիտարկման հատվածն այս անգամ էլ ընդամենը 1 էջի վրա է: Հիմնական ծավալը նշված զեկույցում գրավել է լրատվական դաշտի ընդհանուր նկարագրությունը, քանի որ նախորդ՝ 2008 թվականի ընտրություններից մինչև 2012-ինը հեռուստադաշտում նշանակալի իրադարձություն է արձանագրվել 2010 թվականի դեկտեմբերին: Խոսքը հեռարձակողների արդեն թվային հեռարձակման՝ 7 տարվա փոխարեն 10 տարով լիցենզավորման մրցույթների մասին է, որից հետո հեռարձակող հեռուստաընկերությունների թիվը 42-ից նվազել է 15-ի, որոնցից 6-ը՝ հանրապետական սփումամբ: Ձեկույցում անդրադարձ կա իրավական և կանոնակարգվող դաշտին և բուն մշտադիտարկմանը: Նշված զեկույցում լրատվամիջոցներին առնչվող դիմում-բողոքների մասին խոսք չկա: Մշտադիտարկման ենթարկված հեռուստաընկերությունների թվում են ուսումնասիրության առարկա Հ1, Հ2, Կենտրոն և Երկիր Մեդիա հեռուստաընկերությունները: Հանրային հեռարձակողի կողմից որպես պարտավորություն համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության կամ դաշինքի իրավունք է վերապահված անվճար հիմունքներով օգտվելու մինչև 60 րոպե և վճարովի հիմունքներով՝ մինչև 120 րոպե եթերաժամից՝ հանրային հեռուստատեսությամբ: Բուն քարոզարշավի ընթացքում իրականացված դիտորդական առաքելության մասով զեկույցում շեշտված է, որ լրատվամիջոցներն իրականացրել են ընտրությունների կայնա-

⁸ Տե՛ս ՀՀ Նախագահի ընտրություններ 2008 թվականի փետրվարի 19, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելություն վերջնական զեկույց// <http://www.osce.org/hy/odihr/elections/armenia/32115?download=true>:

ծավալ լուսաբանում: Լրատվական թողարկումներում ընտրության մասնակիցներին լուսաբանելուց բացի, քարոզարշավի ընթացքում հեռուստաընկերությունները հարցազրույցներ են հեռարձակել թեկնածուների և կուսակցությունների առաջնորդների հետ: Երկու մասնավոր հեռուստաալիք՝ Արմնյուզը և Կենտրոնը, հեռուստաբանավեճ են կազմակերպել, բայց 7 դեպքում 1 կամ ավելի հրավիրվածներ չեն ներկայացել: Ոչ մի բանավեճ չի կազմակերպվել աչքի ընկնող թեկնածուների կամ կուսակցությունների առաջնորդների միջև:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության այս մշտադիտարկման մեջ արձանագրվել է, որ շատ դեպքերում հեռուստաալիքները սեփական նյութերի վրա հիմնվելու փոխարեն նորությունների հեռարձակման ընթացքում օգտագործել են նույն քարոզչական նյութը, որն օգտագործվել է նաև քաղաքական գովազդում:

Ի՞նչ առաջարկություններ է անում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն այս անգամ մեդիայի ներկայացուցիչներին: Առաջին առաջարկը վերը շարադրված խնդրին է առնչվում. կուսակցությունների կողմից պատրաստված ցանկացած քարոզչական նյութ հեռարձակվելիս պետք է նշվի որպես այդպիսին, և նման նյութը չպետք է տեղ գտնի լրատվական թողարկումներում: Երկրորդ և երրորդ առաջարկները վերաբերում են ՀՌԱՀ-ին: Ըստ զեկույցում նկարագրվածի՝ ՀՌԱՀ-ի իրավասություններն անհրաժեշտ է ավելի հստակեցնել, որպեսզի պատժամիջոցներն ավելի հստակ սահմանվեն և համարժեք լինեն կատարված խախտման ծանրությանը: Եվ հաջորդիվ առաջարկվում է վերանայել ՀՌԱՀ մշտադիտարկման մեթոդաբանությունը: Այսինքն՝ մշտադիտարկման մեջ ներառել նաև լուսաբանման երանգի գնահատումը, որպեսզի որոշվի նաև լուսաբանման հնարավոր քաղաքական կողմնակալությունը⁹:

2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2013 թվականի փետրվարի 18-ի ՀՀ նախագահի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զեկույցը ծավալային առումով ավելի քիչ է նախորդից՝ 2012-ի մայիսի 6-ի ՀՀ ԱԺ ընտրությունների մասին զեկույցից: Ջեկույցի՝ մեդիային վերաբերող բաժինը նախկին 8-ի փոխարեն 5 էջի սահմաններում է, բայց բուն մշտադիտարկման հատվածն այս դեպքում ավելի ծավալուն է, նախկին 1-ի փոխարեն՝ 2 էջի սահմաններում: ՀՌԱՀ նշված ընտրություննե-

⁹ Տե՛ս ՀՀ ԱԺ ընտրություններ 2012 թվականի մայիսի 6, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելություն վերջնական զեկույց// <http://www.osce.org/hy/odihr/elections/91962?download=true>:

րին ամեն օր մշտադիտարկել է 12 լրատվամիջոց, որոնց թվում՝ 5 հանրապետական նշանակության հեռուստաալիքներ: Մշտադիտարկման ենթարկված հեռուստաընկերությունների թվում են ուսումնասիրության առարկա՝ Հ1, Հ2, Կենտրոն և Երկիր Մեդիա հեռուստաընկերությունները: Մշտադիտարկման մեթոդաբանությունը կենտրոնացած է եղել միայն քանակական վերլուծության վրա՝ շրջանցելով հեռարձակված նյութի տոնայնության գնահատումը: Որպես հավելում. լիցենզավորված այլ ռադիո և հեռուստաընկերությունների քարոզարշավի լուսաբանման տվյալները տրամադրվել են հենց հեռարձակողների կողմից և ապա պատահականության սկզբունքով ենթարկել մանրակրկիտ ստուգման ՀՌԱՀ-ի կողմից: 2012 թ. խորհրդարանական ընտրություններին հաստատված դրական փորձառությունը շարունակելով՝ ՀՌԱՀ-ը հրապարակել է երկու համեմատաբար մանրամասն մշտադիտարկման զեկույցներ մինչև ընտրությունները և վերջնական զեկույց ընտրություններից կարճ ժամանակ անց: Համաձայն ՀՌԱՀ-ի՝ լրատվամիջոցներին առնչվող բողոքներ չեն եղել: ՀՌԱՀ-ը չի իրականացրել թեկնածուների գործունեության շուրջ լրատվամիջոցների մշտադիտարկում քարոզարշավի պաշտոնական մեկնարկից առաջ¹⁰:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով դիտորդական առաքելությունների էվոյուցիան 1998 թվականից մինչև 2013 թվականի ընտրությունները՝ ակներև է դառնում ընտրական գործընթացում մեդիայի աճող դերակատարումը: Եթե 1998 թվականի նախագահական և 1999 թվականի ՀՀ ԱԺ ընտրություններից հետո մշտադիտարկողների զեկույցներում խոսքը միայն պետական ՋԼՄ-ների և մասնավորապես պետական հեռուստատեսության մասին էր, թերություններն ու բացթողումներն էլ վերագրվում էին միայն վերջիններիս, չնայած այն հանգամանքին, որ երաշխավորություններ և առաջարկներ ո՛չ 1998-ին, ո՛չ էլ 1999-ին չկային, ապա 2003-ի համապետական երկու ընտրությունների մասին մշտադիտարկման մեջ արդեն խոսքը հայաստանյան 45 հեռուստաընկերություններից դիտարկվող 5-ի մասին է: Ավելին, արդեն խոսվում է այն մասին, որ մեդիան չի կատարում օրենսդրությամբ պահանջված իր պարտականությունները, այն է՝ ապահովել ընտրողներին թեկնածուների մասին տեղեկությամբ՝ առանց կանխակալ վերաբերմունքի կամ նախատրամադրվածության: Մատնանշվում է քաղաքական վճարովի գովազդի արժեքի թանկ լինելու հանգամանքը՝ 120

¹⁰ Տե՛ս ՀՀ Նախագահի ընտրություններ 2013 թվականի փետրվարի 18, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելություն վերջնական զեկույց// <http://www.osce.org/hy/odihr/elections/101982?download=true>:

ԱՄՆ դոլլար/րուպեն, զեկույցի համաձայն, տեղական չափանիշներով շատ բարձր է եղել և սահմանափակել է թեկնածուների հնարավորությունները՝ մեղիայով իրականացնելու նախընտրական քարոզարշավը: Բայց որպես դրական տեղաշարժ է դիտվել այն փաստը, որ Հայաստանի նախագահական ընտրությունների պատմության մեջ առաջին անգամ երկու հիմնական թեկնածուների միջև կայացել է հեռուստաքանավեճ, այն էլ հանրային հեռուստաընկերությամբ, որը հեռարձակվեց մի քանի այլ հեռուստաընկերություններով ևս, չնայած այն հանգամանքին, որ թեկնածուներին հարցեր տալու էին հրավիրված վեց լրագրողներ այն հեռուստաընկերություններից, որոնք աջակցում էին գործող թեկնածուին: Այս փորձը շարունակվել է նաև 2003-ի ԱԺ ընտրությունների ժամանակ: Որպես երաշխավորություն կամ առաջարկ էլ զեկույցներում մատնանշվել է համապատասխան օրենսդրական փոփոխության անհրաժեշտությունը, ըստ որի՝ ՀՌԱՀ-ը պետք է ունենա ավելի անկախ կազմ:

Ինչ վերաբերում է ընտրությունների լուսաբանման բովանդակությանը, ապա 2007 և 2008 թթ. համապետական ընտրությունների ժամանակ հեռուստաընկերությունները հիմնականում ուշադրություն են դարձրել փաստացի խնդրի և հարցերի վերաբերյալ քաղաքական առաջատար դեմքերի դիրքորոշումներին և նրանց նախկին նվաճումներին, այլ ոչ նրանց ներկայացրած քաղաքական ուժերի քաղաքական տեսակետներին կամ ծրագրերին, միգուցե նաև օբյեկտիվ իրողությունից դրդված: Քաղաքական գրեթե բոլոր ուժերի մոտ բացակայել են քաղաքական տեսակետները կամ ծրագրերը: Շեշտը դրվել է ավելի շատ քաղաքական դեմքերի և նրանց կողմից կազմակերպվող քարոզչական միջոցառումների լուսաբանման վրա, որոնք իրականացվել են իշխանության թևը ներկայացնողների համար գերազանցապես դրական կամ չեզոք լույսի ներքո, ընդդիմադիրների համար՝ բացասական կամ չեզոք: Մշտադիտարկումների էվոլյուցիան հավաստող ևս մեկ փաստ. դիտարկվել է ոչ թե 5, այլ 7 հեռուստաընկերություն: Հեռուստաընկերություններին առաջարկվել է քաղաքական գովազդը հեռարձակել ավելի դիտելի՝ փրայմ թայմ հատվածում: Որպես երաշխավորություն արդեն առաջարկ է արվում զատել թեկնածուի՝ որպես պաշտոնյայի, միջոցառումների լուսաբանումները: Լրատվամիջոցներին առաջարկվում է նաև հետևել քարոզչությունն անկողմնակալ և արդարացի լուսաբանելու հիմնարար պահանջներին: Իսկ ՀՌԱՀ-ին առաջարկվում է իրականացնել մշտադիտարկում:

2012 և 2013 թթ. ընտրություններին էվոլյուցիոն պրոցեսն առավել, քանի ակներև է: Խոսքը քաղաքական գովազդի թանկ լինելու մասին չէ, քանի որ

ՀՌԱՀ-ի պահանջով հեռուստաընկերությունները քաղաքական գովազդի գինը սահմանել են ըստ կոմերցիոն գովազդի վերջին 6 ամսվա միջին արժեքի¹¹:

Պետք է քննարկել ՀՌԱՀ-ի իրավասությունների և ռեսուրսների ուժեղացման հարցը, որոնք անհրաժեշտ են լրատվամիջոցների լիարժեք և անկախ մշտադիտարկում իրականացնելու համար և փոխարենը չհանձնարարել լրատվամիջոցներին տրամադրել հեռարձակման տվյալներ¹²: Ավելին, հարկ է քննարկել ՀՌԱՀ-ի լրատվամիջոցների մշտադիտարկման մեթոդաբանության զարգացումն այնպես, որպեսզի հնարավոր լինի մշտադիտարկել և գնահատել լուսաբանման տոնայնությունը: Բացի այդ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ՀՌԱՀ-ը պետք է կատարի իր վերահսկիչ դերը՝ իրականացնելով լրատվամիջոցների մշտադիտարկում քարոզարշավի ժամանակահատվածից դուրս:

Ընտրական օրենսգիրքը պետք է բարեփոխել այնպես, որ լրատվամիջոցներին ընդհանուր կիրառելի ուղեցույցներ տրամադրվեն ընտրություններին առնչվող նյութերի լուսաբանման համար: Նման դրույթները կարող են հիմնվել եղած անկողմնակալության և հավասարակշռվածության պահանջների վրա, սակայն, մինևույն ժամանակ, թույլ տան քարոզարշավի անկախ խմբագրական լուսաբանում:

Ուսումնասիրելով դիտորդական առաքելությունների էվոլյուցիան 1998 թվականից մինչև 2013 թվականի ընտրությունները՝ պարզ է դառնում, որ դիտորդական առաքելությունների ազդեցությունն ընտրությունների լուսաբանման վրա մեծ է և ունի ակնհայտ դրական ազդեցություն ազատ կամարտահայտման և գիտակցված ընտրություն կատարելու գործում:

¹¹ Տե՛ս 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում նախընտրական քարոզչության համար տրամադրվող վճարովի եթերաժամի սակագները// <http://tvradio.am/elections/view/%D5%B0%D5%B0-%D5%A1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D5%AB-2012%D5%A9.html>:

¹² Տե՛ս 2013 թվականի փետրվարի 18-ի՝ ՀՀ Նախագահի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ՀՌԱՀ-ի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքները// <http://tvradio.am/resources/menu//adminzonetv/elections/5fc14f82682e246cc76176bccb9958181.pdf>:

ԱՄՓՈՓՈՒՄ

Դիտորդական առաքելությունների էվոյուցիան և դրա ազդեցությունը ընտրությունների լուսաբանման վրա հետազոտությունը կատարվել է՝ ուսումնասիրելով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելությունների իրականացրած մշտադիտարկումները՝ սկսած 1996 թվականի նախագահական ընտրություններից: Դիտորդական առաքելությունների զեկույցներում մեդիայի մասին հիշատակվել է՝ սկսած 1998-ի նախագահական ընտրություններից: Այսպիսով, ուսումնասիրվել և վերլուծվել են 1998 թվականի մարտի 16-ի և 30-ի ՀՀ նախագահի, 1999 թվականի մայիսի 30-ի ՀՀ ԱԺ, 2003 թվականի փետրվարի 19-ի և մարտի 5-ի ՀՀ նախագահի, 2003 թվականի մայիսի 25-ի ՀՀ ԱԺ, 2007 թվականի մայիսի 12-ի ՀՀ ԱԺ, 2008 թվականի փետրվարի 19-ի ՀՀ նախագահի, 2012 թվականի մայիսի 6-ի և 2013 թվականի ՀՀ նախագահի ընտրությունների մասին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության զեկույցները, դրանց տարբերություններն ու առանձնահատկությունները, ինչպես նաև փաստաթղթում տեղ գտած երաշխավորություններն ու առաջարկները:

Բանալի բաներ - ընտրություններ, համապետական, հեռուստաընկերություններ, դիտորդական առաքելություն, զեկույց:

ЭВОЛЮЦИЯ НАБЛЮДАТЕЛЬНЫХ МИССИЙ И ИХ ВЛИЯНИЕ НА ОСВЕЩЕНИЕ ВЫБОРОВ

ШАВАРШ ГЕВОРГЯН

Исследование на тему «Эволюция наблюдательных миссий и влияние наблюдений на освещение выборов» проведено на примере деятельности наблюдательных миссий, начиная с президентских выборов в Армении 1996 года. В отчетах наблюдательных миссий масс-медиа упоминается, начиная с президентских выборов 1998 года.

Изучены и проанализированы отчеты Бюро по демократическим институтам и правам человека ОБСЕ по Президентским выборам 16-го и 30-го марта 1998 года, Парламентским выборам 30-го мая 1999 года, Президентским выборам 19-го февраля и 5-го марта 2003 года, Парламентским выборам 25-го мая 2003 года, Парламентским выборам 12-го мая 2007 года, Президентским выборам 19-го февраля 2008 года, Парламентским выборам 6-го мая 2012 года и Президентским выборам 18-го февраля 2013 года. Отмечены их различия и особенности, приведены рекомендации и предложения.

Ключевые слова - выборы, общенациональные, телекомпании, наблюдательная миссия, отчет.

THE EVOLUTION OF OBSERVERS' ACTIVITIES AND MONITORING MISSIONS AND ITS IMPACT ON ELECTION COVERINGS

SHAVARSH GEVORGYAN

Investigation into the OSCE and ODIHR monitoring of all elections starting with the 1996 presidential election to elucidate the development of the monitoring missions and its impact on elections has been carried out. The findings of the observers on the media coverage of the elections have been made public in reports issued since the 1998 presidential election.

The author has considered the issued reports of the OSCE and ODIHR observers concerning RA elections and assessed the differences, particularities, recommendations and propositions in all of these reports. These reports have covered: the presidential elections on March 16 and 30, 1998, RA parliamentary elections on May 30, 1999, RA presidential elections on February 19 and March 5, 2003, RA parliamentary elections on May 25, 2003, RA parliamentary elections on May 12, 2007, RA presidential elections on February 19, 2008, RA parliamentary elections on May 6, 2012, and RA presidential elections on February, 2013.

Key words – elections, national, TV companies, monitoring missions, report.

ՄԵԴԻԱ-ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՅԱՆԱ ՅԱՆԻԿՅԱՆ

Ծրագրավորման գործընթացի ձևավորման և բնականոն զարգացման գործում ավելի ու ավելի է մեծանում վարկանիշավորման դերը:

Այժմ դիտարկենք, թե ինչ է վարկանիշավորումը: Հեռուստաալիքների համար վարկանիշ բառը կախարդական է, այն առաջացնում է հզոր զգացումներ ու զգացմունքներ և պատճառ դառնում մի շարք գործընթացների առաջացման և իրագործման համար: Սակայն հեռուստադիտողի համար այդքան էլ պարզ չէ, թե ինչ է վարկանիշը, և ինչ կարևորություն ունի այն: Հեռուստադիտողն անգամ չի էլ մտածում այն ուղղությամբ, որ հենց իրենից է կախված այդ վարկանիշը, և որ ինքն է ձևավորում վարկանիշային աղյուսակը իր իսկ վարքագծով: Իսկ հեռուստատեսային ոլորտի աշխատակիցների համար կարևորագույն տեղում են գտնվում հենց վարկանիշները:

Այլ կերպ ասած, վարկանիշը հեռուստադիտողի հետաքրքրվածության ցուցանիշն է այս կամ այն հաղորդման նկատմամբ: Եվ հենց այդ ցուցանիշն է կանխորոշող դեր կատարում հեռուստաալիքների միջև մրցակցային հարթակում: Յուրաքանչյուր հեռուստաալիք ձգտում է գլխավորել հաղորդումների վարկանիշային աղյուսակը: Հեռուստաալիքների համար բարձր վարկանիշների կարևորությունը պայմանավորված է մի շարք հիմնավորված պատճառներով: Առաջնայինն այն է, որ բարձր վարկանիշն արտացոլում է հեռուստալսարանի վերաբերմունքը և վարքագիծը, որը և հիմնարար տեղում է հեռուստաալիքի գոյատևման և զարգացման համար: Չէ՞ որ, ի վերջո, բոլոր տարված աշխատանքները մեկ նպատակ ունեն՝ արժանանալ հեռուստադիտողի հավանությանը, որպեսզի այն հետաքրքրի հեռուստադիտողին՝ ներշնչելով վստահություն և ձևավորելով հավատարմություն տվյալ հեռուստաալիքի նկատմամբ¹:

¹ **Щепилов К. В.** Медиа-исследования и медиапланирование, Москва, РИП-холдинг, 2005, с. 174.

Բարձր վարկանիշը հեռուստաալիքի կերպարի ձևավորման կարևորագույն գործիքներից է: Եվ այստեղ սահուն անցում է կատարվում դեպի գովազդատուների հարթակ: Յուրաքանչյուր գովազդատու հեռուստաալիքի ընտրության հարցում առաջնային կարևորություն է տալիս վարկանիշներին: Այստեղ գործում է շուկայական պարզ հարաբերությունների կանոնը՝ իմանալ, թե ինչի դիմաց ես վճարում: Գովազդատուի համար անհրաժեշտ է, որ իր գովազդային հոլովակը դիտեն հնարավորինս մեծ թվով հեռուստադիտողներ, որպեսզի այդ կերպ գովազդատուն կարողանա ազդել պոտենցիալ լսարանի սպառողական վարքագծի վրա:

Հեռուստաալիքի համար վարկանիշը սահմանում է մեկ միավոր գովազդի արժեքը: Որքան բարձր է վարկանիշը, այնքան բարձր է գովազդի արժեքը, հետևաբար և ստացվող եկամուտները: Իսկ այդ եկամուտների բնականոն մուտքը պարզապես կենսական անհրաժեշտություն է հեռուստաալիքի գործունեության համար²:

Սակայն հարց է առաջանում, թե իրականում ինչի դիմաց է վճարում գովազդատուն: Դա հասկանալու համար դիտարկենք մի քանի հիմնական հասկացություններ, որոնք անհրաժեշտ են մեդիա-չափումներ իրականացնելիս:

✓ **Հեռուստադիտում**

Հեռուստադիտումը հեռուստացույցի առջև լինելու ժամանակահատվածն է: Շատ կարևոր է, որ չափումներ իրականացնելիս հաշվի առնվի ոչ միայն հեռուստացույցի միացված լինելու փաստը, այլ նաև, թե արդյոք այդ պահին կա՞ դրա առջև դիտող: Սակայն չի դիտարկվում, թե ինչով է այդ պահին զբաղված հեռուստադիտողը, արդյոք նա ունի՞ այլ զբաղմունք, ուշադրության կենտրոնացման այլ օբյեկտ, որքանո՞վ է տրամադրված հեռուստադիտմանը, պատրաստ է արդյոք ընկալելու այն տեղեկությունների ամբողջականությունը, որ փոխանցվում է նրան և այլն: Կա շատ կարևոր մի հանգամանք ևս, արդյոք հավանո՞ւմ է հեռուստադիտողն իր դիտածը, թե՞ ոչ: Առաջին հայացքից շատ դժվար է պարզել՝ իրականում ինչն է դուր եկել հեռուստադիտողին, իսկ ինչը՝ ոչ: Սակայն այն դառնում է ակնհայտ հետազայում, երբ հեռուստաալիքը հստակ գրանցում է վարկանիշային ցուցանիշների աճ կամ անկում:

² **Титов А. В.** Медиарынок в мировой экономике: российские перспективы, диссертация, Москва, 2007.

Հետևաբար, շատ կարևոր է, որպեսզի հեռուստաալիքը միշտ աշխատի իր մատուցած հաղորդումների որակի վրա, որպեսզի խուսափի լսարանի հոսքից և միևնույն ժամանակ կարողանա ապահովել լսարանի ընդլայնումը:

✓ **Պոտենցիալ լսարան**

Սա հասարակության այն մասն է, որն ունի հեռուստադիտման տեխնիկական հնարավորություն: Այս ցուցանիշը կախված է հիմնականում տվյալ երկրի, տարածաշրջանի զարգացման աստիճանից, տեխնիկական ապահովման մակարդակից, ինչպես նաև հասարակության տեղեկացվածության աստիճանից: Հեռուստատեսային ոլորտի զարգացման հիմնասյուններից է հենց պոտենցիալ լսարանի ընդլայնումը, ինչպես նաև նրանց ներգրավվածությունը³:

✓ **Նպատակային լսարան**

Նպատակային լսարանը պոտենցիալ լսարանի այն մասն է, որին ուղղված է լինում հեռուստատեսային կամ գովազդային հաղորդագրությունը⁴:

Շատ կարևոր է առանձնացնել հեռուստաալիքի և գովազդատուի նպատակային լսարանների դիտարկումը:

Հեռուստաալիքն իր համար ի սկզբանե որդեգրում է որոշակի քաղաքականություն, ընտրում ռազմավարական, մարտավարական մեխանիզմներ, ստեղծում իր կերպարը, և այդ ամենից ելնելով՝ ձևավորվում է նրա նպատակային լսարանը: Եթե հեռուստաալիքն ունի ժամանցային, երաժշտական ուղղվածություն, ապա նրա համար նպատակային լսարան է դառնում երիտասարդների սեգմենտը, ովքեր հետաքրքրված կլինեն հեռուստաալիքի մատուցած հաղորդումներով, և ովքեր կապահովեն այդքան անհրաժեշտ վարկանիշները:

Սակայն, եթե հեռուստաալիքի հիմնական ուղղվածությունը լրատվական բնույթի հաղորդումներն են, ապա դժվար է պատկերացնել երիտասարդների լսարանի սեգմենտը իբրև նպատակային լսարան:

Վերը նշված օրինակներում մենք դիտարկեցինք հստակ ուղղվածություն ունեցող հեռուստաալիքներ: Սակայն շատ են նաև այն հեռուստաալիքները, որոնք նախատեսված են մասսայական լսարանի համար և կարող են բավարարել տարբեր լսարանների պահանջները: Չունենալով հստակ ուղղվածություն՝ այս հեռուստաալիքներն ապահովում են բազմաբնույթ եթեր և համա-

³ **Райхман Игорь**, Практика медиа измерений. Аудит, отчетность, оценка эффективности PR, Москва, Альпина Паблишер, 2013г., с. 49.

⁴ **Денисон Д., Тоби Л.** Учебник по рекламе, Мн.: СЛК, 2003, с. 117.

դրում մի քանի նպատակային լսարաններ: Այս դեպքում լսարանի բաշխումը կատարվում է ծրագրային ցանցի ներսում ըստ ժամային տիրույթների՝ առավոտյան ժամերը երեխաների համար, ցերեկային ժամերը՝ տնային տնտեսուհիների, երեկոյան ժամերը՝ աշխատող սեզմենտի համար և այլն:

Մի կողմից սա շահեկան է հեռուստաալիքի համար, սակայն մեկ այլ կողմից ոչ այդքան: Այս կերպ հեռուստաալիքը միաժամանակ ունենում է մի քանի տիպի լսարան՝ ավելացնելով իր մրցակցային առավելությունները: Սակայն բավականին դժվար է միաժամանակ կարողանալ բավարարել մի քանի լսարանների պահանջները, միաժամանակ գործել տարբեր ժանրային հարթակներում:

Ուստի լավագույն լուծումը հեռուստաալիքի համար կարող է լինել հստակ ուղղվածությամբ բազմաբնույթ եթերը: Այսինքն՝ հեռուստաալիքն իր ծրագրում ունի տարբեր բնույթի և տարբեր լսարանների համար նախատեսված հաղորդումներ, սակայն դրանցից նա իր համար առանձնացնում է այն հիմնականը, որի լսարանի գրավումը դառնում է առաջնային կարևորության խնդիր: Ինչպես նաև առաջնային է դառնում հենց այդ ժանրային հաղորդումների մատուցման գործում առաջատարի դիրքը գրավելը: Հստակ ուղղվածությունը մրցակցային առավելություն ձեռք բերելու մեծ հնարավորություն է⁵:

Ցանկացած պարագայում հեռուստաալիքն ինքն է որոշում իր ուղղվածությունը, և ինքն է ձևավորում իր նպատակային լսարանը: Սակայն վերը նշվածը քարացած գործընթաց չէ, և հեռուստաալիքն իր գործունեության տարբեր փուլերում, ելնելով արտաքին և ներքին գործոնների ազդեցությունից, կարող է և՛ արմատապես, և՛ մասնակի փոփոխել իր սեզմենտավորման քաղաքականությունը, հետևաբար և ողջ ուղղվածությունը: Սակայն հույժ կարևոր է, որ տվյալ գործընթացն իրականացվի գրագետ և հաշվարկված քայլերի հաջորդականությամբ:

Այժմ դիտարկենք նպատակային լսարան հասկացությունը գովազատուի տեսանկյունից: Յուրաքանչյուր ապրանքատեսակ կամ ծառայություն ունի իր սպառողական շուկան, և դրա մեջ են մտնում ինչպես ակտիվ, այնպես էլ պոտենցիալ սպառողները: Ընկերության համար իր ակտիվ և պոտենցիալ

⁵ Henry Jenkins, “Textual Poachers: Television Fans and Participatory Culture”, Routledge, 2001, p. 84.

սպառողների հետ կապ հաստատելու լավագույն միջոցներից է գովազդային հարթակը⁶:

Եթե փորձենք քայլ առ քայլ նկարագրել գովազդատուի կողմից գովազդի տեղադրումը, ապա առաջին քայլը սպառողական լսարանի հստակեցումն է: Մարքեթինգի տեսանկյունից կան ապրանքներ, որոնց սպառողը և գնորդը տարբեր անձինք են: Օրինակ, մանկական իրերը նախատեսված են երեխաների համար, սակայն գնորդի դերում հանդես են գալիս ծնողները: Այսպիսով, յուրաքանչյուր գովազդատու պետք է ճշգրտի և հստակ իմանա իր արտադրանքի կամ ծառայության սպառողական լսարանը:

Հաջորդ քայլն այն է, որ գովազդատուն իր գովազդային արշավի համար ընտրի այնպիսի հեռուստաալիք, որն ունի նման լսարան: Այս պահին մենք չենք դիտարկում, որ այդ լսարանը լինի հեռուստաալիքի համար թիրախային: Անգամ իսկ բավական է, որ հեռուստաալիքն ունենա նմանատիպ լսարան իր հեռուստադիտողների շարքում:

Հեռուստաալիքի ընտրությունը միշտ զուգորդվում է այլընտրանքային տարբերակների դիտարկմամբ՝ հիմնականում դիտարկելով մրցակից հեռուստաալիքների առաջարկները: Այդ ժամանակ գովազդատուն պետք է մանրակրկիտ ուսումնասիրի իրեն ներկայացվող առաջարկները՝ շեշտը դնելով առաջարկված պայմանների շահեկանության վրա: Շատ կարևոր պայմաններ են տրամադրվող գովազդային ժամանակը, գնային առաջարկը, դիրքը գովազդային բլոկում, մրցակից ընկերությունների առկայությունը և այլն: Բոլոր պայմանները դիտարկելուց հետո գովազդատուն կայացնում է որոշում, թե որ հեռուստաալիքի հետ է աշխատելու:

Երբ ընտրված է հեռուստաալիքը, արդեն սկսվում է նոր փուլ, թե ինչ հստակ պայմաններով է կատարվելու գովազդային տեղադրումը: Առաջին հերթին այս փուլում ընտրվում են հեռուստաալիքի եթերային ցանցից կոնկրետ հաղորդումներ, որոնցում և տեղադրվելու է գովազդը: Հեռուստաալիքի ընտրության ժամանակ նրա բնույթը դիտարկվում է ընդհանուր առմամբ, սակայն հաղորդման ընտրության նկատմամբ պետք է լինել ավելի խստապահանջ և հետևողական⁷:

⁶ **Тагиев Руслан**, Телеаудитория и телеизмерения: основные тренды, Москва, 2012, с. 52.

⁷ **Почепцов Георгий**, Пропаганда 2.0: Новые измерения в действии
<http://osvita.mediasapiens.ua>

Շատ կարևոր է, որպեսզի հնարավորինս մեծ համընկնում լինի տվյալ հաղորդման և գովազդվող ապրանքատեսակի կամ ծառայության նպատակային լսարանների միջև: Օրինակ, «Շանթ» հեռուստաընկերության «Մի՛ վնասիր» հաղորդաշարն ունի հստակ հեռուստադիտողի լսարան, որը կարող է ամբողջությամբ համընկնել բժշկական հաստատությունների, բժշկական սարքավորումների, դեղորայք արտադրող ու ներմուծող և այլ ընկերությունների սպառողական լսարանի հետ: Այս դեպքում գովազդատուն առանց վարանելու կատարում է իր ընտրությունը: Սակայն պետք չէ մոռանալ մի շարք այլ հարցերի մասին: Օրինակ, արդյոք միևնույն հաղորդման գովազդային բլոկերում չե՞ն հանդիպում մրցակից ընկերությունների նմանատիպ բնույթի և կրկնվող առաջարկներով հոլովակներ: Դա շատ կարևոր կետ է, քանի որ գովազդատուի համար խիստ անհրաժեշտ է այդ հարթակում ունենալ ցուցադրման բացառիկ իրավունքներ:

Հաղորդման ընտրության հարցը հեշտանում է, երբ գովազդատուի սպառողական լսարանը գրեթե ամբողջությամբ համընկնում է հեռուստաալիքի լսարանի հետ: Բնականաբար, տվյալ տարբերակն այդքան էլ տարածված չէ և գործում է միայն խիստ ուղղվածություն ունեցող հեռուստաալիքների դեպքում:

Երբ գովազդատուն ընտրում է իր համար նախընտրելի հաղորդումը կամ հաղորդումների շարքը, սկսվում է հաջորդ փուլը՝ գովազդային տեղադրումների ընթացքը: Կախված գովազդի տեղադրման ձևից՝ թույլ, վարկանիշային տեղադրումներ, հովանավորչական փաթեթներ, ապրանքատեսակի տեղադրում և այլն, տարբեր են նաև տեղադրման ընթացքում առաջացած հարցերը և խնդիրները:

Այնուամենայնիվ, որքան էլ գովազդատուն վստահի հեռուստաալիքին և նրա մասնագետներին, շատ կարևոր է, որպեսզի գովազդատուն անմասն չմնա պլանավորման ընթացքից և անհրաժեշտության դեպքում ճիշտ պահին շտկումներ և փոփոխություններ կատարի պլանավորման ընթացքում:

Հաջորդ փուլը մոնիթորինգի արդյունքների ստացման, վերահսկման և նոր մարտավարական քայլերի հաջորդականության մշակման իրականացումն է:

Մոնիթորինգը կարևորագույն գործիք է պլանավորման ողջ ընթացքում: Ըստ մոնիթորինգի ստացված արդյունքների՝ պարզ է դառնում, թե արդյոք ճի՞շտ է մինչև այդ պահը կատարվող քայլերի հաջորդականությունը, թե՞ ոչ: Եթե արդյունքները բավարարում են սպասելիքները, ապա պետք է շարունա-

կել նույն ուղղությամբ, սակայն, եթե մոնիթորինգի արդյունքում պարզ է դառնում, որ գովազդատուն չի ստանում իրեն անհրաժեշտ արդյունքները, ապա հստակ ազդակ է, որ անհրաժեշտ է կատարել փոփոխություններ պլանավորման ընթացքի մեջ: Հաճախ կարող են լինել թեթևակի շտկումներ, բայց նաև լինում են դեպքեր, երբ կարիք է առաջանում փոփոխել պլանավորման ողջ բնույթը: Ծայրահեղ դեպքերում գովազդատուն անգամ կարող է փոխել հեռուստաալիքը, և այս փուլերի հաջորդականությունը վերսկսել նորից, սակայն այս անգամ արդեն իսկ կուտակած փորձով⁸:

✓ **Հեռուստադիտման մաս**

Հեռուստաալիքի և գովազդատուի նպատակային լսարանից անցում կատարենք մեկ այլ չափորոշիչի, որն է՝ հեռուստադիտման մասը: Այս չափորոշիչը ցույց է տալիս, թե պոտենցիալ լսարանի որ մասն է ներգրավված հեռուստադիտման ընթացքի մեջ: Հեռուստաալիքի համար առաջնահերթ կարևորության է այս չափորոշիչը, չէ՞ որ հենց այն է ցույց տալիս, թե տվյալ ժամանակահատվածում ամբողջ լսարանի որ մասն է գտնվում տվյալ հեռուստաալիքի եթերային տիրույթում: Շատ կարևոր է, որ հեռուստաալիքն ապահովի հնարավորինս մեծ մաս հեռուստադիտման ընդհանուր ցուցանիշների մեջ:

Հատկանշականն այն է, որ հեռուստաալիքի համար կարևոր է ոչ միայն իր մասի բացարձակ չափը, այլ նաև համեմատականը մրցակիցների հետ: Մրցակից հեռուստաալիքի մասը մեծանում է միայն այլ հեռուստաալիքի մասի հաշվին, քանի որ մի հեռուստադիտող չի կարող միաժամանակ լինել մի քանի եթերային տիրույթներում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Բոլոր հասկացությունների ուսումնասիրությունները հանգում են այն փաստին, որ հեռուստադիտողի ներգրավման և պահպանման հարցում իրենց կարևորագույն դերն ունեն մատուցված եթերի որակական հատկանիշները: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը համընթաց պետք է նաև զարգանա հեռուստատեսային ոլորտը, հեռուստադիտողը պետք է զգա ոլորտի զարգացման ազդեցությունը, հասկանա, որ այդ գործընթացը բավարարում է իր պահանջները:

⁸ Тагиев Руслан, Телеаудитория и телеизмерения: основные тренды, Москва, 2012, с. 104.

Բանալի բաներ – վարկանիշ, հեռուստադիտում, պոտենցիալ լսարան, նպատակային լսարան, հեռուստադիտման մաս:

ОСНОВНЫЕ ПОНЯТИЯ РЕАЛИЗАЦИИ ПРОЦЕССОВ МЕДИА-ИЗМЕРЕНИЯ

ЯНА ЯНИКЯН

Исследования всех понятий сводятся к тому, что в вопросе привлечения и сохранения телезрителей огромную роль играют качественные показатели предоставляемого эфира. Телевизионная сфера должна развиваться параллельно с развитием информационных технологий: телезритель должен почувствовать влияние развития телевизионной сферы и осознать, что этот процесс удовлетворяет его требованиям.

Ключевые слова – рейтинг, телесмотрение, потенциальная аудитория, целевая аудитория, доля телесмотрения.

MAIN NOTIONS OF THE REALIZATION OF MEDIA-MEASUREMENT

YANA YANIKYAN

The survey of opinions proves that the quality of picture transmission has an important role in attracting and retaining viewers. Along with the development of informational technologies TV programs must also evolve. The viewers should feel the progress of TV programs and realize that the developments comply with their demands.

Key words – rating, TV viewing, potential audience, target audience, part of televiewing.

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ

XVII դարից սկսած՝ Եվրոպան թևակոխեց փոփոխությունների նոր և դրամատիկ ժամանակաշրջան: Դրանք պարառում էին տնտեսությունը, հասարակական կառուցվածքը, քաղաքականությունը, մշակույթը, կրոնը, պետական գաղափարախոսությունը և այլն: Ըստ **Ն. Դեյվիսի**¹ այս տեղաշարժերն ունեին երեք հիմնական աղբյուր.

- **տեխնոլոգիական փոփոխություններ,**
- **ընկերային փոփոխություններ,**
- **ինտելեկտուալ փոփոխություններ**¹:

Նոր դարերի արշալույսը նշանավորվեց **Արդյունաբերական հեղափոխությամբ**: Կատարվեցին մի շարք տեխնոլոգիական նորամուծություններ, փոխվեցին աշխատանքի կազմակերպման եղանակները, որոնք իրենց հերթին փոխեցին մարդու և աշխատանքի նախկին հարաբերությունները²: Տեղի ունեցավ աշխատանքի լայնածավալ մեխանիզացիա³: **Գ. Սնուքսի** բնորոշմամբ՝ արդյունաբերական հեղափոխությունը «**տեխնոլոգիական հարացույցի փոփոխություն**» էր, ըստ էության, առաջինը Նեոլիթյան հեղափոխությունից հետո՝ 10.600 տարիների ընթացքում⁴: Կերպափոխություն՝ ագրարային հասարակությունից դեպի արդյունագործական հասարակություն:

Նոր ժամանակների մտավոր կերպափոխությունները

Նոր ժամանակները նշանավորվեցին մտավոր կյանքի աննախադեպ զարգացմամբ: Դրան էապես նպաստեց մտավորական դասի կազմավորումը, որը պետք է հանգեցներ արդի գիտության ձևավորմանը՝ մեխանիկա, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, հումանիտար գիտություններ: Ծավալվեց մի ըն-

¹ **Davies N.**, Europe, A History, London 1996, p. 1011.

² **Evans M.**, A Short History of Society, London 2006, p 32.

³ **More Ch.**, Understanding The Industrial Revolution, London 2000, p. 4.

⁴ **Snooks G. D.**, Was The Industrial Revolutioan Neseccary, London 2002, pp. 1, 19.

դարձակ և համալիր շարժում, ինչպիսին էր Լուսավորականությունը⁵: Այն Եվրոպայի, այսպես կոչված, երկարատև XVIII դարն էր (*long eighteenth century*): Ժամանակագրորեն ընդգրկում էր մոտավորապես 1685-1815թթ., երբ աշխարհը դարձավ արդիական⁶: Վերածննդի մշակութային և Ռեֆորմացիայի կրոնական շարժումներն արդ ստանում էին իրենց փիլիսոփայական հիմնավորումներն ու քաղաքական դրսևորումները:

Լուսավորականությունը եվրոպական մտքի համալիր շարժում էր, որի հիմնարար կետերից մեկը հին կարգերի՝ *ancien regime*⁷, քննադատությունն էր: Հարկավ, տեսական քննադատությունն ուղեկցվում էր կիրառական ջանքերով՝ ամբողջացնելով ժամանակաշրջանի թելադրանքը՝ իբրև այլափոխման հրամայական: Բայց այս այլափոխումը միտված չէր նախկին կարգի համընդհանուր ժխտմանը, թեպետ «դարաշրջանի ծրագիրը»⁸ որոշ հետազոտողներ բնորոշում են իբրև **սպեղծագործ ավերում**: Միտված լինելով ինքնանորոգման՝ այն քանդում էր անկենսունակ հինը՝ զուգահեռաբար ստեղծելով մի նոր տարածք, որտեղ պետք է վերածնվեր եվրոպական քաղաքակրթությունը՝ ապագայի նոր հեռանկարներով և հնարավորություններով:

Հասարակական կարգի արդիականացման ծրագրերը

Հասարակական կառույցի տեսական վերաիմաստավորման փորձերն ակտիվացան քաղաքական և սոցիալ-տնտեսական բոլոր գործընթացներին զուգահեռ. հեղափոխություններ, արդյունաբերական հեղափոխություն, կապիտալիզմի զարգացում, գիտական մտքի դինամիկ աճ և այլն: Կարևոր խնդիր դարձավ կառուցել այնպիսի հասարակություն, որը կներդաշնակի XVIII դարի քաղաքացու ձգտումներին, լինի ումանտիկ, թե՛ ռացիոնալիստ: Նախկին

⁵ Ժամանակակիցներն այս ֆենոմենը բնորոշում էին տարբեր անուններով՝ “this enlightened century”, “lumieres”(lights), “Aufklarung” (enlightenment), “illumino” (illumination), իսկ հետևելով Թ. Փեյնին՝ 1794թ.-ից՝ “Age of Reason”. Ի. Կանտի ձևակերպմամբ, Լուսավորականությունը «Մարդկության ազատումն է սեփական տհասությունից»- **Withers Ch. W.J.**, Placing the Enlightenment, London 2007, p. 2.

⁶ **Withers Ch. W.J.**, Placing the Enlightenment, p. 1-Փիլիսոփայորեն, «մոդեռնիզմը» հիմնարար արժեքների վերացական համախումբ էր՝ հանդուրժողականություն, անհատի ազատություն, ժողովրդավարություն, հավասարություն, արտահայտվելու ազատություն, գիտելիքի նկատմամբ հավասար իրավունքներ:

⁷ **D. M. McMahon**, Enemies of The Enlightenment, The French Counter-Enlightenment and Making of Modernity, New York 2001, p. 14.

⁸ **Taylor C. and Buckle S.**, Hume and The Enlightenment, London 2011, p. 154.

people (ժողովուրդ) կամ **subject (ենթակա)** եզրույթների փոխարեն աստիճանաբար տիրական դարձավ **citizen (քաղաքացի)** եզրույթը⁹:

Առաջացան երեք հիմնական ուղղություններ, որոնք զարգացրին հասարակական կառույցի արդիականացման սեփական մոդելները: **Արմատական ազատական**. սա հեղափոխականության և ծայր ուղիունալիզմի գաղափարական դրսևորումն էր: Այս ուղղության ամենավառ ներկայացուցիչն էր ֆրանսիացի մտածող Ժ.-Ժ Ռուսոն: Իր հիմնարար աշխատությունների մեջ՝ «Հանրային դաշինք», «Էմիլ», քննության առնելով մարդկային համակեցության զարգացումը բնական իրավիճակից մինչև ժամանակակից հասարակություն, նա քննադատում էր *քաղաքակրթական առաջընթացը*¹⁰՝ դրանում տեսնելով մարդկային համակեցության հիմնական ախտերը¹⁰: Բնական իրավիճակը, ըստ հեղինակի, խաղաղության և համերաշխության իրավիճակ էր, սակայն պատմական զարգացման ընթացքում այդ համերաշխությունն իր տեղը զիջել է ազահությանը, սնափառությանը, սոցիալական և տնտեսական անհավասարությանը և մարդկային այլ արատների: Այս հիմամբ հեղինակը կատարում է իր հայտնի պնդումը. մարդը ծնվել է ազատ, բայց ամենուր կապանքների մեջ է¹¹: Հասարակական կարգը նորոգելու համար նա առաջ է քաշում **հանրային դաշինքի** իր տեսությունը:

Դրա առանցքը մարդկային *կամքն* է: Նա տարբերակում է կամքի երկու տեսակ՝ մեկը, որն ուղղորդվում և կառավարվում է կրքերի կողմից, մյուսը՝ բանականության: Երբ երկրորդ տարբերակը դառնում է տիրական, վերածվում է **համընդհանուր կամքի (General will)**¹²: Համընդհանուր կամքը նույնական է «բոլորի կամքի հետ»(Will of All)¹³: Այն ավելին է, քան մարդկանց անհատական կամքերի մեխանիկական հանրագումարը: Հանուր բարիքի արտացոլումն է, այլ ոչ թե առանձին խմբերի հատվածային շահերի դրսևորումը: Ընդդիմանալ համընդհանուր կամքին՝ կնշանակի ընդդիմանալ սեփական

⁹ Evans M., op.cit, p. 38.

¹⁰ Rousseau J. J., The Second Discourse: Discourse on the Origin and Foundations of Inequality Among Mankind, by S. Dunn, The Social Contract and The First and Second Discourses, New York 2002, pp. 81-84.

¹¹ Rousseau J. J., The Social Contract, by S. Dunn, The Social Contract and The First and Second Discourses, New York 2002, p. 156.

¹² Rousseau J. J., The Social Contract, by S. Dunn..., p. 10.

¹³ Qvortrup M., The Political Philosophy of Jean- Jacques Rousseau, New York 2003, p. 60.

կամքին¹⁴: Շնորհիվ համընդհանուր կամքի՝ հնարավոր է ստեղծել այնպիսի միություն, որը կհամապատասխանի բոլորի(և կամ մեծամասնության) պահանջներին ու կարիքներին: Ժ.-Ժ. Ռուսոյի հասարակական դաշինքը լուծում է հենց այս խնդիրը. «Գտնել միավորման այնպիսի ձև, որը միահամուռ ուժերով կպաշտպանի և կպահպանի յուրաքանչյուր մասնակցի իրավունքներն ու ունեցվածքը, և որտեղ յուրաքանչյուրը բոլորին միանալով՝ կհնազանդվի միայն ինքն իրեն, բայց միևնույն ժամանակ կմնա նույնքան ազատ, որքան առաջ էր»¹⁵: Այլ խոսքով, Ռուսոյի իդեալը հանրապետությունն է, իսկ դրա կայացման հիմնական միջոցը՝ անհատի հասարակական դաստիարակությունը:

Անգլիայում արմատական ազատականության խոչորագույն ներկայացուցիչներից էր **Թ. Փեյնը**: Նա Ամերիկյան հեղափոխության գաղափարախոսներից էր: Նրա գաղափարներն ամփոփված են երկու կարևոր երկասիրություններում՝ «Մարդու իրավունքները» և «Առողջ բանականություն»: Դրանց գաղափարները հիմնված էին անհատի անսահմանափակ ազատության, ժողովրդավարության և սեփական ներկան կառուցելու՝ սերունդների անօտարելի իրավունքների վրա. «Յուրաքանչյուր սերունդ իրավունք ունի ինքնուրույն գործելու բոլոր հարցերում, ինչպես որ նախորդ սերունդները՝ նախորդ դարերում: Յուրաքանչյուր սերունդ ինքը պետք է որոշի ինչպես ապրել»¹⁶: Այս իրավունքի իրագործման առավել ներուձակ ճանապարհը, ըստ Փեյնի, սոցիալական հեղափոխությունն է իր տարասեռ դրսևորումներով:

Փոխզիջումային ազգայական ուղղություն: Առաջինը **Թ. Հոբսն** էր և իր կորոզային «**Լևիաթանը**»: Նպատակն էր հիմնավորել միապետությունը լուսավորական գաղափարների լույսով: Հեղինակը մեկնարկում էր հանրային դաշինքի այն տարակերպից, որն արդարացնում էր միապետի բացարձակ իշխանությունը նպատակների նկատմամբ՝ *pactum subjectionis*:

Իր այս մոտեցումը հիմնավորելու համար Հոբսը մեկնարկում է մարդու էության մասին հետևյալ ըմբռնումներից. մարդու բնական վիճակը (state of nature) կոնֆլիկտային է՝ պայմանավորված երեք պատճառներով՝ տարբերություններ, մրցակցություն և փառասիրություն¹⁷: Քանի որ մարդն իր էությամբ եսակենտրոն էակ է, հարկադիր իշխանության բացակայության պայմաններ

¹⁴ **Rousseau J. J.**, The Social Contract, by S. Dunn..., p. 19.

¹⁵ **Ռուսո Ժ. Ժաք**, Հասարակական դաշինքի մասին, Երևան, 2000, էջ 63:

¹⁶ **Paine Th.**, Political Writings; Rights of Man, by Br. Kuklick, Cambridge 2000, p. 63.

¹⁷ **Hobbes Th.**, Leviathan, p. 77.

րում յուրաքանչյուրը ձգտում է բավարարել սեփական պահանջմունքները՝ սպառնալով մյուսների անվտանգությանը: Միննույն բարիքի համար մրցակցությունը հաճախ բերում է հակադրությունների խորացման և արդյունքում պատերազմի¹⁸: Մարդկանց դատողությունների և կրքերի բազմազանությունը նրանց ուղղորդում է միմյանց գերիշխելու մշտական պայքարի: Եվ այս պայմաններում անհնար է հասնել խաղաղության, առանց որևէ համընդհանուր վախի¹⁹, որը կկառավարի նրանց: Նման իրավիճակը ստիպում է ստեղծել այնպիսի համակարգ, որտեղ «շատերի կամքը ստորադասվում է մեկի կամքին»: Նրանք սահմանափակում են իրենց իրավունքների մի մասը՝ ձևավորելով իշխանություն, որը պետք է կառավարի նրանց²⁰: Եվ սա Թ.Հոբսը անվանում է համակեցություն(Common-wealth)²¹: Եվ հավատացած է, որ վերջինս կարող է հասնել իր կատարումին միայն լուսավորյալ և բացարձակ միապետի առաջնորդությամբ:

Այլ է **Ջ.Լոկի** պարագան, թեպետ նա ևս մեկնարկում է հանրային դաշինքի հղացքից: Նա հանդես էր գալիս սահմանադրական լուսավորյալ միապետության դիրքերից՝ միտված հավասարակշռելու միապետի և պառլամենտի իշխանությունները: Հեղինակն ավաճի տեսլականը տեսնում էր 1688 թ. *Փառահեղ հեղափոխության* հոչակած սկզբունքների մեջ:

Եվ այս առումով հույժ հատկանշական էր Լոկի «**Երկու տրակտատ կառավարման մասին**» տրամախոսությունը²²: Կրկին քննության առնելով մարդկային տեսակի և բնական իրավիճակի (state of nature) հարցը՝ Ջ. Լոկը դրանք դիտարկում է դրական լույսի ներքո: Ըստ հեղինակի՝ բնական իրավիճակը պատերազմական իրավիճակ չէ: Մարդիկ ծնվում են հավասար և ազատ, իսկ բնական իրավիճակը հավասարության և ազատության դրսևորման միջավայր էր: Եվ քանի որ մարդիկ բնականորեն հավասար են, ապա ոչ ոք իրավունք չունի մյուսների վրա հաստատելու իր իշխանությունը սեփական կամքով²³:

Մարդկանց բնական և հիմնարար իրավունքներից մեկը սեփականու-

¹⁸ **Hobbes Th.**, Leviathan, p. 77.

¹⁹ **Hobbes Th.**, op. cit., pp. 78-79.

²⁰ **Hobbes Th.**, op. cit., p. 107.

²¹ Ibid.

²² **Locke J.**, Two Treatises of Government, by P. Laslett, Cambridge, 2003.

²³ **Locke J.**, op. cit., p. 269.

թյան իրավունքն է²⁴: Մասնավոր սեփականության պահպանման անհրաժեշտությունն այն հիմնարար պատճառներից է, որի համար մարդիկ կազմում են դաշինք և ստեղծում քաղաքական իշխանություն: Ի հակադրություն Թ. Հոբսի՝ Ջ. Լոկը հայտարարում էր, որ քաղաքական համակարգի խնդիրն է «կանխել և նորոգել բնական իրավիճակի այն թերությունները, որոնք անհրաժեշտաբար բխում են յուրաքանչյուր մարդու՝ սեփական գործերի դատավորը լինելու հանգամանքից»²⁵: Ըստ հեղինակի՝ իշխանությունը սահմանափակված է օրենքով, իսկ վերջինս արտահայտում է մարդկանց կամքը(will)²⁶: Այն դեպքում, երբ իշխանությունը չարաշահում է օրենքը, մարդիկ իրավունք ունեն ղեկավարին(ներին) զրկելու իշխանությունից և ձևավորելու նոր իշխանություն: Հենց այս հիմնագաղափարով էլ Ջ. Լոկը հիմնավորում էր սահմանափակ (և պայմանական) իշխանության գաղափարը:

Հասարակական կառույցի արդիականացման երրորդ թևը **լուսավորյալ պահպանողական** ուղղությունն էր: Սրա հիմնավորողն ու ամենավառ ներկայացուցիչն անգլիացի մտածող և քաղաքական գործիչ **Է. Բրոքն** էր: Նա փորձում էր ընկերային կառույցի նախկին՝ կրոնաավանդական մոտեցումները ներբերել ժամանակակից մտածողության ծիր՝ դրան հաղորդելով արդիական շունչ և կենսունակության նոր լիցքեր: Պահպանողականության այս կերպը ոչ թե հետադիմություն էր, այլ քաղաքական արդիականացման կարևորագույն խթան:

Հանրային դաշինքի տեսությունից արտաձված հասարակական կարգի արդիականացման այս երեք ծրագրերը ծնունդ տվեցին դարաշրջանի երեք գործողութենական ծրագրերի:

Առաջինը **լուսավորյալ բացարձակ միապետությունն էր**: Արդեն XVII դարի 2-րդ կեսից եվրոպական մի շարք երկրներում ի հայտ եկավ լուսավորյալ միապետների մի ամբողջ փաղանգ՝ Լյուդովիկոս XIV-ը (1643-1715)՝ Ֆրանսիայում, Մարիա Թերեզան (1740-1780) և Իոսիֆ II-ը (1780-1790)՝ Ավստրիայում, Ֆրիդրիխ II-ը (1740-1786)՝ Պրուսիայում, Գուստավ III-ը (1771-1792)՝ Շվեդիայում, Պետրոս I-ը (1682-1696) և Եկատերինա II-ը (1762-1796)՝ Ռուսաստանում:

Լուսավորյալ միապետության բնորոշ գծերից մեկը միապետների և փի-

²⁴ Locke J., op. cit., pp. 207-210.

²⁵ Locke J., op. cit., pp. 273-275.

²⁶ Locke J., op. cit., pp. 399-400.

լիստփաների «դաշինքն» էր: Դրանով միապետությունը փորձում էր աղերսվել գիտելիքին: Միապետները ցանկանում էին «պետությունը ենթարկել բանականությանը» և հասարակական վերնախավը կառուցակազմել ըստ բանական ծրագրի: Ն. Դեյվիսն այս իրողությունը բնորոշում է «**ինտելեկտուալ արսուլյուտիզմ**», որտեղ արքայական ճաշակն ու հովանավորությունը կարող է սահմանել դարաշրջանի ողջ մշակութային կյանքը²⁷:

Լուսավորյալ միապետության ընդհանրական և տեղական առանձնահատկությունների մասին առկա է հարուստ գրականություն: Բավարարվենք՝ միայն հատկանշելով հետևյալը. համակեցական արդիականացման այս ծրագիրը ձգտում էր միմյանց հարմարեցնել ավատատիրության և կապիտալիզմի հիմնատարրերը և խուսափել արմատական տեղաշարժերից: Հարկավ, անուրանալի են նրա արդյունքները հասարակության բանական վերակառուցման, կառավարման և մշակութային նոր հարացույցների մշակման գործում: Սակայն դրանք իրագործելի էին լոկ այն սահմաններում, քանի դեռ չէին վտանգում հին ռեժիմի հիմքերը: Ուստի մենք հետևում ենք այն հետազոտողներին, ովքեր հակված են լուսավորյալ միապետությունը համարել տրանզիտիվության փակուղային ճանապարհ:

Երկրորդը **հեղափոխությունն էր**: Նկատի ունենք նախ և առաջ Անգլիական (1642-1648 թթ.) և Ֆրանսիական մեծ (1789-1794 թթ.) հեղափոխությունները: Դրանք համակեցական կյանքի արմատական վերափոխման ճանապարհ էին ապահովում: Ի չիք էին դարձնում ավատատիրական տնտեսվարման, հասարակական հարաբերությունների, կառավարման կարգի վերապրուկները և հաստատում կապիտալիզմի հիմնակառույցները: Գործընթացն ուղեկցվում էր հասարակական բախումներով, զանգվածային սպանություններով և արյունահեղություններով: Սկսելով ազատությունների և հանրապետության հռչակմամբ՝ դրանք հաճախ վերադարձ էին կատարում դեպի (այս անգամ արդեն բուրժուական) միապետություն: Այս առումով խիստ դիպուկ է Ֆ. Էնգելսի միտքը. «Կրոնվելը մարմնավորում էր անգլիական հեղափոխության և՛ Ռոբեսպիերին, և՛ Նապոլեոնին»²⁸:

Երրորդ ուղին **հասարակական փոխզիջումն էր**: Ֆրանսիացիներից մեկուկես դար առաջ հայտնվելով հեղափոխական քաոսի և քաղաքացիական

²⁷ Davies N., op. cit, p. 925.

²⁸ Энгельс Ф., Положение Англии: восемнадцатый век, К. Маркс, Ф. Энгельс, Сочинения, т. 1 (2 изд.), Москва, 1956, с. 602.

պատերազմի հորձանուտում՝ անգլիացիները շուտով փոխեցին իրենց պատմական ընտրությունը: 1688թ. **Փառահեղ հեղափոխությունն** անգլիացիների հեղափոխական փոխզիջումն էր²⁹ թագավորի և պառլամենտի, իշխանության և ժողովրդի միջև:

Փառահեղ հեղափոխությունն ընթացավ անգլիացիների ավանդական իրավունքների վերականգնման դրոշի ներքո (Traditional Right of nation)³⁰, որոնք ոտնահարել էր միապետությունը: Նրանք չզնացին առկա քաղաքական և ընկերային կարգի արմատական ժխտման ուղիով, այլ համադրելով ավանդականն ու ժամանակակիցը՝ իրենց համակեցական կարգը հարմարեցրին նոր ժամանակի պահանջներին: Փառահեղ հեղափոխությունն անգլիացիների ինքնանորոգման ճիգն էր: Նրանք ստեղծեցին սահմանադրական միապետություն, որի պայմաններում համադրվում էին ժողովրդի, ազնվականության և միապետի շահերը՝ հանուն ընդհանուր բարիքի (Common Wealth): 1763թ. Վոլտերն անգլիացիներին բնորոշում էր իբրև երկրի միակ ժողովուրդ, որը կարողացավ երկարատև պայքարով սահմանափակել թագավորի իշխանությունը և ստեղծել իմաստուն կառավարման կարգ, որտեղ արքան ունի իշխանություն՝ բարիք գործելու համար, իսկ ժողովուրդը մասնակցում է իշխանությանն առանց խառնաշփոթության³¹:

ԱՄՓՈՓՈՒՄ

XVII դարից սկսած՝ Եվրոպան թևակոխեց փոփոխությունների նոր և դրամատիկ ժամանակաշրջան: Գոյություն ունեցող համակեցական կարգը ենթարկվեց էական կերպափոխությունների: Դրանք ներառում էին երեք հիմնական ոլորտներ՝ տեխնոլոգիական փոփոխություններ, ընկերային փոփոխություններ և մտավոր փոփոխություններ: Արդյունաբերական հեղափոխության արդյունքում կատարվեցին մի շարք տեխնոլոգիական նորամուծություններ, փոխվեցին աշխատանքի կազմակերպման եղանակները, որոնք իրենց հերթին փոխեցին մարդու և աշխատանքի նախկին հարաբերությունները:

Նոր ժամանակները նշանավորվեցին մտավոր կյանքի աննախադեպ զարգացմամբ: Դրան էպպես նպաստեց մտավորական դասի կազմավորումը, որը պետք է հանգեցներ արդի գիտության ձևավորմանը՝ մեխանիկա, մաթե-

²⁹ **Munck Th.**, The Enlightenment. A Social History 1721-1794, London 2002, p. 198.

³⁰ **Soffer R. N.**, History, Historians and Conservatism in Britain and America, New York 2009, p. 194.

³¹ **Withers Ch. W.J.**, Placing the Enlightenment, p. 25.

մատիկա, ֆիզիկա, քիմիա, հումանիտար գիտություններ: Ծավալվեց մի ընդարձակ և համալիր շարժում, ինչպիսին էր Լուսավորականությունը:

Առաջացան հասարակական կարգի արդիականացման մի քանի ուղղություններ՝ արմատական ազատական, փոխզիջումային ազատական և լուսավորյալ պահպանողական: Դրանք հիմնված էին ժամանակի խոշոր մտածողների տեսական գաղափարների վրա՝ Թ. Հոբս, Զ. Լոկ, Ժ.-Ժ. Ռուսո, Թ. Փեյն, Է. Բըրք և այլք: Այս երեք ծրագրերը ծնունդ տվեցին դարաշրջանի երեք գործողութենական ծրագրերի՝ լուսավորյալ բացարձակ միապետություն, հեղափոխություն և հասարակական փոխզիջում:

Բանալի բաներ - արդյունաբերական հեղափոխություն, տեխնոլոգիական փոփոխություններ, ընկերային փոփոխություններ, մտավոր փոփոխություններ, Լուսավորականություն, հասարակական կարգ, արդիականացում, արմատական ազատական, փոխզիջումային ազատական, լուսավորյալ պահպանողական:

ЗАРОЖДЕНИЕ ИНДУСТРИАЛЬНОЙ ЭРЫ: ПРОЕКТ МОДЕРНИЗАЦИИ ОБЩЕСТВЕННОГО СТРОЯ

ГАЙК КОНДЖОРЯН

Начиная с 17 века Европа вступила в новый и драматичный период трансформаций. Совместная жизнь стран материка подверглась существенным изменениям. Они включали в себя три основных сферы – технологические изменения, социальные и интеллектуальные трансформации. В результате индустриальной революции был введен ряд технологических инноваций, изменились традиционные методы организации труда, что в свою очередь трансформировало прежнее отношение человека к труду.

Новые времена ознаменовались беспрецедентным развитием интеллектуальной жизни. Был сформирован класс интеллигенции, что должно было неизменно привести к формированию современных наук – механики, математики, физики, химии, гуманитарных наук. Развернулось пространное и комплексное движение, именуемое Просвещением.

Появилось несколько направлений модернизации общественного строя. Наиболее крупными были радикально-либеральное, компромиссно-либеральное и просвещенно-консервативное. Они зиждились на учениях великих мыслителей того времени, таких как Т. Гоббс, Дж. Локк, Ж-Ж. Руссо, Т. Пейн, Э. Берк и другие. Три данных проекта модернизации общественного строя

породили три плана действий - просвещенная абсолютная монархия, революция и общественный компромисс.

Ключевые слова – индустриальная революция, технологические изменения, социальные изменения, интеллектуальные изменения, Просвещение, общественный строй, модернизация, радикально-либеральное, компромиссно-либеральное, просвещенно-консервативное.

THE STARTING OF THE INDUSTRIAL ERA: SOCIAL ORDER MODERNIZING PROGRAMS

Hayk Kondjoryan

Since the 17th century, Europe has entered a new and dramatic period of changes. The order of life existence in the countries on the continent has undergone significant transformations. These have incorporated three fundamental spheres: technological, social and intellectual changes. The Industrial Revolution brought about technological innovations the traditional methods of work management have been modified, changing, in its turn, the former relationship between man and work.

The new era was marked by an unprecedented progress of intellectual life. This progress was prompted by a new social class of thinkers with highly developed intellectual powers, which led to the development of modern science: mechanics, mathematics, physics, chemistry and humanitarian sciences. This evolved into a large and complex movement, which was the Enlightenment Age.

Several directions modernizing public order came forth. Radical liberal direction, liberal compromise direction and enlightened conservative direction were amongst them. These were based on theoretical ideas of T. Hobbs, J. Locke, J. Jacques Rousseau, Th. Payne, E. Burke and other thinkers of the time. These three modernizing public order programs have given birth to three activity programs of the epoch: enlightened absolute monarchy, revolution and social compromise.

Key words – industrial revolution, technological changes, social changes, intellectual changes, Enlightenment, social order, modernization, radical liberal, liberal compromise, enlightened conservative.

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

ՀԱՍՄԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

Արևմտահայ քաղաքական միտքը, որի կրողները 1918 թ. հայ-թուրքական պատերազմի հետևանքով, նույն թվականի մայիս ամսից սկսած, գտնվում էին Արևելյան Հայաստանում, միանշանակ վերաբերմունք չդրսևորեցին ՀՀ գոյության նկատմամբ: Այս ժամանակահատվածի արևմտահայ քաղաքական միտքը կրողները գործում էին բուն Հայաստանում և արտասահմանում, հիմնականում Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ: ՀՀ-ում թե՛ արևմտահայ և թե՛ արևելահայ քաղաքական միտքը 1918 թ. մայիսի 28-ից հետո, անկախ տարածքային պահանջների առումով որոշ տարակարծություններից, վերաճեց պետական քաղաքական մտքի, որի ուղղվածությունները ցավոք չէր կիսում Պողոս Նուբարի գլխավորած պատվիրակությունը: Սա հարկավ իր բացասական հետևանքներն ունեցավ ՀՀ անկման կամ ավելի նեղ սահմաններով՝ խորհրդայնացման վրա:

Նախ՝ փոքր-ինչ այն մասին, թե ինչ դեր ունեցան արևմտահայերը հայոց նոր պետականության արարման գործում: Հարկավ, դժվար էր կանխատեսել, որ 1918 թ. մայիսի վերջերին Անդրկովկասյան սեյմը, որտեղ ձևականորեն միավորված էին հայերը, վրացիները և թաթարները, կկազմալուծվի, և կհռչակվի Հայաստանի Հանրապետությունը: Թուրքերն իրենք էին ցանկանում Ռուսաստանից անկախ տեսնել Անդրկովկասը՝ վերջինս թողնելով մեն-մենակ, որը կհեշտացներ երկրամասի զավթումը: Այսպիսով, անկախության գաղափարը գայիս էր Թուրքիայից¹: Բայց, անկախ այդ հանգամանքից, թուրքական զորքերի առջևից նահանջող արևմտահայ կռվող ուժերը, որոնց հետ էր գաղթականությունը, նպաստեցին այդ պետության կայացմանը՝ նախապես հայացնելով Հայաստանը:

Հունվարի վերջերին, խախտելով զինադադարը, թուրքերը հարձակվում են Երզնկայի վրա, որը, չնայած Սեբաստացի Մուրադի գործադրած ջանքերին, նույն ամսի 31-ին պարպվեց: Հայկական 1000-ից մի փոքր ավելի ուժերը գաղթականության հետ նահանջեցին մինչև Էրզրում: Փետրվարի 3-ին նահանջի ճանապարհը բռնեցին Բաբերդի փոքրաթիվ կռվող ուժերը՝ Սեպուհի գլխավո-

¹ Տե՛ս Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երևան, 1996, էջ 3-4:

րությամբ: Փետրվարի 11-ին նա և Մուրադն արդեն էրզրումում էին, որը նույնպես ընկավ փետրվարի 27-ին: Այսպիսով, Արևմտյան Հայաստանը նորից անցնում էր թուրքերի ձեռքը: Մարտի 22-ի լույս 23-ի գիշերը պարավեց Սարիղամիշը, ապրիլի 12-ին՝ Կարսը, մայիսի 15-ին՝ Ալեքսանդրապոլը:

Մայիսյան հերոսամարտերի կազմակերպման նկարագրությունը մեր խնդրից դուրս է: Նշենք միայն, որ երբ 1918 թ. սկսվեց թուրքական ագրեսիան, հնչակներն այդ առումով հայտարարեցին. «...Մեր վերջին հույսը զենքը ձեռքին պաշտպանվելն է»²:

Թուրքական արշավանքի հետևանքով նահանջի ճանապարհը բռնեց նաև Վասպուրականի 25000-ի հասնող և Տարոնի, Սասունի և Խնուսի 60-70000-ի հասնող հայությունը:

Վասպուրականի հայությունը, որի առաջնորդն էր Կոստի Համբարձումյանը³, մինչև մարտի 21-ը դիմադրեց թուրքերին, ապա նահանջեց Պարսկաստան, որտեղ էլ վերջինս սպանվեց: Ընդհանրապես նահանջող արևմտահայության մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Կարո Սասունին: Վերջինս, որը Տարոնի նահանգապետի տեղակալն էր, կենտրոն ունենալով Խնուսը, նահանջող ժողովրդի հետ հասնում է Ալաշկերտ: Հենց այստեղից սկսած՝ ժողովուրդը, թերևս զգալով, որ վերջնականապես թողնում է իր հայրենիքը, սկսում է վերացնել այն բոլոր թաթարական գյուղերը, որոնք հանդիպում են իր ճանապարհին: Տարոնի և Խնուսի ժողովուրդը Ալաշկերտի Ղարաբլիխա գյուղում և շրջակայքում մնում է մինչև մարտի 23-ը՝ Սարիղամիշի անկումը՝ կրակի տալով տեղի հսկայաքանակ պահեստները, իսկ Կարսի անկումից հետո տարոնահայությունը զինված ուժերի հետ համախմբվում է Դիադինի և Մոսունի շրջաններում՝ Մեծ Մասիսի ստորոտում: Այստեղ Տարոնի և Ալաշկերտի ղեկավարները խորհրդակցություն են ունենում՝ «գոյութեան պայքարի ուղեգիծ մը պատրաստելու համար»⁴:

² Хуршудян Р., Критический анализ политики и идеологии армянской мелкобуржуазной партии гнчак в период борьбы трудящихся Закавказья за победу и упрочение советской власти (1917-1921 гг.), Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 1981, с. 20.

³ Տե՛ս Սասունի Կ., Մայիսեան խռովութիւնները եւ թաթարական ապստամբ շրջանները, Պեյրուֆ, 1968, էջ 57-60, նաև՝ «Նայիրի», Բեյրուֆ, 1969, ԺՁ տարի, փետրվարի 2, թիւ 35:

⁴ Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Պեյրուֆ, 1966, էջ 179:

Խորհրդակցության ընթացքում հետևյալ քաղաքական որոշումն են կայացնում. «Ժողովուրդի հետ մնալ եւ ղեկավարել գաղթարշավը, դատնալ տեսակ մը շարժական կառավարութիւն, կեդրոնացած պահել զինուորական, կուսակցական եւ վարչական ղեկավարութիւնը եւ ընթացք տալ 150.000 է անելի ժողովրդական զանգուածի մը շարժումներուն»⁵:

Այսպիսով, ժողովուրդն ուներ իր քաղաքական և վարչական ղեկավարությունը, որի խնդիրն էր հիմնավորվել Արևելյան Հայաստանում՝ գործնականում հայացնելով այն: Պատահական չէ, որ խորհրդակցությունը որոշում է զենքի ուժ կիրառել բոլոր այն մահմեդական տարրերի նկատմամբ, «ուվքեր Արեւմտեան Հայաստանի կորստից հետո սպառնալիք էին՝ կախված արևելահայութեան գլխին»⁶:

Լցված վերոհիշյալ ուխտով՝ Տարոնի, Ալաշկերտի և Վասպուրականի ժողովուրդը 1918 թ. ապրիլի վերջերից Արարատ լեռան բարձունքներից իջնում է դեպի Իգդիր, որտեղ բնակվող թուրքերն ընկճվում են և տեղի տալիս: Այնուհետև ժողովուրդը, Արաքսն անցնելով, հարձակվում է Էջմիածնի և Աշտարակի թաթարական գյուղերի վրա: 500-հոգանոց սասունցիների կողմից, ծրագրվում է Թալինի բերդի գրավումը, որը ռազմական բացառիկ նշանակություն ուներ Հայաստանի համար: Այն ոչ միայն իշխում էր Էջմիածնի և Աշտարակի վրա, այլև լուրջ սպառնալիք էր Երևանի համար⁷: Թալինի բերդը գրավվում է մայիսի 5-ին: Կարո Սասունու եղբայրը՝ Արմեն Սասունին, որն այս իրադարձությունների մասնակիցն էր, կարևոր տեղեկություններ է հաղորդում այն արևմտահայ գործիչների մասին, որոնք առաջնորդվում էին հիշյալ տրամաբանությամբ: Համաձայն դրանց՝ արևմտահայությանը տեղավորելու հարցը քննարկվում է մի ժողովում, որին մասնակցում են Կ. Սասունին, Վահագն Քրոմյանը, Արմեն Սասունին, Մխիթար Դարմանյանը, Միհրան Գրիգորյանը, Արամ Խոճուկյանը, Սասունցի Մուշեղը, Գելեցի Ղազարը, Թեղուտի Գալեն, Նորատինի Արշակը, Արշակ Մանուկյանը, Սասունցի Մանուկը, Աղջանի Վահանը և ուրիշներ: Ժողովը որոշում է, «որ Սասնո հեծելազնդի առաջնորդութեամբ Տարոնի ժողովուրդը տեղափոխվի Արագածի թաթարական, պարսկական եւ քրդական զիւղերը, որոնք պիտի գրավվէին Սասնո հեծելազնդի զինու զորութեամբ: Պուլանուխ-Մանազկերտի ժողովուրդը, որոնց մեծ մասը

⁵ Նույն տեղում, էջ 182:

⁶ Ներսիսյան Ա., Կարո Սասունի, Երևան, 2004, էջ 113:

⁷ Տե՛ս Ստեփանյան Խ., Ռուբեն Տեր-Մինասյան (Կյանքը և գործը), Երևան, 2008, էջ 74:

սայլ ուներ եւ մեծ քանակութեամբ կենդանիներ, էջմիածնի եւ Աշտարակի խճուղիով պէտք է բարձրանար Աշտարակ, Օշական եւ շարժուէր դէպի Ապարան: Այս որոշումը, - գրում է Ա. Սասունին, -արագ կերպով գործադրուեցավ եւ հետագային բախտորոշ նշանակութիւն ունեցաւ Հայաստանի համար»⁸:

Կոիվների մանրամասնությունների մեջ չխորանալով՝ շեշտենք, որ Թալինի բերդի գրավումից հետո ընկճվեցին մյուս թաթարական գյուղերը ևս, որի արդյունքում Թալինից մինչև Ուջան և Բյուրական, մոտ 70 քառ. կմ տարածքի վրա հաստատվեց արևմտահայությունը: Ավելացնենք նաև, որ ՀՀ հռչակումից հետո էլ նրա հայացման աշխատանքները հիմնականում իրականացնում էին արևմտահայ ուժերը՝ գլխավորապես Ռուբենի գաղտնի ծրագրերի համաձայն⁹:

Չպետք է մոռանալ նաև Ալազյազի (Արագածի) արշավանքը, որի հաղթանակը մեծ նշանակություն ունեցավ Սարդարապատի ճակատամարտում, քանի որ «Սարդարապատի դէմ գործող թրքական բանակը զրկվեցավ թաթարական ուժերու օժանդակութենէն, իսկ հայկական բանակը, ճակատամարտի պահուն, իր կոնակէն եւ կողքերէն հարուած տուղներէն ազատուեցավ»¹⁰:

Եվ, վերջապես, պետք է շեշտել, որ տարոնցիները և գնդապետ Ա. Բաղդասարյանի գնդից 400 վասպուրականցիներ, ինչպես նաև Անդրանիկը, 1918 թ. ամռանը մի շարք հաղթանակներ տարան Ջանգեզուրում՝ չեզոքացնելով թաթարական տարրը: Առաջ անցնելով ասենք, որ այնտեղից էլ Անդրանիկը պատրաստվում էր անցնել նախ Պարսկաստան, ապա Արցախ: Սակայն անգլիացի գեներալ Թոմսոնը սպառնաց նրան, որ եթե նա շարունակի իր առաջխաղացումը, ապա հայկական հարցը չի լուծվի Փարիզի խաղաղության կոնֆերանսում: Անդրանիկը ստիպված թողեց Ջանգեզուրը (որին փոխարինեց Գ. Նժդեհը), զենքերը էջմիածնում հանձնեց կաթողիկոսին և հեռացավ արտասահման:

Այժմ փորձենք ճշտել, թե ինչպիսի դիրքորոշում որդեգրեցին արևմտահայ քաղաքական գործիչները Հայաստանի Հանրապետության նկատմամբ,

⁸ **Սասունի Կ.**, Պատմութիւն Տարոնի աշխարհի, Պէրյուֆ, 1956, էջ 1073:

⁹ Տե՛ս **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Կ. Է, Լօս Անճելըս, 1952, էջ 103–121, նաև՝ **Դարբինեան Ռ.**, Հայ Դատը Այսօր, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1963, Յուլիս, թիւ 7, էջ 1-15:

¹⁰ **Սասունի Կ.**, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918), էջ 197, նաև՝ **Ստեփանյան Խ.**, նշվ. աշխ., էջ 74:

որը հռչակվեց նաև նրանց գործունեության արդյունքում, առանց որի դիվանագիտական հիմնավորումները չէին կարող արդյունավետ լինել:

1918 թ. մայիսի 28-ից խորացել էր քաղաքական անջրպետը արևմտահայերի և արևելահայերի միջև, որը դեռևս սկսվել էր արևմտահայերի 1-ին համագումարից: Արևմտահայերին, որոնք արևելահայերի հետ մեկտեղ երկար տարիներ պայքար էին մղել հանուն իրենց անկախության, այնքան էլ հոգեհարազատ չէր Արևելյան Հայաստանում առաջացած պետությունը, որը նրանք համարում էին Արարատյան Հայաստան: Իհարկե, նրանց կարելի էր հասկանալ այն առումով, որ չէին ուզում կորցրած տեսնել իրենց հայրենիքը: Բայց նրանք անջատողականության հարց չէին դնում, ինչպես անում էր Պողոս Նուբարի գլխավորած պատվիրակությունը, որին մենք դեռ կանդադառնանք: Ինչպես նշում է Ա. Չելեպյանը. «Զօր. Անդրանիկը նույնպես մերժեց ճանչնալ Պաթումի ստորացուցիչ պայմաններով ստեղծուած Երեւանեան Հանրապետութիւնը, որ ո՛չ ազատութիւնը ունէր իր սեփական երկրի պաշտպանութեան համար բանակ պահելու, ո՛չ ալ անկախութիւնը՝ իր երկրի ճամբաներուն տէրը ըլլալու»¹¹:

Անդրանիկի համար վավերացնել Բաթումի պայմանագիրը կնշանակեր ընդունել. «...Երեւանեան Հանրապետութիւնը որպէս Հայկական հարցի լուծում եւ նուիրագործել Թրքահայաստանի կորսուած հողերը: Ան չէր կրնար գլուխ ծռել Պաթումի թրքական ստորնացուցիչ պայմաններուն եւ հաշտուիլ Թրքահայաստանի կորուստին հետ, որու ազատագրութեան համար պայքարած էր 30 տարի»¹²:

Նման դիրքորոշում ունեին նաև դաշնակցական ղեկավարներ Միքայել Վարանդյանը, Գարեգին Փաստրմաճյանը, Համո Օհանջանյանը, որոնք հավատարիմ մնացին Հայաստանի Հանրապետությանը, բայց նույն մտահոգությունն ունեին Թուրքահայաստանի դատի և ապագայի նկատմամբ, ինչպես զորավար Անդրանիկն ու Պողոս Նուբար փաշան:

Ռամկավարները նույնպես չընդունեցին Հայաստանի Հանրապետությունը՝ այն համարելով անցումային փուլ հայոց պետականության ստեղծման ճանապարհին: Այս առումով Ս. Վրացյանը գրում էր, որ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը ելնում էր իրական փաստերից, այսինքն՝

¹¹ **Չելեպեան Ա.**, Զօրավար Անդրանիկ եւ Հայ Յեղափոխական շարժումը, Լոս Անճելըս, 1984, էջ 504-505:

¹² Նույն տեղում, էջ 500:

Հայաստանի Հանրապետության գոյությունն իրողություն էր, այնտեղ ապրում էր մեկ միլիոն ժողովուրդ, Երևանում կային խորհրդարան, կառավարություն, բանակ. երկիրը հետզհետե կազմակերպվում էր պետականորեն: Մինչդեռ Թուրքահայաստանն ամայի էր՝ «ոչ ժողովուրդ ուներ, ոչ կառավարություն»: «Շտուկաբար,-եզրակացնում էր Վրացյանը,- անհրաժեշտ է ազգային բոլոր ուժերը կենտրոնացնել Հայաստանի Հանրապետության վրա, իբրև հայկական պետության կորիզի, և Հայկական հարցի լուծումը դնել Հայաստանի երկու հատվածների միացման ձևով»¹³:

Որո՞նք էին քաղաքական խզման բուն պատճառները: Դրանք լավ ներկայացրել է Ս. Վրացյանը, որն այդ կապակցությամբ մասնավորապես նշում է. «Տասնեակ տարիներ հայ քաղաքական միտքը դաստիարակել էր այն ուղղութեամբ, որ Հայաստանը այնտեղ էր, Բարթողեան լեռնաշղթայի միտս կողմը, հայկական հարց, Հայաստանի ինքնավարութիւն, հայ պետութիւն կարող էր լինել միայն Թուրքահայաստանում, եւ յանկարծ, բոլորովին չապասաժ տեղից՝ մէջտեղը բռնում է ինչ որ մի «Հայաստանի Հանրապետութիւն» - մարտելի՞ բան էր այդ: Յետոյ այդ «Հանրապետութեան» մէջ դեռ շատ բանից՝ օրէնքներից ու լեզվից սկսած մինչեւ ներքին կարգերը, մինչեւ հանրային կենցաղն ու բարքերը՝ ռուսի հոտ էր բուրում: Ուստի եւ զարմանալի չէ, որ անկախութեան առաջին օրերից հէնց նրանք սկսել էին մտածել «ինքնորոշման», իրենց քաղաքական դիրքն ու ընթացքը որոշելու մասին»¹⁴:

Իսկ Հրանտ Ավետիսյանը փորձում է բացատրել այսպես, որ Կովկասում հռչակված Հայաստանի Հանրապետության առկայությունը կարող էր «վտանգ» ստեղծել Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու հարցում¹⁵:

Արևմտահայությունը հիմքեր ուներ անհանգստանալու, քանի որ անորոշ էր Արևմտյան Հայաստանի ճակատագիրը: Նրա՝ գեթ ծիսականորեն ՀՀ մաս հայտարարելու փաստը կարող էր վերացնել արևելահայ-արևմտահայ անջր-

¹³ **Սարգսյան Ա.**, Հայ սահմանադրական Ռամկավար Կուսակցություն (1908-1921), Երևան, 2009, էջ 158-159:

¹⁴ **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւն, Բէյրութ, 1958, էջ 254-255, Չելեպեան Ա., նշվ. աշխ., էջ 502-503, **Ղազարյան Հ.**, Սևրի պայմանագիրը և Վուրդո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ, գիրք Ա, Երևան, 2012, էջ 236-237, նաև՝ Պատմություն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962, խմբագիր՝ Ա.Կիտուր, հ. Ա, Պէյրութ, 1962, էջ 483:

¹⁵ Տե՛ս **Ավետիսյան Հ.**, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 237-238:

պետը: Այդ հաստատում են Ալ. Խատիսյանի հետևյալ մտորումները՝ կապված ստեղծված իրավիճակի հետ. «Թրքահայաստանի ամայացած վիլայէթները հայ ժողովրդի անկապտելի սեփականությունը կը կազմէին. պէտք էր, որ անոնք եւս մտնէին հայկական նորակազմ պետութեան մէջ, որպէսզի բովանդակ հայութիւնը կարենար համախմբուիլ իր պատմական հայրենիքին մէջ: Ճիշդ է, այդ վիլայէթները մեր ձեռքը չէին, բայց հայ ժողովուրդի գիտակցութեամբ անոնք չէին կրնար պատկանիլ ուրիշ ոեւէ մէկուն, բացի Հայաստանէն. հայութիւնը հասած էր ազգային այնպիսի գիտակցութեան մը, որ չէր կրնար ճանչնալ սահմաններու պատահական բաժանում եւ հատուածներու գոյութիւն. ան կզգար ինքզինքը իբրեւ մէկ ամբողջութիւն եւ իր այդ միութեան գաղափարը կուգէր մարմնաւորել որեւէ մէկ ակտի մէջ: Երեսանը դարձած էր հայութեան քաղաքական կեդրոնը, որ պէտք է միացնէր նաեւ հայկական բոլոր հատուածները»¹⁶:

Ինչպէս համոզվում ենք, խնդիրն ավելի շատ վերաբերում էր ՀՀ-ի շուրջ հայկական հողերի միավորումը համահայկական նպատակ դարձնելուն, երբ դեռ տարածքային առումով ոչինչ ճշգրտված չէր: Ուստի պատահական չէ, որ արևմտահայ քաղաքական ղեկավարներն անհրաժեշտ գտան նրան լուծում տալ: 1919թ. փետրվարի 6–13–ը Երևանում գումարվեց արևմտահայերի երկրորդ համագումարը:

Դեռևս 1917 թ. դեկտեմբերի 19–ին միջկուսակցական մի շարք խորհրդ-դակցություններից հետո կազմվում է համագումարի կազմակերպիչ կոմիտե, որն էլ նախաձեռնում է նրա գումարումը: Համագումարին մասնակցում էին 55 պատգամավորներ: Ջերժ մնայով աշխատանքները մանրամասնորեն ներկայացնելուց՝ նշենք, որ քննարկումների արդյունքում փետրվարի 12–ին ընդունվում է հետևյալ բանաձևը.

«Արևմտահայ երկրորդ Համագումարը՝ քննելով հայ ժողովրդի ներկայ կացութիւնը՝

1. Սրտագին կողջունէ եւ կը հայտարարէ Ազատ եւ Միացեալ Հայաստանի անկախութիւնը:

2. Լիակատար վստահութիւն կը յայտնէ Ազատ եւ Միացեալ Հայաստանի Պողոս Նուպար փաշայի անդրանիկ դահլիճին (Այդ օրերին լուրեր էին տարածվել, թե Պողոս Նուբարը Փարիզում հայտարարել է Հայաստանի միությունն

¹⁶ **Խատիսյան Ալ.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէրյուֆ, 1968, էջ 150:

ու անկախությունը և կազմել միացյալ Հայաստանի կառավարություն, որը չէր համապատասխանում իրականությանը –(Հ. Ս.):

3. Կը յայտարարէ իր վճռական որոշումն ու կամքը՝ ունենալ քաղաքական եւ պետական մէկ միութիւն համազգային հատաձներու եւ երկրամասերու միաւորութեամբ:

4. Կը պարտադրէ ընտրած «Գործադիր Մարմին»՝ նախարարական դահլիճին հետ անմիջական յարաբերութեան մէջ մտնել՝ իրականացնելու եւ գործնականացնելու քաղաքական եւ պետական այն բոլոր աշխատանքները, որոնք հարկաւոր են Ազատ եւ Միացեալ Հայաստանի պետական գոյութիւնը հիմնաւորելու համար:

5. Միաժամանակ կը պարտադրէ ընտրած Գործադիր Մարմինն՝ գործնական քայլեր առնել Արարատեան Հանրապետութեան նախարարութեան եւ Խորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը յայտարարելու եւ իր մասնակցութիւնը բերելու գոյութիւն ունեցող պետական եւ օրենսդրական հաստատութիւններու մէջ համազգային միութիւնը իրականացնելու համար¹⁷:

6. Կը պահանջէ Ազատ եւ Միացեալ Հայաստանի պետական գոյութեան երաշխաւորումը՝ դաշնակից պետութիւններու քաղաքական, տնտեսական եւ ռազմական օժանդակութեամբ եւ աջակցութեամբ:

7. Կը պահանջէ Հայկական Մեծ Եղեռնի հեղինակ եւ պատասխանատու ճիւղերուն՝ Վիլիելմի, Էնվերի, Թալէթի, Ճեմալի, Պեհաէտին–Շաքիրի եւ ընկեր նահանգապետներու, կառավարիչներու եւ բոլոր ղեկաւարներու զինուորական դատարանու պատժիլը:

8. Կը պահանջէ հայ ժողովրդի վնասներու ամբողջական հատուցումը ի հաշիվ օսմանեան կառավարութեան»¹⁸:

Համագումարն ընտրում է 9 հոգուց բաղկացած Գործադիր Մարմին, որի մեջ մտնում էին արևմտահայերի ներկայացուցիչներ Սմբատ Բորոյանը, Խ. Բոնապարտյանը, Ա. Սասունին, Բուլղարացի Գրիգորը, Վ. Տերոյանը. Ռ. Դրամբյանը, Վ. Քրմոյանը, Վ. Օխիկյանը և Արսեն Կիտուրը:

Ինչպես հաստատում է նույն Ս. Վրացյանը, այս մարմինը, որի ստեղծմամբ լուծարվեցին արևմտահայ նախկին բոլոր մարմինները, փաստորեն

¹⁷ Տե՛ս **Սարգսյան Ա.**, Հայ սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908–1921թթ.), էջ 161, տե՛ս նաև **Հարությունյան Ա.Ա.**, Սկըր և հայ հասարակական-քաղաքական միտքը, Երևան, 2004, էջ 31-32:

¹⁸ **Վրացեան Ա.**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 257 – 258:

կառավարության մեջ մի նոր կառավարություն էր: Հարկավ, սա ճիշտ չէր, և Գործադիր Մարմինը շուտով դա հասկանալով դիմեց ՀՀ կառավարությանը՝ Հայաստանի երկու հատվածների միավորման հայտարարության անհրաժեշտության մասին, որն էլ տեղի ունեցավ 1919թ. մայիսի 28–ին: Հայտարարության մեջ մասնավորապես ասված էր. «Հայաստանի ամբողջութիւնը վերականգնելու եւ ժողովրդի լիակատար ազատութիւնն ու բարգաւաճումն ապահովելու համար, Հայաստանի կառավարութիւնը, համաձայն հայ ժողովրդի միահամուռ կամքի եւ ցանկութեան, յայտարարում է, որ այսօրուանից Հայաստանի բաժան–բաժան մասերը մշտնջենապէս միացած են իբրեւ անկախ պետական միութիւն»¹⁹:

Այս հայտարարությունը, որն առաջ բերեց Պողոս Նուբարի գլխավորած պատվիրակության ղեգոհությունը, ինչպես նաև ոսմկավարների և ՀԺԿ–ի, որը կառավարությունից հանեց իր նախարարներ Ս. Հարությունյանին, Ս. Էնֆիաջյանին, Գ. Մելիք–Նարազյոզյանին և Վ. Քրմոյանին՝ վերջ դնելով կռաւիցիային, քանի որ այն ժամանակի պահանջն էր, և այն կարելի է համարել միանգամայն ճիշտ: Սխալ էին նաև հնչակյանները, որոնք, դեմ գնալով միավորման ակտին, հրաժարվեցին մասնակցել 1919թ հունիսին կայացած խորհրդարանական ընտրություններին²⁰:

ՀՀ–ում գտնվող արևմտահայ քաղաքական մտքի ներկայացուցիչները, որոնք արդեն իշխանության մաս էին՝ դառնալով խորհրդարանի պատգամավորներ, իսկ մինչ այդ 12 հոգով պետք է մտնեին Խորհրդի կազմի մեջ, ավելի իրատեսական ճանապարհ էին ընտրել, քան Պողոս Նուբարը և մյուսները: Եվ այդ ճշտությունը ներկայացնենք ստորև:

Առաջին. անկախ նրանից, թե ինչպիսի տարածքներ կներառեր միացյալ Հայաստանը, դրան գնալու շուրջ արևմտահայ և արևելահայ քաղաքական ուժերի միավորումն անհրաժեշտ էր:

Երկրորդ. անկախ այդ տարածքների անորոշությունից՝ հոգեբանական անջրպետը վերացնելը կենսական նշանակություն ուներ, քանզի ներքին տարածայնություններից շահելու էր միայն թշնամին:

Երրորդ. անհրաժեշտ էր պետական դիրքորոշում ապագա Հայաստանի տարածքների նկատմամբ և միասնական գործելակերպ, ինչը հնարավոր դարձավ Միացյալ Հայաստանի ակտով:

¹⁹ Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 152, Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 262:

²⁰ Տե՛ս Սարգսյան Ս., նշվ. աշխ., էջ 164:

Սակայն, ցավով պետք է ավելացնել, որ Պողոս Նուբարի գլխավորած պատվիրակությունը մեծ տերությունների մոտ իրեն շարունակեց ներկայացնել որպես արևմտահայության միակ ներկայացուցիչ՝ նրանց ներկայացնելով անիրատեսական հողային պահանջներ, փորձեց Արևմտյան Հայաստանի խնդիրը տարանջատել ՀՀ-ից²¹, որի բացասական հետևանքները զգալի դարձան արդեն 1920 թ. երկրորդ կեսից: Ակտի ընդունումն առաջ բերեց բուռն վեճեր և սրեց միջկուսակցական պայքարը, որն առանց այդ էլ բավականին լարված էր:

Փարիզահայ շրջանակների համար ակտի ընդունումն անսպասելի էր, որն այդ հարցին անդրադարձավ դեռևս 1919 թ. մարտ-ապրիլին Փարիզի Ազգային համագումարում՝ Ա.Չոպանյանի գլխավորությամբ: Համագումարում բուռն վեճեր եղան, որոնք մեկ անգամ ևս ապացուցեցին, որ հայ քաղաքական միտքը միատարր չէ: Լ.Շանթն առաջարկում էր, որ ամենից առաջ պետք է ճանաչել ՀՀ խորհրդարանն ու կառավարությունը, ապա այն լրացնել ու ամբողջացնել արևմտահայերով, իսկ Ա.Թերզիբաշյանը գտնում էր, որ «Երևանի կառավարությանն ենթարկելով թուրքահայ դատը իրենց անեքսիա են անում մի հողամաս, որը միջազգային իրավունքով ռուսական է»²²:

Միանգամայն ճիշտ է ասված, որ. «Նուպար սկզբունքով եւ պաշտոնապէս ընդունած ըլլալով հանդերձ երկու Հայաստաններու դատերուն միացումը, վաղուց պէտք էր ազդարարած ըլլար իր կոյր եւ կամակոր հետետորդներուն, որ անոնք անմիտ պայքարներ չմղէին անդոյ հարցերու շուրջ»²³:

Սակայն, դժբախտաբար, Ավ. Ահարոնյանի գլխավորած պատվիրակությունն էր ավելի շատ գնում նրա հետևից, քան հակառակը, իսկ ՀՀ իշխանությունները տարբեր պատճառներով չէին գնում դրա լուծարմանը: Չէ՞ որ այն ստեղծվել էր կաթողիկոսի հրամանով²⁴, երբ ՀՀ-ն չկար, իսկ այժմ այդ նույն կաթողիկոսին մնում էր պետությանը թողնել քաղաքական խնդիրները, որոնց լուծման նրա ջանքերը, թելադրված ցարական իշխանությունների կողմից, ի դերն եղան, և կատարել հավատի և բարոյականության իր առաքելությունը:

²¹ Տե՛ս **Հովհաննիսյան Լ.**, Հայկական հարցը և մեծ տերությունները 1914-1917 թվականներին, Երևան, 2002, էջ 145:

²² **Հարությունյան Ա.Ա.**, նշվ. աշխ., էջ 31:

²³ «Հայրենիք», օրաթերթ, Բոստոն, 1920, ուրբաթ, Յունվար 16, թիւ 2345:

²⁴ Տե՛ս **Մուրադյան Մ.Ա.**, Հայկական հարցը և ռուսական հասարակական-քաղաքական ու պատմագիտական միտքը, Երևան, 1998, էջ 120:

Սակայն, քանի որ այս ամենը տեղի չունեցավ, Պողոս Նուբարը շարունակեց իր անիրատեսական գործունեությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Արևմտահայ քաղաքական միտքը, որի կրողները 1918 թ. հայ-թուրքական պատերազմի հետևանքով, նույն թվականի մայիս ամսից սկսած, գտնվում էին Արևելյան Հայաստանում, միանշանակ վերաբերմունք չդրսևորեցին ՀՀ գոյության նկատմամբ: Բայց նպաստեցին այդ պետության կայացմանը՝ նախապես հայացնելով այն: 1918 թ. մայիսի 28-ից խորացել էր քաղաքական անջրպետը արևելահայերի և արևմտահայերի միջև, քանի որ վերջիններս չէին ընդունում Արևելյան Հայաստանում առաջացած պետությունը՝ այն համարելով Արարատյան Հայաստան: Ուստի 1919թ. մայիսի 28-ին ՀՀ կառավարությունը հայտարարեց Հայաստանի երկու հատվածների միավորման մասին ակտը, որն առաջ բերեց Պողոս Նուբարի գլխավորած պատվիրակության դժգոհությունը, որի բացասական հետևանքները զգալի դարձան արդեն 1920 թ. երկրորդ կեսից:

Բանալի բաներ - Արարատյան Հայաստան, ակտ, քաղաքական, արևմտահայ, միտք, Պողոս Նուբար, հանրապետություն, անկախ, համաժողովար:

ПОЗИЦИЯ ЗАПАДНОАРМЯНСКОЙ ПОЛИТИЧЕСКОЙ МЫСЛИ ПО ОТНОШЕНИЮ К СУЩЕСТВОВАНИЮ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АСМИК СИМОНЯН

Носители западноармянской политической мысль, находившиеся в Восточной Армении с мая 1918 года в результате армяно-турецкой войны, не проявили однозначного отношения к существованию Республики Армения, однако способствовали формированию этого государства, предварительно арменизовав его. С 28 мая 1918 года политическая пропасть между восточными и западными армянами становилась глубже, так как последние не принимали возникшего в Восточной Армении государства, считали его Араратской Арменией. 28 мая 1919 года Правительство Республики Армения приняло акт об объединении двух частей Армении, вызвав недовольство возглавляемой Погосом Нубаром делегации, негативные последствия чего стали ощутимы уже во второй половине 1920 года.

Ключевые слова - Араратская Армения, акт, политический, западный армянин, мысль, Погос Нубар, республика, независимый, конгресс.

THE STANCE OF THE WEST-ARMENIAN POLITICAL THINKERS ON THE FIRST REPUBLIC OF ARMENIA

HASMIK SIMONYAN

West-armenian important political thinkers were in Eastern Armenia since May 1918 as a result of the Armenian-Turkish War. Their reaction to the existence of the Republic of Armenia was not definite in spite of the fact that they had contributed to its creation and armenized it beforehand. However, as the western Armenians could not accept the formation of the Republic of Armenia considering it as Araradian Armenia, the political tension between the eastern and western Armenians since that time deepened. As a consequence, the Government of the Republic of Armenia in May 28, 1919 passed an act regarding the unification of the two parts of Armenia, which brought forth the discontent of the delegation headed by Poghos Nubar. The negative consequences of the act became tangible already starting from the second half of the 1920s.

The key words - Araratian Armenia, an act, political, Western Armenian, mind, Poghos Nubar, republic, independent, congress.

**ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ՝ 1988Թ.
ՀՈՒԼԻՍԻ 18-Ի ՆԻՍՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

ՍՈՒՐԵՆ ՎԱՍԻԼՅԱՆ

Հուլիսի 18-ին Կրեմլում տեղի ունեցավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստը: Նախագահությունը քննարկեց Լեոնային Ղարաբաղի մասին Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդների որոշումների հարցը: Նիստը բացեց ԽՄԿԿ Կենտկոմի քաղաքաբարձի անդամ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ա.Ա.Գրոմիկոն:

Երկրի օրենսդիր մարմնի ղեկավարն իր ելույթում պահանջում էր իրադրության ամբողջ բարդության խոր ըմբռնում, հույզերից, տարբեր կարգի վիրավորանքներից վեր կանգնելու կարողություն՝ հանուն խորհրդային ժողովրդի բարձրագույն շահերի: Ի վերջո, նա իր ելույթը եզրափակեց հետևյալ կերպ, որ ճիշտ որոշման որոնումը պետք է կատարվի ԽՍՀՄ Սահմանադրության, սոցիալիստական արժեքների, ժողովուրդներից յուրաքանչյուրի կարծիքի, ավանդույթների, ազգային արժանապատվության փոխադարձ հարգանքի շրջանակներում: Սա աքսիոմա է¹:

Փաստորեն, Գրոմիկոն՝ որպես խորհրդային երկրի օրենսդիր մարմնի ղեկավար, մատնանշում է, որ հարցը պետք է լուծել ԽՍՀՄ Սահմանադրության շրջանակներում, սակայն չի մատնանշում հարցի լուծման կոնկրետ ուղին: Ելույթն իր հիմքում հնարավորություն չի ընձեռում ներկա գտնվողներին գտնելու հարցի լուծման հատուկ քաղաքական եղանակը: Չէ՞ որ ԽՍՀՄ Սահմանադրության մեջ ամրագրված էին ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը և հանրապետությունների տարածքային ամբողջականության անքակտելիության սկզբունքները:

Ա.Ա.Գրոմիկոյից հետո նիստում հանդես եկավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հ.Մ.Ոսկանյանը: Նրա ելույթում հանգամանալից ներկայացվում էր, թե ինչպես Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման հաջորդ օրը Ադրբեջանի հեղկոմը 1920թ. դեկտեմբերի 1-ի իր դեկրետով Լեոնային Ղարաբաղը, Նախիջևանն ու Զան-

¹ «Правда», 20.07.1988.

գեզուրը ճանաչեց որպես Խորհրդային Հայաստանի անբաժանելի մաս: Որոշ ժամանակ անց այդ նույն ղեկավարությունը ՈԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի առջև հարց հարուցեց Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի անբաժանելի մաս ճանաչելու իր որոշման վերանայման մասին՝ դա պատճառաբանելով Ադրբեջանում հակախորհրդային ուժերի անխուսափելի ակտիվացման սպառնալիքով: Զեկուցողը շարունակեց և նշեց, այն փաստը, որ ՈԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի՝ 1921թ. հուլիսի 4-ի նիստը որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղը թողնել Հայկական ԽՍՀ-ի կազմի մեջ, վկայում է Ադրբեջանի ներկայիս ղեկավարության փաստարկների սնանկությունը: Սակայն հաջորդ օրը Ստալինի ճնշման ներքո Կովկասյան բյուրոն վերանայեց իր որոշումը, ինչի հետևանքով Լեռնային Ղարաբաղը, որի բնակչության 95%-ը հայեր էին, մեխանիկորեն անջատվեց Հայաստանից և մտցվեց Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմի մեջ:

Ելույթի ավարտից հետո ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ.Ս. Գորբաչովը, դիմելով Ոսկանյանին, հարցնում է. «Միութենական հանրապետությունում բարձրագույն իշխանության ներկայացուցիչը դուք եք: Ո՞րն է ձեր դերը: Դուք պետք է մի քանի անգամ հավաքվեիք և Ադրբեջանի ղեկավարության հետ մեկտեղ մշակեիք մի որոշում, որը և մենք կընդունեինք: Բայց դուք յուրաքանչյուրդ անում եք առանձին առաջարկություն և մեզ ստիպում որոշում ընդունել: Հարցը դրված է այսպես՝ իբր մեղավոր են Մոսկվան, Կրեմլը»²:

Փաստորեն, ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Գորբաչովն ի սկզբանե ցույց է տալիս իր դժգոհությունը, քանի որ հարցը բարձրացվել է միութենական բարձրագույն մարմին: Ակնհայտ է դառնում կենտրոնի կողմից խուսանավելու տրամադրվածությունը: Նա «չի կարող» պատասխանել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հ.Ոսկանյանի բարձրացրած հարցերին: Կենտրոնը խուսափում էր վճռական քայլեր իրագործելուց: Ավելին, շրջանցելով իր իսկ հռչակած ժողովրդավարական տարրական նորմերը՝ Մ.Գորբաչովը փաստորեն թույլ չտվեց, որ նիստը ղեկավարի նախագահության նախագահ Ա.Ա. Գրոմիկոն, թեև ձևականորեն նիստը նա էր վարում³: Պարզ է դառնում, որ նախօրոք արդեն Գորբաչովը մշակել էր նիստի անցկացման սցենարը: Այս տխուր իրողությունն ի հայտ եկավ տխրահռչակ նիստից հետո:

² Նույն տեղում:

³ **Խոչաբեկյան Վ.Ե.**, Արցախը փորձության ժամին, Երևան, 1991, էջ 33:

Այնուհետև հաղորդումով հանդես եկավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ, Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ս.Բ.Թաթլիևը: Նա իր ելույթում նշեց, որ Ադրբեջանական ԽՍՀ-ի կողմից Լեռնային Ղարաբաղի մարզը մասնատելու գաղափարն արդարացված չէ ո՛չ քաղաքականապես, ո՛չ տնտեսապես, ո՛չ իրավաբանորեն: Իր ելույթի վերջում Թաթլիևը ԽՍՀՄ Գերագույն խորհրդից, նախագահությունից խնդրում էր լիովին ապահովել Ադրբեջանական ԽՍՀ-ի սովետներն իրավունքների պաշտպանությունը՝ համաձայն ԽՍՀՄ Սահմանադրության 81-րդ հոդվածի, և մերժել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի հունիսի 15-ի խնդրանքը⁴:

Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահության նախագահի ելույթը հիմնված էր ԽՍՀՄ սահմանների անխախտելիության սկզբունքի պաշտպանության վրա, և կտրականապես մերժվում էր ազգերի ինքնորոշման հանրահայտ սկզբունքը: Բնական է, որ խորհրդային ղեկավարությունը պետք է պաշտպաներ ադրբեջանական կողմին, քանի որ Կենտրոնական կոմիտեի Գլխավոր քարտուղար Մ.Ս.Գորբաչովը պատրաստ չէր արդարացի լուծում տալու այս բարդ հարցին, չէ՞ որ հարկավոր էր պահպանել երկրի արդեն գոյություն ունեցող «ստատուս քվոն»:

Նիստում հաղորդումով հանդես եկավ Ադրբեջանի կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Հ.Ա.Պողոսյանը: Նա իր ելույթում նկարագրեց, թե «ինքնավարության» իրականացման 65 տարիների ընթացքում ինչպիսի հալածանքներ է կրել տեղի հայ ժողովուրդը: Հռետորն իր ելույթում ներկայացրեց, թե ինչպիսի անթույլատրելի տնտեսական քաղաքականություն են վարել Ինքնավար Մարզում Բաքվի իշխանավորները, ավելին՝ փաստերով մերկացվեց ադրբեջանական ղեկավարությունը: Մասնավորապես ամբողջ հանրապետության մասհանումների 46%-ը, որը տարեկան կազմում էր 91 մլն ռուբլի, ընկած էր ԼՂԻՄ-ի ուտերին, իսկ մարզի բուն բյուջեն կազմում էր ընդամենը 42 մլն ռուբլի⁵: Այս համոզիչ վերլուծությունից հետո դահիլճում տիրում է լուրջություն, քանի որ Ադրբեջանական կողմը ոչ մի փաստարկ չուներ, որպեսզի հերքեր Պողոսյանի բերած փաստերը:

Նիստում ելույթ ունեցան 29 հոգի, այդ թվում՝ Հայաստանից ակադեմիկոսներ Վիկտոր Համբարձումյանն ու Սերգեյ Համբարձումյանը, Կենտկոմի

⁴ «Правда», 20.07.1988.

⁵ Նույն տեղում:

առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը և գրող Վարդգես Պետրոսյանը: Նիստի ժամանակ Մ.Ս.Գորբաչովը տեղի-անտեղի ընդհատում էր ելույթները, հաճախ էլ փորձում դրանց տալ իրեն ցանկալի ուղղություն: Անդրեյ Սախարովը գրում է այդ կապակցությամբ, որ Միխայիլ Գորբաչովի դիրքորոշումը բացահայտ կողմնակալ էր, պարզ երևում էր, որ նրա որոշումն արդեն կանխավ ընդունված էր և բացահայտ ադրբեջանամետ: Նա նիստը վարում էր բռնի և հակաժողովրդավարական⁶:

Մ.Գորբաչովն իր ելույթի սկզբում, ընդգծելով քննարկվող հարցի քաղաքական նշանակությունը, նշեց, որ այն համամիութենական մասշտաբի է, և բոլորը կենսականորեն շահագրգռված են, որ ամենամեծ և բարդ հարցերը լուծվեն հանգիստ, հիմնավորապես և ընդհանուր շահերին համապատասխան: Քննարկվող հարցը բնորոշելով գերկարևոր... և գերբարդ՝ նա գտնում էր, որ դրանք լուծելու համար պետք է հաստատական և խիզախ քայլ կատարել, և որ գլխավորն է, հարկավոր են հանդիպական քայլեր: Այնուհետև Մ.Ս.Գորբաչովն Ադրբեջանի և Հայաստանի բոլոր քաղաքացիներին կոչ արեց դրսևորել հասունություն, իսկական հայրենասիրություն, առավելագույն ջանքեր գործադրել՝ նորմալացնելու իրադրությունը, կարգավորելու մարդկանց լավ հարաբերությունները⁷:

Մ.Գորբաչովի՝ որպես ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղարի այս ելույթը պետք է լուծում տար կամ էլ ցույց տար Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ հակամարտությունը վերացնելու կամ էլ սառեցնելու ճանապարհները: Սակայն սպասվածին հակառակ՝ ներկա գտնվողները լսեցին ելույթ, որը չէր կարող բավարարել հայկական կողմին, քանի որ հարցը չէր լուծվում: Բոլորը հրաշալի հասկանում էին, որ ոչ թե Գերագույն խորհրդի նախագահության նիստի որոշմանը պետք է սպասեին, այլ Գորբաչովի ելույթին, քանի որ նրա ելույթից էր կախված ԼՂԻՄ-ի ճակատագիրը, իսկ Մ.Գորբաչովն իր ելույթում ԼՂԻՄ-ի խնդրի շուրջ արմատական որոշման նախագիծ չստեղծեց:

Ի վերջո, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունեց որոշում՝ «Լեռնային Ղարաբաղի հարցի առթիվ Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդների որոշումների մասին»:

Ուսումնասիրելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության որոշումը Լեռնային Ղարաբաղի հարցի առթիվ՝ նկատում ենք, որ հենց որոշման

⁶ Сахаров А.Д. Горький, Москва далее везде, Нью-Йорк, 1990, с. 98.

⁷ «Սովետական Հայաստան», 20.07.1988:

առաջին կետում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը հիմք է ընդունել ԽՍՀՄ Սահմանադրության 78-րդ հոդվածը, որի համաձայն՝ միութենական հանրապետության տարածքը չի կարող փոփոխվել առանց նրա համաձայնության (նկատի ունեն Ադրբեջանի համաձայնությունը): Ավելին, նշվում է, որ այլ որոշումը կհակասեր երկու հանրապետությունների ժողովուրդների շահերին և լուրջ վնաս կհասցներ տարածաշրջանի ազգամիջյան հարաբերություններին: Իսկ մի՞թե արդեն սումգայիթյան ոճրագործությունից հետո տարածաշրջանում չէին սրվել, խիստ վատացել ազգամիջյան հարաբերությունները: Փաստորեն խորհրդային իշխանության տարիներին «լենինյան ազգային քաղաքականությունը» չէր կարողացել կանխել սումգայիթյան ոճրագործությունը՝ ուղղված անպաշտպան հայության դեմ: Ավելին, դա տեղի ունեցավ «կենտրոնի» աչքերի առաջ: Խորհրդային ղեկավարությունը ԼՂԻՄ-ի ազգային-քաղաքական հիմնախնդիրը փորձում է նենգափոխել և տեղափոխել տնտեսական բնագավառ: Իսկ մի՞թե ազգային նուրբ հիմնախնդիրները կարելի է շրջանցել կամ նենգափոխել: Այդ դեպքում ոչ միայն վտանգվում էին հայ և ադրբեջանցի ժողովուրդների հարաբերությունները, այլև խորհրդային երկրի հետագա ճակատագիրը, քանի որ «հրապարակայնության», «վերակառուցման» քաղաքական կարգախոսները դառնում էին արժեզրկված, սնանկ:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ընդունած որոշման երկրորդ կետով փորձ էր արվելու վերականգնելու ադրբեջանական և հայ բնակչության «բարի» եղբայրական հարաբերությունները: Հանձնարարվում էր Ազգությունների խորհրդում ստեղծել հատուկ հանձնաժողով, որն այդ ուղղությամբ պետք է ներկայացներ իր առաջարկությունները ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության քննարկմանը: Հարց է ծագում՝ մի՞թե ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում չքննարկվեց ինչպես հարկն է անլուծելի Արցախյան հիմնախնդիրը, որ այժմ նոր պետք է հանձնաժողով ստեղծվեր՝ իր առաջարկները ներկայացնելու համար, մի՞թե հայ պատմիրականությունը չէր շեփորահարում ԽՍՀՄ բարձրագույն օրենսդիր մարմնի ամբիոնից: Չէ՞ որ հարցի լուծման ձգձգումն էլ ավելի էր մեծացնում երկու ժողովուրդների թշնամությունը, էլ ավելի էր մեծանում տարածաշրջանում իրավիճակի անվերահսկելիությունը: Այսպիսով, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության այս օրապակաս որոշումը, որն ընդունվեց միաձայն, ոչինչ չստեղծեց հայ ժողովրդին և, ընդհակառակը, ավելի սրեց Ղարաբաղյան հիմնախնդիրը: Արդյունքում հայ-ադրբեջանական հարաբերություններն էլ ավելի լարվեցին: Բարվի «Бакинский рабочий» թերթը գրում էր, որ 1988 թ. հուլիսի 18-ին կա-

յացած ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նիստում մեր հանրապետության տարածքային-պետական կառուցվածքի հետ կապված բոլոր հարցերը վերջնականապես լուծված են⁸: Հարկ է նշել, որ այդ թերթը Ադրբեջանում հիմնել էր Ստեփան Շահումյանը⁹:

Նախագահության նիստի ընդհանուր տպավորությունը շատ ճնշող էր հայկական կողմի, առհասարակ ամեն մի հայի համար՝ չնայած բարոյական այն հաղթանակին, որին ամբիոնից հասան հայ պատգամավորները, և դա խոստովանեցին, հաստատեցին, բարձր գնահատեցին ռուս մշակույթի անվանի մի շարք ներկայացուցիչներ՝ հարցին վերաբերող իրենց հրապարակային ելույթներում ու գրություններում¹⁰: Ս.Համբարձումյանն իր հուշերում նշում էր, որ այդ օրը կմտնի պատմության էջերը՝ որպես քաղաքակիրթ փոքրամասնության հաղթանակի առաջին օր կազմակերպված մեծամասնության նկատմամբ¹¹:

Երկրի «перестройка не перекройка» («վերակառուցումը վերածնում չէ») սնանկ կարգախոսին գերի ղեկավարությունը խիզախություն կամ ցանկություն չունեցավ օգտագործելու այդ պատեհ պահը, որով կկանխվեին հետագա զինված բախումներն ու արյունահեղությունները: Հետագայում Բորիս Ելցինը իր հուշերում գրում էր, որ Գորբաչովի գլխավոր թերությունն այն էր, որ նա զուրկ էր և զրկված վերակառուցման քաղաքականության հետ կապված խորը տեսական և մտածված ռազմավարական քայլերից: Գոյություն ունեին միայն կարգախոսներ¹²:

1996թ. փետրվարին «Ամերիկայի ձայն» հայկական ծրագրին տված իր հարցազրույցում Անատոլի Լուկյանովը խոստովանեց, որ Լեոնային Ղարաբաղը միութենական իշխանությունների ենթակայության տակ դնելու առաջարկությունը հավանություն էր գտել Կրեմլի որոշ գործիչների կողմից, սակայն նրանց հորդորները չազդեցին Մ.Գորբաչովի վրա՝ դրանով իսկ, նույն հաղորդման մի այլ մասնակցի՝ Ռուսաստանի պետդոմայի անդամ Գալինա Ստարավոյտովայի բառերով ասած՝ «երևան հանելով նրա քաղաքական

⁸ «Бакинский рабочий», 2.09.1988.

⁹ **Барсегян Хикар**, Истина дороже... К проблеме Нагорного Карабаха, Ереван, 1990, с. 36.

¹⁰ **Դանիելյան Կ.**, Արցախը չսանձած նժույգ, Երևան, 2001, էջ 81:

¹¹ **Амбарцумян С.А.** Три года на пределе любви и смерти. Ереван, 2005, с. 71.

¹² **Ельцин Б.Н.** Исповедь на заданную тему, Москва, 1990, с. 104.

ապաշնորհությունը»¹³: Փաստորեն ԽՍՀՄ-ի ներսահմանային անխախտելիության ձգտող մոսկովյան իշխանության համար սկզբունքորեն միանգամայն մերժելի էր նման հարցերի դրական լուծումը, և պատահական չէին Մ.Ս.Գորբաչովի բացահայտ հակահայկական դիրքորոշումն ու ելույթն այդ նիստում: Հարցն այն չէր, թե ում է պաշտպանում Մ.Գորբաչովը, հայերի՞ն, թե՞ ադրբեջանցիներին, այլ այն, որ նա և ԽՍՀՄ կուսակցական-պետական մյուս բարձրագույն այրերը չէին ցանկանում, որ «վերակառուցումը» ստանա ԽՍՀՄ ազգային-վարչաքաղաքական գծված քարտեզը վերանայելու հնարավորություն: Պատմության սպիտակ էջերի վերանայումը չէր տարածվում ազգային տարածքային սահմանների փոփոխման վրա: Միաժամանակ Մ. Գորբաչովին չէր կարող չանհանգստացնել արցախյան ժողովրդի արդարացի պահանջը, և նա ստիպված էր վարել «լարախաղացման» քաղաքականություն՝ հաշվի չառնելով, որ կարող է սայթաքել: Ռուս մտավորական Ալեքսանդր Պրոխանովը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստի ընդունած որոշումը գնահատել էր որպես տարածաշրջանում դրված վտանգավոր ական, որը ամեն պահ կարող էր պայթել¹⁴:

1988թ. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ հուլիսի 18-ի նիստի նյութերը մամուլում տպագրվելուց և ընթացքը կենտրոնական հեռուստատեսությամբ ցուցադրվելուց հետո ամբողջ Ադրբեջանը տոնախմբության մեջ էր: Նիստի հաջորդ օրը լրագրողների հետ հանդիպմանը մասնակցեցին ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամության թեկնածուներ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալներ Պ. Դեմիչևը և Ա. Սուխարովը ու ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ա. Վլասովը: Նրանք փորձում էին արդարացնել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ընդունած որոշումը՝ կեղծելով, թե իբր ԼՂԻՄ տնտեսությունը 1965-1987 թթ. աճել է վեց անգամ, և ապօրինի գնահատեցին հայերի պահանջը Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմից դուրս բերելու վերաբերյալ:

1988թ. հուլիսի 18-ից Հայաստանում, իսկ հուլիսի 24-ից Լեռնային Ղարաբաղում գործադուլները դադարեցվեցին: Աշխատավորները կորցրածը վերականգնելու համար հաճախ աշխատում էին նաև շաբաթ և կիրակի օրերին:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1988թ. հուլիսի 18-ի որոշումից հետո Մոսկվայի հրահանգով ուժեղացվում է ճնշումը Շարժման ղեկա-

¹³ Դանիելյան Կ., նշվ. աշխ., էջ 22:

¹⁴ «Литературная газета», 10.08.1988:

վարության նկատմամբ: Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում 1988թ. օգոստոսի 5-ին կազմված և երկրի տարբեր հասցեներով ուղարկված մի նամակում ասված է, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ հուլիսի 18-ի անարդարացի որոշումից հետո «զանգվածային տեղեկատվության միջոցների կողմից հետապնդման, հերյուրանքի և բացահայտ լուտանքների լայն կամպանիա» է սկսվել «Կռունկ» ու «Ղարաբաղ» կոմիտեների անդամների դեմ, այսինքն՝ ընդդեմ «ժողովրդի կողմից բազմահազարանոց միտինգներում ընտրված հայ ժողովրդի լավագույն ներկայացուցիչների, որոնց գործունեությունը երբեք չի անցել խորհրդային սահմանադրության սահմանները: Հայ հասարակությունն այդ կամպանիան ընկալում է որպես ողջ հայ ժողովրդի դեմ ուղղված հարձակումներ և հետապնդումներ»¹⁵:

1988թ. հուլիսի 18-ի որոշումը դատապարտվեց ոչ միայն հայ ժողովրդի, այլև երկրի առաջադեմ մտավորականության և մի շարք ականավոր գիտնականների կողմից: Նիստից անմիջապես հետո Անդրեյ Սախարովը նոր նամակ հղեց Մ.Գորբաչովին, որը հրապարակվեց բավականին ուշ «Նեգավիսիմայա գազետա»-ի՝ 1992թ. հոկտեմբերի 27-ի համարում: Այդ նամակում Ա.Սախարովը Ղարաբաղյան հիմնախնդրի հետ կապում է ոչ այնքան բարեփոխումների ճակատագիրը, որքան մարդու իրավունքները և ապրելու իրավունքը: Նա գտնում էր, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը դարձել է վերակառուցման քաղաքականության փորձաքարը, և շեշտում, որ որոշումը հիպոթափեցրել է հայ ժողովրդին, իսկ Լեռնային Ղարաբաղում՝ պարզապես հուսահատեցրել¹⁶: Հակադրվելով Մ.Գորբաչովին՝ Ա.Սախարովը գտնում էր, որ Սումգայիթում կատարվածն առանձին խուլիգանների ձեռքի գործ չէ և ոչ էլ բանակի՝ երեք ժամ ուշանալու հետևանք: Նա վճռականորեն նշում էր, որ Սումգայիթի դեպքից հետո Ադրբեջանից Լեռնային Ղարաբաղի անջատումը և Հայաստանի հետ միացումը դարձել են անհետաձգելի խնդիր: Այդ հիմնախնդրի լուծման փոխզիջումային տարբերակը, եզրակացնում է Ա.Սախարովը, ամբոխավարություն է, որից պետք է հրաժարվել¹⁷: Մեծ գիտնականը փաստորեն երկրի ղեկավարին օգնում է հասկանալու, որ հարցի օրինական լուծումը բխում է վերակառուցման քաղաքականության շահերից: «XX դար և աշխարհը» ամսագրում տպագրված «Ղարաբաղյան ճգնաժամի դասերը»

¹⁵ Արշակյան Ա., Արցախյան գոյապայքարը, Երևան, 2004, էջ 55:

¹⁶ Андрей Сахаров о Нагорном Карабахе, Ереван, 1996, с. 63.

¹⁷ Նույն տեղում, էջ 14-15:

հողվածում Վ.Շեյնիսը նշում էր, որ միայն ժամանակը ցույց կտա՝ արդյոք ճիշտ էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ հուլիսի 18-ի ընդունած որոշումը¹⁸: Ժամանակը ցույց տվեց, որ ազգային ինքնագիտակցության քաղաքական պոտենցիալը հզոր ուժ է, և Մ.Գորբաչովը պետք է հաշվի առներ այդ իրողությունը:

1988թ. հուլիսի 26-ին մամուլում հրապարակվեց ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ընդունած «Լեոնային Ղարաբաղի վերաբերյալ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ընդունած որոշումը գործնականում իրագործելու միջոցառումների մասին» որոշումը, որի համաձայն՝ «Լեոնային Ղարաբաղի հարցի առթիվ Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդների որոշումների մասին» ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1988 թվականի հուլիսի 18-ի որոշման համապատասխան, որպես ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ներկայացուցչի Ադրբեջանական ԽՍՀ Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ ուղարկել ԽՄԿԿ կենտկոմի անդամ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ ընկ. Ա. Ի. Վոլսկուն՝ Լեոնային Ղարաբաղի վերաբերյալ ԽՄԿԿ Կենտկոմի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումների կատարման ուղղությամբ, Ադրբեջանի, Հայաստանի ու ԼՂԻՄ-ի կուսակցական, խորհրդային ու տնտեսական մարմինների աշխատանքը կազմակերպելու և կոորդինացնելու համար՝ նրան օժտելով համապատասխան լիազորություններով:

Ադրբեջանի և Հայաստանի կոմկուսների Կենտկոմներին, Ադրբեջանական ԽՍՀ-ի և Հայկական ԽՍՀ-ի Գերագույն խորհուրդների նախագահություններին և Մինիստրների խորհուրդներին, ինչպես նաև համապատասխան միութենական մինիստրություններին ու գերատեսչություններին ցուցում էր տրված ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ներկայացուցչին համակողմանի օգնություն և աջակցություն ցույց տալ ընդունված կուսակցական և պետական որոշումներն անպայման կատարելու խնդիրների իրականացման գործում: Այդ նպատակով նրան իրավունք է տրված ծագած հարցերի լուծման համար անհրաժեշտության դեպքում ներգրավել ԽՄԿԿ Կենտկոմի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության,

¹⁸ «Век XX и Мир», N 10, 1988.

մինիստրությունների ու գերատեսչությունների, մյուս կենտրոնական մարմինների պատասխանատու աշխատողների:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդի, պատգամավորներից, ինչպես նախատեսված է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1988թ. հուլիսի 18-ի որոշմամբ, կազմված է հատուկ հանձնաժողով¹⁹:

Որոշման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԼՂԻՄ էր ուղարկվելու ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ներկայացուցիչ Ա.Վոլսկին, որի հիմնական խնդիրը պետք է լիներ կազմակերպել և համակարգել Ադրբեջանի, Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի կուսակցական մարմինների գործունեությունը և իրագործել Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ընդունված որոշումները, և դրան զուգահեռ կազմակերպվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդի պատգամավորներից կազմված «հատուկ հանձնաժողով»: Մ.Գորբաչովը հրաշալի հասկանում էր, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ հուլիսի 18-ի որոշումը չէր կարող լուծել ԼՂԻՄ-ի բարձրացրած հիմնախնդիրը, որ թե՛ արտասահմանում և թե՛ խորհրդրդային երկրի ներսում մարդիկ ուշիուշով հետևում էին խորհրդային երկրի դեկավարի վարած քաղաքականությանը: Այս հանգամանքը ստիպում էր Գորբաչովին հարցին մոտենալ ավելի լրջմիտ: Բացի այդ թե՛ Ստեփանակերտում, թե՛ Երևանում ժողովուրդը չէր հանգստացել: Չէր բացառվում, որ դեռ այն ժամանակ Գորբաչովը Վոլսկու հետ կապված հեռու գնացող այլ նպատակներ ուներ: Դա արդեն ցույց կտար պատմության հետագա ընթացքը, որովհետև Կենտրոնի կողմից արված այս քայլերը չէին կարող բավարարել, կայունացնել իրավիճակը թե՛ Հայաստանում և թե՛ Արցախում: Այս կապակցությամբ Բ.Ելցինը գրում էր, որ գոնե մեկ ճգնաժամային իրավիճակ հնարավոր լիներ լուծել միանգամից ճիշտ և արդար: Լեռնային Ղարաբաղում, Մերձբայթիկայում ամեն մի սուր իրադրություն ի սկզբանե մտցվում էր փակուղի, իսկ հետո կարծես կայացվում էր սխալ որոշում այդ հարցի շուրջ, և միայն մի քանի ամիս հետո ահռելի կորուստների միջոցով փորձում էին ուղղել սխալը²⁰:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է 1988 թվականի հուլիսի 18-ին կայացած ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստին, որտեղ քննարկվում էր

¹⁹ «Սովետական Հայաստան», 27. 07. 1988:

²⁰ **Ельцин Б.Н.** Исповедь на заданную тему, Москва, 1996, с. 104.

ԼՂԻՄ-ի՝ Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտնելու հարցը: Քննարկվող փաստերի ուսումնասիրությունը լույս է սփռում արցախյան հանգույցը խորապես ընկալելու համար: Հատուկ ուշադրություն է դարձվում վերակառուցման հոր՝ ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովի մարտավարությանը արցախյան հիմնահարցի կարգավորման նկատմամբ:

Բանալի բաներ – ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ, Գորբաչով, Լեոնային Ղարաբաղ, վերակառուցում, ԽՍՀՄ:

**РЕШЕНИЕ ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА СССР,
ПРИНЯТОЕ 18 ИЮЛЯ 1988 ГОДА**

СУРЕН ВАСИЛЯН

Статья посвящена состоявшемуся 18 июля 1988 года заседанию Президиума Верховного Совета СССР, на котором обсуждался вопрос о вхождении НКАО в состав Армянской ССР. Изучение имеющихся фактов проливает свет на сложившуюся вокруг Арцаха ситуацию. В статье в основном рассматривается подход к арцахской проблеме “отца перестройки”, Генерального секретаря ЦК КПСС М.С. Горбачева.

Ключевые слова – Верховный Совет СССР, Горбачев, Нагорный Карабах, перестройка, СССР.

**THE DECISION MADE BY THE PRESIDUM OF THE SUPREME COUNCIL OF
USSR AT THE JULY 18, 1988 SESSION**

SUREN VASILYAN

Vasilyan devotes this article to the July 18, 1988 session of the Presidium of the Supreme Council of USSR. On that day, the question concerning the inclusion of the Autonomous Region of Nagorno Karabakh into the Armenian Soviet Socialist Republic was considered. The investigation of the existing facts sheds light upon the Artsakh issue. In the article special attention is paid to the tactics of the leader of perestroika, the General Secretary of the Communist Party of the Soviet Union, M. Gorbachev concerning the Artsakh issue regulation.

Key words – Supreme Council of the USSR, Gorbachev, Nagorno Karabakh, perestroika, USSR.

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԷԹՆԻԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ (ՄՈՍԿՎԱՅԱՐԵՆԱԿ ՀԱՅ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

ՄԱՐԻԱՆՆԱ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

Այսօր գործարար աշխարհում էթնիկ խմբավորումները, որոշակի տեղ զբաղեցնելով գլոբալ տնտեսության մեջ, գրանցում են լուրջ հաջողություններ: Ինչպես Ձ. Սիկկիչն է նշում, էթնիկությունը յուրահատուկ կայուն և երբեմն ինտենսիվ խմբային ինքնության և համերաշխության ապրում է, որն ի սկզբանե ձևավորվում է էթնոսոցիալական տարածությունում կենսաձագումնաբանական միասնականության հիման վրա՝ ձևավորելով «մենք» և «ոչ մենք» միջխմբային փոխազդեցությունը¹: էթնիկ ցանցերը հիմք են նոր սոցիալական ցանցերի ձևավորման և հետագայում սեփական բիզնեսի ստեղծման համար:

Ռուսաստանի պետական վիճակագրական դաշնային ծառայության կողմից իրականացված մարդահամարի տվյալների համաձայն՝ Ռուսաստանում, հատկապես Մոսկվա քաղաքում, գրանցվել է հայերի թվաքանակի աճ: Ավելին, ըստ հանրահայտ Forbes ամսագրի, Ռուսաստանի Դաշնության ամենահարուստ գործարարների ցանկում առաջատար հորիզոնականներ են զբաղեցնում հայկական ծագումով մոսկվայաբնակ գործարարները՝ Դանիլ Խաչատուրով, Սարկիսով եղբայրներ, Սամվել Կարապետյան և ուրիշներ² :

Հիմնվելով Մոսկվայում իրականացված սոցիոլոգիական հետազոտության տվյալների վրա՝ այս հոդվածում դիտարկվում է էթնիկ ցանցերի դերը մոսկվայաբնակ հայ գործարարների սոցիալական կապիտալի ձևավորման գործում: Հետազոտության մեջ ընդգրկվել են մոսկվայաբնակ երեսուն հայ գործարարներ, ովքեր տնտեսական գործունեություն են ծավալում տարբեր ոլորտներում՝ գիտություն, առևտուր, շինարարություն, անշարժ գույք, բանկային գործ, առողջապահություն, սպորտ և այլն: Սոցիոլոգիական հետազոտու-

¹ Мицкевич З. В. Социология и Психология национальных отношений, СПб., М., 1999, с. 14-15.

² "Мировой рейтинг миллиардеров"— 2013, <http://www.forbes.ru /rating/milliardery-package/234692-mirovoi-reiting-milliardero-2013>.

թյան նպատակն էր բացահայտել մոսկվայաբնակ հայ գործարարների սոցիալական կապիտալի առանձնահատկությունները: Առանձնացվել են հետևյալ խնդիրները.

- ինչպիսի՞ դեր ունի էթնիկ խումբը սոցիալական կապիտալի ձևավորման գործում,

- ինչպիսի՞ դեր ունի էթնիկ խումբը հայ գործարարների սոցիալական ցանցերի ձևավորման գործում,

- ինչպիսի՞ն է հայ էթնիկ խմբի աջակցության բնույթը:

Մ. Գրանովեթերը «Թույլ կապերի ուժը» աշխատության մեջ պնդում է, որ շատ հաճախ մեզ անհրաժեշտ տեղեկատվությունը և հնարավորությունները տալիս են «թույլ կապերի ուժերը»³: «Ուժեղ կապերը» մարդու ընտանիքն է, հարազատները, նրա ընտանիքի անդամները: Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ առաջնային կապիտալն ուժեղ կապերի հիման վրա ձևավորված սոցիալական կապիտալն է: Իսկ «թույլ կապերը» ապահովում են ընթացիկ կապիտալի ձևավորումը:

Հիմնվելով իրականացված հետազոտության արդյունքների վրա՝ կարելի է ի հայտ բերել մոսկվայաբնակ հայ գործարարների առաջնային և ընթացիկ սոցիալական կապիտալի որոշ բնութագրիչներ: Ըստ գործարարների՝ հաճախ անհրաժեշտ լծակների կամ տեղեկատվության տիրապետում են նրանք, ովքեր գործարարի հետ չունեն ընդհանուր ծանոթներ, կապեր: «Թույլ կապեր» են համարվում այն ծանոթները, ովքեր այդպես էլ չեն դարձել ընկերներ, սակայն ունեն տնտեսական գործունեության պրակտիկ փորձ կամ միջոցներ, որոնք անհրաժեշտ են գործարարին այս կամ այն խնդիրը կարգավորելու համար: Հարցվողների մեծամասնությունը թույլ կապերի առավելությունները կարևորում է հատկապես ռեսուրսների հասանելիության տեսանկյունից: Հաճախ, մասնավորապես տեղեկատվության տեսանկյունից, թույլ կապերն ավելի օգտակար են լինում, քան ուժեղ կապերը:

Կարելի է առանձնացնել թույլ կապերի վրա հիմնված ընթացիկ սոցիալական կապիտալի հետևյալ գործառույթները.

- տնտեսական գործունեության ընթացքում առաջացող խոչընդոտների կարգավորման, վերացման, հիմնախնդիրների լուծման մեխանիզմների, միջոցների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,

³ Granovetter Mark S. The Strength of Weak Ties// American Journal of Sociology/ University of Chicago Press, 2001, pp. 1360-1380.

• նոր տնտեսական գործունեություն ծավալելու հնարավորության երաշխավորում,

• նոր «թույլ կապերի» ձևավորում /տարբեր ոլորտների, միավորումների, ընկերությունների հետ կապերի հաստատում/:

Հարցվողներից մի հայ կին /սպորտի դպրոցի սեփականատեր, օլիմպիական եռակի չեմպիոն/հիշում էր.

«Օլիմպիական խաղերից հետո՝ միջոցառումներից մեկի ժամանակ, հանդիպեցի Միջազգային օլիմպիական կոմիտեի անդամ շալր կարևոր մարդու: Նա պարզապես ծանոթ մարդ էր ու ինձ ասում էր. «Իմ պաշտոնավարության ժամանակ բոլոր օլիմպիականները իմ երեխաներն են»: «Հարցրեց՝ մե՞զ մոտ ես սովորում, ասացի՝ մեծ հաճույքով կսովորեի, բայց՝ ոչ, խոսակցություն բացվեց... Հետո ինձ զանգեցին և ասացին, որ երկու շաբաթից ընդունելության քննություններն են: Ընդունեցին, և արդեն սովորելու ընթացքում համակուրսեցիներիս միջոցով, ովքեր ստանում էին երրորդ, չորրորդ կրթություն, ունեին շալր ուժեղ կապեր, բազում ծանոթներ ձեռք բերեցի»:

Հայտնվելով օտար երկրում որպես ներգաղթած՝ նա, այնուամենայնիվ, ունեցել է լրացուցիչ ռեսուրս՝ սոցիալական կապիտալ: Նման ռեսուրսները թույլ են տալիս ոչ միայն մնալ հյուրընկալող երկրում, այլ նաև հաստատվել և լուրջ գործունեություն ծավալել նրա տնտեսական ոլորտում:

Ինչ վերաբերում է մոսկվայաբնակ հայ գործարարի էթնիկ ցանցի գործառնությանը, ապա հարցվողների մեծամասնությունը նշում էր, որ էթնիկ աջակցությունն արտահայտվում է միայն հետևյալ գործառույթների կատարմամբ. այս ցանցի միջոցով տեղի է ունենում գործարար վարքի փորձի փոխանցում և նմանակում՝ տնտեսական գործունեության տեսակի ընտրություն, նոր բիզնեսի զարգացման գաղափարների գեներացիա, տնտեսական գործունեության ընթացքում հիմնախնդիրների կարգավորման մեխանիզմների մշակում, խոչընդոտների հաղթահարում և այլն: Մեծ է էթնիկ ցանցի դերը նյութական, հոգեբանական և սոցիալական աջակցության տրամադրման գործում՝ բնակության վայր, նախնական աշխատանք, գումար և այլն:

Հարցվողներից ոմանք պնդում էին, որ առհասարակ էթնիկ աջակցություն չեն ունեցել՝ իրենց հաջողության միակ բանաձևը համարելով ամենօրյա քրտնաջան աշխատանքը: Այսինքն, ելնելով հետազոտության տվյալներից, կարելի է տարբերակել մոսկվայաբնակ հայ գործարարի սոցիալական կապիտալի հետևյալ տեսակները.

• առաջնային սոցիալական կապիտալ, որի տակ հասկանում ենք էթնիկ ցանցի ներսում գործարարի համար հասանելի ռեսուրսների հիման վրա իրականացված իշխանություն, փող, տեղեկատվություն, ձևավորվող ցանցեր ու կապեր: Էթնիկ կապերը՝ ընտանիք, հարևաններ, ընկերներ, բարեկամներ և այլն, դառնում են սոցիալական ցանցերի ձևավորման առաջին օղակները, որոնք ենթադրում են կապերի տրանզիտիվություն: Մտերիմները, ծանոթները, ընկերները, հարևանները, բարեկամները նորեկների համար ստեղծում են որոշակի հնարավորություններ՝ փոխանցելով իրենց արդեն ստեղծած կապերը:

• Ընթացիկ սոցիալական կապիտալ - էթնիկ ցանցից անկախ մոսկվայաբնակ հայ գործարարի նոր կապերի և ցանցերի ամբողջություն: Այս կարգի հայ գործարարների կարծիքով սոցիալական կապիտալի ձևավորումը և կուտակումը մեծապես կախված են հենց գործարարի անհատական ունակությունից՝ ձևավորել հարաբերությունների նոր կառուցվածք և փոխակերպել դրանք տնտեսական շահույթի, այսինքն՝ դրանով իսկ նրանք կարևորում են անհատական բնութագրիչների առկայությունը՝ անմիջական, անկաշկանդ, ինքնաբերուի շփում կազմակերպելու ունակությունը, հաղորդափրությունը, նախաձեռնողականությունը, ազնվությունը, պարտաճանաչությունը և այլն:

Մոսկվայաբնակ հայ գործարարների մեծամասնությունը գտնում է, որ էթնիկ աջակցությունը սահմանափակվում է միայն առաջնային կապիտալի ձևավորմամբ, ավելին, նրանք մոսկվայաբնակ հայ գործարարներին բաժանում են երկու խմբի՝ ա/ աշխատասեր և ազնիվ, բ/ ծոյլ ու անազնիվ: Օրինակ՝ մոսկվայաբնակ հայ գործարարներից մեկը, ով ինժեներական սարքավորումների արտադրության և սպասարկման ընկերության սեփականատեր էր, այս կապակցությամբ ասել է հետևյալը .

«Ինձ համար գոյություն ունեն երկու տեսակի հայեր՝ աշխատող հայեր, որոնք երբևէ աշխատածից ավել փող չեն վերցնի: Եվ կա նաև մարդկանց որոշակի կատեգորիա, ովքեր չեն ուզում շարք աշխատել, այլ գալիս են ու մշտապես փող են խնդրում՝ փող, փող: Իսկ ես չեմ կարող բոլորին անընդմեջ փող տալ: Ու այդ ուզողներն այնքան շարք են»:

Բայց արդյոք կարելի՞ է միանշանակ պնդել, որ մոսկվայաբնակ հայ գործարարի համար էթնիկ խմբի աջակցությունը սահմանափակվում է միայն առաջնային կապիտալի ստեղծմամբ:

Այս հարցին պատասխանել կարելի է Ռ. Մերտոնի «Ռեֆերենտ խմբերի» տեսության շրջանակներում: Մերտոնը ներմուծում է «հարաբերական գրկում

/դեպրիվացիա/» հասկացությունը⁴, որը վերաբերում է «անբավարարվածության» զգացումին, որն օբյեկտիվ իրավիճակում առերևույթ չպետք է առաջանա: Այս հասկացության սահմանման համար Մերտոնն իր աշխատության մեջ օգտագործում է զինվորների կողմից իրենց իրավիճակի համեմատությունն ուրիշների իրավիճակների հետ: Համեմատությունը, ըստ Մերտոնի, իրականացվում է ըստ կարգավիճակի բնութագրիչների: Դեռևս Ջ. Միդը, ըստ Մերտոնի, գտնում էր, որ անհատը կուտակում է փորձը, վարքի պրակտիկան ոչ թե ինքն իրեն, ուղղակիորեն, այլ անուղղակի իր սոցիալական խմբի տեսանկյունների ընդհանուր եզրակացություններից⁵ :

Հենց այն խմբերը, որոնց պատկանում է տվյալ անհատը, ապահովում են նրա համար ինքնագնահատականի ձևավորման չափանիշներ: Գործարարը տեղեկանում է ուրիշների դիրքերից և գնահատման չափանիշներից ինչպես խմբի ներսում՝ «ingroup», այնպես էլ խմբից դուրս՝ «outgroup»: Մերտոնը գտնում է, որ հենց սեփական խմբի՝ այլ էթնիկ խմբերի հետ համեմատության ընթացքում է առաջանում անբավարարվածության զգացում՝ անարդարության, խաբված լինելու, գնահատված չլինելու և այլն, որոնք էլ ձևավորում են բացասական պնդումները, տպավորությունները սեփական խմբի նկատմամբ: Արդյունքում յուրաքանչյուր գործարար հակված է կապ հաստատել այն խմբի հետ, և նրան բնորոշ են այն զգացողությունները, նրանք հարմար են զգում այն մարդկանց հետ, ովքեր պատկանում են այդ հեղինակավոր շերտին: Խումբն աստիճանաբար ճանաչում է նման մարդկանց՝ իբրև իրենց խմբին հարմարված: Եվ այս «նշանակալի ուրիշները» գործարարի համար համարվում են «Մենք»-խումբ, որում գործարարը բավարարված է իր մասին պատկերացումներով և բարձր գնահատականով և բացասական վերաբերմունք է ցուցաբերում «Նրանք»-խմբին, որը հակասում է, ըստ գործարարի, այդ պատկերացումներին⁶ :

Արդյունքում ստացվում են երկու տեսակի «Մենք»-եր.

- «Մենք»՝ որպես էթնիկ խումբ՝ հայերս՝ ընտանիքի անդամներ, հարևաններ, ընկերներ, ինչպես նաև «Մենք»՝ միևնույն էթնիկ խմբի ենթախմբեր՝ ախալքալաքցիներ, արարատցիներ, տաշիրցիներ, երևանցիներ, նոյեմբերյան-

⁴ Мертон Р. К. Референтная группа и социальная структура, М., 1991, с. 3-105.

⁵ Mead George H. Mind Self and Society, Chicago: The University of Chicago Press, 1934, p. 138.

⁶ Мертон Р. К. Референтная группа и социальная структура, М., 1991, с. 48.

ցիներ և այլն/որպես հազարամյա մշակույթի ժառանգներ, որոնք պետք է լինեն համախմբված և միասնական, օգնեն միմյանց/:

- «Մենք»՝ որպես հաջողակ, հեղինակավոր գործարարների խումբ, որին անդամակցությունն ապահովում է հայ գործարարների բարձր ինքնագնահատականը՝ անկախ ազգային պատկանելությունից:

Եվ այստեղից էլ պարզ է դառնում, որ «հարաբերական զրկումը /դեպրիվացիան/» այն մոսկվայաբնակ հայ գործարարին, ում ռեֆերենտ «Մենք» - խումբը հաջողակ գործարարների խումբն է՝ անկախ ազգային պատկանելությունից, ոչ միայն թույլ չի տալիս բարձրաձայնել էթնիկ աջակցության ողջ բովանդակության, նրա իրական պատկերի մասին, այլև համեմատականներ գծելով տարբեր ազգերի ներկայացուցիչների հետ, ընդգծված բացասական արտահայտվել միմյանց մասին՝ նախապատվություն տալով այլազգի գործարարներին՝ հաշվի առնելով նրանց հետ տնտեսական համագործակցության փորձը:

Եվ հենց այսպիսի առանձնահատկություններով է պայմանավորված տնտեսության մեջ հայ էթնիկ խմբավորման հարաբերական անարդյունավետությունը հրեաների էթնիկ խմբավորման համեմատությամբ, որն առանձնանում է իր անդամների համախմբվածությամբ և պատրաստակամությամբ՝ զոհաբերել անձնական շահը հանուն խմբի ընդհանուր նպատակների, որտեղ այլ խմբերի հետ ցանկացած համեմատության դեպքում էլ սեփական էթնիկ խումբն է համարվում ռեֆերենտ՝ հեղինակավոր և ցանկալի:

Այսպիսով, մոսկվայաբնակ հայ գործարարների սոցիալական կապիտալն իրարից տարբեր էթնիկ ենթախմբերի սոցիալական կապիտալների տարատեսակ հանրագումար է, ընդ որում էթնիկ ենթախմբերը գոյանում են հետևյալ սկզբունքներով.

- էթնիկ ենթախմբի միևնույն աշխարհագրական տարածքի պատկանելությամբ՝ որտեղից են գաղթել,
- ենթախմբի տնտեսական գործունեության տեսակով և փորձով,
- ենթախմբի անդամների ժամանման ժամանակային գործոնով՝ երբ են եկել:

Եզրակացություն

Հիմնվելով հետազոտության արդյունքների վրա՝ կարելի է առանձնացնել մոսկվայաբնակ հայ գործարարների սոցիալական կապիտալի հետևյալ առանձնահատկությունները.

• Մոսկվայաբնակ հայ գործարարների սոցիալական կապիտալի տեսակները հիմնականում երկուսն են՝ ուժեղ կապերի վրա հիմնված առաջնային կապիտալ և ընթացիկ՝ հիմնված թույլ կապերի վրա: Մոսկվայաբնակ հայ գործարարները կարևորում են տնտեսական գործունեության մեջ ընթացիկ սոցիալական կապիտալը՝ հասանելի ռեսուրսների ծավալի տեսանկյունից:

• Էթնիկ ցանցը չունի նշանակալի ազդեցություն մոսկվայաբնակ հայ գործարարի ընթացիկ սոցիալական կապիտալի գործում, իսկ էթնիկ ցանցի աջակցությունը սահմանափակվում է միայն բիզնեսի մեկնարկային փուլում առաջնային կապիտալի ձևավորմամբ: Իրականում դա պայմանավորված է մոսկվայաբնակ հայ որոշ գործարարների հարաբերական զրկմամբ՝ անբավարարության զգացումով սեփական էթնիկ խմբից՝ ռեֆերենտ համարելով մեկ այլ խմբի պատկանելությունը:

• Մոսկվայաբնակ հայ գործարարի թույլ և ուժեղ կապերը փոխլրացնում են միմյանց: Ուժեղ կապերն առավել զգացմունքային են, դրանք արտահայտում են հոգածություն, անհանգստություն, աջակցություն, ոգևորում: Մինչդեռ թույլ կապերում զգացմունքային ֆոնը գրեթե բացակայում է:

• Մոսկվայաբնակ հայ գործարարների սոցիալական կապիտալը միատարր, միասեռ չէ: Իրականում մոսկվայաբնակ հայ գործարարների սոցիալական կապիտալը ենթախմբերի, «ենթամենք»-երի սոցիալական կապիտալների հանրագումար է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը դիտարկում է էթնիկ ցանցերի դերը մոսկվայաբնակ հայ գործարարների սոցիալական կապիտալի ձևավորման գործում: Հիմնվելով սոցիոլոգիական հետազոտության տվյալների վրա՝ հեղինակն առանձնացնում է երկու տեսակի սոցիալական կապիտալ՝ առաջնային և ընթացիկ, ինչպես նաև մոսկվայաբնակ հայ գործարարների սոցիալական կապիտալի առանձնահատկությունները:

Բանալի բառեր – մոսկվայաբնակ հայ գործարար, էթնիկ ցանց, էթնիկ կապիտալ, թույլ կապերի ուժ, սոցիալական կապիտալ, ռեֆերենտ խումբ, հարաբերական դեպրիվացիա:

СОЦИАЛЬНЫЙ КАПИТАЛ В КОНТЕКСТЕ ЭТНИЧНОСТИ (НА ПРИМЕРЕ ПРОЖИВАЮЩИХ В МОСКВЕ АРМЯНСКИХ БИЗНЕСМЕНОВ)

МАРИАННА АБРААМЯН

В статье рассматривается роль этнической сети в формировании социального капитала армянских бизнесменов в Москве. На основе данных социологического исследования автор выделяет два вида социального капитала – первоначальный и текущий, а также выявляет особенности социального капитала проживающих в Москве армянских бизнесменов.

Ключевые слова – Армянский бизнесмен в Москве, этническая сеть, этнический капитал, сила слабых связей, социальный капитал, референтная группа, относительная депривация.

THE SOCIAL CAPITAL IN THE CONTEXT OF ETHNICITY (ON THE EXAMPLE OF ARMENIAN BUSINESSMEN LIVING IN MOSCOW)

MARIANNA ABRAHAMYAN

This article considers the role of ethnic networks in the formation of social capital among Armenian businessmen in Moscow. On the basis of sociological research the author distinguishes two types of social capital – primary and current, and the characteristic features of the social capital of the Armenian businessmen living in Moscow as well.

Key words – Armenian businessmen in Moscow, ethnic network, ethnic capital, the strength of weak ties, social capital, reference group, relative deprivation.

ЦИВИЛИЗАЦИОННАЯ МАТРИЦА КАК ДОМИНАНТА ОБЩЕСТВЕННОГО РАЗВИТИЯ

ВАРДГЕС ПОГОСЯН

Общество представляет собой сложную многоуровневую систему, состоящую из относительно автономных, имеющих собственные законы функционирования, подсистем: экономической структуры, социальной организации и системы духовных ценностей, причем функционирование подсистем зависит от взаимодействия всех структур, т.е. общество может определяться как целостность. Подобное понимание общества как самодостаточной, относительно стабильной и функционирующей во временной протяженности целостности становится принципом, дающим основания для формирования понятия цивилизационной матрицы. Современные научные представления о мире сопряжены с понятиями поливариантности, многообразия, отрицается фатальность и телеологическая конечная заданность, признается объективное существование альтернатив и возможность выбора, но выбор этот ограничен. Выделение и более внимательное рассмотрение в социальной динамике порождаемых самоорганизационной составляющей феноменов, изучение структуры как части системного пространства, элементного состава и соответствующих динамических связей может помочь понять меру такой ограниченности. Самоорганизация, согласно классической парадигме социального знания, по Э.Дюркгейму, происходит по причине возникающих в процессе взаимодействия индивидов, «социальных фактов», социальных регуляторов, обеспечивающих социальный контроль. Относительно устойчивый социум существует при наличии социальных регуляторов в сочетании со сформировавшимися общими базовыми ценностями и соответствующими им социальными нормами, а также социального механизма, воспроизводящего эти ценности и нормы. Истоки же возникновения социальных институтов, по мнению П.Бергера и Т.Лукмана, нужно искать в физической природе человеческих существ. Стремление скоординировать социальную составляющую своей жизни есть антропологическая необходимость для успешного выживания: «Внутренняя нестабильность человеческого существования вынуждает его к тому, чтобы человек сам обеспечивал стабильное окружение для своего поведения. Человек должен сам

классифицировать свои влечения и управлять ими. Эти биологические факторы выступают в качестве необходимых предпосылок создания социального порядка»¹. Одной из особенностей институтов, является их историчность. Институты не возникают одновременно, для их создания процесс взаимных типизаций действий социальных акторов должен занять длительное время. Понять сущность конкретного института невозможно без изучения истории, продуктом которой он является. Исторически общество возникает единовременно, но возникает не в безвременье и не в вакууме, оно организуется в определенном состоянии окружающей среды (климатический фактор), локализуясь в пространственном измерении (географический фактор), обладая первоначальной ресурсной базой. И такой ресурсный потенциал: человеческий (демографический), экономический и научно-технический (технологический), неодинаков у различных обществ. Объединение происходит на основе потребностей, опосредствованно трансформирующихся в систему ценностей, на основе которой с течением времени формируются исторические, культурные и этнические традиции. При этом создается и функционирует политическая структура, которая отражает внутреннее социальное устройство и адекватна существующему геополитическому окружению. Совокупность перечисленных факторов создает генотип, формирует уникальный социокультурный компонент цивилизационной матрицы конкретного общества, задавая алгоритмы его деятельности и являясь инвариантом социально-исторического развития. Цивилизационная матрица предстает как доминантный интеграл социальной, экономической и культурной сфер бытия; как системы взаимосвязанных элементов, формирующих структуру любой цивилизации. Иначе формулируя, можно сказать, что институциональная матрица являет собой те самые исходно-базовые формы, которые и сложили конкретное общество. Она инвариантна, сохраняет свою природу во временной протяженности и определяет характер развития данного общества.

В основу самой идеи легли теоретические предположения о двух (как минимум) видах экономических систем, изложенных в трудах М.Вебера, К.Маркса, Д.Норта, В.Ойкена, К.Поланьи, А.Смита. Тот факт, что особенности пути эволюции стран определяются складывающимися при возникновении

¹ Бергер П., Лукман Т. Социальное конструирование реальности. Трактат по социологии знания. М., 1995, с. 89.

общества первичными типами социальных форм, которые соответствуют специфике среды ареала, отмечается в работах Г.Бокля, К.Виттфогеля, Ф.Гизо, Л.Гумилева, Т.Жуффруа, У.Макбрайда, Л.Мечникова, Дж.Томлинсона, М.Фезерстоуна, А.Франка. В современной литературе концепция изложена, ее аспекты анализируются и положения дополняются в трудах О.Бессоновой, В.Дементьева, М.Ельчанинова, Т.Заславской, С.Кирдиной, Р.Нуреева, Ю.Семенова, В.Федотовой.

Каждое конкретное общество, таким образом, имеет принципиальное отличие от других обществ благодаря уникальному социокультурному компоненту, который является ядром институциональной матрицы и дефинирует её свойства, формирует своеобразный менталитет индивидов-сограждан общества, который, в свою очередь, определяет особенности поведенческих практик как исполнения алгоритма нормативных установок. Социокультурный компонент предстает в подобном ракурсе не просто как один из детерминирующих факторов, но как доминанта в точках би-, полифуркации.

Обобщая результаты исследований на различных этапах становления науки о цивилизациях, матрицу можно определить как объединяющую масштабную группу индивидов ментальноцелостную совокупность когнитивных стереотипов, определяющих способы действия во всех общественных сферах жизнедеятельности. Инвариантную матрицу общества формируют коммуникативная составляющая (язык и письменность), технологии удовлетворения потребностей и жизнедеятельности (хозяйственный уклад) и соответствующая специфическим формам общественного сознания система исторически сложившихся социальных отношений, которые в совокупности составляют определенный генотип социального развития. Выполняя роль координатора и интегратора жизни социума матрица реализует функцию сохранения консервативных форм жизни общества.

Для анализа закономерностей исторической эволюции экономики большое значение имели идеи институциональной экономической истории – прежде всего, концепция К. Поланьи². Расценивая протекционизм как проявление стихийных мер общества по своей защите, К.Поланьи анализировал экономику в контексте функционирования других общественных сфер. Условное раз-

² **Поланьи К.** Великая трансформация: Политические и экономические истоки нашего времени, СПб., 2002.

деление общества на четыре сферы: экономическую, социальную, политическую и духовную определяет его как сложное структурированное целое.

Обращение к экономической сфере общества, ее взаимосвязь и взаимозависимость с другими сферами общества не позволяет обойти вниманием релевантные труды К.Маркса. Незападный способ производства К.Марксом был назван азиатским, так как первые описания подобного способа производства были основаны на материале стран Азии. Однако выяснилось, что он существовал не только в Азии, но и в Африке, и в Америке (работы А.Дробана, К.Виттфогеля, Р.Гаради, Р.Нуреева, Ю.Семенова, Н.Старикова и др.)³. В марксистской литературе азиатский способ производства первоначально трактовался как промежуточная формация между первобытностью и рабовладением. Однако в 70-80-х гг. XX века в советском обществоведении появились работы Л.Васильева, А.Коротаева, Н.Крадина, А.Фурсова, отражающие различия в развитии западных и восточных обществ, правда при этом уже выходя за рамки собственно марксистской теории. Таким образом, даже в ортодоксальном западнцентристском марксизме особняком стоит концепция азиатского способа производства, по существу, констатирующая прямое влияние восточных традиций и психологии на характер и уровень развития производственных отношений.

Формирование типа хозяйственного уклада как интегративной подсистемы общества зависит от детерминант социального действия, т.е. устойчивых правил, формирующих характер взаимодействия между членами общества и принципы устройства общественной жизни, определяющих массовое поведение и порождающих, провоцирующих определенные ценностные установки. Соответственно, социокультурные факторы становятся доминантами в точках перехода-выбора, определяя направление и способ жизнедеятельности социума, и опосредствованно материализуются в хозяйственном укладе, формируя экономический базис общества, который детерминирует общественное развитие (в рамках локальной цивилизации наблюдаемо, эмпирически фиксируемо формационное развитие). Доминанты и детерминанты находятся в единстве и

³ См., например: **Семенов Ю.** Об одном из типов традиционных социальных структур Африки и Азии: прагосударство и аграрные отношения // Государство и аграрная эволюция в развивающихся странах Азии и Африки. М., 1980; **Нуреев Р.** Азиатский способ производства и социализм // Вопросы экономики, 1990, №3.

постоянно взаимодействуют; результатом подобного взаимодействия выступает многовариантность форм существования обществ.

Зависимость экономического уклада, инновационной направленности экономики и способности к модернизации от типа культуры выводят в своих работах Л.Харрисон и С.Хантингтон, доказывая, что культурная специфика разных стран оказывает влияние на их политическое, социальное и экономическое развитие⁴. Факт детерминации особенностями исторического и культурно-психологического развития соответствующего общества национальной модели рынка нашел отражение в ряде теоретических публикаций об институциональных матрицах и специфике трансформаций постсоветского пространства (М.Ельчанинов, О.Бессонова, Т.Заславская, С.Кирдина, Р.Нуреев, В.Федотова). Фиксируемая исследователями редистрибутивная (К.Поланьи), распределительная (С.Кирдина), рентная (В.Дементьев), раздаточная (О.Бессонова), политарная (Ю.Семенов) экономика есть суть проявления азиатского способа производства, в котором не рынок, а сдача-раздача – это неизменные константы, а иерархическая система – это изменяемый компонент⁵.

Меняя только исторические формы своих базовых институтов, различные системы хозяйствования – рыночные и раздаточные экономики – на протяжении всемирной истории и в настоящее время продолжают свое поступательное развитие безотносительно к ресурсной обеспеченности или изменениям интересов и знаний хозяйствующих субъектов. Например, Ю.Семенов прослеживает присущий российскому обществу (окончательно сформировавшийся в XIV-XV вв.) азиатский способ производства в неополитаризме СССР, оформившемся после победы Великой Октябрьской Революции 1917г.⁶ Речь не идет об особых типах экономической деятельности со своими уникальными закономерностями. Социальные законы, в том числе законы экономики, реализуются своей имманентностью, но они опосредуются культурной средой с

⁴ Харрисон Л., Хантингтон С. Культура имеет значение: Каким образом ценности способствуют общественному прогрессу. М., 2002; Харрисон Л. Главная истина либерализма: Как политика может изменить культуру и спасти ее от самой себя. М., 2008.

⁵Бессонова О. Раздаточная экономика как российская традиция // Общественные науки и современность. 1994. № 3.

⁶ Семенов Ю. Политарный («азиатский») способ производства: сущность и место в истории человечества и России. М., 2008.

доминирующей в ней ментальностью, то есть рассмотренной нами выше цивилизационной спецификой, со своими собственными социальными регуляторами. В соответствии с концепцией, предложенной С.Кирдиной, обществам с Х-матрицей присущи редистрибутивная экономика, унитарное политическое устройство, коммунитарная идеология, с превалированием «Мы» над «Я», а обществам с Y-матрицей – рыночная экономика, федеративное политическое устройство и субсидиарная идеология с приоритетом «Я» над «Мы». ⁷ Согласно С.Кирдиной, в институциональной структуре обществ действуют одновременно базовые (доминирующие) и комплементарные (дополнительные) институциональные матрицы. Это означает, что институты рынка сосуществуют с институтами редистрибуции, демократия и федерация – с принципами унитарности и централизации, а субсидиарные личностные ценности в общественном сознании уживаются с ценностями коллективными, коммунитарными. Принципиальное положение теории заключается в том, что история стран характеризуется устойчивым доминированием одной матрицы, и эта доминирующая матрица определяет рамки и пределы действия комплементарных институтов. Доминирование X или Y-матрицы имеет «вечный» характер и определяет социальный тип общества. Доминирующая матрица означает способ социальной интеграции, найденный социумом в условиях проживания на тех или иных пространствах.

Таким образом, программы поведения аккумулированы исторически, а системообразующим фактором самих культурных феноменов и программ поведения выступают функциональные особенности каждого фрагментарного аспекта культуры, их жизненная полезность и востребованность. Именно локальная культура, испытывая воздействие, например, экономических институтов, обуславливает экономическое мышление и соответствующее поведение индивидов, сферу деятельности экономических субъектов, особенности рынка труда, безработицы и т.д. И игнорированием именно социокультурного фактора объясняются катастрофические последствия попыток волюнтаристских социальных преобразований.

⁷ Кирдина С. Моделирование общественных систем на основе теории институциональных матриц // Возможности теоретического моделирования в познании сложных социальных систем. Материалы научного семинара. Вып. № 3. М., 2012, с. 10.

Со времени возникновения человеческого общества Ойкумена подразделялась на центр и периферию, состоящую из инфериорных обществ. Однако только обществам с Y-матрицей удалось в силу обусловленной вектором развития экспансии создать мировую капиталистическую систему, когда вовлеченные в эту орбиту страны оказались в разной степени, но в периферийно-колониальной зависимости, став объектами эксплуатации. Ю.Семенов по этому поводу отмечает: «Когда в эти страны в результате влияния Запада начал проникать и развиваться капитализм, то он там приобрел иной характер, чем он имел в странах центра. Результатом супериндукции капиталистического мирового центра, как правило, становится не супериоризация, а латерализация стран периферии. Возникший в них капитализм был зависимым, был тупиковым вариантом этой формы эксплуатации человека человеком. Так стали существовать два отличных друг от друга капиталистических способа производства: капитализм центра (ортокапитализм) и периферийный капитализм (паракапитализм). В социоисторических организациях центра продолжала существовать ортокапиталистическая общественно-экономическая формация, в периферийном мире формировалась и сформировалась паракапиталистическая общественно-экономическая параформация»⁸. Определяется такой экономический уклад многочисленными исследователями проблемы как «пара-», «квази-», «лже-», «сгону-» капитализм, ибо капитализмом западного образца в его полноценном понимании с соответствующими мотивациями, легитимными источниками прибыли, транспарентными правилами биржевой игры, реальным рынком и т.д. он не является, и стать таковым не сможет в силу вышеизложенных причин. Мы определяем такой порядок вещей как максимально возможное приспособление периферийных доноров под нужды и потребности метропольного капитализма, бесперебойного функционирования западного капитала. Параформацией, т.е. неполноценным общественным устройством, она становится в силу тупикового пути и невозможного в перспективе развития данных культурно-исторических типов как несоответствующих собственной цивилизационной матрице, а значит, такая формация противоречит

⁸ Семенов Ю. В.И.Сергеевич, его труд «Древности русского права» («Русские юридические древности») и проблема исторического пути Руси-России // Вступительная статья в книге Сергеевич В.И. «Древности русского права: Территория и население». В 3-х томах. Т. 1, М., 2007, с. 82.

логике собственного имманентного развития и является в историческом измерении временной.

Выводы:

Ни одно общество не может остаться в стороне от действия экзогенных факторов, но заимствованные идеи, институты и технологии должны быть приспособлены к эндогенному этносу, с целью сохранения состояния гомеостаза отдельной социальной системы, существования собственного культурно-исторического типа. Социокультурная составная константа конкретного общества, будучи системообразующим компонентом, стремится к сохранению гомеостаза, состояния относительной стабильности системы. Сохраняя собственное матричное ядро, система проводит парциальную (фрагментарную), частичную модернизацию, т.е. коррекцию определенных параметров, в которых имеется отставание, с целью повышения собственной стойкости и жизнеспособности. При этом конструктивные изменения внутрисистемны и происходят в пределах существующего порядка, не уничтожая его основ, несущих институциональных структур. Относительно стойкие константы сохраняют народы и нации как целостные социальные организмы, которые развиваются путем постепенных качественных преобразований, но сохраняют при этом родовой социально-культурный генотип. Модернизация в этом случае выступает как рефлексия социальной системы на экзогенное воздействие, как средство сохранения гомеостатичного, относительно стабильного, состояния системы⁹.

РЕЗЮМЕ

В статье анализируются основные положения идеи цивилизационных матриц с точки зрения применимости в анализе социальных изменений. Подтверждено, что сохранение интегративных качеств системы после прохождения бифуркационных точек в своем развитии обусловлено комплексом устойчивых социокультурных констант, компонентов цивилизационной матрицы; социальная модернизация в этом случае выступает как адекватная защитная реакция на изменение средовых условий, средство поддержания относительно гомеостатичного состояния системы.

Ключевые слова – цивилизационная матрица, институциональные ядра, детерминирующие факторы, социокультурная доминанта, императивы,

⁹ **Погосян В.** Социальная модернизация: стратегия выживания. М., 2009.

инвариант, социальные изменения, азиатский способ производства, социальная модернизация.

ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՄԱՏՐԻՑԸ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՈՄԻՆԱՆՏ

ՎԱՐԴԳԵՍ ՊՈՂՈՍՅԱՆ

Հոդվածում վերլուծվում են քաղաքակրթական մատրիցների գաղափարի հիմնական դրույթները սոցիալական փոփոխությունների վերլուծությունում կիրառելու նպատակով: Հաստատվում է, որ հասարակական զարգացման ընթացքում երկատոմն անցնելուց հետո համակարգի ինտեգրացիոն հատկությունների պահպանումը պայմանավորված է քաղաքակրթական մատրիցի կայուն սոցիալ-մշակութային բաղադրիչներով. սոցիալական արդիականացումը այս դեպքում հանդես է գալիս որպես միջավայրի փոփոխվող պայմաններին համարժեք պաշտպանական պատասխան, համակարգի հարաբերական հեմոստազ կարգավիճակի պահպանման միջոց:

Բանալի բաներ – քաղաքակրթական մատրից, ինստիտուցիոնալ միջուկ, գերիշխող սոցիալ-մշակութային բաղադրիչ, հրամայականներ, անփոփոխություն, սոցիալական փոփոխություններ, արտադրության ասիական եղանակ, սոցիալական արդիականացում:

CIVILIZATIONAL MATRIX AS A DOMINANT OF SOCIAL DEVELOPMENT

VARDGES POGOSYAN

The article analyzes the main provisions of the idea of civilizational matrix in terms of applicability in the analysis of social changes. It is confirmed that preservation of the system's integrative qualities after passing the bifurcation points in their development is conditioned by a complex of stable socio-cultural constants, components of the civilizational matrix; social modernization in this case acts as an adequate protective response to the changing environmental conditions, a means of maintaining relative homeostasis system status.

Key words – civilizational matrix, institutional core, determining factors, socio-cultural dominant, imperatives, invariant, social changes, the Asiatic mode of production, social modernization.

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐՈՆԱԿԱՆ ԱՀԱՐԵԿՉՈՒԹՅՈՒՆ. ԱՌԱՍՊԵ՛Լ, ԹԵ՛ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՇՈՏ ԱՍԼԱՆՅԱՆ, ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՈՅԱՆ

Գլոբալացումը և պոլիցենտրիզմը խոր ազդեցություն են թողնում միջազգային անվտանգության, ինչպես նաև գործնականում ցանկացած երկրի ազգային անվտանգության, մասնավորապես դրա ապահովման միջոցների ու մեթոդների վրա: Միջազգային անվտանգության և ազգային անվտանգության առավել լուրջ սպառնալիքների զսպումը և կանխարգելումը ներկայիս դարաշրջանի հրատապ խնդիրներից են: Նոր հնարավորությունների հետ մեկտեղ առաջ են գալիս նաև նոր մարտահրավերներ, որոնք պահանջում են բազմակողմանիորեն հաշվարկված հստակ արձագանք: Այդպիսի մարտահրավերներից է ժամանակակից ահաբեկչությունն իր բոլոր դրսևորումներով: Առավել սուր սպառնալիք է միջազգային ահաբեկչությունը: Առանձնացվում են ահաբեկչության մի շարք այլ տեսակներ, որոնց մեջ իր քայքայիչ բնույթով ուրույն տեղ է զբաղեցնում կրոնական ահաբեկչությունը, որի հետ կապված շատ հարցեր գիտական հետազոտման ու պարզաբանման կարիք են զգում:

Փորձենք դիտարկել միջազգային ահաբեկչության և կրոնական ահաբեկչության հարաբերակցությունը, միջազգային հանրության հանդեպ դրանց սպառնալիքի աստիճանն ու առանձնահատկությունները, ինչպես նաև գաղափարական հիմքերը:

Ահաբեկչության համախտանիշն ամուր թելերով կապված է քաղաքական բռնության հետ: Ըստ դրսևորման ձևերի՝ բռնությունը որակվում է որպես լայնամասշտաբ կամ լոկալ պատերազմ, միջազգային և տեղային մասշտաբի զինված բախում, բռնաճնշում, ապստամբություն, խռովություն, ինքնասպանության ցուցադրական գործողություն: Սակայն արդի ժամանակաշրջանում չարագործների կողմից բռնությունը կիրառվում է առավելապես ոչ մշտական՝ թիրախային, դրվագային սկզբունքով և բազմաթիվ թելերով կապված է ոչ պակաս վտանգավոր այլ միջոցների կիրառման հետ: Անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների ճնշող մեծամասնությունն այսօր կրում

է ոչ ռազմական բնույթ և պայմանավորված է միջազգային ահաբեկչական կազմակերպությունների և անդրսահմանային հանցավոր միավորումների գործունեության՝ զենքի մաքսանենգության, թմրաբիզնեսի, անօրինական միգրացիայի, ընդերքի հարստությունների և բնական պաշարների թալանի, սովետային ֆինանսական միջոցների շրջանառության և փողերի լվացման, թրաֆիքինգի, կիբեռհանցավորության տարածմամբ^{1 2}:

Ընդհանրապես ահաբեկչություն կամ տեռոր եզրույթը քաղաքական առումով ունի վախեցնելու, ահաբեկելու, սարսափ տարածելու իմաստ: Հենց սա էլ բնութագրում է ահաբեկչությունը որպես քաղաքական բռնության առանձնահատուկ ձև: Քրեաիրավական իմաստով ահաբեկչությունը հանցագործության տարատեսակ է, իսկ հասարակագիտական առումով ահաբեկչությունը գործունեություն է, որը հետապնդում է քաղաքական, գաղափարական, կրոնական նպատակներ: Այն սպառնում է հասարակության և պետության անվտանգությանը, քանի որ բերում է մարդկանց վախճանի, սարսափի զգացողության, բարոյալքման, հոգևոր արժեքների քայքայման, նյութական արհավիրքների:

Ռուսաստանցի քաղաքագետ Յու. Սումբատյանի կարծիքով ահաբեկչության աճը պայմանավորված է հետևյալ հիմնական գործոններով.

- որոշ սոցիալական խմբերի ոչ բարեկեցիկ կյանք և դրա հետևանքով հասարակական գործունեության իմաստագրվում ու դեպրեսիվ վարքագիծ,
- անհաջողություն միջազգային և հասարակական հարաբերություններում (ռազմական ագրեսիա, տեղային պատերազմ, հսկամարտություն, բռնություն և այլն),
- ուտոպիստական, հաճախ վայրագ գաղափարախոսության, առաջին հերթին կրոնական արմատականության կեղծ աշխարհընկալման առկայություն, որ ծնում է ահաբեկչությունը՝ որպես արդի քաղաքակրթության դեմ պայքարի միջոց:

¹ Проблемы безопасности и противодействия терроризму. // Шестая международная научная конференция по проблемам безопасности и противодействия терроризму. МГУ им. М.В. Ломоносова, 11-12 ноября 2010г. в 2-х томах.– Т.1./ Материалы пленарного заседания и заседаний по тематике противодействия терроризму. – М., МЦНМО, 2011.– (440с.), с. 30, 38.

² **Րոշպկին В.**, США: спецслужбы под огнём критики. / Вестник границы России, вып. 6, ноябрь-декабрь 2004, (128с.), с. 64-65.

Այդ շարքը կարելի է լրացնել՝ հակամարտություններ տարբեր գաղափարախոսությունների միջև, հակասություններ քաղաքական և կրոնական աշխարհայացքների միջև, հակասություններ և բախումներ գլոբալիստների և հակագլոբալիստների միջև, «ընչագուրկների» պայքար ընդդեմ բարեկեցիկ երկրների³:

Վերոգրյալի հիման վրա ահաբեկչության հիմնական սուբյեկտներ են դիտվում ահաբեկչական գործունեություն իրականացնող միջազգային, տարածաշրջանային և տեղական ազգայնամուլական, ծայրահեղական, արմատական-կրոնական կազմակերպությունները, ահաբեկիչներին հովանավորող ֆինանսական կառույցները, ծայրահեղական գաղափարներ և տեսակետներ դավանող հասարակական, կուսակցական կազմակերպությունները, որոնք ունեն մարտական ստորաբաժանումներ, ինչպես նաև ահաբեկչական ուղղվածության զանգվածային լրատվամիջոցներ:

Ահաբեկչության օբյեկտներ են պետությունները, հասարակությունները, անհատները, ռազմավարական նշանակության օբյեկտները և հումքը, հասարակության կենսագործունեությունն ապահովող հիմնարկները, ձեռնարկությունները, տնտեսությունները, բժշկական հաստատությունները, կրթօջախները և այլն:

Ահաբեկչության ընդհանուր նպատակն է սարսափազդու հետևանքների առաջացումը: Միջազգային ահաբեկչության նպատակներից է իրադրության ապակայունացումը՝ որպես թիրախ ընտրված տարածաշրջանում կամ պետությունում, միջազգային և պետական հակաահաբեկչական ուժերի վարկաբեկումն ու տրոհումը, անձի, հասարակության, պետության շահերի բախման հրահրումը, այլ խոսքով՝ միջազգային ահաբեկչության հետևում կանգնած ուժերի դիրքերի ամրապնդումը հասարակության քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային կյանքում: Ահաբեկչական գործունեությունն ուղղված է նաև հասարակության զանգվածային գիտակցության ապակողմնորոշմանը, իշխանությունների և առհասարակ պետության հանդեպ անվստահության մթնոլորտի ձևավորմանը՝ զուգակցված զանգվածների անհամարժեք գործողությունների հրահրմամբ:

Քաղաքագետների և փորձագետների մի մասը յուրովի է մեկնաբանում ահաբեկչության տարածման պատճառները: Նրանք գտնում են, որ միջազ-

³ Сумбатян Ю. Чума XXI века. Межнародный терроризм—глобальная проблема современности. / Вестник границы России, вып. 4, июль-август 2006, (80с.), с. 50-55.

գային ահաբեկչությունը ոչ թե գլոբալացման հետևանք է, այլ արմատավորվում է այն երկրներում, որոնցում գլոբալացման պրոցեսները դեռևս բացակայում են⁴:

Շատ փորձագետներ գտնում են, որ միջազգային ահաբեկչության հիմնական «ուժը» նրա տեղեկատվական-գաղափարախոսական համակարգն է, որով ապահովվում են զանգվածային գիտակցության վրա հոգեբանական ներգործությունը, ահաբեկչական կազմակերպությունների ֆինանսավորումը, կադրերը և այլն: Հակահասարակական տեղեկատվական գործունեությունը ներառում է պետության անվտանգությանն իրական սպառնալիք ներկայացնող հակաիրավական գործունեության հետևյալ ուղղությունները.

- հասարակության մեջ պետության վարած հակահաբեկչական, արտաքին և ներքին քաղաքականության նկատմամբ անվստահության, հասարակական կյանքի մարդասիրական և հոգևոր-բարոյական նորմերի վերագնահատման պահանջի առաջացումը,
- տեղեկատվական-վերլուծական և հետախուզական գործունեության կազմակերպումը, ահաբեկչական խմբավորումների և առանձին ահաբեկիչների հետ համագործակցության ստեղծումը,
- ապատեղեկատվության տարածումը և քարոզչությունը ահաբեկչության նկատմամբ հանդուրժողականություն դրսևորող զանգվածային լրատվամիջոցներով, հանրության որոշակի խմբերի, ինչպես նաև գործակալական-քարոզչական ցանցի միջոցով,
- ծայրահեղական ուղղվածության տեղեկատվական դաշտի ընդարձակումը, ահաբեկչական նշանակության տեղեկույթի պաշտպանությունը,
- ահաբեկիչների և նրանց հովանավորների, հասարակության բարոյապես և հոգեբանորեն անկայուն սոցիալական խմբերի և առանձին անձանց գաղափարական մշակումը,
- տեղական ինքնակառավարման և իրավապահ մարմինների և հակահաբեկչական գործունեության այլ սուբյեկտների ապակողմնորոշումը⁵:

⁴ Նույն տեղում, էջ 52:

⁵ **Марков С., Харитонов Л.** «Варево» сепаратизма. Международный терроризм-угроза безопасности России в пограничной сфере. /Вестник границы России, вып. 5, сентябрь-октябрь 2004, (128с.), с. 66-78.

Ներկայումս ահաբեկչական կազմակերպությունները, պատկերավոր ասած, բարդ և բազմամակարդակ կառուցվածքներ են՝ կառուցված մանրակրկիտ մշակված և անընդհատ կատարելագործվող տեղեկատվական տեխնոլոգիաների հիման վրա: Այս տեսակետն առաջ են քաշում մի շարք գիտնականներ և փորձագետներ (Ա.Ա.Մուխոմուխինով, Ի.Ա.Կորոլյով և ուրիշներ): Նրանց կարծիքով ահաբեկչական կազմակերպությունների գործունեությունը կառուցվում է չորս հիմնական մակարդակներում՝ գաղափարախոսություն, քարոզչություն, ֆինանսներ, հոգեբանական ազդեցություն: Ինչ վերաբերում է ահաբեկչական գործունեության քարոզչությանը, ֆինանսավորմանը՝ պարզ է.

1. օգտագործելով համացանցը, զանգվածային լրատվամիջոցները՝ միջազգային ահաբեկչական կենտրոնները տարածում են ապակառուցողական և ապակողմնորոշող տեսակետներ իրենց համար առանձնահատուկ հետաքրքրություն ներկայացնող հասարակական կյանքի ոլորտներում՝ միաժամանակ բարձրացնելով կիբեռհանցավորության մակարդակը: Հաղորդակցության միջոցները հաջողությամբ օգտագործվում են ահաբեկչական գաղափարներ, հոգեբանական ներգործության, հիմնականում ահ ու սարսափ տարածելու համար.

2. ֆինանսավորման աղբյուրն առաջին հերթին միջազգային հանցավոր կազմավորումներն են, սովետային տնտեսությունը, ապօրինի գործարքներ վարող ֆինանսական հաստատությունները, ինչպես նաև ահաբեկչությունը հովանավորող անհատները և առանձին պետությունները:

Հոգեբանական ներգործության օբյեկտ են հասարակության անապահով սոցիալական խմբերը, առանձին անձինք, այդ թվում՝ քրեական անցյալ ունեցող, երիտասարդության անկայուն, ազգայնամոլական և կրոնամոլական գաղափարների հետևորդ հատվածը: Հոգեբանական ներգործության գագաթնակետը սուփցիդալ ահաբեկչական ակտերի նախապատրաստումն է: Հիմնականում որք կամ անապահով ընտանիքների երեխաների նկատմամբ ցուցաբերվում է հատուկ «հոգատար» վերաբերմունք, օրինակ՝ նրանց համար ապահովվում է ուսում «ջամահաթներում» (կրթօջախի քողի տակ հատուկ պատրաստություն անցնելու համար նախատեսված հաստատություններ): Կրոնի դասավանդումն ուղեկցվում է կրոնական մոլուցքի հասցնող հատուկ քարոզչությամբ (մահմեդական արմատականության հիմնադրույթներից է): Սուփցիդալ ահաբեկչական ակտեր իրականացնելու համար ընտրվածները ենթարկվում են հատուկ հոգեբանական մշակման հոգեմետ նյութերի օգտագործման և հոգեբանական ծրագրավորման մեթոդներով: Դրան հետևում է

հոգեբանական «կարգավորումը»՝ հիմնված առողջ մարդկային օրգանիզմը մեծ ծավալի զգացմունքային ծանրաբեռնվածության կամ մանիպուլյացիայի ենթարկելու միջոցով⁶:

Նմանատիպ տեխնոլոգիաներ մշակվել և կիրառվել են մարդկության զարգացման վաղ ժամանակներից սկսած, օրինակ՝ քրմերի կողմից Հին Եգիպտոսում, ամբողջատիրական վանական և ասպետական կարգերում (տամպլիերների, խաչակիրների, ճիզվիտների, մասոնների, կուկլուկսկլանի, ասասինների, վահաբականների և այլն)^{7 8 9 10}: Այս և ընդհանրապես միջազգային ահաբեկչական կազմակերպությունների կողմից իրականացված ահաբեկչական ակտերի մասին այժմ շատ է գրվում, սակայն դրանք հիմնականում ունեն վիճակագրական բնույթ և չեն հենվում գաղափարախոսական-հոգեբանական վերլուծությունների վրա¹¹:

Այս համատեքստում անդրադառնանք նաև ահաբեկչության գաղափարական կողմին: Ահաբեկչության գաղափարական հիմքն առաջին հերթին օտարատյացությունն է (քսենոֆոբիան): Այն ամրապնդվում է երևույթների, փաստերի և իրադարձությունների ծայրահեղական ընկալմամբ և ուղեկցվում վառ արտահայտված ագրեսիայով: Օտարատյացության և ծայրահեղականության դրսևորման պատճառ կարող է դառնալ, օրինակ՝ լեզուների ու մշակույթների հակադրումը: Այսպես, պրոֆեսոր Ս. Գ. Տեր-Մինասովան պնդում է, որ թեև լեզուն և մշակույթը կրում են գաղափարախոսական լիցքեր, բարոյական արժեհամակարգի տարրեր, սակայն միջլեռնիկական հակամարտություններում կարող են դառնալ նաև ագրեսիայի պատճառ: Թերևս գլոբալաց-

⁶ Проблемы безопасности и противодействия терроризму // Шестая международная научная конференция по проблеме безопасности и противодействия терроризму. МГУ им. М.В.Ломоносова, 11-12 ноября 2010г. В 2-х томах.- Т.1./ Материалы пленарного заседания и заседаний по тематике противодействия терроризму, М., МЦНМО, 2011. с. 324-329.

⁷ **Боголюбов Н.**, Тайные сообщества XX века. Санкт-Петербург, Вера, 1997, с. 5-7, 17-18, 81-83, 91-92.

⁸ **Анисимов С.Ф., Аширов Н. А., Бельский Н. С. и др.** Настольная книга атеиста. М., Политиздат, 1987, с. 55-57, 206-210.

⁹ **Абаренков В. П., Аверкин А. Г., Агешин Ю. А. и др.** Краткий политический словарь. М., Политиздат, 1988, с.147, 220.

¹⁰ **Մկրտչյան Ն.**, Ասասինները / «Հայ գինվոր», № 48, 8-14.12.2011թ., էջ 15:

¹¹ **Էդիլյան Ա., Հատիկյան Հ.**, Ահաբեկչության պատմության համառոտ ակնարկ // Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ / ՀՊՄՀ, Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, №3 / Երևան, 2012, էջ 156-163:

ման և արևմտականացման ծավալումը դրդեց ժողովուրդներին գիտակցելու, զգալու սեփական ազգային ինքնությունը, խորությամբ գնահատելու իրենց իսկ լեզուն ու մշակույթը: Դա էլ հաջողությամբ որսում են ահաբեկչական ծայրահեղական կազմակերպությունները՝ ազգային-էթնիկական գաղափարախոսական դրոշի ներքո¹²:

Մանկավարժության տեսանկյունից օտարատյացությանը կարող է հակադրվել աշխարհիկ կրթվածությունը՝ որոշակի սոցիումի չափանիշների համաձայն: Ընդհանրապես մանկավարժության տեսաբանության աշխարհի առաջատար մասնագետներն առաջ են քաշում այն թեզը, ըստ որի մանկական մաքսիմալիզմը (աշխարհընկալում՝ ըստ «յուրայինի» և «օտարի», կամ «իրենը» և «ուրիշինը» սկզբունքի) հաճախ վերաճում է արմատական ծայրահեղականության: Պատահական չէ, որ արմատականության խմբավորումներում (ծայրահեղ աջեր կամ ծայրահեղ ձախեր, ազգայնականներ, նեոնացիստներ, հակազրոբալիստներ և այլն) մեծ թիվ են կազմում անչափահասները¹³: Որոշ հեղինակների կարծիքով կրթվածության և օտարատյացության հակամարտության տիպիկ օրինակ է Ճապոնիան, որը թեև հարյուրամյակներով փակ էր արտաքին աշխարհի համար, իսկ վերջին ժամանակներում կտրուկ աճ ապրեց համաշխարհային ասպարեզում, մինչույն է, աշխարհը բաժանում է յուրայինի և օտարի: Անգամ արյան փոխներարկման անհրաժեշտության դեպքում ճապոնացի հիվանդին պետք է ներարկվի ճապոնացի դոնորի արյուն¹⁴:

Ահաբեկչությունն իր բուն նպատակները հաճախ քողարկում է կրոնական ծայրահեղականության գաղափարախոսությամբ, որը քարոզում է բռնություն, սպառնալիք, նենգադուլ, եթե դրանք կիրառվում են «ի շահ» կրոնական կազմակերպությունների: Իսկ դրանց ղեկավարներն ու ակտիվիստներն իրենց իրավունք են վերապահում պատժելու անհնազանդներին «Բարձրյալի անունից»: Կարծում ենք, որ լուրջ բացասական դեր է խաղում նաև հավատացյալներին կրոնական նենգափոխված բարոյականության

¹² Проблемы безопасности и противодействия терроризму. // Шестая между-народная научная конференция по проблемам безопасности и противодействия терроризму. МГУ им. М.В.Ломоносова, 11-12 ноября 2010г. В 2-х томах.- Т.1./ Материалы пленарного заседания и заседаний по тематике противодействия терроризму. М., МЦНМО, 2011, с. 81-83.

¹³ Նույն տեղում, էջ 92:

¹⁴ **Девис Роджер Дж., Икену Осаму.** Япония, как ее понять. / Очерки современной японской культуры, М., АСТ: Астрель, 2008, с. 261-267.

մատուցումը: Այս դեպքում կրոնական բարոյականության իրական օբյեկտը (մարդ, ընտանիք, համայնք, հասարակություն, պետություն) փոխվում է պատրանքայինով, գերբնականով: Կրոնի տեսանկյունից գլխավոր բարոյական հիմնախնդիրը մարդու վերաբերմունքն է Բարձրայի նկատմամբ: Դրանից են բխում մարդու և շրջապատող միջավայրի փոխհարաբերությունները: Հավատացյալներին ուղղված գլխավոր բարոյական պատվիրանները կարգավորում են նրանց վերաբերմունքը դեպի Բարձրայը¹⁵: Այդ իսկ պատճառով հավատացյալի բոլոր «աստվածահաճո» գործողությունները շրջապատի նկատմամբ չեն առաջացնում խղճի խայթ: Հետևաբար, մոլի հավատացյալը հանգիստ խղճով կարող է սպանել, խոշտանգել, կտտանքների ենթարկել դիմացինին (ինկվիզիցիա, կրոնական պատերազմներ, ցեղասպանություններ, հարկադրական դավանափոխություն և այլն): Նրա տեսանկյունից նման վարքագծի դրսևորումը բարոյական է, քանի որ դա համապատասխանում է «աստծո կամքին»¹⁶:

Իսլամական արմատականության և կրոնական մոլեռանդության հիմքում ընկած ուսմունքներից է վահաբիզմը՝ իսլամի ուղղություններից կամ, ավելի ճիշտ, աղանդներից մեկը: Կրոնական ծայրահեղականությունն առաջացնում է միջէթնիկական հակամարտություններ, ազգամիջյան բախումներ: Պետական իշխանության լծակների օգտագործումը դրանց կանխման ուղղությամբ միշտ չէ, որ արդյունավետ է: Միջէթնիկական հակամարտությունները, որպես կանոն, ազգայնամոլության արդյունք են: Եթե ազգայնամոլությունը ժամանակին չի կանխվում, այն աստիճանաբար ձեռք է բերում մարտնչող բնույթ¹⁷:

Քաղաքական և կրոնական ծայրահեղականության տարածման գործում հաճախ մեծ «ներդրում» է ունենում եկեղեցական վերնախավը՝ կղերականությունը, որը, քողարկվելով «ազգային շահի» անվան տակ, հասարակության մեջ սերմանում է իր գաղափարախոսական հիմնադրույթներն ու աշխարհընկալման մոդելները¹⁸: Այսպիսով, կրոնական ծայրահեղություն, որպես այդպի-

¹⁵ Տե՛ս հղում 6. -Մահմեդականության աստվածաբաններից մեկը պնդում է. «Մահմեդականի կյանքի իմաստը մերձեցումն է Բարձրային: Մահմեդականն ապրում է ոչ թե իր, այլ հանուն Բարձրայի և նրա, որպես ուղղահավատ մահմեդականի, ողջ գործունեությունը պետք է նվիրված լինի այդ նպատակին»:

¹⁶ Տե՛ս հղում 6, էջ 207, 323-324:

¹⁷ **Абаренков В. П., Аверкин А. Г., Агешин Ю. А. и др.** Краткий политический словарь. М., Политиздат, 1988, 478 с. -Ազգայնամոլությունից պետք է տարբերել ազգայնականությունը: Առողջ ազգայնականությունն ընկալվում է որպես զանգվածային ազգային ինքնանույնացման հիմք:

¹⁸ Տե՛ս հղում 1, էջ 329-338:

սին, լինել չի կարող: Կրոնը, առանձին վերցրած, ծայրահեղական բովանդակությամբ հագեցած չէ: Կրոնական երանգ ունեցող հակամարտությունների արմատներն այսօր պետք է փնտրել առավելապես սոցիալ-քաղաքական տիրույթում, մասնավորապես գլոբալացման գործընթացներում, որի մեջ հայտնվել են պատմական զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող ժողովուրդները: Իրականում ոչ մի համամարդկային կրոն (քրիստոնեություն, մահմեդականություն, բուդդայականություն) չի ոգեկոչում բռնության «Աստծո ստեղծած մարդ արարածի» կողմից, այլ ընդհակառակը՝ քարոզում է խաղաղ գոյակցություն, բարիդրացիական հարաբերություններ, միմյանց ազգային-կրոնական սովորույթները և ավանդույթները հարգելու գաղափարներ: Արդի գլոբալացման պայմաններում կրոնական դոգմատիկ հակասություններն անգամ չեն խանգարում քաղաքական դաշնակցական հարաբերություններին և, այսպես կոչված, առանցքների ստեղծմանը, օրինակ՝ Թուրքիա-Ադրբեջան-միջինասիական թուրքալեզու պետություններ, Իսրայել-Ադրբեջան, Հունգարիա-Ադրբեջան: Քիչ չեն ակնառու օրինակները, երբ նույն կրոնի պատկանող էթնոսները կամ հանրույթները՝ բասկեր-իսպանացիներ, ազերիներ-պարսիկներ, քրիստոնյա ուղղափառներ (Ուկրաինա, Վրաստան-Ռուսաստան), ինչպես նաև նույն էթնոսի տարբեր դավանաբանության հետևող հանրույթներ՝ ալավիներ-սունիներ (Սիրիա), սեմիթներ (Իսրայել-Պաղեստին, Սաուդյան Արաբիա-Եմեն), հակադրվում են իրար, մտնում երկարատև պայքարի մեջ:

Վերոգրյալի հիման վրա կարելի է եզրակացնել հետևյալը.

– միջազգային ահաբեկչության հիմնական նպատակն իրականում դրա հանցավոր վերնախավի ծայրահեղ շահադիտական նկրտումներն են, այն է՝ ապրանքների, ներառյալ թմրամիջոցների, հոգեմետ պատրաստույթների, դեղորայքի և դեղորայքային պատրաստույթների ապօրինի շրջանառության, այդ թվում՝ մաքսանենգության ու իրացման շուկաների ապահովման, թրաֆիքինգի, ընդերքի հազվագյուտ հանածոներով և բնական պաշարներով, հատկապես ջրային պաշարներով, հարուստ շրջանների թալանչիական շահագործման, ինչպես նաև անդրսահմանային հանցավոր այլ գործունեության ծավալման համար նոր տարածքների և տարածաշրջանների յուրացումն է՝ զուգորդված ամբողջատիրական կրոնական ծայրահեղականության գաղափարախոսության էքսպանսիայով: Ահաբեկչական կազմակերպությունների ղեկավարների և նրանց հովանավորների նյութապաշտությունը, պատվամոլությունը և աշխարհակալ իշխանության անզուսպ ձգտումը, քողարկված տարբեր գաղափարախոսական հիմնավորումներով (Բարձրյալի կամքի «ճիշտ» իրա-

գործում և այլն), անխուսափելիորեն բերում են միջազգային ահաբեկչության աճի,

– միջազգային ահաբեկչության դրսևորման բոլոր ձևերին հակադրվելու, այն զսպելու, ինչպես նաև արմատախիլ անելու նպատակով ռազմավարության մշակումն արդյունավետ չի լինի, եթե անտեսվեն այդ հանցավոր գործունեության գաղափարախոսական, սոցիալ-մշակութային, կրոնական աշխարհընկալման բոլոր առանձնահատկությունները,

– կրոնական ահաբեկչության հիմնախնդիրը մտացածին է: Անձի կրոնական պատկանելությունը և նրա դավանական ուղղվածությունը զուտ գործիք է առանձին կղերականների ձեռքում, այլ խոսքով՝ գործ ունենք կղերական ահաբեկչության հետ,

– ահաբեկչությունը կարելի է դասակարգել պետականի և էթնիկականի, իսկ վերջինն իր հերթին՝ միջէթնիկականի և ներէթնիկականի:

Հետևություն. ահաբեկչությունն ընդամենը տեխնոլոգիա է միջազգային հանցավոր կազմակերպությունների վերնախավի, այդ թվում՝ կղերականության ձեռքում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Աշխատանքում ցույց են տրված միջազգային ահաբեկչության գլխավոր նպատակը, ահաբեկչական գործունեության ձևերն ու ծնող պատճառները, սուբյեկտներն ու օբյեկտները: Բերված են տարբեր գիտական կարծիքներ սրանց վերաբերյալ, ինչպես նաև փորձ է արվել առաջին հարթության վրա բարձրացնել գաղափարախոսական թեզերը, որոնցով ղեկավարվում և առաջնորդվում են ահաբեկչական կազմակերպությունները՝ օտարատյացություն և կրոնական ծայրահեղականություն:

Ահաբեկչությունն ընդամենը տեխնոլոգիա է միջազգային հանցավոր կազմակերպությունների վերնախավի, այդ թվում՝ կղերականության ձեռքում:

Բանալի բաներ – ահաբեկչություն, օտարատյացություն, ծայրահեղականություն, արմատականություն, կղերականություն, թրաֆիքինգ, անդրասահմանային հանցավորություն, էթնիկական հակամարտություն:

РЕЛИГИОЗНЫЙ ТЕРРОРИЗМ: МИФ ИЛИ РЕАЛЬНОСТЬ?

АШОТ АСЛАНЯН, ГАГИК ХАЧАТРЯН

В настоящей работе представлены главные цели, формы и причины возникновения, а также субъекты и объекты международной террористической деятельности. Приведены различные научные подходы к изучению этих проблем, а также сделана попытка вывести на первый план идеологические концепции, которыми руководствуются международные террористические организации: ксенофобия и религиозный экстремизм.

Анализируя угрожающий рост международного терроризма, приходим к выводу, что в его основе лежит агрессивная политика безудержной наживы, ксенофобии и религиозного экстремизма. Терроризм – технология в руках лидеров международных преступных организаций, в том числе и религиозной верхушки.

Ключевые слова – терроризм, ксенофобия, экстремизм, фундаментализм, клерикализм, траффикинг, трансграничная преступность, этнические конфликты.

RELIGIOUS TERRORISM: MYTH OR REALITY?

ASHOT ASLANYAN, GAGIK KHACHATRYAN

This paper is concerned with presenting the main objective of international terrorism and the forms, causes, subjects and objects of terrorist activities. Different scientific approaches to study this problem are featured in this article. An attempt is also made to bring to the fore the ideological concepts, which induce and guide these international terrorist organizations: xenophobia and religious extremism.

Terrorism is nothing but a technology in the hands of the leaders of international criminal organizations and religious leaders as well.

Key words – terrorism, xenophobia, extremism, fundamentality, clericalism, trafficking, transborder criminality, ethnic conflicts.

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

ՍՏԵՓԱՆ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ

Ի՞նչ է քաղաքական մշակույթը, ո՞րն է նրա սոցիալական էությունը: Քաղաքական մշակույթի գործառնության ոլորտը հասարակության քաղաքական կյանքն է, որն ընդգրկում է այն բոլոր հասարակական հարաբերությունները, գործունեության տեսակները, որոնք կապված են իշխանության և կառավարման իրականացման հետ:

Ընդգրկելով քաղաքական կյանքի բոլոր ոլորտները՝ քաղաքական մշակույթը ներառում է քաղաքական գիտակցության մշակույթը, տարբեր սոցիալական խմբերի և առանձին անհատների քաղաքական վարքագծի մշակույթը, որոշակի համակարգում գոյություն ունեցող քաղաքական ինստիտուտների և կազմակերպությունների գործառնության մշակույթը:

Անշուշտ, պետք է նշել, որ քաղաքական կյանքում հանդիպող, դրսևորվող բոլոր համոզմունքները, պատկերացումները և վարքագծի ձևերը չէ որ քաղաքական մշակույթի տարրեր են: Քաղաքական մշակույթն ընդգրկում է գիտակցության և վարքագծի այնպիսի դրսևորումներ, որոնք ամրակայում են քաղաքական գործընթացի տարրերի միջև կրկնվող և կայուն կապերը:

Առանձին անհատի, այս կամ այն սոցիալական խմբի, առավել լայն իմաստով հասարակության քաղաքական մշակույթը բնութագրելու համար հարկ է վերլուծել նրանց քաղաքական վարքագիծն ընտրություններում, հանրաքվեներում, հասարակական կարծիքի հարցումներում, վերաբերմունքը քաղաքական ինստիտուտների նկատմամբ, քաղաքական գիտելիքները, քաղաքական փորձը, քաղաքական արժեքային կողմնորոշումները, քաղաքական վարքագծի ձևավորված տիպերին հետևելու պատրաստակամությունը և այլն:

Քաղաքական մշակույթը մարդկային հասարակության ընդհանուր մշակույթի համընդհանուր ճանաչում գտած այն ոլորտն է, որն անմիջականորեն կապված է քաղաքականության, մարդկանց քաղաքական գործունեության, վարքագծի և գիտակցության հետ:

Քաղաքական մշակույթ հասկացության ներքո հիմնականում հասկանում են ազգային կամ վերազգային հանրույթի պատմական և սոցիալական

փորձը, որն ազդում է փոքր և մեծ խմբերի, անհատների քաղաքական կողմնորոշումների, քաղաքական վարքագծի ձևավորման վրա:

«Քաղաքական մշակույթ» հասկացության մեջ «մշակույթ» եզրի առկայությունն արդեն իսկ վկայում է այն մասին, որ «քաղաքական մշակույթ» հասկացությունը որոշակի կապ ունի «մշակույթ» հասկացության հետ:

Քաղաքական մշակույթը՝ որպես հասարակական երևույթ, գտնվում է քաղաքականության և մշակույթի հատման կետում: Որպեսզի հասկանանք «քաղաքական մշակույթ» հասկացության իմաստն ու բովանդակությունը, նախ անհրաժեշտ է պարզել, թե ինչ ենք հասկանում «մշակույթ» ասելով:

Գրականության մեջ կան բազմաթիվ սահմանումներ «մշակույթ» հասկացության վերաբերյալ, սակայն դրանցից և ոչ մեկը չի ընդունվում որպես միակ ճշգրիտն ու ընդունելին: Նկատի ունենալով տվյալ փաստը և հետամուտ չլինելով այդ սահմանումների ներկայացմանն այստեղ, ինչպես նաև ընդհանրացնելով տվյալ հասկացության վերաբերյալ հիմնական սահմանումները՝ հարկ ենք համարում նշել, որ մշակույթ ասելով մենք նկատի ունենք այն բոլոր արժեքները, որոնք մարդկային հասարակությունն իր գոյության ողջ ընթացքում ստեղծել ու ժառանգել է սերունդներին նյութական և հոգևոր արժեքների, բարոյական և իրավական նորմերի, սովորույթների ու ավանդույթների ձևով:

Քաղաքական մշակույթը մարդկային հասարակության կողմից ստեղծված արժեքների այն մասն է, որը վերաբերում է հասարակական կյանքի կազմակերպմանն ու կառավարմանը, պետության ու նրա կառույցների ձևավորմանն ու կայացմանը, իշխանության ձևավորման և իրականացման ձևերին ու եղանակներին, քաղաքական համակարգերի բնույթին ու գործառույթներին, քաղաքական կազմակերպությունների, պետության և իշխանությունների փոխհարաբերություններին, քաղաքական գործընթացներին և նրա մասնակիցներին, քաղաքական տարբերությունների փոխհարաբերություններին ու գործունեության սկզբունքներին¹:

Մասնագիտական գրականության մեջ հիշյալ հասկացության վերաբերյալ չկա մեկ միասնական, ընդունված մոտեցում: Այդ է պատճառը, որ այսօր քաղաքական մշակույթի վերաբերյալ հաշվվում է մոտավորապես քառասուն սահմանում՝ տրված տարբեր սերունդների մասնագետների կողմից:

«Քաղաքական մշակույթ» հասկացությունն առաջին անգամ օգտագործել է XVIII դարի գերմանացի փիլիսոփա Յոհան Հերդերը:

¹ Պետրոսյան Ռ., Քաղաքագիտություն, Երևան, 2004, էջ 390:

1784թ. հրապարակված «Մտքեր մարդկության պատմության փիլիսոփայության մասին» աշխատության մեջ, խոսելով հին հույների բարոյական և պետական իմաստության մասին, Յ. Հերդերը մասնավորապես գրել է. «...հին հույն իմաստունների մեծամասնությունը զբաղեցնում էր հանրային պաշտոններ՝ որպես ժողովրդական առաջնորդներ, թագավորների խորհրդականներ, զորահրամանատարներ, քանզի նման նշանավոր մարդկանցից, արիստոկրատներից կարող էր միայն սկիզբ առնել քաղաքական մշակույթը և գործուն կերպով ազդել ստորին խավի մարդկանց վրա»²:

Հրապարակվելուց մոտավորապես 170 տարի անց՝ XX դարի 50-ական թվականների վերջին՝ 60-ական թվականների սկզբին, ամերիկյան քաղաքագիտական մտքի շրջանակներում ձևավորվել և գիտական շրջանառության մեջ է դրվել «քաղաքական մշակույթ» հասկացությունը նկարագրող տեսությունը:

1956թ. ամերիկյան քաղաքագետ Գաբրիել Ալմոնդը հրատարակում է «Համեմատական քաղաքական համակարգեր» վերնագրով մի մեծածավալ հոդված, որտեղ տալիս է քաղաքական մշակույթի սահմանումը. «Ամեն մի քաղաքական համակարգ ընդգրկվում է քաղաքական գործողությունների նկատմամբ կողմնորոշման կոնկրետ մոդելի մեջ: Ես օգտակար եմ համարել անվանել այն քաղաքական մշակույթ»³:

Ինչպես տեսնում ենք սահմանումից, հասարակության քաղաքական մշակույթն անմիջականորեն կապվում է քաղաքական համակարգի գործառնության հետ: Ավելի ուշ՝ 1963թ., Գ. Ալմոնդը զարգացնում և հստակեցնում է իր միտքը ամերիկյան քաղաքագետ Սիդնեյ Վերբայի հետ համատեղ հրատարակած «Քաղաքացիական մշակույթ» աշխատության մեջ:

Խոսելով «քաղաքական մշակույթ» հասկացության մասին՝ հեղինակները մասնավորապես գրել են. «Երբ մենք խոսում ենք հասարակության քաղաքական մշակույթի մասին, մենք նկատի ենք ունենում քաղաքական համակարգը, որն արտացոլված է նրա անդամների գիտելիքներում, զգացմունքներում և գնահատականներում»⁴:

² Гердер И., Идеи к философии истории человечества, перевод и примечания А. Михайлова, Москва, 1977, с. 368.

³ Almond G., Comparative Political System, "The Journal of Politics", Vol. 18, No. 3, (Aug., 1956), p. 396.

⁴ Almond G., Verba S., The Civic Culture, Political Attitudes and Democracy in Five Nations, California, 1989, p. 13.

Չնայած իր թերություններին՝ Ալմոնդի տեսությունը՝ որպես քաղաքական մշակույթի վերաբերյալ առաջին հայեցակարգ, ստացել է բավականին լայն տարածում և զարգացում մասնագիտական գրականության մեջ, ինչպես իր, այնպես էլ իր հետևորդների, մասնավորապես Ս. Վերբայի, Լ. Փայի, Ս. Հանթինգթոնի և ուրիշների աշխատություններում:

Փորձելով զարգացնել և առավել հստակեցնել «քաղաքական մշակույթ» հասկացությունը՝ Լ. Փայը տվել է քաղաքական մշակույթի հետևյալ սահմանումը. «...քաղաքական մշակույթը դիրքորոշումների, համոզմունքների և զգացմունքների համադրություն է, որը քաղաքական գործընթացին տալիս է կարգ ու նշանակություն և որն իրենից ներկայացնում է վարքագծի ու քաղաքական համակարգի ղեկավարման հիմնարար սկզբունքներ և կանոններ: Այն ներառում է ինչպես քաղաքական իդեալներ, այնպես էլ կառավարման գործող նորմեր: Դրանով իսկ քաղաքական մշակույթը քաղաքականության հոգեբանական և սուբյեկտիվ չափումներն է ագրեգացված ձևով»⁵:

Քաղաքական մշակույթի վերաբերյալ ուշադրության է արժանի ամերիկյան քաղաքագետ և պատմաբան Ռոբերտ Թաքերի տեսությունը: Նրա կարծիքով քաղաքական համակարգի գործունեությունն անմիջականորեն կախված է քաղաքական մշակույթից:

Ահա թե ինչպես է բնութագրել Ռ. Թաքերը քաղաքական մշակույթը. «Քաղաքական մշակույթը, քաղաքականությունը՝ որպես մշակույթի ձև, և քաղաքականությունը՝ որպես հասարակության ընդհանուր մշակույթի հետ առնչվող գործունեություն, կարող են դիտարկվել որպես ուսումնասիրության գլխավոր առարկա: Քաղաքական մշակույթը՝ որպես քաղաքական համակարգի բաղադրիչ, դիտարկելու փոխարեն մենք կարող ենք հասարակության քաղաքական համակարգը դիտարկել մշակութային ասպեկտով, այսինքն՝ որպես իրական և իդեալական մշակութային նմուշների ընդհանրություն, որը ներառում է քաղաքական դերերը և նրանց փոխհարաբերությունները, քաղաքական կառույցները և այլն»⁶:

⁵ The Influence of Member Values on Regime Maintenance, Boston, 1972; International Encyclopedia of Social Sciences, V. 12, p. 218 (մեջբերումն ըստ Յ. Բատալով, Политическая культура современного американского общества, Москва, 1990, с. 14-15).

⁶ Tucker R., Culture, Political Culture and Communist Society//Political Science Quarterly, Vol. 88, 2 (June 1973), p. 182 (մեջբերումն ըստ՝ Յ. Բատալով, էջվ. աշխ., էջ 16).

Համաձայն քաղաքագիտության բառարանային սահմանման՝ քաղաքական մշակույթը քաղաքական որևէ համակարգի գործունեության հիմքում ընկած մոտեցումների, տեսակետների ու արժեքների ամբողջությունն է⁷:

Մեկ այլ սահմանմամբ էլ քաղաքական մշակույթը բնորոշվում է որպես վարքագծի, արժեքների, դիրքորոշումների ամբողջություն, որը վերաբերում է իշխանության և քաղաքացիների միջև փոխադարձ հարաբերություններին⁸:

Այս սահմանմամբ էլ առաջնային են համարվում իշխանության և քաղաքացիների փոխհարաբերությունները:

Համաձայն մի ուրիշ սահմանման. «Քաղաքական կուլտուրան կարելի է սահմանել որպես սիմվոլիկ համակարգ, որն ընդգրկում է քաղաքական ավանդույթներ, քաղաքական նորմեր և արժեքներ, քաղաքական գաղափարներ և ապագայի ծրագրեր»⁹:

Ինչպես երևում է սահմանումից, այն ընդգրկում է երեք ժամանակաշրջան՝ անցյալը, որն ամրագրված է քաղաքական ավանդույթներում, ներկան, որն արտահայտված է տվյալ ժամանակի քաղաքականության սուբյեկտների վարքի և նորմերի մեջ, և ապագան, որն ամփոփում է ապագայի նպատակներ:

Մեր կողմից քննվող հասկացությունն առավել համապարփակ և համակողմանի ուսումնասիրել է քաղաքական փիլիսոփայության ականավոր մասնագետ, քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Բատալովը:

«Ժամանակակից ամերիկյան հասարակության քաղաքական մշակույթը» մենագրության մեջ նա հանգամանորեն վերլուծության է ենթարկում «քաղաքական մշակույթ» հասկացությունը:

Է. Բատալովը կարծում է, որ եթե մշակույթը հասարակական ինքնավերարտադրության միջոց է, ապա քաղաքական մշակույթը՝ որպես մշակույթի արտահայտություն քաղաքականության ոլորտում, հասարակության քաղաքական կյանքի ինքնավերարտադրության միջոց է¹⁰:

⁷ Քաղաքագիտության և քաղաքականության Օքսֆորդի բացատրական բառարան, խմբագիր՝ Մակլին Ա., Երևան, 2003, էջ 407:

⁸ Ball A. and Peters G., Modern politics and government, seventh edition, New York, 2005, p. 65; В. Мальцев, Основы политологии, Москва, 1998, с. 363 (մեջբերումն ըստ՝ Քաղաքագիտություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2006, էջ 448):

⁹ Панарин А. Политология, Москва, 1997, с. 224.

¹⁰ Баталов Э. նշվ. աշխ., էջ 20-21:

Ամբողջացնելով իր միտքը՝ նա առաջարկում է «քաղաքական մշակույթ» հասկացության հետևյալ ընդարձակ սահմանումը. «Քաղաքական մշակույթը պատմականորեն ձևավորված, հարաբերականորեն կայուն, անցյալ սերունդների փորձը մարմնավորող, դիրքորոշումների, համոզմունքների, պատկերացումների, վարքագծի մոդելների համակարգ է: Այն արտացոլվում է քաղաքական գործընթացի սուբյեկտների անմիջական գործունեության մեջ՝ ամրագրելով նրանց առնչությունների սկզբունքներն ինչպես այդ ամբողջական գործընթացի, այնպես էլ նրա առանձին տարրերի, քաղաքական համակարգի նկատմամբ, որի շրջանակներում ընթանում է այդ գործընթացը, և դրանով իսկ ապահովվում է հասարակության քաղաքական կյանքի վերարտադրությունը՝ իրավահաջորդության հիմքի վրա:

Այս սահմանման էությունը կարելի է առավել համառոտ ձևակերպել հետևյալ կերպ. քաղաքական մշակույթը՝ որպես ընդհանրական հասկացություն, բնութագրում է սոցիալական սուբյեկտների՝ ազգերի, դասերի, խմբերի, անհատների գոյության ձևը՝ որպես քաղաքական գործընթացների սուբյեկտներ»¹¹:

Ինչպես երևում է սահմանումից, այստեղ քաղաքական մշակույթը բնորոշվում է որպես նախորդ սերունդների փորձ, որն ամրագրված է տվյալ ժամանակի քաղաքական գործընթացների սուբյեկտների՝ անհատի, սոցիալական խմբի, ազգի, հասարակության դիրքորոշումներում, համոզմունքներում, վարքագծում և արտահայտվում է նրանց անմիջական գործունեության մեջ:

Ուսումնասիրելով քաղաքական մշակույթի վերաբերյալ բազմաթիվ սահմանումներ, որոնք բացահայտում են հիշյալ հասկացության էությունը, կարելի է ասել, որ հիմնական վեճը տարբեր հեղինակների միջև ընթանում է հիմնախնդրի այս կամ այն կողմի վերաբերյալ:

Քաղաքական մշակույթի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա բազմաթիվ սահմանումները, որոնք լրացնում են մեկը մյուսին այս կամ այն չափով, գրեթե բոլորն էլ ընդունվում են համաշխարհային քաղաքական գիտության կողմից:

Քաղաքագիտական գրականության մեջ քաղաքական մշակույթի վերաբերյալ գոյություն ունեցող սահմանումները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբում կարելի է ընդգրկել հիմնականում այն սահմանումները, որոնք կենտրոնանում են անհատների քաղաքական

¹¹ Նույն տեղում, էջ 25:

վարքագծի, կողմնորոշումների վրա, իսկ երկրորդ խմբին պատկանում են այն սահմանումները, որտեղ քաղաքական մշակույթը ներկայացվում է որպես հասարակության ընդհանուր մշակույթի առանձին տարր, որը կապված է քաղաքականության հետ:

Քաղաքական մշակույթն արժեքների և համապատասխան համոզմունքների ամբողջական համակարգ է, որը սնուցում է անհատների, սոցիալական խմբերի քաղաքական գործունեությունը որևէ որոշակի հասարակության մեջ:

Քաղաքական մշակույթի ֆենոմեններն են ազգային բնավորությունը, ձևավորված կարծրատիպերը, առասպելները, կենսաբանական և աշխարհագրական գործոնները: Քաղաքական մշակույթը քաղաքական կյանքի տարբեր ասպեկտների վերաբերյալ պատմականորեն ձևավորված պատկերացումների ամբողջություն է, որի մեջ մտնում են արժեքները, նորմերը, քաղաքական ինստիտուտները, անհատների և հասարակական խմբերի քաղաքական գործողությունների միջոցները:

Այստեղից հետևում է, որ քաղաքական մշակույթը պատմական որոշակի համակարգում քաղաքական հարաբերությունների և քաղաքական գործունեության ընթացքում սոցիալական սուբյեկտի, այն է՝ անհատի, խմբի, հասարակության քաղաքական գիտելիքների, արժեքային կողմնորոշումների և վարքագծի ձևերի իրականացում է:

Այն ներառում է հասարակության, սոցիալական խմբերի, անհատների սովորույթներում և օրենքներում ամրագրված քաղաքական իշխանության և քաղաքական հարաբերությունների վերաբերյալ նրանց պատկերացումների մակարդակը, հասարակական կյանքի տարբեր երևույթները գնահատելու և նրանում քաղաքական դիրք գրավելու նրանց ունակությունը, որը կարտահայտվի որոշակի սոցիալական գործողություններում:

Քաղաքական մշակույթը՝ որպես հոգևոր մշակույթի մաս, ներառում է տարրեր, որոնք կապված են հասարակական-քաղաքական ինստիտուտների և քաղաքական գործընթացների հետ: Այն ազդեցություն է ունենում քաղաքական հաստատությունների ձևերի, գործառնության և զարգացման վրա, ուղղություն է տալիս քաղաքական գործընթացին, պայմանավորում է բնակչության լայն շերտերի քաղաքական վարքագիծը:

Նրանում միասնաբար ներառված են պաշտոնապես հասարակության մեջ ընդունված քաղաքական սկզբունքները, նորմերը, կանոնները և ոչ պաշտոնական միտումները, ավանդույթները, որոնք մեծ չափով սահմանում են, օրինակ, ընտրագանգվածի քաղաքական վարքագիծը:

Քաղաքական մշակույթը պարունակում է նաև ներկա և անցյալ, ազգային և տարածաշրջանային, անհատական և խմբային հասարակական-քաղաքական փորձ, որը որոշիչ նշանակություն ունի քաղաքական մշակույթի սուբյեկտների քաղաքական վարքագծի համար: Այս իմաստով քաղաքական մշակույթը քաղաքական փորձի միասնական ցուցիչ է, քաղաքական գիտելիքների և զգացումների մակարդակ, քաղաքական սուբյեկտների վարքագծի և գործառնության տեսակ, հասարակության, ազգի, սոցիալական խմբի, անհատի կյանքի քաղաքական պատկերի բնութագիր:

Յուրաքանչյուր երկրի յուրաքանչյուր քաղաքացի, ով մասնակցում է հասարակության քաղաքական կյանքին, ընդունում և փոխանցում է քաղաքական տեղեկատվություն, պաշտպանում կամ քննադատում է այս կամ այն քաղաքական որոշումը, մասնակցում է այն հասարակության քաղաքական մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը, որին ինքը պատկանում է:

Քաղաքական մշակույթի առանձնահատկությունն այն է, որ ոչ թե կազմում է քաղաքականությունը կամ քաղաքական գործընթացը, այլ դրանց ըմբռնումն ու մեկնաբանումը: Քաղաքականության ոլորտում նշանակություն են ձեռք բերում ոչ միայն պետության կողմից ձեռնարկված իրական գործողությունները և միջոցները, այլ նաև այն, թե ինչպես են դրանք գնահատում և ընդունում մարդիկ: Քաղաքական մշակույթը կարելի է ուսումնասիրել նաև որպես սոցիալական հարաբերությունների, մշակույթային նորմերի, կարծրատիպերի և քաղաքական գործընթացների միջնորդ:

Ցանկացած հասարակության քաղաքական մշակույթին բնորոշ է իր առանձնահատկությունները, որոնք արտացոլում են միայն տվյալ հասարակությանը ներհատուկ նորմերը, արժեքները, կարծրատիպերը, քաղաքական մասնակցության ձևերը և իշխանական հարաբերությունները:

Քաղաքական մշակույթի վրա իրենց հետքն են թողնում պատմական պայմանները և ազգային ավանդույթները, աշխարհայացքային պատկերացումները, կրոնական հայացքները և այլն: Այստեղ նաև էական դեր են խաղում հիմնականում հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը, քաղաքական ռեժիմը, կրթական մակարդակը և բնակչության իրավական մշակույթը:

Հիմնվելով վերոհիշյալ սահմանումների և վերլուծության վրա՝ մենք փորձել ենք տալ քաղաքական մշակույթի հետևյալ սահմանումը. քաղաքական մշակույթը որևէ որոշակի երկրի բնորոշ քաղաքական կյանքի՝ նախորդ սերունդների կողմից ստեղծված հասարակության կազմակերպմանն ու

կառավարմանն առնչվող քաղաքական արժեքների, նորմերի, հայացքների, վարքի ձևերի մշտապես փոփոխվող համակարգ է, որն ամրագրված է տվյալ ժամանակի քաղաքականության սուբյեկտների՝ անհատի, սոցիալական խմբի և առավել լայն իմաստով ազգի, հասարակության դիրքորոշումներում, համոզմունքներում, պատկերացումներում, վարքի ձևերում, արտահայտվում է նրանց անմիջական քաղաքական գործունեության մեջ, հարստացվում է նրանց կողմից ժամանակի քաղաքական կյանքում ընդունված քաղաքական նոր արժեքներով, նորմերով, հայացքներով, վարքի ձևերով և փոխանցվում հասարակության քաղաքական կյանքի հաջորդ սերնդին:

Առաջարկելով նման սահմանում՝ մենք նկատի ունենք, որ քաղաքական մշակույթը քաղաքական սուբյեկտների, այն է՝ անհատի, սոցիալական խմբերի, հասարակության, ազգի քաղաքական վարքագծի տիպերի, արժեքային կողմնորոշումների, գիտելիքների իրացման միջոցների ամբողջական համակարգ է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում խոսվում է «Քաղաքական մշակույթ» հասկացության մասին: Հիմնվելով քաղաքական մշակույթի վերաբերյալ տեղական և օտարերկրյա տարբեր սերունդների հետազոտողների կողմից տրված սահմանումների և վերլուծության վրա՝ փորձ է արվել տալ քաղաքական մշակույթի նոր, հնարավորինս համակողմանի և համընդգրկուն սահմանում: Տվյալ սահմանմամբ քաղաքական մշակույթը դիտարկվել է որպես քաղաքական սուբյեկտների, այն է՝ անհատի, սոցիալական խմբերի, հասարակության, ազգի քաղաքական վարքագծի տիպերի, արժեքային կողմնորոշումների, գիտելիքների իրացման միջոցների ամբողջական համակարգ:

Քանալի բառեր – քաղաքական մշակույթ, քաղաքական կյանք, քաղաքական վարքագիծ, քաղաքական համակարգ, քաղաքական արժեքներ, քաղաքական նորմեր:

ПОНЯТИЕ ПОЛИТИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ И ЕЕ ОСНОВНЫЕ ОПРЕДЕЛЕНИЯ

СТЕПАН АСАН-ДЖАЛАЛЯН

В статье обсуждается понятие политической культуры. Основываясь на анализе и определениях, данных разными поколениями отечественных и иностранных исследователей, сделана попытка дать новое, по возможности более всестороннее и всеобъемлющее определение политической культуры.

Этим определением политическая культура рассматривается как целостная система средств реализации знаний, ценностных ориентаций и типов политического поведения нации политическими субъектами, как то: индивидом, социальными группами, обществом.

Ключевые слова – политическая культура, политическая жизнь, политическое поведение, политическая система, политические ценности, политические нормы.

THE CONCEPT OF POLITICAL CULTURE AND ITS BASIC DEFINITIONS

STEPAN HASAN-JALALYAN

The concept of political culture is considered in this article. Based on the definitions of native and foreign investigators of different generations and analysis, an attempt is made to define political culture as much as possible in a new, all-inclusive and universal way. According to this definition, political culture is regarded as the entire system of knowledge implementation ways and of orientation to values of political subjects, that is of individuals, social groups, society and of political behavior types of the nation.

Key words – political culture, political life, political behavior, political system, political values, political norms.

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԴԻՍԵՎՈՐՄԱՆ ՕՐԻՆԱԶՄՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԱՅԱՆԵ ԱՄԻՐՅԱՆ

Հասարակությունը տնտեսական, սոցիալական, քաղաքական և հոգևոր համակարգերից կազմված մի բարդ համակարգ է, որտեղ հոգևոր համակարգն ունի առանձնահատուկ նշանակություն, քանի որ արտահայտում է հասարակության բանական և հոգևոր զարգացման մակարդակը, հասարակական գիտակցության և հոգևոր մշակույթի ոլորտներում մարդկության կողմից մշակված գիտական ու գեղագիտական արժեքները: Ի տարբերություն հասարակության տնտեսական, սոցիալական, քաղաքական, իրավական համակարգերի, որոնք սերտ կապի և փոխազդեցության մեջ են, հոգևոր համակարգը համեմատաբար անկախ է. մյուս համակարգերի հետ կապված է ոչ թե անմիջականորեն, այլ միջնորդավորված, անուղղակի: Չնայած դրան՝ հոգևոր կյանքը, լինելով հարուստ և բազմազան, արտացոլում է հասարակական կյանքի բոլոր երևույթները, այդ թվում նաև տնտեսական, քաղաքական, իրավական և սոցիալական համակարգերի առանձնահատկությունները: Բալզակի ստեղծագործությունները կարդալիս մենք իմանում ենք ֆրանսիական հասարակության պատմությունը, տնտեսակարգը, սոցիալական հարաբերությունները, քաղաքական իրավիճակը, քաղաքական խարդավանքները, իրական օրենքները, փիլիսոփայական հայացքները, մարդկանց բարոյական ըմբռնումներն ու հոգեբանությունը: Պատահական չէ, որ Էնգելսն ասում էր, որ Բալզակ կարդալով նա ավելի շատ է տնտեսագիտություն սովորել, քան համալսարանում ուսանելիս: Այս տեսակետից աշխարհայացքային և իմացաբանական կարևոր նշանակություն ունի հասարակության հոգևոր համակարգի փիլիսոփայական վերլուծությունը: Հասարակության հոգևոր կյանքը բարդ է, ունի տարբեր կողմեր, կառուցվածքային շերտեր ու մակարդակներ, դրսևորման բազմազան ձևեր, որոնք սերտ կապի և միասնության մեջ են: Հասարակության հոգևոր կյանք հասկացությունն իր բնույթով և բովանդակությամբ հարուստ է, որը բնութագրելու ու հասկանալու համար այն անհրաժեշտ է ուսումնասիրել և սահմանել լայն և նեղ իմաստներով: Լայն իմաստով հոգևոր

կյանքը հասարակական տեսությունների, հայացքների, գաղափարների, գիտության, հոգևոր մշակույթի, փիլիսոփայության, գրականության, արվեստի, կրոնի, ինչպես նաև տնտեսական, սոցիալական, քաղաքական, իրավական և բարոյական պատկերացումների արտացոլման ամբողջությունն է: Լայն իմաստով հասարակության հոգևոր կյանքը հասարակության վերաբերյալ բոլոր տեսությունների, հայացքների, աշխարհայացքային ու գաղափարական իդեալների հանրագումար է, համակցությունն այն ամենի, ինչն արտացոլվում է ինչպես ամբողջ հասարակության, այնպես էլ նրա առանձին անդամների կողմից: Լայն տեսանկյունից քննարկելիս հասարակության հոգևոր կյանքը ներառում է ոչ միայն սոցիալական իրականության արտացոլման առանձնահատուկ ձևեր, այլև ազգերի, դասակարգերի, մարդկային մեծ ու փոքր խմբերի սոցիալական հոգեբանությունը, հոգեբանական դիրքորոշումը, հասարակական կարծիքն ու մտատրամադրվածությունը: Լայն առումով հոգևոր կյանքն արտացոլում է ինչպես հասարակական կեցությունը, կյանքի իրական, օբյեկտիվ պայմանները, այնպես էլ բնությունը, Տիեզերքը, բնության ու Տիեզերքի հանդեպ մարդկանց ունեցած հայացքները, ինչպես նաև մարդկանց հոգևոր գործունեությունը, հոգևոր պահանջմունքներն ու հոգևոր հարաբերությունները:

Նեղ իմաստով հասարակության հոգևոր կյանքը սահմանվում է որպես հասարակության նյութական կյանքի արտացոլում¹: Նշված իմաստով հոգևոր կյանք ասելով՝ նկատի ունենք հասարակական կեցությունն արտացոլող հասարակական տեսությունը, հասարակական գիտակցության ձևերը: Նեղ առումով հոգևոր կյանք հասկացությունը նույնանում է հասարակական գիտակցություն հասկացության հետ: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ հոգևոր կյանք հասկացությունն իր ծավալով և բովանդակությամբ ավելի լայն է, քան հասարակական գիտակցություն հասկացությունը, որը հոգևոր կյանքի մի մասն է: Հետևաբար, հոգևոր կյանքը չի կարելի հանգեցնել նրա այս կամ այն դրսևորումներին, մասերին և տարրերին: Մյուս կողմից՝ անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ հարցի պատմափիլիսոփայական վերլուծությունը պահանջում է հոգևոր կյանքի համակողմանի վերլուծություն հասարակական գիտակցության կառուցվածքային տարբեր մակարդակների, հասարակական գիտակցության զանազան ձևերի ու դրսևորումների բազմակողմանի ուսումնասիրության, հարցի իմացաբանական և սոցիոլոգիական տեսությունների

¹ Վորոնցով Ա., Բանականության սիմֆոնիա, Երրևան, 1981, էջ 405-410:

համադրում: Հասարակության հոգևոր կյանքի վերլուծությունը բարդ է այնքանով, որ, ի տարբերություն նյութական օբյեկտների, դժվար է բաժանել մասերի, տարրերի և ուսումնասիրել մեկուսի, անկախ վիճակում: Հոգևոր կյանքի յուրաքանչյուր կառուցվածքային մաս, տարր օրգանական կապի մեջ է մյուս մասերի ու տարրերի հետ, հետևաբար՝ այդ բարդ համակարգի ուսումնասիրությունը պահանջում է մեթոդական ճիշտ մոտեցում, ինչպես Ուլեդովն է գտնում՝ իմացաբանական, սոցիոլոգիական, գոյաբանական, ծագումնաբանական և արժեքային տեսանկյունների համադրում:

Իմացաբանական տեսանկյունից հոգևոր կյանքը քննարկվում է որպես կեցության արտացոլում, որպես իմացության գործընթաց: Սոցիոլոգիական տեսանկյունով ուսումնասիրելիս հոգևոր կյանքը մեկնաբանվում է իր սոցիալական պայմանավորվածությամբ, հասարակական կյանքում իր խաղացած դերով, հասարակության մեջ ունեցած տեղով և կատարած ֆունկցիաներով: Նշված երկու տեսակետները կապված են իրար հետ, լրացնում և խորացնում են հոգևոր կյանքի առանձնահատկությունների վերլուծությունը²: Սոցիոլոգիական տեսանկյունից քննարկվում են հոգևոր համակարգի այնպիսի կողմեր, որոնք անտեսվում են իմացաբանական հայեցակետում: Օրինակ՝ գաղափարախոսությունն իմացաբանական տեսանկյունում ուսումնասիրվում է որպես ճշմարիտ կամ կեղծ հայեցակարգի համակարգ, իսկ սոցիոլոգիական հետազոտության մեջ ստանում է խորը և բազմակողմանի վերլուծություն: Իմացաբանական տեսանկյունով առանձնացնում ենք հոգևոր կյանքի ճանաչողական և արժեքավորման հատկությունները, որոնք հավասարաչափ չեն գործում, այլ պայմաններից կախված՝ մեկը կարող է առաջ անցնել մյուսից, ձեռք բերելով գերակայություն: Գիտական իմացության մեջ իշխում է ճանաչողական կողմը, իսկ գաղափարախոսության ոլորտում՝ գնահատումն ու արժեքավորումը: Արժեքավորումը բնորոշ է նաև բնական գիտություններին, սակայն իրավունքի, քաղաքականության, բարոյագիտության, գեղագիտության և փիլիսոփայության մեջ այն ստանում է գերիշխող նշանակություն: Գեղագիտության բնագավառում ճանաչողական և արժեքավորման ֆունկցիաները սերտ միասնության մեջ են, թեև արվեստում մենք նախ արժեքավորում ենք, հետո միայն ճանաչում³:

² Սարգսյան Ա., Մշակույթի տեսություն, Երևան, 2003, էջ 113:

³ Վարդանյան Թ., Սոցիալական փիլիսոփայության հիմնախնդիրները, Երևան, 2008, էջ 116:

Հասարակության հոգևոր կյանքը կարելի է վերլուծել հասարակական գիտակցության միջոցով, որը, Ա. Ուլեդովի կարծիքով, արտահայտում է հասարակության տվյալ ժամանակաշրջանի ոգին:

Որոշ մտածողներ գտնում են, որ հոգևոր կյանքը հասարակության որոշակի պատմական շրջանի գիտակցության զարգացման վիճակ է: Այս առումով պետք է նշել, որ հասարակական գիտակցությունը հոգևոր կյանքի բաղկացուցիչ մասն է, որը տեսականորեն ընդհանրացնում է հասարակական կյանքի բոլոր կողմերը՝ յուրատեսակ ձևով ինտեգրելով հասարակական կեցության արտացոլման արդյունքը: Հասարակական գիտակցությունը մի կողմից սոցիալական իմացության արդյունքն է, մյուս կողմից՝ հասարակական կյանքի ուսումնասիրության ելակետ, հիմք: Սակայն հասարակական գիտակցությունը հնարավոր չէ վերլուծել՝ ելնելով միայն գիտակցությունից՝ որպես ինքնուրույն սուբստանցիոնալ էությունից, հետևաբար՝ անհրաժեշտ է այն քննարկել՝ կապված հասարակական կեցության հետ: Հասարակական կեցություն հասկացությունն արտահայտում է սոցիալական համակարգի օբյեկտիվ կողմը, իսկ հասարակական գիտակցությունը՝ սուբյեկտիվ կողմը:

Այդ երկու հասարակություններն արտահայտում են հասարակության նյութական և հոգևոր ոլորտների ամբողջությունը, միասնությունն ու հակադրությունը: Բացի այդ, հասարակական կեցությունն ու հոգևոր կյանքը գտնվում են շարժման և փոփոխության մեջ, ընդ որում՝ հասարակական կեցությունն ավելի արագ է փոխվում, քան հոգևոր կյանքը: Կեցության փոփոխման համապատասխան՝ փոփոխության է ենթարկվում նաև գիտակցությունը, չքանում են հին գաղափարները, հայացքներն ու տեսությունները, առաջ են գալիս նոր տեսություններ, գաղափարական նոր ըմբռնումներ, որոնք համապատասխանում են կեցության նոր պահանջներին: Սակայն հասարակական գաղափարներն ու տեսությունները մեծ կենսունակություն ունեն և երկար ժամանակ կարող են պահպանվել իրենց ծնող օբյեկտիվ պայմանների փոփոխումից հետո:

Անհրաժեշտ է նշել այն կարևոր հանգամանքը, որ հասարակության զարգացման հետ մեկտեղ հոգևոր կյանքը ձեռք է բերում հարաբերական ինքնուրույնություն: Հոգևոր կյանքն ունի իր զարգացման և փոփոխման յուրահատուկ օրինաչափությունները, որոնք անմիջականորեն պայմանավորված չեն սոցիալական իրականությամբ: Հասարակության հոգևոր կյանքի հարաբերական ինքնուրույնությունը դրսևորվում է մի շարք օրինաչափություններով:

ա) Հոգևոր կյանքը, հասարակության գիտակցության որոշ ձևեր կարող

են առաջ անցնել հասարակական կեցությունից, կյանքի օբյեկտիվ պայմաններից: Դա պայմանավորված է նրանով, որ հոգևոր կյանքն արտացոլում է ոչ միայն կյանքի օբյեկտիվ, իրական պայմանները, այլև կեցության չլուծված խնդիրները, հարցերը, ինչպես նաև ապագայում գաղափարները, հույսերը, ձգտումներն ու պահանջները: Դա նշանակում է, որ հասարակության հոգևոր կյանքը նյութական կյանքի ոչ թե պարզ, հայելային, միանշանակ արտացոլումն է, այլ բարդ ու բազմազան զուգորդումներով է արտացոլում հասարակական կյանքը և ոչ միայն փոխվում է կեցության համապատասխան, այլև հակադարձ ներգործություն է ունենում սոցիալական իրականության բոլոր կողմերի վրա: Եթե անտեսենք հոգևոր կյանքի հարաբերական ինքնուրույնությունն ու ստեղծագործական բնույթը, ապա կհանգենք գոեիկ սոցիոլոգիզմի, ինչպես Ֆ. Էնգելսն է նշել. «Այդ դեպքում հասարակական կյանքի երևույթների բացատրությունը նման կլինի մեկ անհայտով հավասարում լուծելուն»⁴:

Այս տեսակետից հասարակական կեցությունից հոգևոր կյանքի առաջ անցնելու օրինաչափության բացահայտումն ունի իմացաբանական կարևոր նշանակություն, առանց որի անհնար կլիներ հասկանալ գիտակցության ակտիվությունը, նրա վիթխարի ներուժը, ստեղծագործական բնույթն ու կանխատեսման հատկությունը:

Հոգևոր կյանքի առաջ անցնելու օրինաչափության պարզաբանման լավագույն օրինակ են բնագիտության բնագավառում կատարած գիտական մեծ հայտնագործությունները, ինչպես նաև արվեստի ոլորտում խոշոր արվեստագետների հանճարեղ ստեղծագործությունները: Անհրաժեշտ է նշել, որ հոգևոր կյանքի միայն տեսական մակարդակն է առաջ անցնում կյանքի իրական պայմաններից, իսկ հասարակական գիտակցության առօրյա մակարդակը միշտ հետ է մնում: Որպես կանոն՝ կեցությունից առաջ են անցնում գիտական տեսությունները, փիլիսոփայական հայացքները, քաղաքական գաղափարները, իրավական հայացքները, իսկ հետ են մնում հասարակական հոգեբանությունը, բարոյական ըմբռնումներն ու կրոնական հավատալիքները: Հարցին պատմականորեն մոտենալիս կարող ենք ասել, որ հասարակության պատմական զարգացման ընթացքում բարձրանում է հասարակական գիտակցության դերը, որը ոչ միայն ճանաչում, գնահատում, արժեքավորում է կեցությունը, այլև կանխատեսման շնորհիվ մարդկանց պրակտիկ գործունեության

⁴ Մարքս Կ., Էնգելս Ֆ., Ընտիր երկեր, հ. 2, էջ 630:

միջոցով վերափոխում է սոցիալական իրականությունը: Անհնար է հասարակական կյանքում որևէ արմատական վերափոխություն կատարել առանց հոգևոր հզոր էներգիայի, բնական ու գիտակցական բարձր կարողությունների: Այս տեսակետից հոգևոր կյանքն իր զարգացմամբ նպաստում է հասարակական առաջընթացին:

բ) Հասարակության հոգևոր կյանքի հարաբերական ինքնուրույնության օրինաչափություններից մեկը հասարակական կեցությունից հոգևոր կյանքի հետ մնալն է: Դա բացատրվում է նրանով, որ հոգևոր կյանքի որոշ կողմեր օժտված են կայունությամբ և կենսունակությամբ և կարող են երկար ժամանակ պահպանվել, թեև կեցության մեջ այլևս չունեն օբյեկտիվ պայմաններ: Եթե հասարակության տնտեսական, քաղաքական համակարգերը փոխվում են համեմատաբար արագ, ապա հոգևոր համակարգերի մասին նույնը ասել չենք կարող: Հասարակության մեջ լինում են այնպիսի ժամանակներ, երբ տեսություններն ու գաղափարները երկար ժամանակ իշխում են մարդկանց գիտակցության մեջ, անկախ դրանց առաջացնող հասարակական հանգամանքներից: Օրինակ՝ քրիստոնեական կրոնն առաջացել է ստրկատիրական հասարակարգի քայքայման ժամանակաշրջանում, սակայն պահպանվում է մինչև այսօր՝ XXI դարը: Հոգևոր կյանքի հետ մնալը պայմանավորված է հենց գիտակցության զարգացման առանձնահատկություններով, հասարակական գիտակցության ներքին հակասականությամբ: Անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ հասարակական գիտակցությունը չի կարող ամբողջությամբ արտացոլել, ընդգրկել հասարակական կեցությունն իր բարդ բազմազանության մեջ:

Հետ մնալը բնորոշ է ոչ թե հոգևոր կյանքին ընդհանրապես, այլ նրա միայն առօրյա դրսևորումներին, որոնք տեսական կողմերի համեմատությամբ առավել կայուն են և պահպանողական: Կ. Մարքսը գտնում էր, որ հոգևոր կյանքի հետ մնալը տեղի է ունենում անհավասարաչափ, քանի որ հասարակական գիտակցության այն ձևերը, որոնք մոտ են բազիսին, արագ փոխվում են, քիչ պահպանողական են, իսկ տնտեսական բազիսից հեռու գտնվող ձևերը դանդաղ են փոփոխվում, երկար պահպանվում են իներցիայի ուժով և գործունեության լայն ժամանակահատված են ընդգրկում:

Հոգևոր կյանքի հետ մնալը, ինչ ձևով էլ որ դրսևորվի, արգելակում է հասարակական առաջընթացը:

գ) Հասարակության հոգևոր համակարգի հարաբերական ինքնուրույնության դրսևորման մյուս կարևոր առանձնահատկությունն արտահայտվում է

հասարակական տեսությունների, հայացքների, գաղափարների պատմական ժառանգման օրինաչափությամբ: Վերջինիս փիլիսոփայական վերլուծությունը հնարավորություն է տալիս հասկանալու, որ հասարակության տեսություններն ու գաղափարները, բացի իրենց սոցիալական պայմանավորվածությունից, ունեն նաև նախորդ հասարակական մտքի արժեքավոր գաղափարները ժառանգելու հատկություն: Հետևաբար, պատմական ամեն մի դարաշրջանի հոգևոր կյանքի բնույթը բացատրելիս, պետք է ելնել ինչպես որոշակի պատմական կեցությունից, այնպես էլ նախորդ ժամանակաշրջանի հասարակական մտքի ազդեցությունից: Քանի որ մարդկային գիտակցության կողմից ստեղծված հոգևոր արժեքներն ունեն համամարդկային բնույթ, հետևաբար՝ դրանք կիրառելի են պատմական բոլոր ժամանակաշրջանների համար: Պատմական զարգացման ընթացքում յուրաքանչյուր հասարակարգի հոգևոր կյանքն իր բնույթով ու բովանդակությամբ ավելի բարդ է ու բազմազան, ուստի ամեն մի հաջորդ հասարակարգում պատմական ժառանգման օրինաչափությունը դրսևորվում է ավելի բազմակողմանիորեն: Անշուշտ, հոգևոր տարբեր կողմերում պատմական ժառանգման օրինաչափությունը դրսևորվում է յուրովի, օրինակ՝ կրոնի մեջ այն արտահայտվում է կրոնական քարացած դոգմաների պահպանման ձևով, գիտության և փիլիսոփայության մեջ՝ նախորդ շրջանի գաղափարների ռացիոնալ բովանդակության ժառանգման կամ վերամշակման եղանակով: Այսպես՝ XIX դարի գերմանական դասական փիլիսոփայությունը, ինչպես նաև նույն դարաշրջանի ռուսական գրական, գիտական, փիլիսոփայական մտքի զարգացումը պայմանավորված էին XVIII դարի ֆրանսիական լուսավորիչների և մատերիալիստների առաջադիմական գաղափարների ժառանգման սկզբունքով: Դա նշանակում է, որ գաղափարներն ունեն իրենց զարգացման պատմությունը, հարաբերական ինքնուրույնությունը, հետևաբար՝ յուրաքանչյուր դարաշրջանի հոգևոր կյանքը չի կարելի միանշանակ հանգեցնել լրկ նրա սոցիալական հիմքին, մեկնաբանել միայն որպես որոշակի սոցիալական միջավայրի արտացոլման արդյունք:

դ) Հասարակության հոգևոր համակարգի հիմնական օրինաչափություններից մեկն էլ այն է, որ հոգևոր կյանքի բոլոր կողմերն ու տարրերը փոխադարձ կապի մեջ են և փոխազդում են միմյանց վրա: Հոգևոր կյանքի տարբեր կողմերի փոխազդեցությունը համընդհանուր օրինաչափություն է, որը պայմանավորված է ոչ միայն սոցիալական իրականությամբ, այլև փոխազդող կողմերի յուրահատկությամբ: Հոգևոր համակարգի ամեն մի ձև, ազդելով մյուսի վրա, ինքն էլ կրում է նրա անմիջական կամ միջնորդավորված ազդե-

ցությունը: Օրինակ՝ փիլիսոփայությունն ու քաղաքականությունը, քաղաքականությունն ու իրավունքը, իրավունքն ու բարոյականությունը, բարոյականությունն ու կրոնը, կրոնն ու արվեստը փոխադարձ կապի մեջ են: Արվեստում արտացոլվում են բարոյական, կրոնական, քաղաքական, փիլիսոփայական հայացքները: Փիլիսոփայությունն ամեն մի հասարակարգում տեսականորեն հիմնավորում է քաղաքական հայացքներն ու գաղափարները, ամրապնդում իրավունքը օրենքների և կանոնների միջոցով, պաշտպանում տվյալ քաղաքական կարգը, քաղաքական հայացքներն ու գաղափարները: Հոգևոր կյանքի ոլորտում վճռական դեր ունի քաղաքական գիտակցությունը, որը մյուս ձևերի համեմատ շարժուն է, արագ փոփոխվող, ենթարկվում է ժամանակի ռիթմին, արտահայտում է ինչպես հասարակարգում կատարվող փոփոխությունները, այնպես էլ միջազգային կյանքի դեպքերն ու իրադարձությունները⁵:

Քաղաքական գիտակցությունը թեև չունի տեսական հարուստ բովանդակություն, սակայն ուղղություն է տալիս հոգևոր կյանքի բոլոր ձևերին: Գիտության ու արվեստի զարգացումը, կրթության ու լուսավորության տարածումը, բարոյական ու իրավական նորմերի հաստատումը կատարվում են քաղաքական գաղափարախոսության անմիջական ազդեցությամբ: Կարևոր է ընդգծել այն հանգամանքը, որ քաղաքականությունը որոշակի սոցիալական պատվերներ, խնդիրներ է դնում հասարակական գիտակցության մյուս ձևերի առջև, այդ պատճառով էլ գիտակցության ձևերը ինչքան էլ տարածայն լինեն, այնուամենայնիվ, միավորվում են տվյալ հասարակարգի քաղաքական գաղափարախոսության հիմնավորման հարցում, այլապես կճնշվեն պետության կողմից, չեն ճանաչվի որպես պաշտոնական գաղափարախոսություն, այլև կդիտվեն որպես ընդդիմություն:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հասարակությունը տնտեսական, սոցիալական, քաղաքական և հոգևոր համակարգերից կազմված մի բարդ համակարգ է, որտեղ հոգևոր համակարգն ունի առանձնահատուկ նշանակություն, քանի որ արտահայտում է հասարակության բանական ու հոգևոր զարգացման մակարդակը: Հոգևոր համակարգը համեմատաբար անկախ է. մյուս համակարգերի հետ կապված է միջնորդավորված, անուղղակի: Հասարակության հոգևոր կյանքը հասարակության վերաբերյալ բոլոր տեսությունների, հայացքների, գաղափարական իդեալների հանրագումար է:

⁵ Уледов К.А. Духовное обновление общества, М., 1990, с. 407.

Բանալի բաներ - հասարակություն, համակարգ, հոգևոր կյանք, հոգեբանական դիրքորոշում, հասարակական հոգեբանություն, հասարակական գիտակցություն, պատմական ժառանգություն, քաղաքական հայացքներ, քաղաքական գիտակցություն, գիտություն և արվեստ:

ЗАКОНОМЕРНОСТИ ПРОЯВЛЕНИЯ ДУХОВНОЙ ЖИЗНИ ОБЩЕСТВА

ГАЯНЕ АМИРЯН

Общество представляет собой совокупность экономической, социальной, политической и духовной систем, интегрированных в одну сложную систему. Среди перечисленных особенно важна духовная система, поскольку она отражает уровень умственного и духовного развития социума. Духовная система, будучи связанной с другими системами лишь опосредованно, косвенно, относительно независима. Духовная жизнь общества – воплощение всех касающихся его теорий, взглядов, идеалов и мыслей.

Ключевые слова – общество, система, духовная жизнь, психологическая ориентация, общественная психология, общественное сознание, историческое наследие, политические взгляды, политическое сознание, наука и искусство.

BEHAVIORAL REGULARITIES OF A SOCIETY'S SPIRITUAL LIFE

GAYANE AMIRYAN

Society represents a complex system formed from economic, social, political and spiritual social systems. However, a spiritual system has a specific meaning as it reflects the level of intellectual and spiritual development of a society. A spiritual system is comparatively independent though in an indirect way connected with other systems. The spiritual life of a society is the total sum of all theories, point of views and political ideological thoughts.

Key words – society, system, spiritual life, psychological stance, social psychology, social consciousness, historical inheritance, political views, political consciousness, science and art.

ПРЕОДОЛЕНИЕ ИДЕОЛОГИИ И ПРАКТИКИ КОНСЮМЕРИЗМА В УСЛОВИЯХ ГЛОБАЛИЗАЦИИ

СТАНИСЛАВ БОЙКО, АНИСАТ МАГОМЕДОВА (РОССИЯ)

В последние годы в развитии не только российского, но и мирового сообщества все чаще можно проследить некоторые черты, связанные с желанием все большего количества людей свои основные усилия сосредоточить исключительно на достижении материальных благ, удовлетворении желаний, которые носят в своей основе примитивно вещный аспект, стремлении отказаться от традиционных духовных ценностей и посвятить всего себя погоне за меняющимися с калейдоскопической частотой все новых модных предметов – гаджетов.

Такое состояние социума характеризуется кризисом общественного сознания, когда вместо традиционных нравственных ценностей навязываются внешне довольно привлекательные, но духовно пустые жизненные идеалы и ориентиры, носящие лишь собственнический, материально-вещный характер; активно создается, тиражируется и внедряется в сознание масс (особенно – молодежи) своеобразная система антиценностей, основанная на идеологии безудержного потребления, культе вещиизма, приоритета материально-денежного обеспечения над духовным; распространяется с помощью средств массовой коммуникации образа homo-consumens (человека-потребителя) как высшего достижения человеческой цивилизации, который становится образцом для подражания и для значительной части представителей российского общества.

Консюмеризм (потребительство) применительно к обществу предстает как совокупность регулятивных идей, ожиданий и настроений, ориентирующих социальное поведение, стиль общественной жизни и социальных отношений, где ведущей установкой деятельности людей выступает утилитарно и прагматически обоснованное стремление к демонстративному и престижному потреблению, к получению максимума материальных наслаждений и развлечений.

Идея возможности достижения социального превосходства через потребление порождает в сознании покупателя веру в то, что сам акт покупки

способен доставить большее удовлетворение, нежели собственно продукт, который приобретается. Человеческое счастье ставится в зависимость от уровня потребления, потребление становится целью и смыслом жизни.

Общество потребления оказывает серьезное влияние на все стороны человеческой жизнедеятельности, в значительной мере меняя характер социальных отношений (создавая новые социальные группы), воздействуя на вопросы экономической занятости населения и вообще направленности производства. Оно также вызывает к жизни определенные политические идеологии и формирует весьма влиятельные общественные и государственные структуры, а также довольно активные политические движения. Однако наиболее существенный характер принимает влияние консюмеризма на духовную сферу общества, изменяя моральное сознание людей, моральные отношения между ними и качество их моральных поступков.

Имеется множество точек зрения на то, как усиливающиеся процессы потребления изменят будущее: от полных оптимизма утверждения коммунистических идеалов потребления «от каждого по способности – каждому по потребности» (о реализации этих принципов писал И.А. Ефремов в своём фантастическом произведении «Туманность Андромеды»¹), до самых пессимистических (прогноз Г. Уэллса о разделении людей на две расы – беззаботных изнеженных потребителей и каннибалов – морлоков, живущих под землей и занятых материальным обеспечением одеждой и едой своих жертв, которых они сами потребляют в качестве пищи²).

Несмотря на кажущуюся невероятность подобного исхода, некоторые черты такого разделения, связанные с отношением к человеку как предмету, который, как и всё в обществе потребления, следует бесконечно улучшать, уже можно проследить. Так, футуролог Э. Тоффлер пишет, что довольно скоро «наш дом на Земле испытает на себе воздействие новейших технологий, разбивающих наши представления о сексуальности, материнстве, любви, деторождении и образовании. Моральный и эмоциональный выбор, который нам предстоит в ближайшее десятилетие, поистине может свести с ума»³.

Духовно-нравственные последствия утверждения в мировом социуме

¹ См.: **Ефремов И.А.** Туманность Андромеды. Час Быка, М., 2008.

² **Уэллс Г.** Машина времени, М., 2012, с. 51-70.

³ **Тоффлер Э.** Шок будущего, М., 2001, с. 223.

общества потребления могут быть представлены в различных его сферах: политической, экономической, социальной и духовной. Как писал Ж. Бодрийяр, в обществе потребления «жизненные ориентации становятся более открытыми и подвижными. Предметы потребления находятся практически во всех сферах общественной жизни, что позволяет говорить об идентификации через потребление. Стиль потребления выстраивает социальную дифференциацию и стратификационную модель общества. Увеличивается подвижность индивидуальных ценностных систем: индивид получает возможность изменять свой социальный статус, пересматривать усвоенные представления, совершенствовать ценностные приоритеты⁴.

Следует провести социально-философский анализ на предмет влияния консюмеризма на каждую из общественных сфер.

В *социальной сфере* общество потребления влияет на социальную стратификацию и мобильность. По мнению Д.Дж. Бурстина, общество потребления характеризуют более многочисленные и открытые содружества потребителей. Как никогда раньше, люди стали пользоваться похожими вещами одних и тех же марок. Место братства по ремеслу заняла демократия звонкой монеты. Теперь людей объединял не столько характер убеждений, сколько тип потребления. Эти сообщества потребления возникали быстро, не зависели от идеологии, были демократичными, общедоступными, аморфными и непостоянными. Существующие сообщества потребления порождали все новые и новые. Границы их были условны и размыты; легко появляясь, они так же легко исчезали⁵.

«Власть потребления» является следствием развитой рыночной экономики, основной проблемой которой является поиск новых рынков сбыта. Поскольку их число объективно ограничено, единственным решением проблемы становится качественное изменение потребителя – формирование у него новых потребностей. В систему включаются психологические, культурные средства, всячески вынуждающие людей почувствовать необходимость в определенных вещах.

Существенно изменяются направления процессов социализации людей: социальные связи, формируемые взаимным развитием человека и общества

⁴ Бодрийяр Ж. Общество потребления, М., 2006.

⁵ См.: Бурстин Д.Дж. Сообщества потребления // THESIS, 1993, Вып. 3, с. 231-232.

как взаимозависимых самоцелей, практически подменяются механистическими связями «производство-потребление». «Власть потребления» тяготеет к тотальной коммерциализации. Коммерческая необходимость делает образование поверхностным и броским, упрощает и клиширует культуру, косвенно, но ощутимо, влияет на воспитание и даже на семью и брак, демонстрируя «идеалы» мужчины и женщины.

Можно констатировать, что «власть потребления» существенно ограничивает свободу человека, во-первых, создавая у него иллюзию выбора на рынке, где его выбор фактически предопределен; во-вторых, приравнивая его социализацию к росту его потребительской мобильности; в-третьих, всячески игнорируя и скрывая от человека возможность его принципиально иного бытия и жизнь его рынком ограничивая⁶.

В современном мире потребление становится своего рода пагубной зависимостью, развивается шопоголизм (ониомания)⁷. Для человека, страдающего такой зависимостью, товары по сути теряют свой смысл и значение и становятся лишь знаково-символическим образом принадлежности к социальной группе. Шопоголизм развивается чаще у женщин на почве недостатка внимания, чувства одиночества и внутренней пустоты, потребности в признании и любви, иллюзии власти (покупаются не столько вещи, сколько некие атрибуты власти, в том числе в форме отношения продавцов к покупателю: уважение, услужливое обращение, льстивые похвалы, фирменные пакеты), видимости свободы (покупки снимают депрессию и тревогу, повышает самоуважение и уверенность в себе).

Другое болезненное состояние, также связанное с консюмеризмом, называется клептоманией⁸. Несмотря на то, что ученые пока затрудняются назвать однозначную причину такого рода поведения (их довольно много), ясно одно консюмеризм обостряет жажду обладать вещами любой ценой, иногда и посредством правонарушения. Интересно, то, что большинство

⁶ См.: Сахно Е.Г. Власть потребления и кризис социализации // сб. мат. конф.: Социальный кризис и социальная катастрофа, СПб., 200, с. 169-170.

⁷ Шопоголизм (англ. shop – лавка, магазин) или ониомания (др.-греч. ὄνιος – для продажи и μανία – безумие) – непреодолимое желание что-либо покупать, не обращая внимания на необходимость и последствия.

⁸ Клептомания (др.-греч. κλεπτεῖν – воровать и μανία – мания) – болезненное влечение к краже мелких вещей.

клептоманов не являются бедными людьми, которые не могут позволить себе покупку приглянувшегося товара, а представляют собой иногда даже довольно обеспеченных людей, у которых эта кража является своеобразным приключением. В настоящее время эта страсть проявляется даже у маленьких детей. Идея о возможности достижения социального превосходства через потребление порождает у покупателя особую веру в то, что сама покупка приносит большее удовольствие, нежели сам товар, который приобретается. Человеческое счастье ставится в зависимость от уровня потребления, потребление становится целью и смыслом жизни.

По мнению В. Пелевина, появился новый тип человека Homo Zapiens⁹. В обществе потребления телевизор превращается в пульт дистанционного управления телезрителем, являясь не просто одним из методов организации видеоряда, а основой телевещания, главным способом воздействия рекламно-информационного поля на сознание. Переключением телезрителя управляют режиссер и оператор с помощью техномодификаций (переключения внимания с одного события на другое), выделяя наиболее интересное из происходящего на экране. Переходя в состояние Homo Zapiens, человек сам становится телепередатчиком, которой управляют дистанционно. И в этом состоянии он проводит значительную часть своей жизни¹⁰.

В *духовной сфере* последствия утверждения консюмеризма наиболее деструктивны, особенно это касается этического и аксиологического аспекта.

Адекватное выражение потребительство находит в современных модификациях гедонизма, для которого характерны: отказ от требования умеренности, возникновение противоречия между целями и средствами, ограничение возможностей моральных оценок межличностным отношениям, дальнейшая формализация моральных обязанностей, приравнивание моральности поведения к исполнению правил и норм, одобренных конформистским общественным мнением, дегуманизации человеческих отношений, что ведет к разрыву социальных связей, росту аморализма и цинизма, к атрофии духовности, распаду личности¹¹.

⁹ Заппинг (англ. zapping – переключение, выгорание) – быстрое переключение телевизора с одного канала на другой с помощью пульта дистанционного управления, к которому прибегают, чтобы не избежать просмотра рекламы.

¹⁰ См.: Пелевин В. Generation «П», М., 2003, с. 18.

¹¹ См.: Словарь по этике / под ред. И.С. Кона, М., 1981, с. 136.

В процессе пересмотра ценностей жертвой становится мораль. Человек начинает видеть в других не самостоятельных и уникальных личностей, достойных внимания и уважения, а своеобразные вещные объекты, предназначенные для удовлетворения его желаний. Утрата людьми моральных ориентиров ведет, с одной стороны, к тому, что они теряют и ориентацию во времени; а с другой – цели, еще недавно признававшиеся безусловно возвышенными, лишены сегодня жизненно важного смысла и значения. Общим результатом стало разрушение морали и предельная индивидуализация человеческого существования, когда человек рассматривает в качестве субъекта лишь самого себя, полагая всех себе подобных не более чем частью враждебного объективного мира¹².

Происходит перерождение духовно-нравственных ценностей, наиболее примитивные потребности, повергаемые моральному осуждению во всех мировых религиях и считающихся смертельными грехами, преподносятся как высшее благо. Так, примером трансформации греха стяжательства в добродетель является проведение сетью немецких магазинов по продаже электроники Saturn рекламной акции своих товаров в Москве в 2011 г. под слоганом: «Жадность – это круто!» растиражированном на огромных плакатах, билбордах, пакетах и сумках.

Одним из смертных грехов, наиболее опасным для личности является гордыня. В обществе потребления, сам его демонстративный и престижный характер потребления направлен на показ исключительного положения клиента приобретающего те или иные товары или услуги. В этом случае все указанные действия направлены на генерацию гордыни: «Я могу себе это позволить, а ты – нет!». Однако сами экономические возможности общества потребления делают через какое-то время данный продукт доступным для широких кругов потребителей. И представитель потребительской элиты вынужден приобретать следующую вещь и похвалиться ей, пока это преимущество не будет аннулировано техническим прогрессом. Так осуществляется гонка потребления.

В *политической сфере* потребление приводит к обезличиванию власти, отказу от участия в управлении, руководству в политике не социаль-

¹² См.: **Бауман З.** Индивидуализированное общество, М., 2005, с. 197-198.

ными, а узкоэгоистическими интересами¹³ и готовностью поддержать ту политическую силу, которая может предложить более высокий уровень потребления.

В.И. Ильин отмечает, что во времена холодной войны между мировыми системами социализма и капитализма главными критериями оценок, сравнений, формировавших массовое политическое сознание были возможности потребления по обе стороны «железного занавеса».

В 1980-е годы в СССР резко обострилось противоречие между потребительством масс, в значительной мере стимулированным государством через рост заработной платы и постоянное сравнение с процветающей Америкой, и существенно снизившейся в силу многих причин способностью государства насыщать рынок потребительскими товарами. Естественным результатом обострения этого противоречия стало массовое падение веры в коммунистическую идеологию, отказ лидерам КПСС в доверии и рост настроений в пользу необходимости «жить, как в цивилизованных странах», т.е. как на Западе.

Общество потребления, представляло собой притягательное социокультурное поле, которое порождало модели желаний и интересов, экспортируемых в Восточную Европу, вызывающих неразрешимое противоречие между потребительскими устремлениями масс и ограниченными возможностями слабо развитого производства.

Развитие зарубежных контактов, связанное с разрядкой международной напряженности, начиная с 1960-х открыло глаза в первую очередь правящей коммунистической элите, которая смогла осознать убожество номенклатурных привилегий в сравнении с тем, что имела правящая элита Запада. И когда советской номенклатуре захотелось жить «как в цивилизованных странах»

¹³ В середине 1990-х в России существовала Партия любителей пива, в «Политико-питейно-закусочная декларация» которой есть такие строки: «...Мы любим пить пиво, мы пьём иногда и более крепкие напитки, мы любим закусывать. Мы любим хорошо пожить сами и готовы дать хорошо жить другим... Мы любим тех, кто пьет пиво и другие напитки, кто закусывает и не напивается. Наша цель, чтобы у всех было выпить и закусить! Мы поддерживаем во всем мире тех, кто сам любит пиво и не мешает любить его нам... Мы партия будущего, так выпейте за наш успех! А не хотите пива – пейте яблочный сок, что тоже неплохо. Но знайте – только пиво объединяет и сплавливает людей, делает их жизнь яркой и наполненной смыслом». См.: URL: <http://plp-vrn.narod.ru/dekl.htm>

(формула желания, открыто озвученная только в конце 1980-х годов), государственный социализм оказался обреченным в силу отсутствия дееспособных защитников в лице элиты.

Новая российская политическая элита и доминирующие СМИ, тесно связанные с ней, описывали и описывают переход от социализма к радикальному изменению экономической, социальной и политической систем в терминах демократии. Если говорить о политическом поведении масс, то это понятие представляется идеологическим конструктом, камуфлирующим феномен совершенно иного типа. Все политические трансформации периода антикоммунистической революции ни в коей мере не расширили возможности граждан в принятии управленческих решений. В целом ряде случаев произошло их свертывание (например, куцая производственная демократия советского времени была полностью ликвидирована, исчез такой институт демократии, как жалобы и письма читателей в СМИ).

Однако постсоветская политическая система оказалась, как показывают и опросы, и результаты выборов, все же более привлекательной. Ее преимущество для рядового гражданина – в расширении его возможностей как потребителя политической информации. Перестройка превратила политический процесс в разновидность массового шоу. Как футбольные болельщики поддерживают свою команду, так граждане раскололись на группы сторонников разных политических направлений. Политические фанаты выходили на площади, где организовывались митинги «демократов», «красных» или «патриотов». Здесь бушевали страсти, не уступавшие по накалу эмоциям стадионов. Более спокойная публика прильнула к телеэкранам, наблюдая баталии на съездах народных депутатов. На выборах избиратели действовали по сути дела так же, как действуют группы поддержки соревнующихся команд или отдельных игроков в телевизионных шоу: побеждает тот, кто набрал больше голосов телезрителей¹⁴.

В *экономической сфере* культ потребления реализует себя как высшую материальную ценность, подвергая забвению древний принцип социального бытия: «Не хлебом единым – жив человек!».

¹⁴ См.: **Ильин В.И.** Общество потребления: теоретическая модель и российская реальность // Мир России, 2005, № 2.

Основная ответственность современной корпорации – отвечать только перед акционерами, поэтому на другие вопросы, такие как права человека, внимание почти не обращается. Любая благотворительная деятельности, которая не оказывает напрямую положительного влияния на бизнес, может быть расценена, как злоупотребление доверием. Рост крупных корпораций ставит под угрозу законную власть национальных государств и общественную сферу, корпорации вторгаются частную жизнь людей, манипулируя политикой и правительствами, и создают ложные потребности у покупателей.

Корпоратократия (англ. *corporatocracy* – власть корпораций) – форма правления государством, при которой власть осуществляется через могущественные и богатые корпорации. Дж. Перкинс в своей книге «Исповедь экономического убийцы» определяет корпоратократию так: «это люди, мужчины и женщины, которым принадлежат крупнейшие корпорации. Они контролируют правительство США через финансовые институты и большую часть правительств мира. Они контролируют напрямую СМИ, владея ими. Этими людьми движет единственная идея – извлечение максимальной прибыли»¹⁵.

Транснациональные корпорации (ТНК) утверждают, что создают рабочие места, двигают вперед экономическое развитие и повышают уровень жизни в странах, где они работают. На самом деле они связаны с политической и социальной дискриминацией, загрязнением окружающей среды, нарушениями трудового законодательства, прав человека и прав потребителей. В своём произведении «Черная книга корпораций» К. Вернер и Г. Вайс раскрывают темную сторону капиталистической глобализации: рабский труд, использование детей, торговля оружием, медицинские эксперименты, противоречащие любым нормам морали... миллионы жизней, гибнущие во имя обогащения нескольких сотен олигархов – вот то, что кроется за красивыми и витиеватыми словами о новом мировом порядке и пересмотре социально-экономической политики, или, как об этом пишут сами авторы книги: «Неолиберальная свобода реальна для капитала, в то время как свобода людей – прежде всего выходцев из самых бедных стран – заканчивается там, где начинается власть денег»¹⁶. Авторы выявили связь неолиберальной глобализации и политики ТНК в целом и говорят о взаимовлиянии международной

¹⁵ Перкинс Дж. Исповедь экономического убийцы, М., 2005, 316 с.

¹⁶ Вернер К., Вайс Г. Чёрная книга корпораций. Екатеринбург, 2007, с. 22-23.

политики, корпораций и международных организаций, таких, как ВТО, МВФ, Всемирный банк и т.п.

С.Н. Булгаков осуждал идею, которая завладела ныне умами большинства членов российского общества о том, что рост материальных потребностей является коренным принципом экономического развития. Экономический прогресс является необходимым условием духовного преуспевания, но нельзя заменять общечеловеческий прогресс, подменяя лишь его прогрессом экономическим. Неспособность удовлетвориться нарастанием внешних материальных благ и примириться с укоренившимися формами общественной неправды, стремление к общечеловеческим идеалам, ненасытную потребность сознательной веры Булгаков признаёт самыми характерными и самыми

Э. Фромм полагает, что консюмеризм приводит к появлению «людей с рыночным характером», которые не умеют ни любить, ни ненавидеть, потому что это является помехой для достижения их цели (продажи и обмена), для функционирования в соответствии с логикой «мегамашины» потребления, частью которой они являются. Эти люди не испытывают глубокой привязанности ни к себе, ни к другим, им абсолютно все безразлично, этим, возможно, также объясняется, почему их не беспокоит опасность ядерной и экологической катастрофы. Это отсутствие беспокойства на всех уровнях является результатом утраты каких бы то ни было эмоциональных связей, даже с самыми близкими, которые у них отсутствуют, они не дорожат даже собой¹⁷.

Организация противодействия наиболее негативным факторам, связанным с распространением консюмеристских тенденций, представляет собой большую сложность ввиду известной привлекательности потребительского образа жизни, затрагивающего самые примитивные и низменные потребности человека. Ж. Бодрийяр полагает даже, что такая деятельность вообще невозможна: «У потребления нет пределов. Наивно было бы предполагать, что оно может быть насыщено и удовлетворено. Мы знаем, что это не так: мы желаем потреблять все больше и больше. Это навязчивое стремление потреблять не есть следствие некоторых психологических причин или чего-то еще подобного и не вызвано только силой подражания. Если потребление представляется чем-то неукротимым, то потому, что это полностью идеальная практика, которая не имеет ничего общего (после опре-

¹⁷ См.: Фромм Э. Иметь или быть, М., 1990.

деленного момента) ни с удовлетворением потребностей, ни с принципом реальности... Следовательно, желание „укротить” потребление или выработать нормы системы потребностей есть наивный и абсурдный морализм»¹⁸.

Бороться с потребительством крайне сложно ещё потому, что оно искушает человека все новыми материальными благами, которые оно способно предоставить своему преданному адепту.

Дж. де Граафа, Д. Томас и Х. Нэйлор полагают, что одиночество, отчужденность и изоляцию потребительства преодолеть крайне сложно и это невозможно: «ни более качественным кадровым руководством, ни более современной техникой, но только фактом превосходства человеческой любви над идолопоклонническим отношением к вещам»¹⁹. Причем сделать это помогут не этические и духовные запреты, а только преклонение перед красотой мира и совершенством человека, отзывчивостью души, способной чужое горе или чужую радость ощутить как личное потрясение.

Представляется, что для преодоления негативных последствий реализации общества потребления в России необходимо разработать некоторые направления противодействия наиболее разрушительным проявлениям деструктивных духовно-нравственных ценностей консюмеризма на различных уровнях общества: глобальном, государственном, общественном и личном, а также раскрыть специфические меры в духовной сфере общества, ключевой для указанной проблемы.

На **глобальном уровне** следует сосредоточить усилия на разъяснении отрицательного влияния на окружающую среду потребительства, необходимости защиты природы, которая не в силах обеспечить постоянно растущий уровень потребления. По мнению ученых, чрезмерное потребление западных государств, превышающее планетарные возможности земных ресурсов, требует три планеты типа Земля, чтобы насытить потребительскую жадность, то есть обеспечить стандарт сегодняшних потребностей²⁰.

Динамичная эволюция человеческого общества, по мысли основоположников русского космизма Н.Ф. Федорова и В.И. Вернадского, подводит

¹⁸ Baudrillard J. Selected Writings / Edited by Mark Poster. Cambridge, 1996, p. 24-25.

¹⁹ Де Грааф Дж. Потреблятьство. Болезнь, угрожающая миру, М., 2003, с. 128.

²⁰ См.: Войны ради потребительства! // Международная ассоциация «Мир через культуру». http://www.peace-through-culture.org/ru/tsivilizatsiya/cont/voiny_radi_potrebitelstva.html

человечество к созданию социального живого вещества, новой планетной реальности, сферы разума – *ноосферы*²¹. Необходимым условием ее возникновения и развития является «историческое делание» – выработка высших форм социального единства, международной соборности, всемирного человечества. По словам В.И. Вернадского, «идея о государственном объединении всего человечества становится реальностью... и к нему человечество неизбежно придет»²².

Ноосфера или, по С.Н. Булгакову, «духовный всеорганизм»²³ есть «живое объединение воле» отвечает новому состоянию целостности – соборности, с характерным духовным сотрудничеством элементов, их единым общим действием²⁴.

Осознание угроз чрезмерного потребления, выживания человечества, требует сегодня объединения усилий всех жителей Земли в их преодолении. Но пока отсутствует слаженный общественный организм, человечество находится в «небратском» состоянии, неравных «юридико-экономических отношениях, сословности и международной розни»²⁵. К сожалению, первые ростки объединения человечества в экономической и информационной сфере не избавляют от культа потребления, а разделяют народы на два противоположных полюса.

На полюсе мира, благосостояния и демократии находятся 25 стран: государства Западной Европы, США, Канада, Япония, Австралия и Новая Зеландия. В них проживает 15 % населения земного шара (так называемый «золотой миллиард»). На полюсе брожения, бедности и анархии находятся государства Африки, Азии, Латинской Америки, республики бывшего СССР и стран Востока. В них более 80 млн. человек живут в условиях абсолютной нищеты, а 925 млн. голодают. Проблемы сохранения окружающей среды органически связаны с резким возрастанием хозяйственной деятельности чело-

²¹ См. подробнее: **Олейников Ю.В., Оносов А.А.** Ноосферный проект социоприродной эволюции. www.philosophy.ru/phras/library/noo.html

²² **Вернадский В.И.** Философские мысли натуралиста, М., 1988, с. 82.

²³ См.: **Булгаков С.Н.** Агнец Божий: О богочеловечестве, Париж, 1933. Ч. 1, с. 130.

²⁴ См.: **Муравьев В.Н.** Овладение временем как основная задача организации труда, М., 1924, с. 110.

²⁵ **Федоров Н.Ф.** Философия общего дела. Т. 1-2. Верный; М., 1906-1913. Т. 1. Верный, 1906; Т. 2. М., 1913, с. 9.

века, обусловленной увеличением численности населения, его стремлением к улучшению материального благополучия и росту потребления. Н.Н. Моисеев сформулировал и ввел в научный оборот понятие «экологический императив», который обозначает «ту границу допустимой активности человека, которую он не имеет права переступить ни при каких обстоятельствах»²⁶. По мнению Моисеева, просматривается несколько направлений человеческой деятельности, которые могут «информировать общество о реальном состоянии дел, лишить его возможных иллюзий и начать его экологическое и политологическое просвещение с ориентаций на то общее, что должна содержать вся цивилизация XXI века. Вот некоторые из них:

- изучение структуры коэволюции как некоторого равновесного состояния Природы и общества;
- разработка возможных вариантов технико-технологического преобразования производительных сил и выработка соответствующих рекомендаций правительствам и корпорациям;
- изучение особенностей новой модернизационной волны и попытка спрогнозировать возможные реакции на нее различных цивилизаций;
- политологический анализ возможных противостояний и выявление наиболее опасных цивилизационных рубежей и отдельных точек, их серьезное обсуждение на общепланетарном уровне.

Утверждение образования, в основе которого лежит ясное понимание места человека в Природе, есть в действительности главное, что предстоит сделать человечеству уже в ближайшее десятилетие»²⁷.

Таким образом, преодоление консюмеризма на глобальном уровне связано с осознанием необходимости сохранения окружающей среды, ответственности за природу, принятие «экологического императива».

Уровень государства в противодействии потреблению для российского общества, которое в сущности своей является глубоко патерналистским²⁸, особенно важен. По словам Митрополита Московского Филарета

²⁶ Моисеев Н.Н. Судьба цивилизации. Путь разума, М., 1988, с. 78.

²⁷ Моисеев Н.Н. Думая о будущем, или напоминание моим ученикам о необходимости единства действий, чтобы выжить // Заслон средневековью, М., 2003, с. 306.

²⁸ Патернализм (лат. *paternus* – отцовский) – система отношений, основанная на покровительстве, опеке и контроле старшими младших (подопечных), а также подчинении

(Дроздова), сказанным им ещё в начале XIX века: «Нравственность народа – это фундамент благополучия государства».

На имеющиеся проблемы, вызванные потребительским отношением жизни и нивелированием духовно значимых ценностей указывал в своем послании к Федеральному собранию Президент России В.В. Путин 12 декабря 2012 г. «Сегодня российское общество испытывает явный дефицит духовных скреп: милосердия, сочувствия, сострадания друг другу, поддержки и взаимопомощи – дефицит того, что всегда, во все времена исторические делало нас крепче, сильнее, чем мы всегда гордились. Мы должны всецело поддерживать институты, которые являются носителями традиционных ценностей, исторически доказали свою способность передавать их из поколения в поколение»²⁹.

Президент в своём послании предостерег против насильственного навязывания ценностей: «Закон может защищать нравственность, и должен это делать, но нельзя законом установить нравственность. Попытки государства вторгаться в сферу убеждений и взглядов людей – это, безусловно, проявление тоталитаризма. Это для нас абсолютно неприемлемо. Мы и не собираемся идти по этому пути. Мы должны действовать не путём запретов и ограничений, а укреплять прочную духовно-нравственную основу общества. Именно поэтому определяющее значение приобретают вопросы общего образования, культуры, молодёжной политики. Эти сферы – это не набор услуг, а прежде всего пространство для формирования нравственного гармоничного человека, ответственного гражданина России»³⁰.

К сожалению, проходящие в образовании в последние два десятка лет реформы пока не смогли что либо противопоставить культуре потребления. Так, бывший министр образования А.А. Фурсенко заявил, что: «Недостатком советской системы образования была попытка формирования Человека-творца,

младших старшим (применительно к России означает широкое влияние государства практически на все стороны жизни его граждан).

²⁹ Послание Президента Федеральному Собранию от 12 декабря 2012 г. // Президент России. <http://президент.рф/news/17118>

³⁰ Послание Президента Федеральному Собранию от 12 декабря 2012 г. // Президент России. URL: <http://президент.рф/news/17118>

а сейчас наша задача заключается в том, чтобы вырастить квалифицированного потребителя»³¹.

Общественное недовольство деятельностью Фурсенко привело к тому, что Всероссийское общество защиты прав потребителей образовательных услуг (ОЗППОУ) развернуло кампанию за его отставку. Образование – сфера традиционно и по праву входящая в круг высших национальных интересов любой страны, у нас оказалась на грани полного развала. Создававшаяся десятилетиями стройная система фактически разрушена, а новой и эффективной взамен не создано. Поэтому сегодня спасение остатков «былой роскоши» – это без преувеличения вопрос жизни и смерти российского государства. В проекте манифеста Всероссийского общества защиты прав потребителей образовательных услуг «В отставку!», говорится о том, что невозможно больше терпеть:

- издевательства над российским образованием, наукой и культурой, которые доведены до грани катастрофы!

- бесконечные разрушительные эксперименты с образованием, основанные на сомнительных идеях и с очевидными уже результатами!

- воровство чиновниками сотен миллиардов бюджетных рублей и бремя тотальной бытовой коррупции в детсадах, школах, вузах, научных центрах!

- кумовство, клановость, непрофессионализм и некомпетентность, процветающие в управлении образованием и наукой!

- навязанные сверху «порядки и правила» построения образования, которые на фоне отсутствия достойной работы, зарплат и перспектив для выпускников школ и вузов, вместо обещанной модернизации ведут к варваризации страны!³²

В образовании необходимо всемерно способствовать формированию духовно развитых, самостоятельно мыслящих людей.

Важнейшим ресурсом любого государства является духовно сплочённое общество, осознающее свои цели и задачи. Возвышение духа российского общества не представляется возможным на безнравственной, бездуховной коммуникации. Поэтому государству необходимо создавать стимулы для

³¹ Креативный потребитель // Мир новостей Best of Hot News. 2011. 4 окт. URL: http://bohn.ru/news/kreativnyj_potrebitel/2011-10-04-1590

³² Союз потребителей Российской Федерации. URL: <http://www.potrebitel.net/main/news/53931/>

возвышения духа нации, что осуществимо с помощью грамотно выстроенной государственной информационной политики, в отсутствие которой практически невозможно создать органичную систему ценностных ориентиров, способную оздоровить, консолидировать российское общество, помочь преодолеть ему социально-экономический и духовный кризис³³.

На **уровне общества** большую роль в преодолении потребительства играют разного рода протестные организации, действия которых могут носить как экстремистский характер, так и ненасильственный.

Например, движение стрейтэджеров (SXE)³⁴ выработало свой кодекс поведения, согласно которому SXE – это:

- позитивное отношение к жизни;
- жесткое соблюдение моральных и физических норм;
- здоровый образ жизни и сознательный отказ от принятия любого рода веществ, разрушающих человеческий организм (никотин, алкоголь, наркотические препараты и т.д.);
- правдивость и честность по отношению к себе и к окружающим (верность в дружбе, любви);
- борьба против любых форм дискриминации, будь то расизм, сексизм (дискриминация по половому признаку), эйджизм (дискриминация по возрастному признаку) и т.д.;
- стремление к сознательной свободе;
- духовное очищение.

Среди антипотребительских организаций имеются и такие, которые полностью отрицают насилие. Так, члены «Веганского общества» – веганы придерживаются строго вегетарианского образа жизни, исключающего использование продуктов, связанных с эксплуатацией и убийством животных, они активно пропагандируют свои взгляды, выдают лицензии на использование торгового знака – логотипа с подсолнухом – для маркировки веганских

³³ См.: **Ховалыг Д.В.** Коммуникативная природа ценностей и их трансформация в медийном пространстве // Полис, 2008. № 1, с. 65-66.

³⁴ Стрейтэджеры (англ. straight edge – прямая линия, проверочная линейка) – движение «за здоровый образ жизни», основанная панк-группами Minor Threat и The Teen Idles в 80-х гг. в США.

продуктов, издают журнал «The Vegan», публикуют список «Animal-Free Shopper», содержащий веганские товары³⁵.

На *уровне личности* особое внимание следует уделить формированию у отдельно взятого человека понимания всех опасностей общества потребления, его собственной позиции неприятия консюмеристских ценностей.

Г. Маркузе считал, что окончательное определение истинности или ложности потребностей – это право самих индивидов. Но поскольку они лишены автономии и их сознание подвержено внушению и манипулированию их выбор никогда нельзя считать свободным. Маркузе в качестве средства такого освобождения настаивает на приобретении такого качества сознания как «в-Разумность». Одна система всегда сменяется другой, но оптимальной задачей остается вытеснение ложных потребностей истинными и отказ от репрессивного удовлетворения³⁶.

По мнению Е. Андреевой, на современном этапе развития общества потребления появился новый тип «человека потребляющего» – просьюмера – человека, который совмещает в себе сразу две функции: потребителя и производителя. Просьюмер – это «компетентный потребитель», который сознательно оперирует вещами-знаками для своей самореализации и творческого самовыражения. Просьюмер выступает в роли скептика – он рассказывает другим людям о своем впечатлении от новых продуктов, брендов и услуг и расспрашивает других об их опыте, он не доверяет слепо тому, о чем говорится в СМИ или рекламе, но ценит информацию и развлечение, которые могут извлечь из этих источников. Они живут настоящим и вовлечены в популярную культуру³⁷.

³⁵ «Веганское общество» (Vegan Society) было основано Д. Уотсоном в 1944 г. в Англии. Слово «веган» было образовано из первых трёх и последних двух букв английского слова «vegetarian» – вегетарианец. По результатам опроса Института Гэллага в июле 2012 г., 2% американцев назвали себя веганами. См.: **Newport F.** In U.S., 5% Consider Themselves Vegetarians. URL: <http://www.gallup.com/poll/156215/consider-themselves-vegetarians.aspx>

³⁶ **Маркузе Г.** Одномерный человек. М., 1994, с. 211.

³⁷ См.: **Андреева Е.** Просьюмеры – новый вид потребителей информационной цивилизации // Потребление как коммуникация – 2009: Материалы 5 международной конференции, 26-27 июня 2009 г. / под ред. В.И. Ильина, В.В. Козловского, СПб., 2009, с. 13-15.

Следует также определить меры противодействия разрушительным проявлениям деструктивных духовно-нравственных ценностей конsumerизма в основных областях духовной сферы общества, являющейся ключевой для указанной проблемы.

В **науке** как важной части духовной жизни и в то же время инструменте для создания всё более привлекательных вещей-безделушек – гаджетов – необходимо следование определённым духовно-нравственным критериям.

Этой цели может служить аксиологическая ориентация современной науки, которая может получить эффективную реализацию в процессе разработки специфического кодекса научной этики. Ее принципы становятся основой соответствующих кодексов научных сообществ. В каждом из них вводится положение, в котором зафиксирован принцип нравственной ответственности исследователя, обязанного не только предвидеть возможные практические последствия своей научной деятельности, но и активно противодействовать исследованиям (и действиям), представляющим опасность для человека и окружающей его среды.

Исследователь как носитель теоретического разума должен иметь «моральный образ мысли в борьбе», обладать критической самооценкой, высоким чувством долга и гуманистическими убеждениями. Наряду с функцией морального сознания как «сущностного закона бытия» Кант обосновал методологическую роль нравственного сознания в познании и когнитивной деятельности вообще, сделав «моральный закон в нас» условием сохранения интеллектуальной честности. Введя понятия «предпосылочного знания», регулятивных функций, «максимы чистого разума», априорных основоположений, выражающих идею активности субъекта, Кант вплотную подходит к проблеме ценностных, мировоззренческих предпосылок, оснований, идеалов и норм, выявлению их фундаментального методологического значения наряду с эмпирическим знанием в становлении теории³⁸.

В **культуре** необходимо в качестве духовно-нравственных ориентиров опираться на ценности, которые воплощает русская классическая литература, которая, по словам М. Горького: «...нечто неподражаемое, неповторимое, то, что в высоко художественной форме сосредоточивает огромный познаватель-

³⁸ См. подробнее: Современные философские проблемы естественных, технических и социально-гуманитарных наук // под общ. ред. В.В. Миронова. М., 2006, с. 495-496.

ный, эмоционально-эстетический и духовный опыт... это произведения, сконцентрировавшие значительные вечные ценности»³⁹, а «ценность есть нечто всепроникающее, определяющее смысл и всего мира в целом, и каждой личности, и каждого события, и каждого поступка...»⁴⁰.

Несмотря на то, что у каждого писателя своё мировоззрение, свои ценностные предпочтения, но между авторами и их героями существует постоянный диалог, полифония голосов. И здесь важно слышать разные голоса разных авторов, говорящих о том, «что тайна бытия человеческого не в том, чтобы только жить, а в том, для чего жить»⁴¹.

Русская классическая литература, по словам Ф.М. Достоевского, не только важная часть культуры Российского государства, но и скрепляющий состав нашей духовной жизни: в ней – и культура, и история, и средоточие наших духовных святынь, она направлена на очеловечивание, «выделывание» людей.

В. Кантор полагает, что в системе ценностей русской литературы находятся: внутренняя духовно-нравственная свобода личности, ответственность перед народом, Родиной и самим собой; свобода саморазвития личности; способность к постоянному поиску истины, идеалов, одухотворяющих человека; творческое художественно-эстетическое восприятие мира; протест против любых форм насилия; преклонение перед идеалами народной жизни, осуждение духа наживы и эгоизма. Русская классическая литература «неотъемлема как сила, духовно структурирующая и созидаящая человека»⁴².

Герои произведений русской классики обладают добрым сердцем, в котором отсутствует эгоизм и меркантильные установки, что позволяет им понимать и сердечнее любить других людей. Все это смягчает гордыню и эгоизм окружающих, способствует обнаружению добрых сторон их души.

Оказывают большое влияние на противодействие консюмеризму и другие формы искусства, например, фотография и кино. Так, фотохудожник Дэвид Уэлч при помощи своей серии фотографий «Material World» борется против поклонения человеческого общества потреблению вещей. В своих

³⁹ Цит. по: **Троицкий В.Ю.** В поисках пути праведного. Словесность в школе: книга для преподавателей русской филологии, М., 2000, с. 123-124.

⁴⁰ **Лосский Н.О.** Ценность и Бытие // Бог и мировое зло, М., 1994, с. 57.

⁴¹ **Достоевский Ф.М.** Собр. соч.: в 15 т. М., 1991, Т. 9, с. 287.

⁴² **Кантор В.** Русская классика или Бытие России, М., 2005, с. 14.

работах фотограф обращает внимание на размытую границу между «нужно» и «хочу». Вместо покупок в красивых обёртках фотограф снимает «отходы», полученные в результате процесса потребления.

Режиссер Д. Кэмерон в своём фильме «Аватар» повествует о планете Пандора, на которой в 2154 г. добывается ценный для межзвездных полётов минерал – анобтаниум. Местное племя человекоподобных разумных существ – на’ви – обитает на Дереве Дома, земля под которым является крупным месторождением анобтаниума. Представитель земной ресурсодобывающей корпорации RDA П. Селфридж ради своих сверхприбылей отдаёт приказ полковнику М. Куоритчу, главе отряда частной военной компании, уничтожить Древо Дома, несмотря на предостережение учёных о том, что все жители Пандоры связаны между собой в гигантскую биологическую нейронную сеть и вмешательство людей приведёт к смерти на’ви и разрушению всего их биогеоценоза. Режиссер Д. Кэмерон отметил, что «люди с большей военной и технологической мощью, как правило, могут вытеснить или уничтожить людей более слабых, и всё ради ресурсов»⁴³.

Основная критика идеологии потребительства развивается в *религиозной среде*. С религиозной точки зрения, оно игнорирует духовные ценности, если они вне сферы рыночных отношений, эксплуатирует и поощряет страсти, эмоции, пороки, в то время, как все основные религии призывают к их обузданию, ограничению. Примером критики потребительства в христианстве является энциклика папы римского Иоанна Павла II «Centesimus Annus» (1991), согласно которой потребительство – одно из наиболее пагубных общественных проявлений.

В религии главным направлением преодоления культа потребления является обращение к духовности, к любви, развитие самоотдачи и самопожертвования, что может привести к «разрыву» порочного круга эгоистических ценностей общества потребления. Решением проблем общества потребления мог бы стать отказ от него в пользу общества самоограничения. Общество самоограничения не подразумевает аскетический образ жизни, отрицание необходимости вещей и торговли. Такое общество пропагандирует разумный, вдумчивый подход к материальным ценностям. Самоограничение приведет к

⁴³ Ordoña M. Eye-popping “Avatar” pioneers new technology // San Francisco Chronicle. 2009. 13 dec.

возрождению вечных духовных ценностей, потерянных обществом потребления, и снизит опасность утраты ресурсов.

15 июля 2009 г. в Патриаршей резиденции в Свято-Даниловом монастыре состоялась встреча Святейшего Патриарха Московского и всея Руси Кирилла с делегацией Армянской Апостольской Церкви во главе с Верховным Патриархом и Католикосом всех армян Гарегином II.

На этой встрече Патриарх Московский и всея Руси Кирилл отметил: «... В течение многих веков, вопреки всевозможным треволнениям и гонениям, наши народы – и армяне, и русские – видели основу своего существования в христианской Церкви. Может быть, мы и сохранились как нации на этих исторических, межцивилизационных перепутьях, где было так много горя, именно благодаря нашему национальному самосознанию, в центре которого всегда была принадлежность к христианству. Я глубоко убежден, что и сегодня, когда нет открытых гонений на веру, множество людей в России и в Армении стремятся руководствоваться именно христианскими идеалами, несмотря на то, что современное светское общество проповедует совсем другие, противоположные церковным, ценности и идеи».

Верховный Патриарх и Католикос всех армян Гарегин II высоко оценил начавшийся между Русской и Армянской Церквями диалог по социальным вопросам, нацеленный на выработку единой позиции двух Церквей по всему спектру актуальных проблем. Им была выражена надежда, «что в ближайшем будущем этот диалог охватит также некоторые пастырские вопросы». Планируются также совместные благотворительные и социальные программы в сфере духовного воспитания молодежи, противодействия ВИЧ/СПИДу и т.п.

Патриарх Московский и Всея Руси Кирилл 26 февраля 2012 г. заявил: «Простые люди покупают вещь – и радуются. А безудержное потребление убирает эту радость... Человек себя обкрадывает. Если все общество встанет на путь такого безудержного потребления, то и земля наша, ресурсы её этого не выдержат! Уже доказано, что если средний уровень потребления будет такой, как в США, то основных ресурсов хватит всего на 40-50 лет. Бог не дал

нам ресурсов, чтобы всем жить так. А если все не могут жить так – что означают эти колоссальные имущественные диспропорции?»⁴⁴

Шейх Юсуф аль-Карадави, глава Международного союза улемов утверждает, что одна из главных проблем, с которой сталкиваются мусульмане всего мира, заключается в сумасбродном росте потребительства, особенно импортных товаров, и низком уровне производства, прежде всего, в сферах сельского хозяйства и промышленности. Он говорил: «Но, к сожалению, мы обречены на бесполезность. Мы говорим, но ничего не делаем. Мы импортируем, но не производим. Мы – пассивные получатели. Мы подражаем другим и не можем привнести чего-либо своего. Словом, мы разрушаем, а не создаем. Уходим в небытие, а не стараемся выжить»⁴⁵.

На Всероссийском съезде мусульманок «Мусульманка в XXI веке» 26 апреля 2012 г. в Москве председатель Совета муфтиев России муфтий шейх Равиль Гайнутдин заявил, что общество потребления – это общество, основанное на преобладании материальных ценностей над духовными, признающее лишь три категории: «продавец», «покупатель» и «товар», отводит женщине роль товара – предмета торга, обмена, элемента приманки. Навязанные глянцево-прессой неестественные стандарты красоты и критерии успешности заставляют женщину отказаться от исконно присущих ей качеств – мудрости, скромности, душевной теплоты – и буквально выталкивают из традиционной для женщины сферы – семьи – в джунгли корпоративных страстей и интриг⁴⁶.

В качестве резюме можно отметить следующее.

1. В отношении перспектив воздействия идеологии консюмеризма на российское общество имеются различные взгляды: как *оптимистические* (разумные идеалы потребления, формирующие творческого человека с преобладающими духовными запросами), так и *пессимистические* (сверхпотребление одной части общества и дефицитное потребление – другой, что может привести к разделению людей на «лучших» – валидов, которым доступны все

⁴⁴ Проповедь Святейшего Патриарха Кирилла в Прощеное воскресенье после Божественной литургии в храме вмч. Димитрия Солунского на Благуше. URL: Проповеди / Патриарх, страница 14 / Патриархия.ru www.patriarchia.ru/patriarch/38019/page14.html (дата обращения 29.10.2014).

⁴⁵ Аль-Кардави Ю. Почему умма стала столь слабой? 2009. 29 мая. URL: <http://www.muslimvrn.ru/proekt102.html>

⁴⁶ См.: Ислам Минбаре. 2012. № 5 (198). URL: <http://www.idmedina.ru/minbare/?4529>

материальные и духовные блага, и «низших» – инвалидов, которые обречены на недостаток жизненных ресурсов и для них закрыто большинство возможностей, представляемых высшей расе).

2. Потребительство в значительной мере меняет характер социальных отношений (создавая новые социальные группы), воздействуя на вопросы экономической занятости населения и вообще направленности производства, вызывает к жизни определенные политические идеологии и формируя определенные весьма влиятельные общественные и государственные структуры, а также довольно активные политические движения. Однако, наиболее существенный характер принимает влияние консюмеризма на духовную сферу общества, изменяя моральное сознание людей, моральные отношения между ними и качество их моральных поступков.

3. Основные направления противодействия наиболее разрушительным проявлениям деструктивных духовно-нравственных ценностей консюмеризма могут быть представлены на различных уровнях общества: *глобальном* (разъяснение отрицательного влияния на окружающую среду потребительства, необходимости защиты природы, которая не в силах обеспечить постоянно растущий уровень всемирного потребления, формирование ноосферы – «духовного всеорганизма», нового состояния целостности человечества – соборности, с духовным сотрудничеством элементов), *государственном* (укрепление через образование, культуру, молодежную политику духовно-нравственной основы общества, проведение через информационную политику борьбы с пропагандой вещизма и идеологией консюмеризма, всемерное содействие формированию духовно развитых, самостоятельно мыслящих людей), *общественном* (поддержка протестных антипотребительских организаций ненасильственного характера и противодействие в отношении деятельности экстремистских социальных групп) и *личностном* (сосредоточение усилий на рациональном понимании всех опасностей культа потребления у каждого члена российского общества, формировании им собственной позиции неприятия консюмеристских ценностей).

РЕЗЮМЕ

В статье авторы рассматривают актуальные вопросы преодоления идеологии консюмеризма в условиях глобализации. Авторы подчеркивают, что общество оказывает серьезное влияние не только на все стороны чело-

веческой жизнедеятельности, но и на экономическую занятость населения и направленность производства. В конце научной статьи, обобщая свое мнение, авторы делают вывод о том, что основные направления противодействия духовно-нравственным ценностям консюмеризма могут быть представлены на всех уровнях общества: глобальном, государственном, общественном и личностном.

Ключевые слова – общество, глобализация, консюмеризм, идеология, общественное сознание, социальная среда, ценности.

ԿՈՆՍՈՒՄԵՐԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՇԱՂԹԱՎՈՐՈՒՄԸ ԳԼՈԲԱԼԻԶԱՑԻԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՍՏԱՆԻՍԼԱՎ ԲՈՅԿՈ, ԱՆԻՍԱՏ ՄԱԳՈՄԵԴՈՎԱ

Հոդվածում հեղինակները դիտարկել են արդիական հարցերը հաղթահարելու կոնսումերիզմի գաղափարախոսությունը գլոբալացման համատեքստում: Հեղինակներն ընդգծում են, որ ընկերությունը ոչ միայն լուրջ ազդեցություն ունի մարդկային կյանքի բոլոր ասպեկտների վրա, այլ նաև նպաստում է բնակչության զբաղվածությանը և կենսակերպի հարցերին: Հոդվածի հեղինակները վերջում ամփոփել են իրենց կարծիքը՝ եզրակացնելով, որ կոնսումերիզմի վրա հակազդելու հիմնական ուղղությունները հոգևոր ու բարոյական արժեքներն են, որոնք կարող են ներկայացվել հասարակության բոլոր մակարդակներում՝ գլոբալ, ազգային, հասարակական և անձնական:

Բանալի բառեր – հասարակություն, գլոբալացում, կոնսումերիզմ, գաղափարախոսություն, սոցիալական գիտակցություն, սոցիալական միջավայր, արժեքներ:

OVERCOMING THE IDEOLOGY AND PRACTICE OF CONSUMERISM UNDER GLOBALIZING CONDITIONS

STANISLAV BOYGO, ANISAT MAGOMEDOVA

The authors have considered the topical issues of overcoming the ideology of consumerism in the context of globalization. The authors emphasize that companies not only have a serious impact on all aspects of human life, but also

contribute to job creation and rise of living standard. At the end of the article, the authors outline their opinion concluding that the main ways of counteracting consumerism are spiritual and moral values. These can be presented to society at all levels: global, national, social and individual.

Key words – society, globalization, consumerism, ideology, social consciousness, social environment, values.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ

ՌԱԶՄԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Մարդկային պատմության և հասարակության վերաբերյալ գոյություն ունեն փիլիսոփայական տարբեր տեսություններ, որոնք միանգամայն հակադիր տեսանկյուններից են մեկնաբանում պատմության բնույթը, հասարակության շարժման, զարգացման օրինաչափությունները, հասարակական երևույթների միջև եղած պատճառական և ֆունկցիոնալ կապերը:

Առաջին անգամ գերմանացի փիլիսոփա Հերդերը նշեց պատմական օրինաչափության մասին միտքը՝ գտնելով, որ պատմությունը «մշակույթի օրինաչափ զարգացումն է»: Հեգելը, զարգացնելով այդ միտքը, առաջ քաշեց պատմական անհրաժեշտության գաղափարը՝ գտնելով, որ պատմությունը ընթանում է ոչ թե քառսային, անկազմակերպ, տարերային ձևով, այլ օրինաչափորեն, պատմական անհրաժեշտության ուժով: Նա առաջինը բացահայտեց պատմական գործընթացի դիալեկտիկան, պատմությունը քննարկեց որպես պարզ ձևերից բարդին անցնելու աստիճանական, օրինաչափ երևույթ: Հեգելը համաշխարհային պատմությունը մեկնաբանում էր որպես ոգու շարժման և զարգացման պատմություն, որտեղ պատմական ոգին, անցնելով երեք շրջաններով (Արևելք, Անտիկ աշխարհ, XIX դար), հասնում է գիտակցության և ինքնագիտակցության, դառնում է բացարձակ: Նա իր պատմափիլիսոփայական հայացքները շարադրել է «Պատմության փիլիսոփայություն» աշխատության մեջ, որտեղ պատմությունը դիտվում է որպես ժամանակի ընթացքում բացարձակ ոգու աստիճանական զարգացման պատմություն, որը շարժվում է դեպի որոշակի նպատակի՝ ազատության: Հեգելը գտնում էր, որ մեծ անհատների գիտակցական գործունեության մեջ արտահայտվում է պատմականորեն էականն ու անհրաժեշտը:

Անժխտելի է այն հանգամանքը, որ պատմության մեջ երկար ժամանակ իշխել է տարերայնությունը, պատմական, հասարակական կյանքն ընթացել է տարերային, անկազմակերպ շարժումից դեպի կարգավորված, գիտակցական շարժում: Մարդկությունը պատմական զարգացման գործընթացում աստիճանաբար ազատվում է տարերայնությունից, քանզի մարդը ձգտում է սանձահարել ինչպես բնության տարերային ուժերը, այնպես էլ հասարակության տա-

րերային ուժերը՝ հանուն մարդկության հասարակական առաջընթացի:

Մարդը մշտապես փորձել է կատարելագործել պատմությունը, բանականացնել հասարակական կյանքը, այնտեղ ներդնել գիտակցական նպատակ, հասարակությունը տանել ճիշտ ուղիով, կույր անհրաժեշտության տեղ հաստատել կարգունանոն, քաոսի տեղ՝ ներդաշնակություն: Այդ գաղափարը իդեալի ձևով եկել է դեռևս Պլատոնից և դրսևորվում է նաև արդի պայմաններում: Պատմական իմացության բնագավառում չենք կարող շրջանցել մարքսիզմի տեսությունը, որի համաձայն՝ հասարակական կյանքն այլ բան չէ, եթե ոչ իրենց գիտակցական նպատակը հետապնդող մարդկանց պատմական գործունեության արդյունք: Կ. Մարքսը գտնում էր, որ հասարակության մեջ մարդն իրականացնում է իր սեփական գիտակցական նպատակը, որը, որպես կանոն, որոշում է նրա գործողությունների եղանակն ու բնույթը, որին նա ենթարկում է իր կամքը: Նպատակը, լինելով մտայինի ու իրականի միասնություն, հնարավորություն է տալիս հասկանալու մարդուն ոչ թե պատմական անհրաժեշտության ձեռքին խաղալիք, այլ որպես իր կյանքի ստեղծող ու տնօրինող, որպես պատմական շարժման հիմք ու էություն: Միլիոնավոր մարդկանց գիտակցական նպատակների, ցանկությունների, պահանջմունքների և շահերի համար մղվող գործունեության շնորհիվ է կերտվում մարդկային պատմությունը: Այս հարցը քննարկելիս պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ գիտակցական նպատակը, նպատակաուղղված գործունեությունը երբեմն հասարակության մեջ կարող են հանգեցնել բոլորովին անսպասելի արդյունքի: XVIII դարում Ֆրանսիական հեղափոխության նպատակն էր ստեղծել ազատության, արդարության, հավասարության վրա հիմնված բնական հասարակարգ, սակայն արդյունքում ստեղծվեց նոր միապետություն՝ Ն. Բոնապարտի կայսրությունը:

Բացի այդ, նպատակն անհրաժեշտ է ուսումնասիրել նպատակն իրագործող միջոցի հետ ունեցած կապի մեջ, որովհետև երբ մարդն իր նպատակին հասնում է ոչ համապատասխան միջոցով, ապա դա հանգեցնում է բարոյական վարքի շեղումների: Հասարակական կյանքում, ինչպես առանձին մարդիկ, այնպես էլ մարդկային մեծ և փոքր խմբերը, հաճախ առաջնորդվում են «Նպատակն արդարացնում է միջոցները» հայտնի դրույթով, որն առաջադրել է Վերածննդի դարաշրջանի իտալացի նշանավոր փիլիսոփա Ն. Մաքիավելին: Հասարակության մեջ միշտ էլ եղել են և կլինեն մաքիավելական դիրքորոշում ունեցող որոշ մարդիկ, որոնք իրադրությունն ու այլ մարդկանց կարող են ծառայեցնել իրենց նպատակներին:

Ամերիկյան հոգեբանները հատուկ թեստերի միջոցով պարզել են, որ այդպիսի դիրքորոշում ունեցող մարդիկ հեշտությամբ խախտում կամ շրջանցում են բարոյական նորմերը, անարգել հասնում հաջողությունների, ավելի մեծ չափով իրագործում իրենց անձնական հավակնությունները:

Սոցիալական իմացության մեջ ինչպես մարդկանց գիտակցական նպատակների, այնպես էլ նրանց ցանկությունների, պահանջմունքների և շահերի վերլուծությունը շատ բարդ է, քանի որ դժվար է միլիոնավոր մարդկանց շահերի միասնության ու բախման բազմազանության մեջ օրենք ու օրինաչափություն գտնել: Մարդկային գործունեության բոլոր ձևերի հիմքում ընկած են մարդկանց նյութական և հոգևոր շահերն ու պահանջմունքները: Եթե մարդկային շահերն ու պահանջմունքները հանդես են գալիս որպես պատմության ներքին շարժիչ ուժեր, ապա մարդկանց բազմաբնույթ շահերի բախումից են ստեղծվում պատմությունը, հասարակական կյանքն ու հասարակական հարաբերությունները, իսկ հասարակական ու անհատական շահերի միասնությունը նպաստում է հասարակական առաջընթացին ու զարգացմանը: Կախված այն հանգամանքից, թե մարդն ինչպես է բավարարում իր պահանջմունքները, դրա համապատասխան՝ նրա վարքը կունենա բարոյական արժեքավորում: Ցանկացած հասարակարգում անազնիվ, զարտուղի, ստոր ճանապարհով իրականացվող արարքներն իրենց էությամբ հակասում են բարոյականության բարձրագույն սկզբունքներին և հակադրվում անհատի ու հասարակության շահերի օրգանական միասնությանը: Անձնական շահի գերադասումը հանգեցնում է անհատի ու հասարակության աղավաղման, շահերի բախման, կոնֆլիկտային իրավիճակների: Երբ մարդն առաջնորդվում է սուսկ իր անձնական շահերով, մտածում միայն սեփական երջանկության մասին, մոռանում կամ անտեսում է ուրիշի շահն ու բարիքը, ապա դա սողանք է բացում բարոյական կարգի զանազան շեղումների համար: Հասարակության մեջ մարդկանց միայն փոքրամասնությունն է հասկանում և առաջնորդվում փիլիսոփայական այն բարձր գաղափարով, որ բարիքը մարդկային անհրաժեշտ որակ է, բայց այն արժեքավոր է, եթե համակցվում է համընդհանուր բարօրության համար մղվող պայքարով:

Կանտն է նշել. «Գործի էությունը ոչ թե արարքների մեջ է, որը մենք տեսնում ենք, այլ այն ներքին սկզբունքների մեջ, որոնք մենք չենք տեսնում»¹:

¹ Кант Э. Соч., том 4, М., 1965, с. 244.

«Եզեյը գտնում էր, որ գործելով մարդը պետք է մտածի իր արարքի արդյունքի մասին. «Ձեռքից դուրս պրծած քարը պատկանում է սատանային»²»:

Պատմական զարգացման օրինաչափության գաղափարը մատերիալիստական աշխարհայացքի տեսանկյունից վերլուծեց Կ.Մարքսը, որը բացահայտեց հասարակական կյանքի օբյեկտիվ դիալեկտիկան, հասարակության շարժման, զարգացման, փոփոխության ներքին պատճառները, հասարակության նյութական և հոգևոր կողմերի միջև եղած դիալեկտիկական կապը: Մարքսը պնդում էր, որ հասարակության օրենքներն օբյեկտիվորեն գոյություն ունեն՝ անկախ մարդկանց կամքից, գիտակցությունից և ցանկություններից: Նա գտնում էր, որ պատմական դարաշրջանի բովանդակությունը պայմանավորված է ոչ թե մարդկանց ազատ կամքով, այլ ամենից առաջ՝ հասարակական կեցությամբ, հասարակության տնտեսական համակարգով, նյութական արտադրությամբ, արտադրության եղանակով, սեփականության ձևով և սեփականատիրական հարաբերություններով: Փիլիսոփայությունը կապելով հասարակական-քաղաքական կյանքի հետ՝ Մարքսը «Ֆոյերբախի մասին թեզիսներ»-ում գրում էր, որ մինչև այժմ փիլիսոփաները տարբեր կերպով բացատրել են աշխարհը, մինչդեռ խնդիրն այդ աշխարհի վերափոխման մեջ է:

Նա մշակեց վերափոխման հեղափոխական տեսությունը, դասակարգային պայքարի և սոցիալական հեղափոխության ճանապարհով մարդկության ազատագրության հումանիստական տեսությունը: Մարքսը դասակարգային պայքարը և սոցիալական հեղափոխությունը դիտում էր որպես պատմության հիմնական շարժիչ ուժեր, պատմության «լուկոմոտիվներ», որոնց միջոցով կատարվում է հասարակարգերի հաջորդափոխումը: Նա գտնում էր, որ արտադրողական ուժերն անընդհատ զարգանում և փոփոխվում են, դրանք հասարակական կյանքի առաջատար կողմերն են և արտահայտում են պատմական գործընթացի անընդհատությունը: Որպես կանոն՝ ամեն մի հասարակարգի զարգացման սկզբնական փուլում արտադրական հարաբերությունները համապատասխանում են արտադրողական ուժերին, սակայն ժամանակի ընթացքում դրանք սկսում են հետ մնալ արտադրողական ուժերի զարգացումից, որոշակի փուլում նույնիսկ դառնում են զարգացումն արգելակող գործոններ, որի պատճառով դրանց միջև առաջանում է հակասություն, որը

² Гегель, Соч., том 7, М.-Л., 1934, с. 140.

սրվելով հասցնում է տնտեսական ճգնաժամի, որին հետևում են քաղաքական, իրավական, բարոյական ճգնաժամը, հոգևոր անկումը:

Մարքսի տեսության հակառակորդները գտնում էին, որ նա փիլիսոփայության մեջ ոչ մի նոր միտք չի տվել, այլ մեխանիկորեն Ֆոյերբախի մատերիալիստական աշխարհայացքը միացրել է Հեգելի դիալեկտիկական տեսության հետ: Հասարակության զարգացման մարքսյան տեսությունը փիլիսոփաների մեծամասնությունը բնութագրում է որպես «միակողմանի տեսական դետերմինիզմ», որը, ելակետ վերցնելով տնտեսական հարաբերությունները, անտեսում է անհատին, մարդուն, սուբյեկտիվ գործոնի դերը պատմության մեջ, դրանով իսկ հեռանում հումանիզմից:

Պատմության փիլիսոփայական մեկնաբանության մեջ առանձին նշանակություն ունեցավ նեոկանտականության Բադենյան դպրոցի կողմից մշակված պատմական իմացության տեսությունը, որի ներկայացուցիչներն էին Վինդելբանդը և Ռիկկերտը: Վինդելբանդն արտահայտում էր այն տեսակետը, որ փիլիսոփայության առարկան ոչ թե իրականությունն է կամ իրականության առանձին բնագավառները, «այլ արժեքները, որոնք իրական չեն, գոյություն չունեն, բայց նշանակություն ունեն»³: Ռիկկերտը նույնպես գտնում էր, որ փիլիսոփայությունը պետք է ուսումնասիրությունը սկսի մշակութային արժեքներից, քանի որ պատմական զարգացումն արժեքների բյուրեղացման գործընթաց է. «Միայն պատմական նյութն ուսումնասիրելով՝ փիլիսոփայությունը կհասնի արժեքների աշխարհին»⁴: Ռիկկերտը միաժամանակ նշում է, որ փիլիսոփայությունը չի լուծվում պատմության մեջ, ընդհակառակը, այն պետք է ոչնչացնի մաքուր պատմականը, պատմությունից վերցնի այն, ինչ արժեքավոր է:

Ելնելով այն դրույթից, որ պատմական իրադրությունը եզակի, բացառիկ, անկրկնելի է՝ Ռիկկերտը եզրակացնում է, որ պատմության մեջ բացակայում են կրկնությունն ու կայունությունը, օրենքն ու օրինաչափությունը, որ պատմությունը շարադրում է միայն անհատական պատճառական կապերը, որոնք չեն ենթարկվում ընդհանրացման: Նա բացարձակացնում է եզակին, այն համադրում ընդհանուրին: Սակայն ցանկացած եզակի, անկրկնելի պատմական երևույթ, որքան էլ այն յուրահատուկ լինի, միևնույնն է, ենթարկվում է ընդհանուր օրենքի գործողությանը: Բացի այդ, ամեն մի պատմական

³ Виндельбанд В. Прелюди, М., 1998, с. 35.

⁴ Риккерт Г. О понятии философии, М., 1910, с. 41.

հասկացություն, որքան էլ այն սահմանափակ լինի իր ծավալով, բայց իր մեջ բովանդակում է ընդհանուրը: Ոչ ոք չի կասկածում սոցիալական, հասարակական, պատմական երևույթների եզակիության և անկրկնելիության հարցում, սակայն միակողմանի մոտեցում է, երբ պատմության գոյաբանական հատկանիշներ են համարվում միայն եզակին, անհատականը, անկրկնելին: Մյուս կողմից, եթե պատմական ճանաչողությունը քննարկում ենք միայն անհատական ձևով, ապա օրինաչափ հարց է ծագում, թե այդ դեպքում ինչպես կարող ենք բացատրել պատմական հասկացությունների կազմավորումը. չէ՞ որ հասկացությունն իր իմաստով ընդհանուր է, արտահայտում է երևույթների ընդհանուր հատկություններն ու հարաբերությունները: Անժխտելի է այն տեսակետը, որ, ինչպես գիտական իմացության, այնպես էլ պատմական իմացության խնդիրը եզակիի միջոցով ընդհանուրի ճանաչողությունն է: Ռիկկերտի կարծիքով պատմական իմացությունն առանձնացնում է այն ամենը, ինչը մեզ համար արժեք ունի: Միայն արժեքների շնորհիվ է հնարավոր դառնում պատմական դեպքերի զանազանության մեջ առանձնացնել էականը ոչ էականից. «Արժեքների օգնությամբ մենք նկատում ենք պատմական մի գործընթաց և հեռացնում, հետին պլան ենք մղում մեկ ուրիշը», - գրում է Ռիկկերտը⁵:

Անշուշտ, պատմության փիլիսոփայության վերլուծության, հասարակական կյանքի ճանաչողության բնագավառում չենք կարող անտեսել սոցիալական երևույթների գնահատման ու արժեքավորման կարևորությունը, քանի որ մարդ ոչ միայն ճանաչում է աշխարհը, այլև գնահատում, արժեքավորում աշխարհում կատարվող բոլոր երևույթները: Իմացության գործընթացում ճանաչողական և արժեքավորող կողմերը կապված են իրար հետ, լրացնում են միմյանց՝ ամբողջական դարձնելով աշխարհի գիտական պատկերը: Սոցիալական երևույթների արժեքավորումը որոշ մտածողներ դիտում են որպես անհատի ակտիվության դրսևորում, որովհետև ճանաչող սուբյեկտը սոցիալական հարաբերությունների պասիվ կրողը չէ, այլ ունի ընտրողական վերաբերմունք, սոցիալական երևույթներն արտացոլում է որոշակի գնահատման և արժեքավորման տեսանկյունից: Սոցիալական երևույթների գնահատման սուբյեկտիվությունից ելնելով՝ որոշ սոցիոլոգներ չեն ընդունում սոցիալական իրականության ոլորտում օբյեկտիվ ճշմարտության գոյությունը: Ամերիկյան սոցիոլոգ

⁵ **Риккерт Г.** Наука о культуре и наука о природе, СПб., 1911, с. 109.

Ջ. Ուիլլերի կարծիքով. «Սոցիալական տեսությունները ճշմարիտ չեն, եթե նույնիսկ համապատասխանում են փաստերին»⁶:

Այդ մասին Հեգելը նույնպես նշել է, որ սոցիալական ճշմարտությունը չի հանգում փաստականին, քանի որ ճշմարտությունը ոչ այնքան գոյաբանական, որքան իմացաբանական պայման է: Սոցիալական կյանքում ճշմարտությունը ոչ թե գիտելիքի համապատասխանությունն է փաստերին, այլ բանական իրականությանը: Սոցիալական փիլիսոփայությունը չի սահմանափակվում փաստերի օբյեկտիվ գրանցումներով, այլ այն ավելի խորն է գնում՝ ձգտելով վեր հանել սոցիալական երևույթների փոխազդեցության ներքին պատճառներն ու իմաստը: Առանց կյանքի իմաստի բացահայտման, որը մարդկային կեցության ոգին է, մարդը չի կարող բացահայտել և ճանաչել սոցիալական իրականության բարդ երևույթներն ու վեր հանել ներքին օրինաչափությունները:

Հ. Սպենսերը գտնում էր. «Ինչպես մարմնի ամեն մի օրգան մի աշխատանք է կատարում, այնպես էլ հասարակության ամեն մի խավ իր ֆունկցիան է իրականացնում»: Նա գտնում էր, որ մարմնի ներսում զլուխը կառավարում է, իսկ ուղքերը շարժվում են գլխին համապատասխան, հասարակության մեջ վերին խավը հրամայում է, ներքին խավը՝ ենթարկվում, կամ եթե երիկամները օրգանիզմը մաքրում են ավելորդ նյութերից, ոստիկանությունը հասարակությունն ազատում է անպետք մարդկանցից և այլն: Նրա սոցիալական էվոլյուցիայի տեսությունը մեխանիկական էր, միակողմանի և չէր բացատրում հասարակական երևույթների շարժման ներքին պատճառները: Պատահական չէ, որ այդ տեսությունը սուր քննադատության ենթարկվեց փիլիսոփաների և սոցիոլոգների կողմից:

Գ. Տարտը, Գ. Լեբոնը, Ֆ. Թեննիսը, Լ. Գումիլիվիչը, սոցիալական էվոլյուցիայի տեսությունը համարելով սահմանափակ, մերժեցին այն և զարգացրին սոցիալ-հոգեբանական տեսությունը, սոցիալական երևույթների ուսումնասիրության մեջ կարևորեցին անհատի հոգեբանական բարդ առանձնահատկությունները՝ գտնելով, որ սոցիալական յուրահատկությունը կապվում է ոչ թե կենսաբանական, այլ հոգեբանական գործոնի հետ: Սոցիալականը հանգեցնելով հոգեբանականին՝ այդ ուղղության տեսաբանները հոգեկանն ուսումնասիրում էին ֆիզիոլոգիական գործընթացների հետ կապված, հոգեկան երևույթների պատճառները տեսնում էին ֆիզիոլոգիականի գործունեության

⁶ Տե՛ս **Коршунов А., Мамонтов В.** Диалектика социального познания, М., 1988, с. 86:

մեջ: Հասկանալի է, որ ֆիզիոլոգիական մակարդակով հոգեկանի հետազոտությունը միակողմանի է, թերի, սահմանափակ: Սոցիալականի նկատմամբ հոգեբանական մոտեցումը հանգեցնում է պատմական գործընթացի հոգեբանականացման, բայց չի բացահայտում սոցիալական և հոգեբանական երևույթների միջև գոյություն ունեցող ներքին պատճառական կապերը:

Սոցիալ-հոգեբանական ուղղությանը բնորոշ է այն, որ անհատի հոգեբանությունը, սոցիալական ողջ իրականությունը ջանում է բացատրել կոլեկտիվ, հասարակական հոգեբանության առանձնահատկություններով: Ֆրանսիացի սոցիոլոգ Գ. Լեբոնը գտնում էր, որ պատմությունը լի է հատուկ իրադարձություններով, պատահականություններով, սակայն գոյություն ունեն պատմական ընթացքը կարգավորող անփոփոխ օրենքները, որոնք բխում են մասսաների հոգևոր նստվածքից. «Ժողովրդի կյանքը, նրա հիմնարկները, հավատալիքներն ու արվեստը միայն տեսանելի արդյունքներն են նրա անտեսանելի հոգու»⁷:

Սոցիալական իմացության և սոցիալական հոգեբանության բնագավառներում հեղաշրջում կատարեց ավստրիացի հոգեբան Զ. Ֆրոյդը, որը բացահայտեց հոգեկանի ուսումնասիրության նոր՝ հոգեվերլուծության տեսությունը: Համաձայն այդ տեսության՝ սոցիալական երևույթների մեկնաբանության բանալին պետք է փնտրել անհատի հոգևոր աշխարհի խորքերում, որտեղ փոխադարձաբար իրար են հաջորդում գիտակցականը, ենթագիտակցականը և անգիտակցականը: Նա գտնում էր, որ սոցիալական կեցության հիմքում ընկած են մարդկանց անգիտակցական, տարերային, առաջնային բնազդներն ու հակումները, որոնք առաջնորդվում են միայն բավարարման ցանկությամբ: Առանձին անհատը մշտապես ձգտում է իրականացնել «բավարարության սկզբունքի» իր ծրագիրը, իսկ Ես-ը միշտ ձգտում է ճնշել այդ ծրագիրը: Ես-ի ֆունկցիան հենց այն է, որ կարողանա բավարարության սկզբունքը փոխել իրականության սկզբունքով: Ֆրոյդի կարծիքով հասարակության զարգացումն ընթացել է բավարարման սկզբունքի սահմանափակման ուղղությամբ: Ուսումնասիրելով մարդու անգիտակցական աշխարհի միջուկը կազմող «առաջնային հակումները», հատկապես սեռական ձգտումը՝ Ֆրոյդը գտնում էր, որ այն ուղեկցում է մարդուն ողջ կյանքի ընթացքում՝ պատճառ հանդիսանալով անհատի և հասարակության միջև խոր հակասությունների: Սեռական բնազդի անբավարարությունը, սեքսուալ էներգիայի կուտակումը

⁷ Лебон Г. Психология народов и масс, СПб, 1896, с. 5.

կարող են հանգեցնել հակասոցիալական արարքների՝ բռնության, բռնաբարության, դաժանության, սպանության, վանդալիզմի, սադիզմի և այլ հանցավոր գործողությունների: Ֆրոյդի կարծիքով այդ բնազդները կարելի է խլացնել, մեղմել մշակույթի միջոցով, քանի որ մշակույթը պահանջում է հրաժարվել տարերային հակումներից, ագրեսիվ բնազդներից, որոնք սպառնում են կործանել քաղաքակրթությունն ու մշակույթը: Նա տվեց այն տեսակետը, որ մարդիկ մշակույթը ստեղծում են իրենց սեփական բնական բնույթից ազատվելու համար, որպես «արտաքին հարկադրանք»: Այս տեսակետից մշակույթի զարգացման խնդիրն է մարդկանց հաշտեցնել իրենց կրուսատների հետ: Ֆրոյդը ընդունում էր հոգեկանի սոցիալական պայմանավորվածության դրույթը՝ նշելով, որ մարդու հոգեկան կյանքը հոգեբանությունը միաժամանակ հասարակական հոգեբանություն է: Ուստի հոգեվերլուծությունը կարելի է տարածել նաև սոցիալական մշակույթների վրա: Քանի որ մշակույթը «մասսայական» է և ոչ թե անհատական, ապա առաջ է գալիս «մասսայական ներդրումների» հարցը (Ես-ի կողմից ճնշված բնազդները չեն անհետանում, այլ անցնում են անգիտակցական աշխարհի և դառնում ներդրումների պատճառ): Այս տեսակետից Ֆրոյդը սոցիալական հիվանդությունների բուժման միջոց էր համարում «սոցիալական ներդրումների հոգեվերլուծությունը»: Նա մշակույթային ստեղծագործությունները, հատկապես արվեստն ու կրոնը, դիտում էր որպես հոգեբուժության ձևեր, որպես «համամարդկային ներդրում» բուժման միջոցներ: Նրա կարծիքով կրոնական հավատալիքները պատրանքներ են, որոնք հնարավոր չէ ո՛չ ապացուցել, ո՛չ հերքել, սակայն դրանց միջոցով բավարարում են մարդկանց անգիտակցական հակումները:

Ֆրոյդի տեսությանը հակադրվում է նրա աշակերտը, շվեդ հոգեբան Կ. Յունզը, որի կարծիքով մարդկային բնազդները չունեն կենսաբանական, բնական բնույթ, այլ խորհրդանշական են, ձևական և միայն գիտակցության դաշտ թափանցելիս են բովանդակություն ստանում: Վերլուծելով կոլեկտիվ անգիտակցականի նախատիպերը՝ Յունզը նշում էր այն տեսակետը, որ եվրոպական քաղաքակրթության զարգացումը հանգեցնում է մշակութային ռացիոնալությանը, որն աստիճանաբար մարդկային հոգեկանից վտարում է նախատիպերի դրսևորման զանազան ձևերը՝ պատճառ դառնալով բազմաթիվ ներդրումների: Նեոֆրոյդիստներն ավելի շատ ուշադրություն են դարձնում սոցիալական բնազդների վերլուծությանը և գտնում են, որ ներդրումները պայմանավորված են մարդկանց սոցիալական պայմաններով (Թ. Ադլեր, Կ.Խորնի, Ռ. Ռեյխ): Նեոֆրոյդիստները բացահայտեցին մարդկանց որոշ շերտերին

ներհատուկ քաղքենիական ու սպառողական հոգեբանությունը, սոցիալական լճացումն (ինդիֆերենտիզմ) ու հարմարվողականությունը (կոնֆորմիզմ), սոցիալական պասիվությունն ու անտարբերությունը: Նեոֆրոյդիզմի հայեցակետում հոգեկանը թեև ունի սոցիալական պայմանավորվածություն, չնայած կրում է սոցիալականի ազդեցությունը, բայց հակազդեցություն չի թողնում սոցիալականի վրա: Նեոֆրոյդիզմի հայտնի տեսաբան է. Ֆրոյդի կարծիքով սոցիալական միջավայրը միայն բացասաբար է ազդում անհատի վրա: Սոցիալական միջավայրը ոչ միայն անկախ է մարդուց, այլև հակադիր է նրա պահանջներին, ձգտումներին և հակումներին, այդ պատճառով էլ իրականության հետ բախվելը հանգեցնում է մարդու բնական պահանջմունքների ճնշման, բնական էության խեղաթյուրման, իսկ մարդու հոգևոր ողջ էներգիան ծառայում է սոցիալական միջավայրի վնասակար ազդեցություններից պաշտպանվելու համար:

Սոցիալականի բացասական ներգործությունը բացարձակացվում է հատկապես էքզիստենցիալիզմի (կեցության փիլիսոփայություն) տեսության մեջ, որտեղ հասարակությունը դիտվում է որպես մարդուց անկախ, միանգամայն օտար, թշնամական ուժ, «անիսկական կեցություն», որի մեջ մարդը կորցնում է իր անհատականությունը, սուբյեկտիվությունը, ազատությունը և դառնում է «ոչինչ», այսինքն՝ անդեմ էակ: Հիմնվելով այն տեսակետի վրա, որ հասարակական կյանքը օտարված, անդեմ հարաբերությունների ոլորտ է՝ էքզիստենցիալիստները գտնում են, որ հասարակության ոլորտում կարևորը ոչ թե սոցիալական հաղորդակցումն է, այլ ռեֆլեքսային (գիտակցության) միջոցով սեփական կեցության մեջ խորանալը: Յասպերսը կարծում էր, որ սոցիալական հաղորդակցման ժամանակ մարդկանց միջև ձևավորվում են միայն արտաքին կապեր, քանի որ մարդ այդ դեպքում հանդես է գալիս որպես որևէ հանրության մի մաս (ընտանիքի, ազգի, պետության և այլն): Միայն էքզիստենցիալ հաղորդակցման ժամանակ է մարդը բացահայտում կեցության հետ ունեցած ներքին կապերը: Այս տեսակետից անհատի ու հասարակության, մարդու և աշխարհի փոխհարաբերության փիլիսոփայական մեկնաբանության մեջ իմացաբանական կարևոր նշանակություն ունի ֆենոմենոլոգիայի (ֆենոմեն նշանակում է երևույթ) ուղղությունը, որի հիմնադիրը գերմանացի փիլիսոփա Գ. Հուսեռլն էր: Նրա կարծիքով պետք է հաղթահարել փիլիսոփայական այն աշխարհըմբռնումը, երբ աշխարհը մեկնաբանվում է որպես մարդուն օտար, խորթ և անիմաստ կեցություն: Հուսեռլը գտնում էր, որ աշխարհը պետք է լինի ոչ թե ինքն իր համար կամ աշխարհը իր մեջ, այլ աշխարհը՝

մարդու, սուբյեկտի համար, որովհետև աշխարհի մասին վերացարկուններն առանց մարդու «ընդունակ չեն թափանցելու կենդանի մարդկային աշխարհը՝ որպես անհատական իմաստի և էության ձգտման մեջ»⁸: Նրա կարծիքով փիլիսոփայության մեջ առաջին պլան պետք է մղվի սուբյեկտը, սակայն ճշմարտությունը պետք է անկախ լինի ոչ միայն սուբյեկտից, այլև օբյեկտից, լինի «ինքնին» որպես բարձրագույն արժեք:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում են մարդկային պատմության և հասարակության վերաբերյալ գոյություն ունեցող տարբեր տեսություններ, որոնք միանգամայն տարբեր տեսանկյուններից են մեկնաբանում պատմության բնույթը, հասարակության շարժման, զարգացման օրինաչափությունները կամ էլ հասարակական երևույթների միջև եղած պատճառական և ֆունկցիոնալ կապերը: Պատմական իմացության կամ սոցիալական բարդ իրականության վերլուծությունը ներկայացվում է մի քանի՝ մարքսիզմի, նեոկանտականության, արժևորման, սոցիալ-հոգեբանական, հոգեվերլուծության, էքզիստենցիալիզմի տեսական կոնցեպցիաների օգնությամբ՝ նշելով նրանց պոզիտիվ և թերի կողմերը:

Բանալի բաներ – մարդկային պատմություն, փիլիսոփայական տեսություն, շարժում, զարգացում, օրինաչափություն, գիտական ճանաչողություն, պատճառական և ֆունկցիոնալ կապեր:

ТЕОРЕТИЧЕСКИЕ КОНЦЕПЦИИ АНАЛИЗА ЧЕЛОВЕЧЕСКОЙ ИСТОРИИ И СОЦИАЛЬНОЙ РЕАЛЬНОСТИ

РАЗМИК СААКЯН

В статье анализируются существующие теории человеческой истории и общества, интерпретирующие с разных углов зрения природу истории, закономерности движения и развития общества, причинные и функциональные связи между общественными явлениями. Анализ исторического познания или сложной социальной реальности проведен при помощи теоретических концепций марксизма, неокантианства, аксиологии, социальной психологии, психоанализа, экзистенциализма; отмечены их сильные и слабые стороны.

⁸ Տե՛ս Журнал “Философские науки”, 1986, № 8, с. 140:

Ключевые слова – человеческая история, философская теория, движение, развитие, закономерность, научное познание, причинные и функциональные связи.

INVESTIGATION OF THEORETICAL CONCEPTS IN HUMAN HISTORY AND SOCIAL REALITY

RAZMIK SAHAKYAN

Sahagyan considers different theories of human history and sociology. These theories interpret the nature of history, social movement and progress regularities or the causal and functional associations that exist among social phenomena in a variety of ways. Sahagyan carries out his investigation of human history or complex reality of social life with the help of theoretical concepts of K. Marx, neo-kantianism, socio-psychological, psychoanalysis, and theoretical concepts of existentialism, referring to the positive and negative points of each.

Key words – human history, the theory of philosophy, movement, development, regularity, scientific recognition, ties of cause and function.

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԸ

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Հողվածս խոնարհումով նվիրում եմ Մեծ հայրենականում զոհված պապիս՝ Հայկ Սեդրակի Ճշմարիտյանի անթառամ հիշատակին

Մայրս ընդամենը երկու տարեկան էր, երբ 1939թ. նոյեմբերին վերջին անգամ նրան գրկեց ու համբուրեց հայրը՝ Ստեփանավանի «Սոցիալիստական անասնապահություն» շրջանային թերթի խմբագիր, Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտ Հայկ Ճշմարիտյանն ու կամավոր մեկնեց Կարմիր Բանակ՝ զինվորական ծառայության, մասնակցեց Սովետա-Ֆինլանդական, ապա՝ Հայրենական մեծ պատերազմներին: 30-ամյա գնդացրորդ-լեյտենանտ Հայկ Ճշմարիտյանը զոհվեց 1942թ. փետրվարին, Բելոռուսիայում:

Ես ծնվել եմ պապիս զոհվելուց 26 տարի անց, ճանաչել եմ նրան լուսանկարներով և նամակներով¹: Եվ ես ուզում եմ, ոչ՝ պահանջում, որ պատերազմների պատճառով աշխարհում այլևս ոչ մի մանուկ չորբանա, ոչ մի թողնիլ առանց պապիկ չմեծանա...

* * *

Ֆաշիստական Գերմանիան «սրբագրեց» հայ կոմպոզիտորներից շատերի կյանքն ու ստեղծագործությունը: Նրանց մի մասը զոհվեց՝ անավարտ թողնելով իրենց ծրագրերը, իսկ հայ երաժշտությունը զրկվեց այդպես էլ չստեղծված բազմաթիվ ստեղծագործություններից: Ռազմի դաշտում ընկան 33-ամյա Թունիկ Հովհաննիսյանը (1908-1941), Սպիրիդոն Մելիքյանի որդին՝

¹ Պապիս՝ Հայկ Ճշմարիտյանի մասին տե՛ս Լուսանկարներով և նամակներով ճանաչվող հայրը, **Գրիգորյան Սասուն**, Մուսաները չլռեցին, Երևան, 1989, էջ 322-330:

28-ամյա Հրաչիկ Մելիքյանը (1913-1941), 35-ամյա Միքայել Չաղայանը (1907-1942), 36-ամյա Կոնստանդին Շլոյանը (1905-1941), 37-ամյա Ստեփան Տերտերյանը (1906-1943), 34-ամյա Հովհաննես Նադիրյանը (1907-1941)...²: Հավերժ փառք Հայրենիքի պաշտպան հերոսներին:

Հայ կոմպոզիտորներից ոմանք էլ, անցնելով պատերազմի արհավիրքների միջով՝ բարեբախտաբար, հաղթանակած վերադարձան և իրենց տաղանդով ծառայեցին հարազատ ժողովրդին:

Հայրենական մեծ պատերազմն ընդհատում է **Արամ Սաթունցի** ուսումնառությունը Բաքվի կոնսերվատորիայում: Պատերազմի առաջին իսկ օրերից նա Սովետական բանակի շարքերում է, 89-րդ հրաձգային հայկական դիվիզիայի կազմում, որտեղ հիմնական ծառայությանը զուգահեռ կազմակերպում է 15 երաժշտից բաղկացած կարմիրբանակային ինքնագործ էստրադային նվագախումբ, համերգներ տալիս զինվորական մասերի և ստորաբաժանումների ակումբներում, հոսպիտալներում կատարում սովետական հեղինակների երգեր և քայլերգեր, իր արվեստով ոգևորում զինվորներին՝ դեպի մեծ ու հերոսական սխրանքներ, նրանց ներշնչում քաջության ու համարձակության զգացում, հավատ հաղթանակի հանդեպ:

Մեծ հայրենականի առաջին իսկ օրերից ողջ ուժով հնչում է Սաթունցի հայրենասիրական քնարը. «Մահ դահիճներին» (խոսք՝ Ս.Գրիգորյանի), «Հաղթանակը մերն է» (խոսք՝ Վ.Աղայանի), «Առաջ դեպի հաղթանակ» (խոսք՝ Ն.Ասեևի), «Փառք Սովետական բանակին» (խոսք՝ Ա.Գրաշու) երգերը երգում էին ոչ միայն զինվորները, այլև «կատարում էին Բաքվի Մ.Ախունդովի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի և ֆիլիարմոնիայի արտիստները, նախքան ներկայացումների սկսվելը»³:

Տարիներ անց Ա.Սաթունցը կասի. «Ես երգով եմ գնացել մարտի և մարտը շահել եմ երգով»⁴:

Մասնակցությունը Մեծ հայրենականին պայմանավորեց կոմպոզիտորի հետագա ստեղծագործության վառ արտահայտված ռազմահայրենասիրական դիմագիծը: Հայրենասիրական երգեր նա ստեղծեց նաև պատերազմից հետո՝ իր ստեղծագործական ողջ կյանքի ընթացքում... 1975-1985 թվականներին Ա.Սաթունցը հրատարակում է ռազմահայրենասիրական երգերի 5 ժողովա-

² Տե՛ս **Գրիգորյան Սասուն**, Մուսաները չլռեցին, էջ 7, 25-52:

³ **Արազյան Թերեզա**, Արամ Սաթունց, Երևան, 1971, էջ 12:

⁴ **Գրիգորյան Սասուն**, Մուսաները չլռեցին, էջ 14:

ծուներ⁵, որտեղ ընդգրկում է իր քայլերգերն ու ռազմական երգերը, հայ մյուս կոմպոզիտորների նմանատիպ ստեղծագործությունները: Սաթունցը հայ կոմպոզիտորներից առաջինն էր, ով 1974-ին արժանացավ Ալեքսանդրովի անվան մեդալի՝ իր հայրենասիրական երգերի և փողային նվագախմբի համար գրված Տոնական-պարային սյուիտի համար:

Ավելի քան 25 տարի Սաթունցը ղեկավարել է Հայաստանի կոմպոզիտորների միության ռազմահայրենասիրական երաժշտության սեկցիան: Նա ռազմական-շեֆական աշխատանքի վետերան էր: Ավելի քան 50 տարիների ընթացքում նա մեծ ջանքեր է ներդրել հայ կոմպոզիտորների ու կատարողների և Սովետական Հայաստանի զինվորների ու սահմանապահների միջև հանդիպումների կազմակերպման գործում: Այդ ստեղծագործական հանդիպումները կազմակերպվում էին ամեն տարի՝ Սովետական բանակի տոնի նախօրյակին հաջորդաբար Երևանում, Թբիլիսիում և Բաքվում: Զինվորների ու սպաների՝ իր կազմով բազմազգ այդ լսարանը ծանոթանում էր սովետական կոմպոզիտորների ստեղծագործությունների հետ, որոնք հնչում էին ռուսերեն, հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն, ուկրաիներեն և այլ լեզուներով: Նրա մահից երեք տարի առաջ՝ 1987-ին Երևանում անցկացվեց Անդրկովկասի կոմպոզիտորների և կատարողների 20-րդ հոբելյանական հանդիպումը Սովետական Միության Զինված ուժերի զինվորների և սահմանապահների հետ: ՍՍՀՄ Զինված ուժերի հետ տարած կուլտուրական-շեֆական աշխատանքի համար Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած հաղթանակի 30-ամյակի կապակցությամբ Սաթունցի անունը գրվել է Համամիութենական Պատվո գրքում: Նա պարգևատրվել է Հայրենական պատերազմի շքանշանով 1985-ին:

1941-ի մայիսին բանակ է զորակոչվում հետազայում 57-րդ բանակի 155-րդ գնդի հետախույզ-կապավոր, կոմպոզիտոր **Գևորգ Արմենյանը**՝ իր հետ տանելով իրեն ուղղված մոր խրատները. «Ընկերոջդ կվիրավորեն՝ սանիտարի չսպասես, առաջին օգնությունը դու պիտի հասցնես: Մի կտոր հացն էլ պիտի կիսես ընկերոջդ հետ»⁶: Գ.Արմենյանը Թբիլիսիից մինչև հեռավոր Հունգարիա

⁵ 1975, Նվիրված է ֆաշիստական Գերմանիայի դեմ հաղթանակի 30-ամյակին, 1978, Նվիրված է Սովետական բանակի 60-ամյակին, 1980, «Երգի՛ր, Երկիր իմ Նաիրի», հայերեն և ռուսերեն լեզուներով, Նվիրված է Սովետական Հայաստանի 60-ամյակին, 1985, Նվիրված է Հաղթանակի 40-ամյակին, 1988, Նվիրված է Սովետական բանակի 70-ամյակին:

⁶ Տե՛ս **Գրիգորյան Քնարիկ**, Գևորգ Արմենյան, Երևան, 1981, էջ 17-18:

է հասնում «ռումբերի, արկերի, գնդակների տարափի տակ, ճաշակում հաղթանակի քաղցրությունը»⁷: Պատերազմի ընթացքում Արմենյանը գրում է «Երգ գեներալ Կնիգայի մասին» (խոսք՝ Ի.Սելվինսկու, 1942), «Եթե վիրավորվես դու կռվում» (խոսք՝ Ի.Ուոլկինի, 1943), «Փառք կապավորներիին» (խոսք՝ Ի.Լուպատինի, 1943) երգերը⁸: Գ.Արմենյանը պարզևատրվել է ՀՄՊ 2-րդ աստիճանի շքանշանով և մի շարք մարտական մեդալներով:

Մոսկվայի Գնեսինների անվան երաժշտական ուսումնարանն ավարտելուց անմիջապես հետո 1939-ին **Ղազարոս Սարյանը** զորակոչվում է բանակ, ծառայում է Կիևում՝ հակաօդային պաշտպանության գնդերում: Ստանալով գնդացրորդի մասնագիտություն՝ ուղարկվում է Լվով, ապա 1941-ի հունիսի 18-19-ին զորաշարժերի մասնակցելու հրամանով՝ վերաբաշխվում սահման, որտեղ էլ վրա է հասնում Հայրենական մեծ պատերազմը: Ասում են, թե ինչ-որ ակումբում ռազմիկները հայտնաբերում են բայան: 7-րդ զենիթահրետանային գնդի կոմիսար Միխայիլ Գրիբենյուկի խիստ կարգադրությամբ սերժանտ Ղազարոս Սարյանը 3 օրվա ընթացքում տիրապետում է բայան գործիքի իրեն անձանոթ նվագին: «Այդ օրից ի վեր բայանը դարձավ թե՛ Ղազարոսի, թե՛ իր համագնդեցիների անբաժան ուղեկիցը: Սերժանտ Սարյանն իրեն բնորոշ կազմակերպվածությամբ և սխրանքով զուգակցում էր գնդացրորդի և բայանիստի պարտականությունները»⁹:

Մարտերից մեկում գնդացրորդ Սարյանը ոչնչացնում է հակառակորդի «Յունկերս» ինքնաթիռը, ինչի համար պարգևատրվում է «Մարտական ծառայությունների համար» մեդալով: Իսկ բայանիստ Սարյանի նվագակցությամբ համագնդեցիները երգում էին նրա հեղինակած երգերը, երգում էին ու պարում: «Պարում էին թեժ մարտերի, ռմբակոծությունների կարճ դադարների ժամանակ: Պարում էին կիլոմետրեր անցած իրեն հոգնած, երբեմն՝ արյունոտված ոտքերով, սերժանտ Սարյանի բայանի նվագակցությամբ»¹⁰:

Հարավարևմտյան ռազմաճակատի Հակաօդային պաշտպանության 7-րդ զենիթահրետանային գնդի կոմիսար Միխայիլ Գրիբենյուկի հանձնարարությամբ 1942-ի դեկտեմբերին Սարյանը 1942-ի նոյեմբերին զոհված իր համագնդեցի Ալեքսեյ Նիկիտինի խոսքերով գրում է «Платочек» երգը¹¹:

⁷ Տե՛ս **Գրիգորյան Սասուն**, Մուսաները չլռեցին, էջ 13:

⁸ Տե՛ս **Գրիգորյան Քնարիկ**, Գևորգ Արմենյան, էջ 101:

⁹ Ղազարոս Սարյանը և նրա ժամանակը, Երևան, 2013, էջ 283:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 284:

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 334-337:

1944 թվականի հունվարին հրաման է ստացվում մասնակցել Հարավարևմտյան ռազմաճակատի գեղարվեստական ինքնագործունեության ստուգատեսին, որը տեղի էր ունենալու Մոսկվայում: Փետրվարին մի մեծ խումբ գնդացրորդներ իրենց ղեկավարներով գալիս են Մոսկվա: Ղեկավարներն էին կոմպոզիտոր, նվագակցող, երաժշտական մոնտաժների հեղինակ Լազար Սարյանը, ռեժիսոր Պյոտր Սլոնիմը, բանաստեղծ Գրիգորի Կնյազևը, նկարիչ Միխայիլ Տուրչինը, մենակատարուհի Կատյա Տկաչենկոն: Ստուգատեսին մասնակցելու փորձերը տեղի էին ունենում կոմպոզիտորի հոր՝ Մարտիրոս Սարյանի մոսկովյան արվեստանոցում:

Ստուգատեսը տեղի է ունենում Մոսկվայի Կարմիր Բանակի Կենտրոնական տանը: Մրցությանը մասնակցում էին ճակատային տարբեր անսամբլներ, համերգային կոլեկտիվներ: Եվ առաջին մրցանակը շնորհվում է 7-րդ գեներալիտանային գնդի ինքնագործունեությանը: Սարյանը, Սլոնիմը և Կնյազևը պարզևատրվում են «Կարմիր աստղ» շքանշանով: Իսկ ժյուրի նախագահ Իսահակ Դունասկին Սարյանին ասում է. «Ձեր ինքնագործունեությունից փամփուշտի հոտ էր գալիս»¹²:

Ի դեպ՝ Ստուգատեսին նրանց մասնակցությունը սկսվել էր Գրիգորի Կնյազևի խոսքերով 1944թ. հունվարին Սարյանի գրած «На страже Киева. Песня 7-го корпуса ПВО» երգով¹³:

Ստուգատեսում ունեցած փայլուն հաջողությունից հետո Սարյանին տեղափոխում են Հարավարևմտյան ռազմաճակատի ազիտրիգադ, որտեղ նա ղեկավարում է երաժշտական մասը, նվագում բայան, նվագակցում երգիչներին և պարողներին, իսկ ամենակարևորը՝ հորինում երգեր:

Իսկ այդ ընթացքում թիկունքում՝ Հայաստանում ակտիվ բաբախում էր հայ երաժշտական կյանքի զարկերակը:

Հայրենական մեծ պատերազմի դաժան տարիներին հայ երաժշտության մեջ, բնականաբար, մեծ տեղ են գրավում Հայրենիքի պաշտպանության, նրա հերոսական անցյալի, հայրենասիրության թեմաները, ինչպես նաև հանուն հայրենիքի միասնական ընտանիքով ուղքի ելած ժողովուրդների բարեկամության թեման:

Ինտենսիվ ու արդյունավետ էր հայ կոմպոզիտորների գործունեությունը: «Այդ տարիները դարձան կոմպոզիտորների ստեղծագործական ուժերի գաղա-

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 285-286:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 330-333:

փարական հասունության, ժողովրդի պահանջներին արժանի պատասխան տալու և կյանքի կողմից առաջադրված խնդիրները լուծելու ունակության լուրջ ստուգատես»¹⁴: Միանգամայն օրինաչափ էր ու բնական ձգտումը դեպի խոշոր ձևերը:

Մեծ հայրենականի կերպարներն իրենց արտացոլումը գտան հայ կոմպոզիտորների ստեղծագործություններում: Այսպես՝ Լենինգրադի պաշտպանության մասին էր Մեծ հայրենականի տարիներին գրված Լ.Խոջա-Էյնաթյանի «Երեք հանդիպում» օպերան, որը բեմադրվեց 1954թ. Ստալինաբադի օպերայի և բալետի թատրոնում:

Աճում է հերոսական-հայրենասիրական, ազգային-ազատագրական և պատմական թեմատիկայով ստեղծագործությունների թիվը: Արմեն Տիգրանյանն սկսում է աշխատանքները «Դավիթ-Քել» օպերայի վրա: Երևանի օպերային թատրոնը ձեռնամուխ է լինում հայկական առաջին օպերայի՝ Տիգրան Չուխաճյանի «Արշակ Երկրորդի» բեմադրությանը:

Ստեղծվում են սիմֆոնիաներ, կոնցերտներ, ծրագրային սիմֆոնիկ պոեմներ, նախերգանքներ, սյուիտներ, այդ թվում՝ Ալեքսանդր Հարությունյանի Սիմֆոնիկ նախերգանքը, Առնո Բաբաջանյանի դաշնամուրային կոնցերտը, Սերգեյ Բալասանյանի «Հայկական ռապսոդիան», Գրիգոր Եղիազարյանի «Հայաստան» սիմֆոնիկ պոեմը, Հարո Ստեփանյանի Առաջին սիմֆոնիան, Անուշավան Տեր-Ղևոնդյանի Պարային սյուիտը, Արամ Սաթուրցի «Չանգեզուր» պոեմը սիմֆոնիկ նվագախմբի համար և, իհարկե, Արամ Խաչատրյանի Երկրորդ սիմֆոնիան:

Գ.Եղիազարյանի «Հայաստան» սիմֆոնիկ պոեմը (1942) նշանակալի դեր կատարեց հայ երաժշտության մեջ: Պոեմում արտացոլվեցին հայ ժողովրդի կյանքի և պայքարի փուլերը՝ ծանր անցյալը, վերածննդի բերկրանքը, Մեծ հայրենականի դաժան տարիները և թշնամու հանդեպ հաղթանակը: «Հեղինակը գտնում է իր մտահղացման ինքնատիպ լուծում: Մեկմասանի սիմֆոնիկ պոեմը բաժանվում է չորս խոշոր բաժինների, որոնցում հաջորդաբար մարմնավորվում են հայ ժողովրդի անցյալի և ներկայի պատկերները»¹⁵:

¹⁴ Коптев С., Тэрьян М., Рухкян М. Симфоническая музыка и инструментальный концерт // Музыкальная культура Армянской ССР, сб. статей, Москва, «Музыка», 1985, с. 165.

¹⁵ Նույն տեղում, էջ 166:

Վոկալ-սիմֆոնիկ երաժշտության մեջ առանձնանում են Ռոբերտ Աթայանի «Ազատության զանգ» վոկալ-սիմֆոնիկ պատկերը՝ Ավ.Իսահակյանի խոսքերով, Ադամ Խուդոյանի «Բալլադը բասի և նվագախմբի համար», Կարո Զաքարյանի «Երկիր իմ հայրենի» կանտատը՝ Հովհաննես Շիրազի խոսքերով, Վարդան Տիգրանյանի «Հանդիսավոր կանտատը»՝ Գեղամ Սարյանի խոսքերով և այլն:

1944-ին Արամ Խաչատրյանն ստեղծում է Հայկական ԽՍՀ պետական հիմնը՝ երգչախմբի և մեծ սիմֆոնիկ նվագախմբի համար գրված վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունը (բանաստեղծական տեքստը՝ Սարմենի, ռուսերեն թարգմանությունը՝ Ա.Տեր-Հակոբյանի)¹⁶:

Արժեքավոր գործեր են ստեղծվում կամերային երաժշտության բնագավառում, այդ թվում՝ Հարո Ստեփանյանի Ջութակի և Թավջութակի սոնատները (1943), Ն.Չեմբերջիի Երրորդ կվարտետը (1943, ՍՍՀՄ Պետական մրցանակ՝ 1946), Լ.Խոջա-Էյնաթովի Տրիոն՝ նվիրված Ալեքսանդր Սպենդիարյանի հիշատակին (1943), Ա.Բաբաջանյանի Լարային N 1 կվարտետը (1943) և «Վաղարշապատի պարը» (1944), Գայանե Չեքոտարյանի Սոնատը (1943), բազմաթիվ երգեր, այդ թվում՝ Աշոտ Սաթյանի հեղինակած «Մարտիկի երգը»:

Մեծ հայրենականի օրերին Պերմ տեղափոխված Լենինգրադի Կիրովի անվան օպերայի և բալետի թատրոնի առաջարկությամբ Ա.Խաչատրյանը շարունակում է «**Գայանե**» բալետի ստեղծումը, որի լիբրետոն նախքան պատերազմը կոմպոզիտորի հետ սերտ համագործակցությամբ ստեղծել էր Կ.Դերժավինը:

1942-ի դեկտեմբերի 9-ին Պերմում տեղի է ունենում Լենինգրադի օպերայի և բալետի թատրոնի՝ «Գայանե» բալետի բեմադրությունը (բալետմայստեր՝ Ն.Անիսիմովա)¹⁷: «Գայանեի» համար հեղինակին 1943-ին երկրորդ

¹⁶ Մեկ տարի անց, 1945-ին, Երևանում լույս է տեսնում հիմնի Փոխադրությունը երգչախմբի և դաշնամուրի համար, իսկ Պարտիտուրը և Փոխադրությունը փողային նվագախմբի համար հրատարակվում են 1947-ին:

¹⁷ Երևանի օպերայի և բալետի թատրոնում «Գայանեի» պրեմիերան տեղի ունեցավ 1947-ի հուլիսի 26-ին (բալետմայստեր՝ Անիսիմովա): 1952-ին «Գայանեն» բեմ է բարձրանում Լենինգրադի Կիրովի անվան թատրոնում, իսկ 1957-ի մայիսի 22-ին «Գայանեի» երկար սպասված պրեմիերան է Մոսկվայի Մեծ թատրոնում (նոր խմբագրությամբ, լիբրետոյի հեղինակ՝ Բ.Պլետնյով, բալետմայստեր՝ Վ.Վայոնեն): Շուտով «Գայանեն» իր տեղն է գրավում Երևանի, Կիևի, Սվերդլովսկի, Բեռլինի, Լայպցիգի, Վայմարի, Բուդապեշտի, Բրատիսլավայի, Սոֆիայի, Ուլան-Ուլեի, Տայլինի, Վորոնեժի, Սվերդլովսկի,

անգամ շնորհվում է ՍՍՀՄ Պետական մրցանակ¹⁸:

1943-ի հոկտեմբերի 3-ին Մոսկվայի Միությունների տան սյունագարդ դահլիճում, Համամիութենական ռադիոկոմիտեի Մեծ սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ, Նիկոլայ Գոլովանովի ղեկավարությամբ առաջին անգամ հնչում է «Գայանե» բալետից առաջին սյուիտը: Բալետից առանձին հատվածներ շարունակում են իրենց համերգային կյանքն անկախ բալետից, իսկ «Սուսերով պարը», հիրավի, հայտնի է ամբողջ աշխարհում:

«Գայանեի» երաժշտության ուժեղ կողմը ժողովրդականությունն է: Սրանում կոմպոզիտորը լայնորեն օգտագործում է ժողովրդական երաժշտության նմուշներ¹⁹, դիմում աշխատանքային երգերի, կատակերգերի, քնարական, հերոսական երգերի ու պարերի, աշուղական մեղեդիների: Ընդ որում՝ ինչպես հայկական, այնպես էլ ռուսական, ուկրաինական, վրացական ու քրդական: Ըստ էության՝ «Գայանեն» հայ ժողովրդական երաժշտության բարձրարժեք մշակման և սիմֆոնիզացիայի օրինակ է, որտեղ ժողովրդական երաժշտության առանձնահատկություններով է ներծծված ողջ երաժշտական կտավը, այդ թվում՝ կոմպոզիտորի սեփական թեմաները: «Գայանեն» «ժողովրդական մեղեդիների կիրառման վրա հիմնված հսկայական դրամատիզացված երաժշտական խորեոգրաֆիկ ռապսոդիա է: Սա հայկական երաժշտա-խորեոգրաֆիկ արվեստի պատմության մեջ այդքան մեծ և լարված սիմֆոնիկ զարգացմամբ ներթափանցված առաջին ստեղծագործությունն է»²⁰:

1942թ. փետրվարի 9-ին եղբորը՝ Վաղինակ Խաչատուրյանին հասցեագրած նամակում Արամ Խաչատուրյանը գրում է. «Я задумал несколько больших работ, посвященных героям Отечественной войны»²¹:

1943-ի հուլիսին Ա.Խաչատուրյանը սկսում է **Երկրորդ սիմֆոնիան** (e-moll)²², որի կլավիրն ավարտում է նույն թվականի սեպտեմբերի 10-ին, իսկ գործիքավորումը՝ աշնանը:

Չեյկովսկի, Նովոսիբիրսկի, Վիբադենի, Ռիգայի օպերային թատրոնների խաղացանկերում:

¹⁸ Ա.Խաչատուրյանին առաջին անգամ ՍՍՀՄ Պետական մրցանակ շնորհվել էր 1941-ին՝ Ջուֆակի կոնցերտի համար:

¹⁹ Այդ թվում՝ «Փշատի ծառ», «Գնա արի ման արի», «Շալախո», «Ուզունդարա» ևն:

²⁰ **Тигранов Г.** Оперное и балетное творчество // Музыкальная культура Армянской ССР, сб. статей, Москва, 1985, с. 74.

²¹ Арам Хачатурян. Письма, Ереван, 1983, с. 26.

²² Арам Хачатурян, Собрание сочинений в двадцати четырех томах, том 2, Симфония N 2, N 3, партитура, Москва, 1984.

Կոմպոզիտորի խոսքերով՝ Սիմֆոնիայի գաղափարը կապված է Հայրենական մեծ պատերազմի ահեղ իրադարձությունների հետ: «Ես ուզեցի արտահայտել ցասման, վրեժի զգացումն ընդդեմ չարիքի, որ մեզ պատճառեց գերմանական ֆաշիզմը: Մյուս կողմից՝ սիմֆոնիայում արտահայտված է վշտի տրամադրությունն ու մեր վերջնական հաղթանակի հանդեպ խորը հավատը»²³:

1943-ի դեկտեմբերի 30-ին Մոսկվայի կոնսերվատորիայի մեծ դահլիճում ՍՍՀՄ Պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ, Բորիս Խայկինի ղեկավարությամբ հնչում է Երկրորդ Սիմֆոնիան²⁴: Պրեմիերայից օրեր անց Խաչատրյանը գրեց. «Իմ Երկրորդ սիմֆոնիան չունի գրական ծրագիր. Ընդհանրացված երաժշտական կերպարներում ես ձգտել եմ մարմնավորել այն մտքերն ու զգացմունքները, որոնցով այսօր ապրում է մեր ժողովուրդը... Սիմֆոնիայի առաջին մասը խտացնում է պայքարի առավել լարվածությունը, դաժանությունն ու դրամատիզմը: Նախաբանում զանգերի հարվածները (հանդիպում են նաև սիմֆոնիայի վերջում) ընդգծում են կատարվածի նշանակալիությունը, ստիպում կենտրոնանալ»²⁵: Հենց այդ հնչողություններն էլ Գ.Խուբովին հնարավորություն ընձեռեցին կոմպոզիտորի համաձայնությամբ Սիմֆոնիան անվանել «Ձանգով սիմֆոնիա»: Սիմֆոնիայի՝ սգո երթի բնույթ ունեցող երկրորդ մասում՝ Andante-ում, կոմպոզիտորն օգտագործել է Ավ.Խսահակյանի բանաստեղծության հիման վրա ստեղծված ժողովրդական «Որսկան ախպեր» երգի մեղեդին, որն իր մանկության տարիներին երգում էր մայրը: «Երգում էր նա ամենից հաճախ շատ տխուր մեղեդիներ: Հիշում եմ, թե ինչպես էր արտասվում՝ «Որսկան ախպերը» երգելիս: Բոլորովին վերջերս եմ իմացել, որ ժողովրդական երգը հորինվել է հայ մեծ բանաստեղծ Ավետիք Խսահակյանի բանաստեղծության հիման վրա, ինչի մասին պատկերացում անգամ չունի երգը երգող ժողովուրդը»²⁶: Ֆինալում (IV մաս) ավարտվում է ստեղծագործության գեղարվեստական մտահղացումը: Կյանքի հաստատման գաղափարն այստեղ մարմնավորվել է ինքնատիպ սիմֆոնիկ ձոնում:

Իր ստեղծագործական կենսագրության մեջ կոմպոզիտորը մեծ տեղ էր տալիս Երկրորդ սիմֆոնիային: «Եթե տասը տարի առաջ գրված առաջին

²³ Беседа с композитором Арамом Хачатуряном, Коммунист, 1944, 7 июля.

²⁴ Սիմֆոնիան տևում է 50 րոպե: Առաջին անգամ պարտիտուրը հրատարակվել է 1946-ին:

²⁵ Арам Хачатурян, Собрание сочинений в двадцати четырех томах, том 2, с. 8.

²⁶ Юзефович В. Арам Хачатурян, Москва, 1990, с. 147.

սիմֆոնիան²⁷ եզրափակեց իմ ստեղծագործության վաղ շրջանը, ապա նոր սիմֆոնիան, ասես, ընդհանրացնում է Դաշնամուրային կոնցերտի ստեղծմամբ սկսված ստեղծագործական գործունեության շրջանը»²⁸:

Շուտով Ա.Խաչատրյանն իրականացնում է Սիմֆոնիայի նոր խմբագրությունը, որտեղ տեղերով փոխում է երկրորդ և երրորդ մասերը: Նոր խմբագրությամբ Սիմֆոնիան հնչում է 1944-ի մարտի 6-ին Մոսկվայի կոնսերվատորիայի Մեծ դահլիճում, ՍՍՀՄ Պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ, Ալեքսանդր Գաուլի ղեկավարությամբ:

Սիմֆոնիայի մասին Դ.Շոստակովիչը գրեց, որ այն «Խաչատրյանի առաջին ստեղծագործությունն է, որտեղ ողբերգական սկիզբը բարձրանում է

²⁷ Ա.Խաչատրյանի **Առաջին սիմֆոնիան** (e-moll) նրա դիպլոմային աշխատանքն էր, որը մի կողմից՝ հանրագումարի բերեց ուսումնառության շրջանի որոնումները, իսկ մյուս կողմից՝ նշանավորեց ստեղծագործական հասունության նոր փուլը: Սիմֆոնիան հեղինակը նվիրեց Սովետական Հայաստանի 15-ամյակին: Բնութագրելով սիմֆոնիայի բովանդակությունը, կոմպոզիտորը գրել է. «Սիմֆոնիան նվիրված է Հայաստանում Սովետական իշխանության հաստատմանը և գրվել է հանրապետության 15-ամյակի կապակցությամբ: Ժողովրդի համար, որի զավակն եմ ես, «Հայաստան» բառն արդեն իսկ գերազույց պարգև է, մեծագույն ուրախություն՝ մեր երկիրը դարերի ընթացքում վերջապես առաջին անգամ ձեռք բերեց անկախություն և կոչվեց Սովետական Հայաստան: Իմ երաժշտության միջոցով ես ձգտել եմ արտահայտել անցյալի վիշտն ու թախիծը, մարմնավորել ներկայի լուսավոր կերպարներն ու հավատը չքնաղ ապագայի հանդեպ: Առհասարակ ես չեմ սիրում, երբ երաժշտության լեզուն ուղղափոխ թարգմանվում է բառերի: Բայց տվյալ դեպքում, կարծում եմ, ճիշտ է. անցյալը և ներկան՝ ահավասիկ սիմֆոնիայի բովանդակությունը» (Арам Хачатурян, Собрание сочинений в двадцати четырех томах, том 1, Москва, 1984, с. 10): Երջանիկ էր կոմպոզիտորի խոշոր կտավի անդրանիկ ստեղծագործության ճակատագիրը: Առաջին անգամ հնչեց 1935-ի ապրիլի 23-ին, Մոսկվայի կոնսերվատորիայի մեծ դահլիճում, Մոսկվայի պետական ֆիլիարմոնիայի նվագախմբի կատարմամբ՝ հունգար դիրիժոր Էյզեն Սենկարի ղեկավարությամբ և արժանազան երիտասարդ հեղինակի խոշոր հաջողությունը: Ճիշտ մեկ տարի անց՝ 1936-ի ապրիլի 23-ին, Լենինգրադի ֆիլիարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ Ֆրից Շտիդրիի ղեկավարությամբ տեղի ունեցավ սիմֆոնիայի լենինգրադյան պրեմիերան, որի մասին Դ.Շոստակովիչը գրեց. «Անկասկած, մեր արվեստ է մուտք գործել վառ, ինքնատիպ և ուժեղ տաղանդ, որին վիճակված է նոր հորիզոններ բացահայտել XX դարի երաժշտական արվեստում, ամենապատվավոր տեղերից մեկը գրավել արդի երաժշտության ականավոր արարողների շարքում» (Арам Хачатурян, Собрание сочинений в двадцати четырех томах, том 1, с. 10): Այդ ժամանակից ի վեր սիմֆոնիան շարունակում է հնչել Խորհրդային Միությունում ու նրա սահմաններից դուրս:

²⁸ Арам Хачатурян, Собрание сочинений в двадцати четырех томах, том 2, Симфония N 2, N 3, партитура, с. 8.

շատ բարձր աստիճանի: Բայց, չնայած իր ողբերգական էությանը, ստեղծագործությունը լի է խորը լավատեսությամբ և մեր արդար գործի, մեր հաղթանակի հանդեպ խորը հավատով: Սիմֆոնիայում շատ են սգո և, միևնույն ժամանակ, ցնծագին հանդիսավորության հնչողությունները: Ողբերգականության ու կենսահաստատության զուգորդումը ստանում է մեծ ուժ»²⁹:

Երկրորդ սիմֆոնիայի համար Ա.Խաչատրյանը 1946-ին արժանանում է ՍՍՀՄ Պետական մրցանակի:

Հոդվածս ուզում եմ ավարտել Արամ Խաչատրյանի հետևյալ խոսքերով. «Աշխարհում պետք է իշխի հումանիզմը: Իսկ հումանիզմն ու երաժշտության արվեստն անբաժան են»³⁰:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը հեղինակը խոնարհումով նվիրել է Մեծ հայրենականում զոհված պապի՝ Հայկ Սեդրակի Ճշմարիտյանի անթառամ հիշատակին:

Ֆաշիստական Գերմանիան «արբագրեց» հայ կոմպոզիտորներից շատերի կյանքն ու ստեղծագործությունը: Նրանց մի մասը զոհվեց՝ ռազմի դաշտում ընկան Թունիկ Հովհաննիսյանը (1908-1941), Սպիրիդոն Մելիքյանի որդին՝ Հրաչիկ Մելիքյանը (1913-1941), Միքայել Չաղալյանը (1907-1942), Կոնստանդին Շլոյանը (1905-1941), Ստեփան Տերտերյանը (1906-1943), Հովհաննես Նադիրյանը (1907-1941)... Հայ կոմպոզիտորներից ոմանք էլ, անցնելով պատերազմի արհավիրքների միջով՝ հաղթանակած վերադարձան և իրենց տաղանդով ծառայեցին հարազատ ժողովրդին:

Հեղինակն անդրադառնում է Արամ Սաթունցի, Գևորգ Արմենյանի, Ղազարոս Սարյանի գործունեությանը ռազմաճակատում, ինչպես նաև Արամ Խաչատրյանի Երկրորդ սիմֆոնիային (1943, ՍՍՀՄ Պետական մրցանակ, 1946), որի գաղափարը, կոմպոզիտորի խոսքերով, կապված է Հայրենական մեծ պատերազմի ահեղ իրադարձությունների հետ. «Ես ուզեցի արտահայտել ցասման, վրեժի զգացումն ընդդեմ չարիքի, որ մեզ պատճառեց գերմանական ֆաշիզմը: Մյուս կողմից՝ սիմֆոնիայում արտահայտված է վշտի տրամադրությունն ու մեր վերջնական հաղթանակի հանդեպ խորը հավատը»:

Բանալի բաներ – Հայրենական մեծ պատերազմ, հայ կոմպոզիտորներ, Արամ Սաթունց, Գևորգ Արմենյան, Ղազարոս Սարյան, Արամ Խաչատրյան. Երկրորդ սիմֆոնիա:

²⁹ Նույն տեղում, էջ 9:

³⁰ Армянские композиторы об искусстве (Сост. Я.Хачикян), Ереван, 2007, с. 262.

ВЕЛИКАЯ ОТЕЧЕСТВЕННАЯ И АРМЯНСКИЕ КОМПОЗИТОРЫ

АННА АСАТРЯН

Автор с почтением посвящает статью неувыдаемой памяти деда – Гайка Седраковича Чшмаритяна, погибшего в Великой Отечественной Войне.

Нацистская Германия «ввела коррективы» в жизнь и творчество многих армянских композиторов. Одни погибли: на поле боя пали Туник Ованнисян (1908-1941), сын Спиридона Меликяна – Рачик Меликян (1913-1941), Микаел Чахалян (1907-1942), Констандин Шлдян (1905-1941), Степан Тертерян (1906-1943), Ованнес Надирян (1907-1941)... Другие, пройдя сквозь горнило войны, вернулись домой и служили своим талантом родному народу.

Автор останавливается на фронтовой деятельности композиторов Арама Сатунца, Геворга Армяна и Лазаря Сарьяна, а также на Второй симфонии Арама Хачатряна (1943, Государственная Премия СССР 1946-го года), идея написания которой, по словам композитора, возникла в связи с грозными событиями Великой Отечественной Войны: «Мне хотелось выразить чувства гнева и отщепености за зло, причиненное немецким нацизмом. С другой стороны, в Симфонии отражены горестные настроения и глубокая вера в нашу окончательную победу».

Ключевые слова – Великая Отечественная Война, армянские композиторы, Арам Сатунц, Геворг Армян, Лазарь Сарьян, Арам Хачатрян – Вторая симфония.

THE GREAT PATRIOTIC WAR AND THE ARMENIAN COMPOSERS

ANNA ASATRYAN

Anna Asatryan to commemorate forever her grandfather, Hayk Chyshmarityan, perished in the Great Patriotic War reverently dedicates this article to him.

Nazi Germany “reshaped” the lives and careers of many Armenian composers. A number of composers Tunik Hovhannisyan (1908-1941), Spiridon Melikyan’s son Hrachik Melikyan (1913-1941), Mikael Chaghalyan (1907-1942), Constantine Shldyan (1905-1941), Stepan Terteryan (1906-1943) and Hovhannes Nadiryanyan (1907-1941) amongst others, perished in World War II while others surviving the horrors of the war victoriously returned home and continued to create and be of service to their own people.

Asatryan here presents the music Aram Satunts, Gevorg Armenyan, Ghazaros Saryan have created in addition to other activities they have carried out at the front-line. She also presents Aram Khachatryan's symphony No. 2 (1943; USSR State Prize, 1946), whose gist, as the composer himself put it, was related with the horrendous events of the Great Patriotic War: "I wished to express the feelings of rage and vengeance on Nazism for the atrocities they inflicted. On the other hand, woeful moods with a profound belief in our final victory are as well conveyed in the Symphony."

Key words – Great Patriotic War, Armenian composers, Aram Satunts, Gevorg Armenyan, Ghazaros Saryan, Aram Khachatryan, symphony No. 2.

*Светлой памяти М.Г.Арутюнян
с благодарностью посвящается*

«ШАКУНТАЛА» С.БАЛАСАНИЯНА В КОНТЕКСТЕ ИНДО-ЕВРОПЕЙСКОГО КУЛЬТУРНОГО ДИАЛОГА

НАТАЛЬЯ АРУТЮНЯН

*Хочешь ли ранний рассвет плодами позднего года украсить,
Хочешь ли то, что зовёт и чарует и что утоляет,
Хочешь ли в слове одном постигнуть Небо и Землю,
Молвлю 'Сакунтала' я, и всё этим сказано вдруг.*

Иоанн Вольфганг Гёте

Среди произведений древней восточной литературы, первыми удостоенных признания и любви просвещённой европейской публики, особое место занимает «Шакунтала» Калидасы – изложенное в поэтической форме драматическое произведение, которую Р.Тагор назвал **драмой чувств**. Созданная более полутора тысяч лет назад на основе одного из сюжетов индийского эпоса «Махабхарата», «Шакунтала» была и остаётся одним из излюбленных музыкальных представлений Индии, в котором эпическое, драматическое и лирическое начала синкретически слиты как друг с другом, так и с традиционной музыкой и танцами этой страны. «Среди драматургов первый – Калидаса, среди драм Калидасы первая – Шакунтала», – гласит народная поговорка.

Поэтический текст этой драмы впервые был переведён с санскрита на английский язык весьма примечательной личностью – сэром Уильямом Джонсом и издан им в Калькутте в 1789 г., после которой последовали публикации в Лондоне (1890, 1893) и в Эдинбурге (1896)¹. Последовавший затем перевод

¹ Следует заметить, что в совершенстве владеющий несколькими европейскими языками филолог и востоковед У. Джонс был первым, кто задумался об общих корнях различных языков, стал основоположником сравнительного языкознания и выдвинул идею о существовании индоевропейской языковой семьи. Кроме латыни и греческого, Джонс видел сходство санскрита с готскими языками, а также с кельтским языком, о чём писал в изданной в 1786 г. книге «Санскритский язык» (The Sanscrit language).

Г.Форстера на немецкий язык в 1791 г. вызвал восторженный отклик таких мыслителей, как основоположник философии культуры И.Г.Гердер, филолог В. фон Гумбольдт, впервые поставивший вопрос о влиянии характера языка на литературу и духовное развитие того или иного народа, а также поэты Ф.Шиллер и И.В. фон Гёте. При этом Гёте, не только высказал свои тонкие наблюдения о ней, но и претворил творческий импульс, полученный от этой драмы в стихотворении, посвящённом «Шакунтале», в балладе «Бог и баядерка» (*Der Gott und die Bajadere*, 1797), и в Прологе к своему «Фаусту». Важно заметить, что слова «баядерка» (от несколько видоизменённого португальского *bailadeira*), означающего «индийскую храмовую танцовщицу», никогда не было ни в одном из языков Индии. Это слово изобрели европейцы для обозначения явления, которого нет в христианской культуре, поскольку отцы церкви последовательно искореняли всё, что согласно их мнению, было выражением телесности, в частности, танцевальных ритмов и связанных с ними телодвижений². С другой стороны, в индийской мифологии танцуют и сами боги, и имеется особый класс танцующих полубогинь - *ансар*, и, согласно оригинальной версии сюжета о Шакунтале, изложенной в *Махабхарате*, матерью *Шакунталы* была одна из таких полубогинь - *Менака*, жилище которой, по индийскому преданию, находится в горнем мире, между Небом и Землёй. Само наличие такого рода одухотворённого пространства между божественными и человеческим мирами, а также проницаемость этих миров, позволяющее человеку непосредственно общаться с богами и действовать как на Земле, так и на Небе на протяжении своей жизни, напоминало об античной мифологии и созданных на её основе творениях Гомера и античной драме. При этом сравнение, проведённое Шиллером в одном из его писем 1795 г. к Гумбольдту, было не в пользу Гомера: «Во всей античной Греции нет изображения женствен-

² «Танец в западном социуме, казалось, должен иметь только плотские ассоциации в то время, духовность никогда не была мотивацией для сценического представления, католическая церковь запрещала танец во время своих служб и в течение многих лет отказывалась хоронить профессиональным танцовщиков и актёров на святой земле». В то время как в Индии храмовые танцовщицы известны как дэвадаси – служанки богов. Так, «баядера» или «баядерка» стало европейским словом, которое чаще всего ассоциировали с индийской танцовщицей на протяжении почти двух столетий». Vincent Warren. *Yearning for the Spiritual Ideal: The Influence of India on Western Dance 1626-2003/ Dance Research Journal*, Vol.38, No/ ½ (Summer-Winter, 2006) <http://divanna.livejournal.com/171437.html>

ности и прекрасной любви, которое хотя бы отдалённо приближалось к «Сакунтале», - пишет он. К жемчужине индийской драмы обращались также братья Шлегели, Бетховен, Шуберт, Фейхтвангер и многие другие.

Первым, кто познакомил российскую публику с творчеством Калидасы, был не кто иной, как известный историк и писатель Николай Карамзин, который в 1792 году опубликовал свой перевод с немецкого³ в «Московском журнале»⁴. Карамзин также проводит аналогию с Гомером, акцентируя при этом общность названных художественных миров с точки зрения представлений о человеческой натуре (природе человека). «Сверх того, ее можно назвать прекрасною картиною древней Индии, так, как Гомеровы поэмы суть картины древней Греции, — картины, в которых можно видеть характеры, обычаи и нравы ее жителей. Калидас для меня столь же велик, как и Гомер. Оба они получили кисть свою из рук природы и оба изображали — природу»⁵.

Совершенно новый взгляд на музыкальную драму Калидасы был открыт в Европе благодаря тому, что в 1838 г. в Париж впервые прибыло семейство индийских музыкантов и танцовщиц из Тирувендипура (в котором есть храм Вишну) около Пондичерри. Главную танцовщицу этой труппы *Амани* навестил великий поэт и критик эпохи романтизма – *Теофиль Готье*. Он оставил детальное аналитическое описание её самой и её танцев как свидетельство того, что до тех пор было недоступно для серьезных любителей искусства. Скульптор *Барр*, который создал статуэтки *Тальони* и *Фанни Эльслер* – самых известных балерин того времени, отлил в бронзе красивую фигуру *Амани*, показывающий ее тонкую талию, подчеркнутую типичным

³ Перевод с санскрита на русский был создан пионером российской индологии И.К.Косовичем и издан им в 1846 г.

⁴ «Творческий дух обитает не в одной Европе; он есть гражданин вселенной. Человек везде человек; везде имеет он чувствительное сердце и в зеркале воображения своего вмещает небеса и землю. Везде натура есть его наставница и главный источник его удовольствий. (...) Почти на каждой странице сей драмы находил я высочайшие красоты поэзии, тончайшие чувства, кроткую, отменную, неизъяснимую нежность, подобную тихому майскому вечеру — чистейшую, неподражаемую природу и величайшее искусство». Н.М.Карамзин <О Калидасе и его драме «Сакунтала»>, Избранные сочинения в двух томах, Том 2. М.-Л., Художественная литература, 1964, с. 117-118.

⁵ Там же. Подробный анализ перевода Карамзина см. статью Гринцер П.А. «Сакунтала» Карамзина. Репетитор, сб.статей к 70-летию В.Н.Топорова. Рос. акад наук, Ин-т славяноведения. М., Индрик, 1998, с. 537-566.

металлическим поясом, кольцо в носу и бубенчики на щиколотке, которые носят до сих пор танцовщицы бхаратнатьям (см.рис.1). Согласно *В.Уоррену*, «эта труппа выступала так же в австрийском Theater an der Wien и в Лондоне, где они были объявлены как "Баядеры или танцующие жрицы Пондичерри", а также участвовали в пьесе под названием «Закон Брахмы или Индийская Вдова» (*The Law of Brahma, or the Hindoo Widow*) в Театре Адельфи»⁶.

Первый европейский балет на сюжет «Шакунталы» был написан *Л.-Э.-Э. Рейяром* по либретто *Теофиля Готье*, интерес которого к загадочному и пышному Востоку, к фольклору дальних стран отразился в написанных им сценариях балетов⁷. «Шакунтала» *Рейяра* была поставлена в Парижской Опере с богатыми декорациями и костюмами в 1858 г. *Люсьеном Петипа* и имела шумный успех. При этом исполнительница главной роли – *Амалия Феррари* (*Amalia Ferraris*) была одета в пышную пачку и балетные туфли (см. рис.2), тогда как остальная часть танцовщиков была одета в костюмы, напоминающие индийские. Как музыка, так и хореография этого балета сегодня нам недоступны, однако, думается, что некоторое представление как о музыке, так и о хореографии этого балета можно составить по снискавшему большую славу и до наших дней не сошедшего с большой сцены балету Л.Минкуса «Баядерка» (хореограф – Мариус Петипа, 1877), в сюжетной линии которого сплелись мотивы драмы Калидасы «Шакунтала» и баллады Гёте. Классическая ясность музыкальных и хореографических номеров здесь эклектически сочетается с романтически заострённым сюжетом, где проклятие великого Брамина (трансформация образа Дурвасы – ведийского мудреца-подвижника, гневного отшельника), разлучающего героев, мотивируется ревностью последнего, что приводит их к смерти и последующей встрече в загробной жизни. Разумеется, знакомство с подлинными индийскими музыкантами и танцовщицами расширило горизонты мышления европейских музыкантов, хореографов и художников, но они не могли и, что существенно, не находили нужным идти путём прямого подражания индусам. Они продолжали говорить со своим слушателем

⁶ Там же.

⁷ По пьесам Т.Готье были поставлены такие балеты как "Пери" Бургмюллера (1843, парижская Опера, балетм. Коралли), "Селам" Рейера (1850, Париж, Итальянский театр), "Пакеретта" Бенуа (1851, там же, балетм. Сен-Леон), "Джемма" Габриелли (1854, там же, балетм. Ф. Черрито), "Бандит Янко" Дельдевеза (1858, театр "Порт-Сен-Мартен", Париж, балетм. Оноре) и др.

и зрителем на понятном ему европейском языке, в который постепенно стали вводиться некоторые элементы восточной музыки, танца, одежды и аксессуаров.

Следующая попытка создания музыкального спектакля на эту тему была предпринята в 1914 году в России. Известный проповедник суфизма, индийский музыкант и философ *Хазрат Инайят Хан* задумал представление «Шакунталы» для русского царя Николая II на одной из площадей российской столицы, поскольку он был убеждён, что в этом символическом действе заложена идея об утерянной, но впоследствии восстановленной гармонии во взаимоотношениях между царём и народом. Увы, попытка спасти самодержавие средствами искусства восточному гостю не удалась, однако идея о постановке «Шакунталы» в России не погибла. 12 декабря 1914 года премьерой именно этого спектакля был открыт знаменитый Камерный театр Александра Таирова, с очаровательной Алисой Коонен в заглавной роли (см.рис. 3), где этот спектакль шёл не менее 10 лет⁸. К сожалению, после ссылки в Барнаул и закрытия театра в 1949 г. весь архив театра был утерян⁹.

⁸ Спектакль шёл под названием «Сакунтала», и в ней звучал перевод К.Бальмонта. «Эта гениальная пьеса проникнута чистой, глубокой мудростью, подлинным гуманизмом, даёт великолепный материал для настоящего спектакля», - говорил А.Таиров. А.Коонен. Страницы жизни. М, 1975, с. 206. «Выбор её для открытия театра был не случаен – творение Калидасы, по мнению Таирова, таило в себе потенциальную возможность лучшим образом выразить суть идейно-эстетических устремлений нового театра.» М.Котовская. Неувядаемый образ Шакунталы. «Советская музыка», 1980, №3, с. 95.

⁹ Сохранились лишь сведения о том, что в этом спектакле звучала музыка, предложенная индийским музыкантом и аранжированная Владимиром Полем. И только в 1991 году в Музее музыкальной культуры им. Глинки в Москве были обнаружены ноты, которыми заинтересовались московские музыканты. В 2002 году Александр Шишкин создал танцевальный этюд и показал его в Музее Скрябина в Москве под рояль, позже в интернете появилась и аранжировка для ансамбля струнных. Не располагая нотным текстом этих произведений, можно, тем не менее, заметить, что ладо-гармонические, ритмические и конструктивные особенности этой музыки заметно отличаются от музыки европейских балетов. По большей части они представляют собою стилизации, исполняемые на европейских инструментах и включающие элементы восточных ладов и ритмов. Пластика же танцев близка пластике культивируемых в начале XX века Георгием Гурджиевым священных танцев суфиев, как их описывает композитор Ф.А. Гартман (Thomas de Hartmann) в своей книге. Музыка же для танцев суфиев была записана Гартманом в числе многих других восточных мелодий, с голоса Гурджиева. Thomas de Hartmann *Our life with Mr. Gurdjieff*. New York, Cooper Square Publishers, 1964.

С точки зрения поиска нового языка для передачи восточной атмосферы в европейском музыкальном театре примечательна музыка оперы «Шакунтала» итальянского композитора Франко Альфано (Franco Alfano, 1875-1954). Плотная вокально-оркестровая фактура Альфано, обогащённая находками французских импрессионистов, Вагнера и русских композиторов начала XX века, имеет некоторый восточный колорит. В целом же опера имеет много общего с музыкой позднего Пуччини¹⁰, восточные элементы которой являются экзотически пряной «приправой» к европейскому музыкальному языку.

Говоря о возможностях межкультурного творческого диалога в музыкальном театре, хочется напомнить о роли армянских композиторов в процессе развития этого диалога. Представляя гастроль турецких театров в Европе в специальном выпуске парижского *La Revue théâtrale*, известный критик Адольфо Талассо посвятил пару страниц турецкому музыкальному театру, где рассматриваются исключительно оперы и оперетты Тиграна Чухаджяна – «Олимпия», «Земире», «Ариф», «Кёсе-Кёхва», «Лебледиджи», имевшие большой успех в Париже. «Влияние Чухаджяна было значительным и определяющим для оттоманской сцены в лирической и даже в драматической сфере. Возможно, **весь современный турецкий театр берёт своё начало от уникальности армянского маэстро**», – пишет он¹¹. В той же статье сделано исключительно важное с исторической точки зрения признание того факта, что именно Т.Чухаджян был первым неевропейским композитором, который применил европейскую музыкальную технику к восточной музыке. «Единственный из оттоманских музыкантов, он погрузился в восточную музыку, её фактуру, что позволило адаптировать её к европейской оркестровке, и, благодаря оригинальности его идей, свежести письма (т.е. музыкального языка – *прим. моё – Н.А.*), красочности оркестровки и блеску, подобному излучению солнца Востока, ему удалось быть понятым иностранцами, чем он вызвал симпатии со всех сторон. Его знание гармонии и контрапункта создают композиции, имеющие прочную основу и очарование, которым пропитана

¹⁰ Этот композитор известен также и тем, что в 1925 г. он представил собственную версию завершения «Турандот» Пуччини, которая стала основной при исполнении этого произведения. Премьера «Шакунталы» Альфано была представлена в 1921 г. в Болонье, а её более поздняя, более усовершенствованная версия – в 1952 г. в Риме.

¹¹ **Adolpho Thalasso**. *Le théâtre Turc... La Revue théâtrale*, 1904, Paris, Numero Spécial, Seria N° 16, S. 381.

каждая фраза, и которое становится всё более интенсивным»¹².

Признание европейским критиком приоритета армянского композитора в **применении европейской техники композиции к собственным музыкальным идеям музыкантов Востока**, стало первым, но не последним свидетельством той важной миссии в культурном диалоге между Европой и восточными странами, которую в своих музыкально-театральных сочинениях не менее успешно реализовали А. Спендиаров, А.Тигранян, А. Тер-Гевондян, А.Хачатурян, Г.Егиазарян, Э. Оганесян, А.Арутюнян, А.Тертерян, Н.Симонян и другие армянские композиторы. Разумеется, не все из них имели возможность жить и творить на родной земле, и, тем не менее каждый создал по-своему интересный и самобытный вариант синтеза, который можно назвать также вариантом своеобразного «перевода» круга идей восточного музыкального мышления на европейский музыкальный язык.

Среди композиторов, которые наиболее успешно и последовательно осуществляли эту задачу вдали от родины, особое место принадлежит композитору Сергею Баласаняну, - армянскому автору, благодаря которому как приверженцы классической музыки смогли услышать поэзию и музыку различных народов Азии и Африки, преломлённую посредством его изящных и оригинальных композиций во всех жанрах европейской музыки. Родившись в 1902 г. в Ашхабаде, Баласанян после учёбы в Тифлисе¹³, Ленинграде и Москве, был направлен СК СССР в Душанбе, где он стал одним из основоположников таджикского музыкального театра¹⁴.

Балет «Шакунтала» на либретто Б. Зданевича по мотивам драмы Калидасы, написанный к 1500-летию со дня рождения индийского драматурга (1962-63) и поставленный в Рижском театре оперы и балета 28-го декабря 1963-го года - одна из вершин не только музыкального театра Баласаняна, но и его творчества в целом. Созданная в период высокого расцвета творческих сил композитора на волне его многолетнего увлечения музыкой и поэзией Индии¹⁵, музыка этого балета стала особым событием в многолетнем культур-

¹² *Ib*, S. 381

¹³ В Тифлисской консерватории С.Баласанян проучился год у Х.С.Кушнарёва по классу полифонии и у А.Тер-Гевондяна по классу композиции (1922-23).

¹⁴ Краткий очерк жизни и творчества С.Баласаняна представлен нами в статье «Сергей Баласанян: диалог культур», Вестник общественных наук, №3, 2014, с. 252-264.

¹⁵ Известно, что композитор изучал образцы подлинного фольклора многих народов, а с

ном диалоге между Индией и европейскими странами.

Важно отметить, что в либретто Б.Зданевича изначальный сюжет драмы Калидасы был изменён, но вовсе не в ключе романтического балета, как это было в «Баядерке». Мотив ревности Дурвасы, придавший значительную роль этому персонажу в «Баядерке», не выходит здесь на первый план, хотя образ Дурвасы и лейтмотив его проклятия имеют значение яркого драматургического контраста к основной идее спектакля. Создавая немислимые препятствия для счастья героев, действие магии Дурвасы, приводящее к потере Шакунталой подаренного Душиантой кольца, способствует развёртыванию не только сюжетной канвы балета во времени, но и раскрытию всего спектра чувств, в которую вовлечены и исполнители, и зрители драмы. В отличие от либретто «Баядерки» здесь нет смерти героев, а значит, нет и встречи в загробном мире. Финальная встреча героев в балете происходит, однако, и не в горнем мире, куда, согласно Махабхарате, забрала Шакунталу её мать, танцующая апсара Менака, и где после находки Душиантой кольца, вернувшего ему память о Шакунтале и победы в небесной битве против демонов на стороне верховного бога Индры, Душианта бродит в поисках своей потерянной возлюбленной. В балете Баласаяна эта встреча происходит в том же зачарованном лесу, где произошла их первая встреча - с тою лишь разницей, что в первом акте ей предшествует преследование лани Душиантой, а в последнем – игрой неизвестного мальчика с луком и стрелами¹⁶. Шакунтала выходит с кувшином из своей лесной обители, чтобы любовно полить цветы и, незаметно для себя, подходит к кусту жасмина, который напоминает ей тот счастливый миг в её жизни, когда, провожая её во дворец Душианты, подруги украшали ей волосы цветами... Однако, заслышав шаги Душианты, который, горько сожалея о содеянной им в беспамятстве несправедливости и жестокости, ищет

народным творчеством Индии был особенно хорошо знаком благодаря записям Р.Тагора, мелодии которого вдохновили его на создание уникальной оркестровой рапсодии (1961). Кроме того, к индийской теме в творчестве С.Баласаяна относятся созданные им музыка к радиопостановкам «Древо воды» (1955) и «Цветы красные» (1956) по рассказам К. Чандры, музыка к спектаклю по пьесе Н.Гусевой «Рамаяна» (1960), вокальный цикл на стихи С.Т.Нирано (1965) и вокально-инструментальная поэма «Аметист» на слова Э. Межелайтса (1977).

¹⁶ В драме Калидасы Душианта видит мальчика, играющего со львом, и это напоминает ему собственное детство. Однако сцена с луком и стрелами в либретто балета напоминает зрителю о сцене охоты из первого действия, наталкивая его на ту же мысль.

её, Шакунтала прячется... в дупле дерева. В этой находке либреттиста есть и некий намёк на жизнь Шакунталы в некоем возвышенном пространстве между мирами, подчёркнутая коленопреклонённой позой исстрадавшегося Душианты, и возвращение к теме живого, зачарованного леса, - того самого, где в первом действии балета звучал гимн их любви, а лианы и ветви деревьев, опустившись, скрывали Шакунталу и Душианту от посторонних глаз¹⁷. В музыке балета грациозная тема Шакунталы связана со светлой и тихой темой лесной обители, а возвращение Душианты в лес из царского дворца является знаком переосмысления им жизненных ценностей. Так, на первый план выходит общечеловеческий смысл драмы Калидасы, её негромкий пафос истинной любви, способной преодолеть все испытания и привести к яркому и чистому жизнеутверждению. «Надо быть самому на спектакле, чтобы видеть тот энтузиазм, которым охвачена аудитория в момент, когда (как зримое воплощение конечной идеи музыки балета) на сцене вырастает пластически единый хореографический триптих – Шакунтала, Душианта и их сын¹⁸. Зритель, напряжённо следивший за разворачивающейся на его глазах драмой чувств, с удовлетворением воспринимает такой её исход. В нём – выражение гуманистического духа поэзии Калидасы, которым пронизана музыка и весь спектакль «Шакунталы», - пишет *С. Шлифштейн*. И продолжает: «Калидасовское» в балете – это прежде всего его танцевальная лирика и окружающая её музыкальная атмосфера спектакля. Именно музыкальная! Как ни хороши и изобретательны сами по себе многие танцы, поставленные Е.Тангиевой-Бирзниеком (умелое и тонкое сочетание в них элементов классического танца и языка жестов пластического искусства древней Индии уже отмечалось нашей

¹⁷ **С.Баласанян. Шакунтала.** Балет в 3 актах, 11 картинах с прологом. Либретто Б.Зданевича по мотивам драмы Калидасы «Шакунтала». Переложение для фортепиано автора. М., «Музыка», 1966, с. 160-161. . О достоинствах сценического воплощения «Шакунталы» мы, к сожалению, можем судить лишь по сохранившимся отзывам в прессе, так как видеоматериалов либо нет, либо они пока недоступны. Так, о создании иллюзии живого леса, Виноградов пишет: «... зритель видит картину леса, но не статичную, а постоянно меняющуюся. Изображение проецируется на тюлевый занавес, отделяющий сцену от зала. Благодаря различным световым эффектам лес кажется то дремучим, то в нём появляются просветы, полянки, то возникают опушки. В.Виноградов. «Шакунтала». Советская музыка, 1964, №4, с. 44.

¹⁸ Согласно индийской эпосе «Махабхарата», Бхарата – сын Шакунталы и Душианта, становится основателем династии героев, которым посвящена эпопея.

прессой), как ни красочны и национально достоверны декорации и костюмы, выполненные по эскизам художника Э. Вардауниса, самое ценное в них - это их музыкальность: всё от музыки и в музыке»¹⁹. В этом спектакле блистали такие звёзды латышского балета, как Велта Вилцынь (Шакунтала, см .рис. 4), Г. Ритенсбергс (Душианта), А. Лемберг (Дурваса), А. Драгоне (Лань), и др., создав яркие и запоминающиеся образы. «Все хореографические средства балета использованы тактично и вместе с тем они разнообразны и самобытны. Балет решён в классических традициях. Но немалую роль в нём играют элементы национальной индийской хореографии. Некоторые танцы целиком заимствованы из народного обихода (таковы танцы с барабанами, танцы придворных, девушек и т.д.). Они обогащают хореографический язык балета, придают ему национальное своеобразие»²⁰. Следует отметить, что главный балетмейстер театра - Елена Тангиева-Бирзниеце (Бирзниец)²¹ работала над хореографией балета вместе с консультантами по национальным индийским танцам – Маей Рао и Шивой Шанкар. И всё же трудно не согласиться с Шлифштейном в том, что самое ценное в балете – это его музыка, в которой благодаря зрелому мастерству автора его талант проявил себя во всей полноте своих возможностей, создав особую, ни с чем не сравнимую атмосферу. Музыка балета с первых же тактов завораживает слушателя необычными сочетаниями активно варьируемых ритмов и интонаций на гармонически напряжённом и оstinатно выдержанном, хотя и способным на неожиданные трансформации звуковом фоне. Каждый новый мотив, каждый новый музыкальный образ и сцена, обогащая семантический ряд балета, как бы вплетается свежим орна-

¹⁹ С. Шлифштейн. Драма Калидасы в балете. «Музыкальная жизнь», 1964, №11, с. 10.

²⁰ Там же, с. 44

²¹ Интересно заметить, что прима-балерина и главный хореограф Рижского театра оперы и балета Е. Тангиева-Бирзниеце также имеет армянские корни. «Հայագի պարուհի, բալետմայստր և մանկավարժ, Լատվիայի ժողովրդական արտիստուհի Ելենա (Հելենա) Ալեքսանդրի Տանգիևա-Բիրզնիեցեն (13.04.1907, Պավլովսկ, Պետերբուրգի մոտ–31.07.1965, Ռիգա) փայլել է բեմում, ինքնատիպ պարահարդարում ստեղծել լատվիական բալետների համար, հարստացրել լատվիական պարային մշակույթը, դաստիարակել երիտասարդ արտիստների... Պարուհու հայրը՝ Ալեքսանդր Տանգիևը, սերել է Սյունիքի Բեկ Մելիք-Թանգյան ազնվական գերդաստանից, իսկ մայրական կողմից թոռնուհին է ռուս արձակագրուհի Ավդոտյա Պանսևայի (1819–1893)» **Բախշիյան Ա.**, Լատվիական բալետի հայագի մեծ տիկինը. Ելենա Տանգիևա-Բիրզնիեցեն, «Օրեր», 2007, թ. 2, էջ 31-33:

ментом в основное русло управляемого гибким метроритмом музыкального повествования, устремляясь к следующему образу, к следующей сцене. Поэтому, несмотря на то, что в «Шакунтале» Баласаняна достаточно ясно прослеживаются классические формы т.н. «номерного» балета – сольные вариации, дуэты, адажио, массовые сцены и пантомимы, включающие различные игры и обряды, музыка балета воспринимается как единый в своей многообразности поток сознания. В непрерывности сквозного развития играют свою роль и принцип взаимодействия и развития лейтмотивов на расстоянии, и неизменная творческая изобретательность, в особенности в кадансах, сочетающих признаки завершения музыкальной мысли с оригинальным применением приёмов, размыкающих форму. Таким образом, композитору удаётся достичь органичной целостности и ощущения бесконечности музыкального потока, не жертвуя при этом ни прозрачностью фактуры, ни эмоциональной целостностью и мелодическим совершенством отдельных сцен и номеров, ни характерностью образов. По-видимому, именно это свойство музыки Баласаняна имел в виду один из знатоков истории армянского музыкального театра, проф. Г.Г.Тигранов, когда, обращаясь к музыке балета «Шакунтала», он писал: «Тщательная филигранная отделка каждого фрагмента, музыкального номера напоминает искусство миниатюры замечательных восточных живописцев, где восхищает своей прелестью любая деталь рисунка, и это сочетается в произведениях Баласаняна с прекрасным ощущением целого, где всё соотнесено друг с другом и служит раскрытию большого и замечательного замысла. И здесь возникает сравнение, например, с бесподобным ковровым искусством Востока. Постепенно разворачиваемый большой ковёр изумляет каждой деталью, сочетанием и игрой красок, неповторимо причудливым орнаментом. Когда же весь ковёр, наконец, развёрнут и лежит во всей своей красе – смещаются пропорции, меняются масштабы, поражает гармония целого»²².

Интересно также мнение известного музыканта-востоковеда В.С.Виноградова о музыке Баласаняна: «Глубокое знание восточной музыкальной культуры определило характерные особенности музыки Баласаняна. Она всегда колоритна, красочна. Его гармония многогранна: то нежная, словно завуалированная лёгкой дымкой, то яркая, терпкая, словно озарённая лучами солнца, – она во многом напоминает цветовую палитру М.Сарьяна. Красочен и очень

²² Тигранов Г.Г. Армянский музыкальный театр, т. 3. Ереван, 1975, с. 107.

гибок оркестр, с помощью которого композитор воспроизводит обширную гамму разнообразных чувств и переживаний. Во всём этом обнаруживается высокий вкус, мастерство, щедрая фантазия автора»²³. Говоря о конструктивных особенностях музыки С.Баласаняна, Виноградов пишет: «Композитор с большим мастерством преобразует маленькие однотактовые «мелодические организмы», строит на них развёрнутые формы. Такой метод в известной мере свойственен индийским рагам, родственным макомам или мугамам, где на основе небольшой, подчас речитативно-импровизационной ячейки возникают большие динамичные построения». Отмечая важность признания Виноградовым мастерства композитора и национальных черт его индивидуального стиля, заметим, что метод построения больших динамичных построений из небольших мотивов или импровизационных ячеек свойственен не только восточной, но и в гораздо большей степени европейской музыке - от прелюдий и токкат И.С. Баха до симфонизма Бетховена и Малера. На наш взгляд, метод, о котором говорит автор, является скорее базовым условием, позволяющим говорить о возможностях диалога между различными национально-музыкальными традициями в контексте общей для них индо-европейской культуры. А для понимания стиля С.Баласаняна, как и любого другого композитора, представившего какой-либо оригинальный вариант синтеза этих начал, важно понять, каким образом, радикально трансформируя привычные для восточных народов модусы восприятия пространственно-временного континуума в народной и народно-профессиональной музыке, композитор может представить иностранцам сокровища их духовной культуры. И не только представить, но и помочь адекватно воспринять их, играя всеми гранями заложенного в них смысла. С нашей точки зрения, С.Баласаняну удалось, сохранив свойственную индийской музыке эмоциональную и семантическую насыщенность ритмических и ладо-интонационных модусов, внутренне сдвинуть центр тяжести восприятия пространственно-временного континуума в сторону европейского рационально-конструктивного начала. Благодаря своему такту, интеллектуальной интуиции и богатому творческому воображению, композитор организовал такое звуковое пространство, в котором всегда находится надлежащее место

²³ Виноградов В.С. «Шакунтала» . «Советская музыка», 1964, №4, с. 44. Сравнивая это высказывание Виноградова с мнением А.Талассо о музыке Т.Чухаджяна, нельзя не заметить черт сходства в них, которые невозможно объяснить простым совпадением.

для выражения самых тонких переходов эмоций и состояний, а также их соотношений в процессе драматического взаимодействия идей и образов. Возможно, именно этим обусловлено признание шедевра Баласаняна как действительно важного и долгожданного слова, способного обеспечить успех дальнейшего культурного диалога между странами Востока и Запада.

«Шакунтала» С.Баласаняна выдержала более 100 представлений в Рижском театре оперы и балета (см. рис. 5), она была поставлена также в Челябинском театре оперы и балета им. М.Глинки (1964), а также в московском Музыкальном театре им. К.С. Станиславского и В.И. Немировича-Данченко (балетмейстер А.В.Чичинадзе, консультант М.Рао, импровизации на тампуре – Т.Морозова, 1979. см. рис. 6 и 7)²⁴. Музыка балета прозвучала в исполнении артистов московского театра и во время их гастролей в Индии (1982), встретив восхищение и любовь индийской публики, – и это несмотря на непривычность как хореографии, так и музыки спектакля для индусов. К каждой из этих постановок, в связи с особенностями режиссёрской и хореографической трактовки образов, С.Баласанян вносил изменения в партитуру, а уже к концу жизни он издал музыку к балету в виде партитур двух оркестровых сюит. Как автор произведения, способствующего более глубокому взаимопониманию в культурном диалоге между народами Индии и народами европейских стран, армянский композитор С.Баласанян был удостоен высшей награды правительства Индии – премии им. Джавахарлала Неру (1969, см. рис.8). Однако понимание и признание этого шедевра армянского музыкального театра на родной земле всё ещё остаётся проблематичным.

РЕЗЮМЕ

Первый перевод драмы «Шакунтала» древнеиндийского поэта и драматурга Калидасы (IV век) с санскрита на английский язык, сделанный известным лингвистом, автором гипотезы о существовании индо-европейской языковой семьи У.Джонсом и изданный им в 1789 г. в Калькутте, положил начало замечательному культурному диалогу между Индией и Европой, который простирается до наших дней как в литературной и научной, так и в музыкально-театральной областях. Дальнейшее развитие этого диалога получило два

²⁴ Об этой постановке, в некоторой степени возродившей традиции Камерного театра А.Таирова, см. Котовская М. Неувядаемый образ Шакунталы. «Советская музыка», 1980, №3, с. 95-98.

мощных импульса: а) перевод драмы Калидасы с английского на немецкий Г.Форстера, вызвавший бурный отклик со стороны ряда выдающихся деятелей европейской культуры конца XVIII и всего XIX таких как И.Гердер, В. фон Гумбольдт, Ф.Шиллер, братья Шлегели, Л. ван Бетховен, Ф.Шуберт, Н. Карамзин и др. и б) выступления первой музыкально-театральной труппы из Индии в Париже, Вене и Лондоне (1838), побудившей Т.Готье и И. фон Гёте написать сочинения, которые легли в основу балетов «Саконтала» Л.Э. Рейяра (1858, Париж) и «Баядерка» Л. Минкуса (Петербург, 1877), которые с большим успехом были поставлены братьями Л. и М. Петипа. В XX веке этот диалог углубился благодаря постановке музыкальной драмы «Шакунтала» в Камерном театре А.Таирова (Москва, 1914) и опере Ф. Альфано «Легенда о Шакунтале» (Болонья, 1921, Рим, 1952), где восточные элементы проникли в музыкальный язык, не задев, однако, его основ.

Балет «Шакунтала» армянского композитора Сергея Баласаняна, посвящённый 1500-летию Калидасы (постановка Е.Тангиевой-Бирзниец, консультанты М. Рао и Ш.Шанкар, Рига, 1963, Челябинск, 1964, Москва, 1979, хореография А. Чичинадзе), премьера которого состоялась в 1963 г. в Риге, было новым словом в многолетнем индо-европейском культурном диалоге. Прекрасно разбираясь в тонкостях европейской техники композиции и глубоко восприняв особенности индийской музыки, Баласанян по-новому представил как европейцам, так и индусам полный нежности и яркой красочности мир «Шакунталы», продолжив тем самым лучшие традиции армянского музыкального театра. Вдохновение и искусное мастерство балетного шедевра С.Баласаняна было отмечено высочайшей наградой Индии – Международной премией им. Дж.Неру (1969). Однако понимание и признание его на родной земле композитора остаётся проблематичным.

Ключевые слова – армянский композитор, музыкальный язык, индо-европейская культура, ориентализм, балет, Шакунтала, Баласанян.

Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻ «ՇԱԲՈՒՆԹԱԼԱՆ» ՀՆԴԵՎՐՈՂԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԿԵՆՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՆԱՏԱԼՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1789 թ. Կալկաթայում հայտնի լեզվաբան, լեզուների հնդեվրոպական ընտանիքի մասին վարկածի հեղինակ Ու. Ջոնսոնը (W. Johnson), սանսկրիտից անգլերեն թարգմանելով իրն հնդիկ բանաստեղծ և դրամատուրգ Կալիդասի

«Շաքունթալա» դրաման, սկիզբ դրեց Հնդկաստանի և Եվրոպայի միջև մինչ օրերս շարունակվող գրական, գիտական և երաժշտաթատերական ոլորտներում ծավալվող ուշագրավ մշակութային երկխոսությանը: Այդ երկխոսությունը երկու մեծ խթան ստացավ. ա) Գ. Ֆոքստերի գերմաներեն թարգմանությունը (1791), որին արձագանքեցին XVIII դ. վերջի և XIX դարի Եվրոպայի և Ռուսաստանի մի շարք ականավոր մտավորականներ, այդ թվում՝ Յ. Հերդերը, Վ. ֆոն Հումբոլդտը, Ֆ. Շիլլերը, Շլեգել եղբայրները, Լ. վան Բեթհովենը, Ֆ. Շոպենհոյզը, Ն. Կարամզինը և բ) 1838 թ. առաջին հնդկական երաժշտական թատերախմբի ելույթները Փարիզում, Վիեննայում և Լոնդոնում (1838), ինչը դրդեց Թ. Գոպիեհին և Վ. ֆոն Գյոթեին գրել ստեղծագործություններ, որոնք հիմք հանդիսացան եվրոպական առաջին օրիենտալ բալետների համար: Դրանք թվում էին Լ.Է. Ռեյարի «Սակունթալա» (Փարիզ, 1858) և Լ. Մինկուսի «Բայադերկա» (Պետերբուրգ, 1877) բալետները, որոնք մեծ հաջողությամբ բեմադրվեցին Լ. և Մ. Պետրիպա եղբայրների կողմից: XX դարում այդ երկխոսությունը խորացավ Թաիրովի՝ կամերային թատրոնում բեմադրված «Սակունտալա» ուրույն երաժշտական դրամայի (1914) և Ֆ. Ալֆանոյի «Լեգենդ Սաքունթալայի մասին» օպերայի շնորհիվ (Բոլոնիա, 1921, Հոռն, 1952), որոնցում արևելյան տարրերը որոշ չափով ներթափանցեցին երաժշտական լեզվի մեջ, թեև չհասան նրա հիմքերին:

Հայ կոմպոզիտոր Սերգեյ Բալասանյանի «Շաքունթալա» բալետը՝ նվիրված Կալիդասի 1500-ամյակին (բեմադրություն՝ Ե. Թանդիևա-Բիրզնիեկի, կոնսուլտանտներ՝ Մ. Ռաո և Շ. Շանկար), որի պրեմիերան տեղի ունեցավ 1963 թ. Ռիգայում, նոր խոսք էր դարեր ի վեր ծավալվող հնդեվրոպական մշակութային երկխոսության մեջ: Քաջատեղյակ լինելով եվրոպական կոմպոզիտորական տեխնիկայի հնարավորություններին և միաժամանակ խորապես ճանաչելով հնդկական երաժշտության առանձնահատկությունները՝ Բալասանյանը նորովի է ներկայացրել Կալիդասի «Շահունթալայի» նուրբ և գունագեղ աշխարհը թե՛ եվրոպացիներին, թե՛ հնդիկներին, շարունակելով հայ երաժշտական թատրոնի լավագույն ավանդույթները: Մեծ ներշնչանքով և հմուտ վարպետությամբ գրված Բալասանյանի «Շաքունթալա» բալետն արժանացել է Հնդկաստանի կառավարության բարձրագույն պարգևին՝ Ջ. Ներուփ անվան միջազգային մրցանակին (1969), սակայն հայրենի հողում այդ գլուխգործոցի ճանաչումը դեռևս մնում է խնդրահարույց:

Բանայի բառեր – հայ կոմպոզիտոր, երաժշտական լեզու, հնդեվրոպական երկխոսություն, օրիենտալ, գլուխգործոց, բալետ, Բալասանյան, «Շաքունթալա»:

S. BALASANIAN'S SHAKUNTALA IN THE INDO-EUROPEAN CULTURAL DIALOGUE CONTEXT

Natallia Haroutunian

William Jones, the famous linguist and the founder of the conception that there exists a relationship among Indo-European languages, was the first to translate in 1789 in Calcutta (now Kolkata) from Sanskrit into English the drama "Shakuntala" written by the Classical Sanskrit poet and dramatist Kālidāsa of the IVth century. This laid the foundation for an ongoing cultural dialogue in literature, music, theatre and science, between India and Europe. This cultural dialogue was further activated by two impulses: a) by George Forster's (1754-1794) German translation of "Shakuntala" from English, which at the end of XVIII and throughout the XIX century promoted rapturous responses from a number of prominent European intellectuals: J. Herder, W. von Humboldt, F. Schiller, Schlegel brothers, L. van Beethoven, F. Schubert, N. Karamzin etc., and b) by the performance of an Indian musical theatre troop in Paris, Vienna and London for the first time in 1838. Théophile Gautier and J. von Goethe inspired by this Indian mythical story wrote works that later became the basis for the first oriental ballets relevant to Shakuntala, L.E. Reyer's ballet *Sacountalâ* libretto by Th. Gautier first performed in 1858, in Paris and L.Minkus's *La Bayadere* (The Temple Dancer) libretto by Kalidasa and J. von Goethe first successfully staged by L. And M. Petipa brothers in St. Petersburg, Russia in 1877, amongst others. In the XXth century the Indo-European cultural dialogue deepened owing to the production of Shakuntala in Russia at the Alexander Tairov's Moscow Chamber Musical Theatre in 1914 staged by Tairov himself and to F. Alfano's opera *La Leggenda di Sakuntala* first performed at the Teatro Comunale in Bologna in 1921 and in Rome in 1952 where Alfano had incorporated certain oriental music elements in his opera.

A new, significant contribution to the everlasting Indo-European cultural dialogue was *Shakuntala*, a ballet dedicated to the 1500 anniversary of Kalidasa, written by Sergey Balasanian, an Armenian composer. It was first performed in Riga in 1963, choreographer E.Tangieva-Birzniek; then in Chelyabinsk in 1964; and later in Mosow with A. Chichinadze as the choreographer. Mastering the subtlety of European music composition technique and being very well acquainted with the characteristic features of the Indian music, Balasanian presented the delicate and colorful realm of *Shakuntala* in a novel way to both the Europeans and Indians thus continuing the best traditions of Armenian musical theatre. Balasanian's Shakuntala having been written with great inspiration and

proficiency won the highest award of the Government of India – International prize of J. Nehru in 1969. However, the recognition of this masterpiece in Armenia still remains problematic.

Key words - Armenian composer, musical language, Indo-European dialogue, oriental, masterpiece, ballet, Balasanian, *Shakuntala*.

«ԱՆՀԱՏԱԿԱՆՌԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՄՐԱՀ». ԳԱԳԻԿ ՀՈՎՈՒՆՑԻ «ՏԱՍՐ ՊԻԵՍ-ՄՈՆՈԳՐԱՄ» ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ՇԱՐՔԸ

ԱՆԱՀԻՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ

1989 թվականին Գ. Հովունցն ավարտեց իր ամենահետաքրքիր և յուրօրինակ ստեղծագործություններից մեկը՝ «Տասը պիես-մոնոգրամը» դաշնամուրի համար:

Տասը պիեսից յուրաքանչյուրում կոմպոզիտորը բացահայտում է մեկ անձի կերպար: Յուրաքանչյուր պիես կառուցվում է հնչյունային լատինատառ խորհրդանիշ-բանաձևերի հիման վրա: Դարձնելով այդ բանաձևերը բոլոր մանրանվագների թեմաների հիմք՝ Գ. Հովունցը վարպետությամբ ստեղծում է դրամատուրգիական կուռ կառույց: «Տասը պիես – մոնոգրամի» անտացիայում Ջարուհի Տեր-Ղազարյանը նշում է. «Գ. Հովունցը ստեղծում է անհատականությունների կենդանի մի պատկերասրահ»¹: Շարքի հերոսներն անձինք են, ովքեր եղել են կոմպոզիտորի կողքին կյանքի տարբեր ժամանակաշրջաններում, օգնել, սիրել, կարեկցել, կրթել են նրան, խթանել են ստեղծագործական աճը:

Տասը պիեսի ընթացքում Գ. Հովունցը կարողանում է ներկայացնել ժամանակակից երաժիշտների մի ամբողջ աստղաբույլ, երաժիշտների, ովքեր ժամանակին հայկական երաժշտական հանրության սերուցքն էին, գեղարվեստորեն մտածող, ստեղծագործող մտավորականներ, Հայաստանի ոգին, միտքը: Կոմպոզիտորը կարողանում է հնչող սիմվոլներ՝ երաժշտական անվան և ազգանվան սկզբնատառեր օգտագործելով այդ «աշխարհը» և ստեղծագործ մթնոլորտը դարձնել լսելի:

Փայլուն դրամատուրգ Գ. Հովունցը տասը պիեսից բաղկացած շարքում ստեղծում է եռամաս կառուցվածք, բաժանում շարքը երեք շրջանի՝ ելնելով ստեղծագործության մասերի ավանդական հակադրման սկզբունքից: Այդ երեք շրջանները կոմպոզիտորի ընտանիքը, ուսուցիչները և գործընկերներն են: Որպես շարքի գագաթնակետ՝ Գ. Հովունցն ընտրում է $A - B - a - b - a$ ինտոնացիան, որը պատկերում է հայ երաժշտարվեստի ամենավառ, ամենա-

¹ **Տեր-Ղազարյան Ջ.**, Անտացիա Գագիկ Հովունցի «Տասը պիես-մոնոգրամ դաշնամուրի համար» ստեղծագործության համար, Երևան, 1998, էջ 3:

նշանավոր անհատականություններից մեկին՝ Առնո Բաբաջանյանին՝ կոմպոզիտորի և անհատի, ով մարմնավորում է XX դարի Հայաստանի մի ամբողջ ժամանակահատված:

Պիեսներում Գ. Հովունցն իր առջև նպատակ է դնում մարմնավորելու ընտրված հերոսներից յուրաքանչյուրի ներաշխարհը, մարդկային որակներն ու հատկանիշները: Երբ կոմպոզիտորը պատկերում է ստեղծագործ անհատի, օրինակ՝ կոմպոզիտորի, ընտրում է նրա արվեստին բնորոշ հնարքներ, արտահայտչաձևեր: Այդպես, օրինակ, Ալ. Հարությունյանի կերպարն ստեղծելու համար Գ. Հովունցը գրում է պարային տրամադրությամբ պիես, իսկ Ա. Բաբաջանյանին պատկերում ֆակտուրայի և հուզական տեսանկյուններից արտահայտիչ մանրանվագով: Գրիգոր Եղիազարյանը, Կարպ Դոմբակը և Գայանե Չեքոտարյանը Գ. Հովունցի երեք ուսուցիչներն են, որոնց կերպարներն արտացոլված են այս շարքում:

Գ. Եղիազարյանի երաժշտական նկարագրության համար Գ. Հովունցն ընտրում է «Նուբար-Նուբար» ժողովրդական երգը, քանի որ վերջինս իր «Սևան» բալետում օգտագործել է այդ մեղեդին²:

Գ. Չեքոտարյանին պատկերելու համար Գ. Հովունցը դիմում է պոլիֆոնիկ գրելաոճին և մանրանվագը գրում ֆուգայի ձևով: Գ. Չեքոտարյանն այս մանրանվագում պատկերվում է ոչ միայն որպես պոլիֆոնիկ մի շարք ստեղծագործությունների հեղինակ, այլև որպես Գ.Հովունցի պոլիֆոնիայի խիստ ու բժախնդիր դասախոս:

Կ. Դոմբակին բնորոշելու համար Գ. Հովունցը նույնպես ընտրում է պոլիֆոնիկ գրելաձևի բարձրակետը՝ ֆուգան: Այս դեպքում նման ընտրությունը պետք է ընկալել որպես համակարգվածության և մտքի պարզության խորհրդանիշ:

Մանրանվագների հաջորդականությունը և կոմպոզիտորի ընտրած խորագրերը հետևյալն են.

I- ինտոնացիա G – H – Գագիկ Հովունց

II – ինտոնացիա G – B – Es – Նվիրվում է Ջուլիետա Բագրատի Սալայանին

III – ինտոնացիա G – H – Նվիրվում է Գևորգ Հովունցին

IV- ինտոնացիա A – B – Նվիրվում է Ամալյա Բայբորջյանին

² Հյուսնունց Շ., Բաբաջանյան Ա., Գագիկ Հովունց. Ստեղծագործական դիմանկարի ուրվագծեր: Զրույցներ կոմպոզիտորի հետ, Երևան, «Էդիթ Պրինտ», 2013, էջ 58:

V - ինտոնացիա G – E - Նվիրվում է Գրիգոր Եղիազարյանին

VI - ինտոնացիա Ca – Es – D - Նվիրվում է Կարպ Սավելևիչ Դոմբաևին

VII - ինտոնացիա A – G – H - Նվիրվում է Ալեքսանդր Գրիգորի Հարությունյանին

VIII - ինտոնացիա G – Ch - Նվիրվում է Գայանե Չեքոտարյանին

IX - ինտոնացիա Es, Ca – G - Նվիրվում է Կարինա Գեորգիի Սիմոնյանին

X-ինտոնացիա A – B – a – b – a - Նվիրվում է Անոն Բաբաջանյանին


Առաջին մանրանվագ - Ինտոնացիա G – H (Գագիկ Հովունց)

Շարքը բացում է հեղինակի «ինքնադիմանկարը»: Այս քայլով Գ. Հովունցն ընդգծում է շարքի «անձնական», «կենսագրական» լինելը: Ասվածի լավագույն ապացույցն այն է, որ շարքի հերոսներ են ոչ միայն ժամանակի անվանի անհատները, այլև նրանք, ովքեր կոմպոզիտորի ստեղծագործական կյանքի ուղեկիցներն էին: Դրա հետ մեկտեղ, «Տասը պիես-մոնոգրամը» ինքնադիմանկարով սկսելով, հեղինակը շարք է բերում որոշակի թատերականություն: Իր դիմանկարով կոմպոզիտորն ասես բացում է վարագույրը, ներկայանում ունկնդրին և հրավիրում իրեն շրջապատող երաժշտական, հնչունային աշխարհ: Կանչում է մեզ տեսնելու այդ աշխարհը սեփական աչքերով:

Առաջին պիեսը կարելի է ընկալել որպես բանալի, որը կօգնի հասկանալու ամբողջ շարքը: Ընտրելով շարքի «նախաբանի» նման ձևը՝ Գ. Հովունցն ասես տուրք է տալիս բազմաթիվ շարքերի հեղինակ, ցիկլիկ ձևում ստեղծագործող անգերազանցելի վարպետներից մեկին՝ Ռ. Շումանին: Նրա «Դիմակահանդես» շարքի առաջին՝ «Պրեամբուլա» պիեսում, որը դիմակահանդեսի յուրօրինակ ներածական քայլերթի նկարագրությունն է, իրար են հաջորդում կերպարներ, որոնք ներկայանում են ստեղծագործության ընթացքում առանձին համարների տեսքով:

«Ինչպես օրինակ՝ ծաղրանկարիչը ինքն իրեն էլ է ծաղրանկարում, որպեսզի մյուսները չնեղանան, այդպես էլ ես արեցի տվյալ դեպքում: Չնայած, սա իհարկե ծաղր չէ, ավելի լուրջ մոտեցմամբ է գրված»³, - ասում է հեղինակը՝ բնորոշելով «Տասը պիես - մոնոգրամի» առաջին պիեսը:

³ Նույն տեղում:



Ակսելով շարքը ինքնադիմանկարով՝ Գ. Հովունցն ասես հուշում է ունկնդրին, որ ամբողջ շարքի համար ընտրել է «ծաղրանկարչական», կամ ավելի շուտ դիմանկարային ժանրը: Վերլուծելով առաջին պիեսը, հասկանալով դրա կառուցվածքն ու բովանդակությունը՝ կարելի է ավելի հեշտ ընկալել շարքի բովանդակությունն ու ձևակառուցողական մտահղացումները:

Մանրանվագի *con fuoco* /կրակոտ/ հեղինակային նշումը պատահական չէ: Գ. Հովունցի ընկերներն ու գործընկերները ճանաչում են նրան որպես հանգիստ և զուսպ մարդու, սակայն արտաքինն ու ներքինը կարող են շատ տարբեր լինել: Ինչպես վկայում են կոմպոզիտորին իսկապես լավ ճանաչող մարդիկ, իրականում նա շատ անհանգիստ, հոգով հավերժ երիտասարդ, անսպառ ավյունով և խանդավառությամբ լեցուն, բռնկվող անձնավորություն է: Այստեղից էլ երաժշտության կրակոտ տրամադրությունը: Անգամ այսօր, երբ կոմպոզիտորը պատկառելի տարիքում է, նրա հետ շփվելիս այդ բոլոր գծերը տեսանելի են:

Ասվածի երաժշտական լավագույն ապացույցը պիեսի պաթետիկ բնույթն է, սուր հնչողությունների գերակշռումը՝ արտահայտված տեղիային շեշտված քայլերով: Սակայն պետք է նշել, որ Գ. Հովունցն այս մանրանվագում ներկայացնում է իր բնավորության ոչ միայն բարձր հուզականությունը, այլև հանդարտությունը:

Գ. Հովունցն ընտրում է եռամաս կառուցվածք, որն առհասարակ բնորոշ է կոմպոզիտորի մի շարք ստեղծագործություններին: Նրա բնավորության հանդարտ կողմերը նկարագրվում են մանրանվագի միջին մասում: Ի տարբերություն մանրանվագի առաջին և երրորդ բաժինների՝ երկրորդն ավելի մեղեդային է, սակայն G-H սուր ինտոնացիան առկա է նաև այստեղ:

Եռամաս կոմպոզիցիայում տեմպային հակադրությունները զգալի չեն: Հինգերորդ տակտից սկսվում է անհանգիստ ձայնանցում, որի զարգացումը բերում է գլխավոր G-H թեմային: Այստեղ կարևոր դեր են կատարում բասերը, որոնց օբերտոնների հիման վրա էլ զարգանում է G-H մոտիվը: Աջ ձեռքում հնչող թեմայի յուրաքանչյուր նոտա շեշտված է: Գ. Հովունցը կատարողներին խորհուրդ է տալիս շատ ուշադիր վերաբերվել յուրաքանչյուր առանձին շեշտված նոտային, ընդգծել դրանք՝ չխախտելով ամբողջականության զգացողությունը:

Երկրորդ բաժինը խաղաղ բնույթի է: Այստեղ առաջին տակտից սկսած նշմարվում են G-H թեմայի տարբերակումները: Կոմպոզիտորի վճռական բնավորությանը գալիս է փոխարինելու նրա հանգիստ և հավասարակշիռ կողմը:



Ի տարբերություն առաջին բաժնի՝ այստեղ վերևի ձայնի թեման չի զարգանում բասի հիման վրա: Բասը հիմնականում լրացնում է թեմային տասնվեցերորդական նոտաների անընդհատ շարժման շնորհիվ: Միջին

բաժինը հանգստության հետ մեկտեղ իր մեջ ունի նաև լարվածություն և առաջ շարժվելու միտում, ինչը դրսևորվում է դինամիկ և տեմպային աճով:

Երրորդ բաժնի թեման առաջին բաժնի թեմայից տարբերվում է միայն դինամիկայով: Առաջին բաժնի ծայնանցումն այստեղ կրկնվում է, միայն թե դրա զարգացումը բաժանվում է ձեռքերի միջև: Պիեսն ավարտվում է հաստատուն ակորդներով, որոնց հիմքում կրկին ընկած է G-H մոտիվը:

Մանրանվագի գեղարվեստական ամբողջացման գործում մեծ դեր է կատարում ոտնակը: Առաջին բաժնում այն փոխվում է բասերի վրա: Դա օգնում է վերևի ծայնի թեման բասի հիման վրա կառուցել: Միջին բաժնում նույնպես ոտնակը սեղմվում է բասերի վրա, բայց ի տարբերություն առաջին բաժնի՝ այստեղ ոտնակի միջոցով թեման ստանում է այլ երանգավորում:

Պիեսում օգտագործված է Գ. Հովունցի առաջին լադա-հարմոնիկ համակարգը՝ g, as, h, d, dis, fis:

Մանրանվագում հաճախ են հնչում նաև հետևյալ տրանսպոզիցիաները՝ as, h, c, dis, e, g, as, a, c, cis, e, f, as:

Երկրորդ մանրանվագ G-B-Es ինտոնացիա /Ջուլիետա Սայադյան/

Երկրորդ պիեսը հեղինակը նվիրել է իր կնոջը՝ Ջուլիետա Սայադյանին: Մի մարդու, ով իր ողջ էությանը նվիրված էր կոմպոզիտորին, ապրում էր նրա արվեստով, հաջողություններով և անհաջողություններով, ստեղծագործելու խթան էր հանդիսանում, այլ կերպ ասած՝ կոմպոզիտորի մուսան էր: Ի դեպ, հենց Ջ. Սայադյանն է ողջ կյանքի ընթացքում հավաքել և ի մի բերել Գագիկ Հովունցի ստեղծագործական ժառանգությունը:

Մանրանվագը վառ է, արտահայտիչ: Անգամ անձամբ չճանաչելով տիկին Ջուլիետային՝ ունկնդիրը կարող է երաժշտության օգնությամբ բացահայտել զգայուն, նուրբ, կանացի, քնարական, ինչ-որ տեղ փոփոխական, քմահաճ, բայց և ամբողջական կերպար:

Առաջին չորս տակտերը նախապատրաստում են մեղեդին: Մանրանվագի մշակվածքը երկշերտ է, հարթակներից մեկը հանդարտ, միևնույն ժամանակ իշխանատենչ նվագակցությունն է, մյուսը՝ նրբազգաց և ճկուն մեղեդին: Հարթակներից յուրաքանչյուրը բացահայտում է Ջ. Սայադյանի կանացի, միևնույն ժամանակ ուժեղ բնավորությունը: Ինչպես Գ. Հովունցի մի շարք ստեղծագործություններում, այստեղ ևս կարելի է տեսնել կոմպոզիտորի նվագախմբային մտածելակերպը: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, ասես հիմնական ծայնը կատարում են ջութակները կամ ֆլեյտաները, իսկ բասը հնչում է կոնտրաբասների կատարմամբ:

Մեղեդին սկսվում է պիանոյով. այն նուրբ է և գետի պես է հոսում՝ իր հուն ներառելով G-B-Es ինտոնացիան:

dolce

p

* led. * led. * led. * led.

legato

* led. * led. * led. * led. *

legato

* led. * led. *

Պիեսը բնույթով նման է նոկտյուրնի, դրա հետ մեկտեղ ունի վալսին բնորոշ գծեր: Գրված է 3/4 չափով: Վեց տոնից բաղկացած լադի օգտա-

գործումը, բազմաթիվ մաժոր և մինոր ակորդների առկայության հետ մեկտեղ, ստեղծում է բազմաբնույթ երանգներով հարուստ մի մանրանվագ:

Գլխավոր թեմային հաջորդում են դրա տարբերակները: Ինչպես և առաջին մանրանվագում, կոմպոզիտորն օգտագործում է հիմնական լադի տրանսպոզիցիաներ: Գ. Հովունցն անձնական զրույցի ժամանակ նշել է, որ եթե փորձ արվի միավորելու հիմնական լադի տոնիկաները կամ դրա որևէ տրանսպոզիցիայի տոնիկաները, դրանց՝ հարևան հնչյունի հետ հետհաջորդաբար միացումից կառաջանա ամբողջական տոներից բաղկացած հնչյունաշար: Այսինքն՝ երկրորդ մանրանվագում արդեն իսկ կան երրորդ լադահարմոնիկ համակարգի տարրեր. համակարգ, որտեղ լադի հիմնական տոներից կազմվում է ամբողջատոն գամմա:

Պիեսի սկզբնական շարադրանքում առկա են միապաղաղություն և հանգստություն: G-B-S մոտիվից բացի, պիեսում հանդիպում ենք մեկ այլ թեմատիկ նյութի, որն ուղեկցվում է վերընթաց ֆիգուրացիաներով:

Թեմայի անցկացումից հետո վերադառնում ենք սկզբնական շարադրանքին, որի զարգացումը բերում է պիեսի գագաթնակետին: Դրանից անմի-

ջապես հետո ձախ ձեռք է անցնում երկրորդ թեման: Այս դեպքում նվագակցությունն աջ ձեռքում է: Տեմպի և դինամիկայի անկման շնորհիվ պիեսի վերջում երաժշտությունն ասես մարում է: Այս մանրանվագում Գ. Հովունցը վառ կերպով ներկայացնում է իր տիկնոջ գեղեցիկ, երբեմն հակասական բնավորության կողմերը: Մանրանվագը լի է սիրով և համակրանքով կոմպոզիտորի սիրելի կնոջ և հավատարիմ ընկերոջ հանդեպ:

Երրորդ մանրանվագ, ինտոնացիա G - H /Գևորգ Հովունց/

Ընտանիքին նվիրված երաժշտական համարները եզրափակում է G - H ինտոնացիան՝ նվիրված կոմպոզիտորի որդուն՝ Գևորգ Հովունցին: Իր վիրտուոզությամբ, սլացիկ, դինամիկ բնույթով պիեսը հակադրվում է ոչ միայն նախորդ մանրանվագներին, այլև առանձնանում է շարքի մյուս բոլոր պիեսներից:

Երաժշտությունը բնորոշում է կոմպոզիտորի որդու երիտասարդական ավյունը, անհանգստությունը, ալեկոծ հոգին՝ համակված անորոշությամբ և տագնապի երանգներով: Մյուս կողմից մանրանվագում արտացոլված է կոմպոզիտորի յուրահատուկ վերաբերմունքը, հոգու թրթիռը պիեսի հերոսի նկատմամբ: Մանրանվագը լի է անկեղծ զգացմունքայնությամբ:

Կառուցվածքային առումով պիեսն ունի հետևյալ տեսքը՝ A - տևողությունը՝ տասնչորս տակտ, A1 - տասնչորս տակտ, B - քսանչորս տակտ, A2 - ութ տակտ, C - տասնմեկ տակտ, A3 - տասնվեց տակտ:

B բաժինը ներառում է A, A1 բաժինների նման երկու սիմետրիկ բաժին:

Ընդհանուր առմամբ երկրորդ՝ G-H մանրանվագում օգտագործված է վեց տոներից բաղկացած սիմետրիկ լադ՝ իր չորս տրանսպոզիցիաներով /e, g, gis, h, c dis/:

Երաժշտության առաջինից մինչև վերջին տակտը նույն բնույթի է, ունի նույն տրամադրությունը, լի է փնտրտուրքով, առկա է թրթռուն մթնոլորտը:

Գ. Հովունցը կարողանում է ստանալ այդ կերպարային ոլորտը նաև 12/8 չափի շնորհիվ, որը պարբերաբար վերածվում է 2/2-ի: Պիեսը կարելի է բնութագրել որպես տրիոլային ֆիգուրացիաներով «անընդհատ շարժում»: Ձախ ձեռքը առաջնորդողի՝ դիրիժորի դեր է կատարում, ըստ էության այն ստեղծագործության ռիթմիկ միջուկն է:

Սկզբնական մոտիվը շարունակական զարգացում է ապրում պիեսի ընթացքում: Հասնելով որոշակի կետի՝ այն կրկնվում է: Երաժշտական հյուսվածքը բաշխվում է երկու ծայների միջև՝ թեմայի, որն աջ ձեռքում է, և նվագակցության, որ ձախ ձեռքում է: Սակայն պետք է նշել, որ ներքևի ծայնը պարզապես նվագակցություն կամ հետին պլանն չէ: Այն ինքնուրույն ծայն է, որի հիմքում օստինատային քայլեր են, որոնք փոխվում են աջ ձեռքում հնչող գրեթե յուրաքանչյուր 3/8-ին զուգահեռ: Թեմայի երկրորդ շարադրումից հետո նվագակցությունը ձախ ձեռքից փոխանցվում է աջ ձեռքին, ապա արագ վերադառնում սկզբնական շարադրանքին: Պիեսի վերջում առաջին թեման ընդհատվում է փոքր պասաժներով: Մանրանվագն ավարտվում է հանդարտ ակորդներով:

Տեխնիկական առումով պիեսի կատարումը պահանջում է դիրժմիկ վարպետություն, հստակ արտաբերական կատարում: Թվացյալ հասարակ ծայնանցումները ոչ միշտ են հարմար կատարման համար: Ավաճը վերաբերում է հատկապես ձախ ձեռքի կատարմանը:

Չորրորդ մանրանվագ, ինտոնացիա A-B /Ամայա Բայբուրջյան/

Չորրորդ պիեսը պատկերում է Ամայա Բայբուրջյանին: Մանրանվագում արտացոլված են տաղանդաշատ դաշնակահարի հանգստությունը, երաժշտականությունը, ներքին հավաքվածությունը և խստությունը՝ շաղախված մելամաղձոտության և անտարբերության երանգներով, որոնք բնորոշ էին դաշնակահարին:

Ամբողջ պիեսի ընթացքում A-B մոտիվն աջ ձեռքում անցնում է ուղիղ ձևով, իսկ ձախում՝ հայելաձև:

Եթե նախորդ պիեսներում սիմետրիկ լադերն օգտագործված էին զուտ որպես լադ, ապա այս մանրանվագում ուրվագծվում և ցուցադրվում է լադի ամբողջ սիմետրիան, այլ կերպ ասած՝ լադի «կմախքը»: Յուրաքանչյուր մելոդիկ-ինտոնացիոն բջիջ և ակորդ ունի իր այլադարձությունը: Հեղինակն անձնական զրույցի ժամանակ այդ կապակցությամբ ասում է. «Շարժման տրամաբանությունն ստեղծում է սիմետրիա»: Առանձնացնելով սիմետրիան որպես ձևակառուցող երևույթ՝ կոմպոզիտորը ցույց է տալիս դրա ներքին հավաքվածությունը, խստությունը և տրամաբանությունը:

Նուրբ և հանդարտ է մանրանվագի երաժշտությունը: Առաջին իսկ ինտոնացիայում լսում ենք ինվերսիան:

Պիեսի հիմքում վեց տոնից բաղկացած սիմետրիկ լադն է /fis, a, b, cis, d, f, fis/:

Եթե որպես սիմետրիկ կենտրոններ ընդունենք d և f հնչյունները, որոնց շուրջ է կենտրոնացած սկզբնական կառույցը, ապա հետագայում էլ կհամոզվենք, որ այդ սիմետրիան ոչ մի տեղ չի խախտվում, ավելին՝ պահպանվում է մինչև ստեղծագործության ավարտը: Կոմպոզիտորը հանգիստ և հետևողականորեն է զարգացնում պիես-սիմետրիան: Սակայն պետք է նշել, որ ոչ մի տեղ, ոչ մի տակտում հեղինակը չի հետապնդում սիմետրիան պահպանելու նպատակ: Պարզապես այս տեսակի կառույցն ամենաընդունելին և հարմարն էր կերպարի բացահայտման համար:

Ունակի օգնությամբ կատարողը պետք է ստեղծի օբերտոնային հնչողություններ: Թեև դաշնակահարի առջև խնդիր է դրվում ստեղծելու ամբողջական կերպար, կառուցելու երկար երաժշտական մտքեր և զգալու երաժշտությունը մեկ շարժման մեջ, այնուհանդերձ մեծ կարևորություն է տրվում յուրաքանչյուր նոտային: Պիեսի վերջում հանդիպող ակորդներում որպես հիշեցում հնչում է A-B մոտիվը:

Ժամանակակիցները Ամալյա Բայբուրջյանին բնորոշելիս տարբեր կարծիքներ են արտահայտում, սակայն բոլորը համակարծիք են, որ **A-B** հնչող անուն-ազգանվան սկզբնատառերը լավագույնս են պատկերում տաղանդաշատ, անչափ երաժշտական, յուրահատուկ ձեռքեր ունեցող դաշնակահարին, որի թե՛ մասնագիտական, թե՛ մարդկային հատկանիշները բարձր էր գնահատում Գ. Հովունցը:

Հինգերորդ մանրանվագ, ինտոնացիա G – E /Գրիգոր Եղիազարյան/


Յուրաքանչյուր մարդու կյանքում լինում է ժամանակ, երբ նա իր ուսուցչին ընկալում է որպես գերմարդու, աստվածային, անհասանելի մի էակի: Այդ վերաբերմունքը Գ. Հովունցը մինչ օրս պահպանել է իր ուսուցիչների և դասախոսների հանդեպ: Մարդիկ, ումից նա ժառանգել է երաժշտության հանդեպ անսահման սերը, կյանքը և երաժշտությունը հասկանալու ունակությունը:

Կոմպոզիցիայի իր պաշտելի ուսուցչին Գ. Հովունցը բնորոշում է հետևյալ կերպ. «Խոշորագույն հայ կոմպոզիտոր Գրիգոր Եղիազարյանը շատ ինքնատիպ, պարփակված, յուրաքանչյուր մանրուք սրտին մոտ ընդունող անձ էր: Նրա արվեստին բնորոշ էր վառ, ազգային մտածելակերպը: Կոմիտասի պես, նա երկար ընտրում էր թեմաներ և հղկում իր ստեղծագործությունների համար»:

Գ. Հովունցի կոմպոզիցիայի դասախոս Գ. Եղիազարյանին է նվիրված «Տասը պիես-մոնոգրամ» շարքի հինգերորդ մանրանվագը, որի տառային նշանակումն է G – E:

Գրիգոր Եղիազարյանի լավագույն ստեղծագործություններն աչքի են ընկնում ազգային վառ երանգներով, երաժշտական ուրույն, անհատական լեզվով և բարձր վարպետությամբ: Գ.Հովունցը ջերմությամբ է հիշում իր ուսուցչին և ասում, որ սեփական հաջողությունների ու գիտելիքների համար պարտական է հենց նրան: Կոմպոզիտորն այս պիեսը համարում է շարքի լավագույն համարներից մեկը: Այստեղ նա ցուցադրել է Գ. Եղիազարյանի երաժշտության բնույթը, հնչողությունները և դիժմիկ պատկերները:

Մանրանվագը ժողովրդական տարրերի և երանգների տեսանկյունից շարքի ամենահարուստ ու գունեղ համարն է: Թեման ազգային պարերգային բնույթի է և ձայնակցում է Գ. Եղիազարյանի «Նուբար – Նուբարին»:



Հեզաճկուն լինելու հետ մեկտեղ պիեսը երանգավորված է եթերային տխրությամբ, որը սերում է G – E ինտոնացիայից /փոքր տերցիա/:

Մանրանվագը եռամաս է: Միջին մասի երաժշտական նյութը ծնվում է առաջին մասի թեմատիզմից: Այն զարգանում և հարստանում է միջին բաժնում: Լարվածության մեծացման հետ մոտենում է մանրանվագի բարձրակետը: Այն ժայթքում է հրաբխի պես:

Ինչպես տաք լավա, երաժշտական հոսքը լցվում է ռեպրիզ - ապոֆեոզ: Դրան է հաջորդում վերջաբանը, որը կառուցված է նախորդ բաժնի երաժշտական նյութի հիման վրա:

Մանրանվագը Գ. Հովունցը գրում է ութ տոնից բաղկացած սիմետրիկ լադում /E, f, g, as, b, h, cis, d, e/, որի չորս տոները հիմնական են, իսկ երեքը՝ տրանսպոզիցիաներ /առաջինը՝ e–ից, երկրորդը՝ f–ից, երրորդը՝ fis–ից/:

Էքսպոզիցիայում և ռեպրիզում կոմպոզիտորն օգտագործում է առաջին և երկրորդ տրանսպոզիցիաները, մշակման բաժնում՝ երրորդը: Միջին բաժ-

նում, հիմնական տոների փոփոխման հետ, տրանսպորտացիաների փոփոխությունը դառնում է ակնհայտ:

Այսպես, կոմպոզիտորը հաջորդաբար օգտագործում է լադահարմոնիկ համակարգի բոլոր հնարավորությունները՝ բոլոր հնարավոր ակորդային համադրություններով և տրանսպորտացիաներով հանդերձ:

Նշենք, որ «Նուբար-Նուբար» ժողովրդական երգը ողջ մանրանվագի ընթացքում հնչում է հայելաձև:

Պիեսում շատ կարևոր է ռիթմիկ զարկերակի զգացողությունը, ձախ ձեռքը հանդես է գալիս որպես նվագակցող: Պիեսը պարային բնույթի է, և նշված ոտնակը օգնում է պարային տրամադրություն ստեղծելուն: Բացի մեղեդուց և նվագակցությունից, պիեսում առկա են միջանկյալ նոտաներ, որոնք կոմպոզիտորի խորհրդով պետք է առանձնահատուկ ուշադրությամբ կատարել:

Վեցերորդ մանրանվագ, ինտոնացիա Ca-eS-D /Կարպ Դոմբաև/

Շարքի վեցերորդ պիեսը եռաձայն ֆուգա է՝ նվիրված Գ. Հովունցի ջութակի ուսուցչին՝ Կարպ Դոմբաևին: Այս մանրանվագում, ինչպես շարքի մյուս պիեսներից շատերում, հեղինակին հետաքրքրում են մարդկային բնավորությունների հակասությունները: Գ. Հովունցի համոզմամբ Կ. Դոմբաևն այն մարդկանցից էր, ում արտաքինը և էությունը լիովին հակադիր էին: Արտաքինապես տպավորիչ, ազդեցիկ, նա շատ բարի, ուրախ, կատակասեր, ծաղրախաղերի սիրահար և գործունյա անհատ էր:

Տուգայի թեման առաձգական է, հստակ, մարմնավորում է ջութակահարի առնական կերպարը:

Մանրանվագում բավականին դժվար է հստակ և հետևողականորեն ուրվագծել որևէ լար: Պայմանականորեն որպես տոնիկա կարելի է ընդունել G – ն:

Գ. Հովունցը չի գրում դասական ֆուգա, հետևաբար դասական կանոններից հեռացումն օրինաչափ է: Ֆուգայի էքսպոզիցիան սկսվում է թեմայի անցկացումով միջին ձայնում, այնուհետև այն հնչում է վերևի ձայնում: Առկա է տոնիկա-դոմինանտային համադրություն: Երբ թեման երրորդ անգամ անցկացվում է ներքևի ձայնում, այդ համադրությունը խախտվում է: Ի տարբերություն դասական ֆուգային բնորոշ T-D-T տոնայնական համադրության՝ առաջին անցկացումը g-ում է, երկրորդը՝ d-ում, իսկ երրորդը՝ a-ում: Փաստորեն, էքսպոզիցիան կառուցվում է դոմինանտային ածի վրա, ավանդական տոնիկային վերադառնալու կանոնի փոխարեն:

Ֆուգայում մեծ դեր են կատարում ինտերմեդիաները: Դրանք մեղեդային են, զարգացած, ծավալուն:

Մշակման բաժինը կառուցված է պիեսի ինտոնացիոն հիմքի վրա: Կոմպոզիտորի նշած դինամիկան և «con brio» /կրակոտ, ոգեշնչված/ եզրը ստեղծում են հուզական բարձր լարում այս բաժնում: Ֆուգայի գագաթնակետը և ռեպրիզի սկիզբը համընկնում են:

Այստեղ երաժշտությունը ձեռք է բերում խրոխտ և սպառնալի բնույթ: Կոմպոզիտորը կարողանում է ստանալ այդ տրամադրությունը՝ թեման հնչեցնելով բասում, ավելին՝ միաձայն անցկացումը փոխարինելով երեք օկտավաների ընդգրկումով:

Ռեպրիզում հնչում են թեմայի ստրետային անցկացումները, որոնք, ինչպես դասական ֆուգաներում, հիմնական տոնայնությունում են:

Ռեպրիզին հաջորդող ինտերմեդիան հաստատում է G տոնիկայի «իշխանությունը»: Վերջին անգամ հնչում է հիմնական Ca-eS-D ինտոնացիան: Ֆուգան ավարտվում է եռահնչյունով: Ֆուգայի ավարտը հանդարտ ու համերաշխ է:

Գլխավոր թեմայի հնչյունների շեշտադրումները մեղեդուն հաղորդում են ընդգծված, հստակ բնույթ: Ողջ պիեսի ընթացքում կատարողին անհրաժեշտ է զգալ և ամուր պահել դիրքիկ պոլսացիան: Իմաստային կարևոր դեր են կատարում նաև հակաշարադրանքում հանդիպող պատուհաները:


Կատարողի առջև դրված խնդիրներից մյուսը որոշակի ստատիկության հաղթահարումն է: Նման ստատիկության պատճառը երաժշտական նյութի ոչ բազմապիսի լինելն է:

Յոթերորդ մանրանվագ, ինտոնացիա A-G-H /Ալեքսանդր Հարությունյան/

Ավագ գործընկեր Ալեքսանդր Հարությունյանին է նվիրված շարքի յոթերորդ մանրանվագը: «Պաթետիկ, տարերային, հակասական հայ մեծ երաժիշտ», - այսպես բնորոշեց Ալ. Հարությունյանին Գ. Հովունցը մեր զրույցի ժամանակ:

Ողջ պիեսը բաղկացած է հիմնական ինտոնացիայի տարբերակներից: Բնույթով մանրանվագն ամենակենսուրախն ու կենսահաստատուն է, այլ կերպ այն կարելի է կոչել ծոն լավատեսության: Հեղինակը նոտաներում գրում է՝ scherzando /կատակային, հումորային տրամադրությամբ/: Գ. Հովունցն ստեղծում է տոնախմբության մթնոլորտ, որը բնորոշ է Ալ. Հարությունյանի ստեղծագործություններից շատերին: Նման կերպարային ոլորտի բաղկացուցիչը ժողովրդական բնույթ ունեցող սեթևեթող թեման է:

Մանրանվագի չափը 5/8 է, որը տեղ-տեղ դառնում է 6/8: Մետրաոփթմի նման փոփոխությունները բնորոշ են հայկական ժողովրդական երաժշտությանը: Ձևակառուցողական առումով A – G – H ինտոնացիան նմանություն ունի չորրորդ պիեսի հետ. երկու մանրանվագներն էլ բաղկացած են սիմետրիկ կառույցներից: Չորրորդ պիեսում յուրաքանչյուր ինտոնացիայի ինվերսիան անմիջապես է «արծազանքում»: Տվյալ պիեսում սիմետրիկ բաժինները հեռացած են մեկը մյուսից, այսինքն՝ սկզբում հնչում է 37 տակտ տևողությամբ առաջին բաժինը, այնուհետև՝ կրկին 37-տակտանի երկրորդը և 31 տակտից կազմված երրորդ բաժինը, որտեղ բնօրինակն ու ինվերսիան հնչում են համատեղ: Ասվածը սխեմատիկորեն կարելի է այսպես պատկերել.



A + A1 սիմետրիան ներկայանում է գրեթե ինքնատիպ տարբերակով, փոքր փոփոխություն կա միայն վերջին վեց տակտերում: Այս հնարքը՝ օրիգինալ ինվերսիա՝ օրիգինալ գումարած ինվերսիա, շատ բնորոշ է Գ. Հովունցի արվեստին, հատկապես դաշնամուրային ստեղծագործություններին: Ձևակառուցման նման տեսակ հանդիպում ենք դաշնամուրային առաջին և երկրորդ սոնատների երրորդ մասերում: Սիմետրիկ բաժինների միախլուսումը ստեղծում է ամբողջականության մթնոլորտ, ստեղծագործությանը տալիս միասնականություն: Կոմպոզիտորը նման կառուցվածքը բնորոշում է որպես «ձևակառուցող հակադրությունների համադրում»:

Ի սկզբանե թեման շարադրվում է միայն աջ ձեռքում, իսկ ձախը կատարում է նվագակցության դեր: Տասներեքերորդ տակտից սկսած՝ աջ ձեռքի թեման և ձախի նվագակցությունը դառնում են մեկ ամբողջություն, և ձախը դադարում է կատարել նվագակցության դեր:

Տակտուրայի տեսանկյունից երաժշտական այս հատվածը հիշեցնում է ինչպես Ա. Հարությունյանի «Երեք պիես» շարքից «Սասունցիների պարը», այնպես էլ Ա. Բարաջանյանի «Վեց պատկեր» շարքից համանուն պիեսը:

Այ. Հարությունյանին նվիրված մանրանվագում լսում ենք ևս մեկ թեմա, որը զարգանում է գլխավոր թեմային հավասար:

Այդ թեմայի զարգացումը բերում է զագաթնակետի, որից հետո սկսվում է գլխավոր թեմայի նոր շարադրումը: Մեղեդին այս անգամ հնչում է ծախ ձեռքում՝ թերևս վերևի ձայնն ավելի արտահայտիչ դարձնելու նպատակով: Առաձգական ստակատոներն ու բազմաթիվ դադարներն օգնում են պահպանել պիեսի սկերցոզային տրամադրությունը: Գ. Հովունցը տասներեքերորդ տակտի թեման միջին բաժնում կրկին կիսում է երկու ձեռքերի միջև, սակայն այս դեպքում աջ ձեռքի թեման հնչում է ձախում, իսկ ձախինը՝ աջում:

Ամբողջ պիեսի ընթացքում թեմաները կրկնվում են ձևափոխված տեսքով: Փոխվում են թեմաների բաժանումը ձեռքերի միջև և շեշտադրությունը:

Ըստ էության մանրանվագն ունի երկու մեծ բարձրակետ՝ կոլմինացիա: Երկրորդ կոլմինացիայի ժամանակ թեման փոփոխված է. շարադրվում է օկտավներով:

Ինչպես նախորդ մանրանվագում, այս մեկում էլ կոլմինացիան համընկնում է վերջին բաժնի սկզբի հետ: Ոչ մեծ ինտոնացիոն-սիմետրիկ կառույցը բերում է հիմնական ինտոնացիայի վերջին անցկացմանը: Գլխավոր թեմայի վերջին անցկացումը հնչում է միաժամանակ երկու ձեռքերում, հակառակ շարժումով: Ֆակտուրան ավելի հարուստ է և շատ ակտիվ: Թեմայի վեցանգամյա վերընթաց անցկացումներով էլ, որոնք ստեղծում են ուրախության, ցնծության և հաղթանակի տրամադրություն, ավարտվում է մանրանվագը:

Պիեսի փոփոխական ռիթմը կատարողից պահանջում է ռիթմի լավ զգացողություն, կենտրոնացում ռիթմիկ հստակության վրա: Ամբողջ պիեսի ընթացքում շեշտված նոտաներն օգնում են կատարողին անընդհատ շարժման մեջ ստեղծել մեղեդային գիծ:

Ութերորդ մանրանվագ, ինտոնացիա G-Ch /Գայանե Չեքոտարյան/

Ութերորդ պիեսը բացահայտում է հրաշալի երաժշտի և մարդու՝ Գայանե Չեքոտարյանի ինքնատիպ կերպարը: Գ. Հովունցն իր պոլիֆոնիայի ուսուցչին բնորոշելու համար ընտրում է ֆուգայի ժանրը, ինչը օրինաչափ է: Գ. Չեքոտարյանը բացի նրանից, որ Գ. Հովունցի պոլիֆոնիայի ուսուցիչն է եղել, հայ եզակի կոմպոզիտոր-պոլիֆոնիստներից է: Գ. Չեքոտարյանի գրչին է պատկանում «Պոլիֆոնիան Արամ Խաչատրյանի ստեղծագործական կյանքում» հիանալի գիրքը, որն անկասկած կարելի է կոչել հայկական պոլիֆոնիկ մտքի հանրագիտարան⁴:

⁴ **Чеботарян Г. М.** Полифония в творчестве Арама Хачатуряна. Ереван, “Айастан”, 1969. 271 с.

Ինչպես շարքի նախորդ ֆուգան, այս մեկն էլ եռաձայն է: Գ. Հովունցը թեման «ներկում է» նուրբ երանգներով: Թեմային բնորոշ են կոկիկությունը, կազմակերպվածությունը և ճշգրտությունը: Դա օրինաչափ է, քանի որ Գ. Չեքոտարյանն իր հարյուրավոր ուսանողների հիշողության մեջ մնացել է առաջին հերթին որպես խիստ, սկզբունքային և անկաշառ անձնավորություն:



Ինչպես և վեցերորդ մանրանվագում, այստեղ ևս կոմպոզիտորը չի դիմում իր երեք լադահարմոնիկ համակարգերին: Նա միայն պահպանում է որոշ հենակետեր: Այդպես, մշակման բաժնում առկա են երրորդ լադահարմոնիկ համակարգի տարրեր. վեց հիմնական տոները կազմում են ամբողջատոն լադ:

Ֆուգան գրված է C-ում: Շարքի այս և նախորդ ֆուգաների տարբերությունն այն է, որ առաջին ֆուգայում կոմպոզիտորը դիմում է T-D-ային համադրությանը, իսկ Գ. Չեքոտարյանին նվիրված ֆուգայում թեմաների համադրությունը T-S-ային է:

Ձայների մուտքերը նույն հերթականությամբ են, ինչպես նախորդ ֆուգայում: Էքսպոզիցիային հաջորդում է թեմայի զարգացման բաժինը: Այստեղ կարելի է տեսնել թեմայի իմիտացիաներ և ստրետային անցկացումներ, որոնք լցնում, հարստացնում են ֆուգայի մշակվածքը, ընդգրկում են լադատոնայնական հարուստ հորիզոնը: Պատահական չէ, որ հենց այս ֆուգայում է կոմպոզիտորը կիրառում պոլիֆոնիկ գրելաձևի հարուստ հնարավորություններ. չէ՞ որ բնութագրում է պոլիֆոնիայի մեծ վարպետին:

Ռեպրիզա-ստրետտան համընկնում է ֆուգայի բարձրակետի հետ:

Թեման անցկացվում է ներքևի ձայնում, այնուհետև՝ վերևի, որից հետո՝ միջին ձայնում: Դինամիկան զարգանում է երկու ֆորտեից մինչև երկու պիսսո: Թեմայի հնչողությունը ռեպրիզի սկզբում այնքան զորեղ է և բարձր, որ տպավորություն է ստեղծվում՝ ասես այն կատարում են տրոմբոններն ու շեփորները:

Ֆուգայի ոչ մեծ կողան ունի հոմոֆոն – հարմոնիկ կառուցվածք:

Իններորդ մանրանվագ - Ինտոնացիա Es- Ca - G /Սիմոնյան Կարինե Գեորգիի/

Գ. Հովունցի մտերիմ ընկերներից էր մոսկվայաբնակ երաժշտագետ Կարինե Գեորգիի Սիմոնյանը: Երկար տարիներ նա աշխատել է համամիութենական «Մելոդիա» ձայնագրման ստուդիայում: Նրա երաժշտագիտական գործունեության բաղկացուցիչ մասն էր հայկական երաժշտությունը: Կարինե Սիմոնյանն ակտիվորեն քարոզում էր հայ հեղինակներին, բացի այդ օգնում էր հեղինակային վիճելե սկավառակների ձայնագրման հարցում:

Գ. Հովունցը, ցանկանալով խուսափել Կարպ Դոմբակին նվիրված մանրանվագի ինտոնացիայի կրկնությունից և նմանությունից, Կարինե Գեորգիի Սիմոնյանի ինտոնացիայի անվան առաջին տառերը փոխում է տեղերով. օգտագործում է սկզբում անվան առաջին տառերը, այնուհետև ազգանվան և ի վերջո հայրանվան: Երաժշտագետին նվիրված ինտոնացիան ունի հետևյալ տեսքը՝ es - Ca - G /Սիմոնյան Կարինե Գեորգիի/:

Թեման բաղկացած է երկու տարրից՝ գլխավոր ինտոնացիայից և վերընթաց գամմայատիպ արպեջիոներից: Թեմայի առաջին բաղկացուցիչ մասը կետագծված ռիթմի և սեպտիմա թռիչքի շնորհիվ ձեռք է բերում շեփորային քայլերգի կոչի բնույթ: Թեմայի երկրորդ բաղկացուցիչ մասը վիրտուոզ պասսաժի ձևով է հանդես գալիս:



Մանրանվագը բաղկացած է չորս բաժիններից՝ A, B, A1, B1:

A1 և B1 բաժիններն իրենց բնույթով և ինտոնացիոն կառուցվածքով լիովին համընկնում են A և B բաժինների հետ: Տարբերությունը միայն տրանսպոզիցիաների կամ լադերի փոփոխության մեջ է:

A և A1 բաժիններում գերիշխում է թեմայի երկրորդ՝ վիրտուոզ բաղադրիչը: Ութ տոնից բաղկացած սիմետրիկ լադի /C, cis, Es, e, Fis, g, A, b, C/ հիմնական չորս տոներից յուրաքանչյուրը կարող է իր վրա վերցնել տոնիկայի դերը /C, Es, Fis, A./: A1 բաժնում առկա է նաև լադի երկրորդ տրանսպոզիցիան cis-ից:

Կոնտրաստային սկզբունքը Գ. Հովունցը դնում է A և B, A1 և B1 հիմնական բաժինների միջև: Կամային, լարված, դինամիկ սկիզբը, որը դրված է A /տակտեր1-16/ և A1 տակտեր /30-45/ բաժինների հիմքում, փոխվում է նուրբ, երգային, B /տակտեր 17-29/ և B1 /տակտեր 46- 59/ բաժիններով, որտեղ բացակայում է կոչական բնույթ ունեցող պունկտեիրը, չկան նաև բարդ արպեջիոներ: Հանդարտ, առանց կրքոտ լարվածության է հնչում մեղեդին: Հնչողությունը չի գերազանցում պիանո /p/ դինամիկ նշանը, մինչդեռ A և A1 բաժիններում այն հասնում էր երկու, երեք ֆորտեի /ff, fff/:

Կերպարային ոլորտի փոփոխության հետ միասին փոխվում է նաև լադը: Այժմ դա վեց տոնից բաղկացած սիմետրիկ լադ է /D, f, Fis, a, B, cis, S/: Լադի հիմնական տոներն են՝ D, Fis, B, D: «Պիեսում համադրվում են առաջին լադահարմոնիկ համակարգի տոնիկայնությունը և երկրորդ լադահարմոնիկ համակարգի լադայնությունը, ինչն ավելի մեծ հնարավորություններ է տալիս մեղեդու զարգացման համար», - ասում է կոմպոզիտորն անձնական գրույցի ժամանակ:

A1 և B1 բաժինները տեխնիկապես զիջում են A և B բաժիններին: Պիեսը կատարողից պահանջում է իմպրովիզացիոն մտածելակերպ, տեխնիկական վարպետություն:

Տասներորդ մանրանվագ – Ինտոնացիա A-B-a-b-a, Առնո Բաբաջանյան

Շարքի եզրափակիչ պիեսը նվիրված է հայ ինքնատիպ և անվանի կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանին: Վառ, փայլուն, թույլ անգամ իր խրոխտայի քայլերգային բնույթով պիեսը բնորոշում է Ա. Բաբաջանյանի գունեղ երաժշտությունը:

Պիեսը կառուցվում է երեք թեմաների համադրությունների վրա, որոնցից յուրաքանչյուրը մեկ լադ է ներկայացնում: Թեմաների հաջորդականության

սխեման հետևյալն է. A /10 տակտ/, B /10 տակտ/, A1 /10 տակտ/, B1 /16 տակտ/, A2 /10 տակտ/, Coda /13 տակտ/:

Պիեսի ոռնդոյաձև կառուցվածքը, երաժշտական նույն նյութի կրկնությունը նպաստում են մանրանվագի միասնականությանը, ամբողջականությանը:

Գ. Հովունցի այս պիեսը Ա. Բաբաջանյանի երաժշտության, հոգեկերտվածքի, մտքերի, կերպարային աշխարհի երաժշտական բնութագիրն է: Մանրանվագը ստեղծված է Ա. Բաբաջանյանի արվեստի հզոր ազդեցության ներքո:

Առաջին թեման, որի հիման վրա ձևավորվում են A խմբի բաժինները, ամբողջությամբ կառուցված է A-B-a-b-a ինտոնացիայի «խաղերի» հիման վրա:

Տակտուրան բաժանված է երկու ձայների միջև, որոնցից վերկինում հնչում է հիմնական թեման, ներքևինը կառուցված է օկտավային բասերից. այն ասես շրջապատում, ամուր պահում է թեման:

Թեմայի երկրորդ անցկացման ժամանակ A1 բաժնում ձայները փոխվում են տեղերով: Այդ փոփոխությունը թեման դարձնում է էլ ավելի համարձակ և անհողորդ:

A2 բաժնում գլխավոր ինտոնացիան հաջորդաբար հնչում է վերևի, այնուհետև ներքևի ձայնում: Հենց այս բաժնի սկիզբն է համընկնում պիեսի բարձրակետի հետ:

Գլխավոր թեման գրված է վեց տոնից բաղկացած սիմետրիկ լադում /D, f, Fis, a, B, cis, D/: Լադի հիմնական տոներն են՝ D, Fis, B, D:

B և B1 խմբի թեմաները սուր կոնտրաստայնություն են բերում մանրանվագի դրամատուրգիական կերպարայնության ոլորտ: Հաշվի առնելով A-B-a-b-a ինտոնացիայի բազմաթիվ կրկնությունները՝ այս խմբի թեմաները թարմացնում են մանրանվագի երաժշտական լեզուն: Նոր թեման գրված է նոր՝ ութ տոնից բաղկացած սիմետրիկ լադում /G, gis, B, h, Cis, d, E, f, G/: Լադի հիմնական տոներն են՝ G, B, Cis, E, G:

Թեմայի վերջում կոմպոզիտորը բասերում օգտագործում է վարընթաց ամբողջատոն շարժում, որը երրորդ լադահարմոնիկ համակարգի նախանշանն է: Այսպես, ինչպես նախորդ պիեսում միավորված էին առաջին և երկրորդ համակարգերը, այնպես այս մանրանվագում համատեղվում են երկրորդ և երրորդ լադահարմոնիկ համակարգերը:

Լադահարմոնիկ համակարգերի նման համադրումը մենք կտեսնենք նաև B1 բաժնում, որն ինտոնացիոն առումով ծնունդ է առնում B բաժնից: Գ. Հովունցն այստեղ կիրառում է հետաքրքիր հնարք. օգտագործում է քրոմատիկ վերընթաց ամբողջական հնչյունաշարի անցկացում վերևի ծայնում, որն ի դեպ կոմպոզիտորի երրորդ լադահարմոնիկ համակարգն է, իսկ ներքևի ծայնում հնչում է նույն լադի հիմնական տոների վարընթաց շարժումը:

Նման հնարքը մեծացնում է լարումը, որը բերում է բարձրակետի:

Կողան մեզ վերադարձնում է ութ տոնից բաղկացած սիմետրիկ լադի: Վերջին անգամ հնչում են առաջին թեմայի ինտոնացիաները, որոնց շնորհիվ էլ շարքն ավարտվում է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ժամանակակից հայ անվանի կոմպոզիտոր Գագիկ Հովունցը 1989 թվականին դաշնամուրային սոնատների հետ մեկտեղ է ավարտել իր լավագույն դաշնամուրային ստեղծագործություններից մեկը՝ «Տասը պիես-մոնոգրամը»: Դաշնամուրային շարքի յուրաքանչյուր պիես կառուցվում է հնչյունային լատինատառ խորհրդանիշ-բանաձևերի հիման վրա: Շարքի հերոսները անձինք են, ովքեր եղել են կոմպոզիտորի կողքին կյանքի տարբեր ժամանակաշրջաններում, օգնել, սիրել, կարեկցել, կրթել են նրան, խթանել են ստեղծագործական աճը:

Բանայի բառեր – Գագիկ Հովունց, «Տասը պիես-մոնոգրամ», դաշնամուրային շարք:

**“ЖИВАЯ ГАЛЕРЕЯ ИНДИВИДУАЛЬНОСТЕЙ”: ФОРТЕПИАННЫЙ ЦИКЛ
“ДЕСЯТЬ ПЬЕС-МОНОГРАММ” ГАГИКА ОВУНЦА**

АНАИТ МАРГАРЯН

Известный современный армянский композитор Гагик Овунц в 1989 г., наряду с фортепианными сонатами, завершил одно из своих лучших фортепианных произведений – “Десять пьес-монограмм”. Каждая из пьес построена на звуковой основе латинских символов-формул. Герои ряда – люди, которые были рядом с композитором в разные периоды его жизни, помогали, любили, сострадали, учили его, стимулировали его творческий рост.

Ключевые слова – Гагик Овунц, “Десять пьес-монограммы”, фортепианный цикл.

**LIVE GALLERY OF PERSONAGES: GAGIK HOVUNTS' PIANO CYCLES OF
“TEN PIECE-MONOGRAM”**

ANAHID MARKARIAN

The famous contemporary composer Gagik Hovunts completed his piano sonatas together with one of his best piano cycle *Ten monogram-pieces* in 1989. Each piece of this piano cycle is built on the basis of Latin letter sound symbolic-equations. The heroes of the cycle are persons who have been close to the composer in all times, helped, loved, sympathized, taught him and who have prompted his creative development.

Key Words – Gagik Hovunts, “Ten monogram-pieces”, a cycle of piano pieces.

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԸ ՈՐՊԵՍ ԱՐԴԻԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

ԼԻԼԻԹ ՄԵԼԻՔՅԱՆ

Մշակույթն ընդհանրապես, այդ թվում՝ դիզայնը, արտացոլում է մարդկային հասարակության պատմական զարգացման որոշակի մակարդակը, տվյալ պատմափուլում բնության և հասարակության նկատմամբ մարդու մոտեցումները, ընդգրկում է նրա գործունեության մտավոր և առարկայական արդյունքները: Ժամանակակից դիզայնը ներառում է մշակույթի ու արվեստի համամարդկային ամենատարբեր նվաճումները: Այն հատկանիշների համակցությունն է, որոնք արտահայտում են մարդկային մշակույթի և արվեստի անցած փուլերը, ներկան և կողմնորոշումը դեպի ապագան:

Դիզայնը ժամանակակից հասարակության բարդ գործունեության միջավայրը նպատակահարմար կազմակերպելու միջոցն է: Այն ուսումնասիրում է նաև մարդուն շրջապատող առարկայական միջավայրի խնդիրները, լուծում մարդու կյանքի և գործունեության համար արտադրության միջոցներով ստեղծված ներդաշնակ առարկայական միջավայրի ձևավորման սոցիալ-մշակութային, կենցաղային, տեխնիկական և գեղագիտական հիմնախնդիրները: Դիզայնն արտացոլում է մշակույթի, արվեստի և տեխնիկայի փոխադարձ կապը, առարկայական միջավայրի գեղագիտական հարցերը, ինչպես նաև ձևակերպում է արտադրանքին ներկայացվող տեխնիկական ու գեղագիտական պահանջները: Դիզայնը կարևոր դեր է կատարում ներդաշնակորեն զարգացած մարդու համար աշխատանքի, կենցաղի և հանգստի լավագույն պայմաններ ստեղծելու, նյութական, մշակութային ու գեղագիտական արժեքների ապահովման գործում:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին առաջացան մեքենաների և տեխնիկական կառույցների գրավչության ու գեղեցկության մասին նոր պատկերացումներ, ինչպես նաև ներդաշնակման հիման վրա շրջապատող ողջ առարկայական աշխարհի նպատակաուղղված կարգավորման և վերակազմման անհրաժեշտություն: Գեղարվեստական նախագծման օբյեկտ դարձան ոչ միայն առանձին առարկաները կամ նրանց բաղադրիչները, այլ նաև իրերի համակարգերը, մարդկանց և իրերի ամբողջ խմբերի միջև առկա բարդ կապերը: Այսինքն՝ դիզայնը սկսեց ընկալվել նաև որպես գեղարվեստական

նախագծման արդյունք: Դիզայնի արդյունքի ընկալումն սկսեց ընդգրկել որպես հուզական փոխազդեցություն ոչ միայն հենց իր արդյունքի մտահայեցությունից (առաջին հերթին գեղարվեստական), այլև դիզայնի արդյունքի նկատմամբ սպառողի սեփական ապրումներից, որպես իրագործելի ցանկություն:

Այսինքն՝ դիզայնը մարդու ստեղծագործ գործունեության արդյունքն է և իրականացվում է մարդու համար, ծառայում է մարդուն: Այստեղ է, որ հարաբերակցվում են զգայականն ու գեղագիտականը: Մարդը միշտ էլ դեպի գեղեցիկը, դեպի հարմարը, դեպի գրավիչը ունեցել է առանձնահատուկ ձգտում, յուրատեսակ մոտեցում: Այսօր դիզայնի խնդիրն է նաև ծառայել կոնկրետ մարդուն, սպառողին և նրա անմիջական շրջապատին: Այս իմաստով խիստ արդիական ու խնդրահարույց են դառնում շրջապատող միջավայրի նկատմամբ մարդկային մոտեցումները և այդ հենքի վրա ձևավորվող բնապահպանական օրինաչափությունները, այսինքն՝ բնապահպանական դիզայնը:

Բնապահպանությունն ընդհանրապես ուսումնասիրում է կենդանի օրգանիզմների և միջավայրի պայմանների փոխհարաբերությունները: Իսկ բնապահպանական օրինաչափությունները մարդու կողմից կենսաբանական հնարավորությունները նպատակահարմար օգտագործելու, տնտեսական բազմաբնույթ հարցեր կարգավորելու և լուծելու միջոցներն են, որոնք արդեն իրենց արտահայտությունն են գտնում բնապահպանական դիզայն հասկացության շրջանակներում: Բնապահպանական տեսակետից առավել արդյունավետ են համալիր հետազոտությունները, որոնք հնարավորություն են տալիս ավելի խորը և անմիջականորեն բացահայտելու բնապահպանական օրինաչափությունները՝ կախված գոյության պայմաններից և այդ պայմանների զարգացման շարժընթացներից: Արժե հիշատակել, որ արդեն իսկ բնապահպանական իմացության ուրույն գաղափարներով են տոգորված բազմաթիվ հայ դասական մտածողների, այդ թվում՝ Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու և շատ այլ ուրիշների աշխատությունները:

XX դարի սկզբին դիզայնի ձևավորման և կայացման սկզբնափուլում, երբ դիզայնը սկսեց ներդրվել նաև մշակույթի մեջ՝ որպես ստեղծագործության սկզբունքորեն նոր ոլորտ, այն հակադրության մեջ մտավ ավանդական գեղարվեստական մշակույթի ամենատարբեր ուղղությունների հետ: Ունենալով արվեստի, մշակույթի ուղղությունների նկատմամբ ոչ միանշանակ պատկերացումներ և մոտեցումներ, քիչ չեղան գիտնականներ ու մտածողներ, ովքեր միանգամից չէ, որ ընդունեցին դիզայնի գաղափարը:

«Դիզայնը արստրակտ արվեստ է», - գրեց Հերբերտ Ռիցը, իսկ Գլուպ Էշֆորդն ու մի շարք այլ մտածողներ ավելացրին, որ «դիզայնը արվեստ չէ»: Ավելի մեղմ արտահայտվեց Մադոնադոն. «դիզայնը պարունակում է արվեստի տարրեր, բայց չի համընկնում արվեստի հետ»:

Շրջապատող միջավայրի վրա մարդկային գործունեության աճող բացասական ազդեցությունը մարդկային հասարակության զարգացման առավել արդիական հիմնախնդիրներից մեկն է: Այն անկասկած բխում է բնապահպանական երևույթների արժեզրկման, վատթարացման գործընթացներից, միաժամանակ խթան է, շարժառիթ, դրդապատճառ, ազդակ հասարակության կողմից բնության վրա բացասական ազդեցության և հետագա սերունդներին առողջ բնության փոխանցման պատճառահետևանքային կապի ապահովման համար:

Ելնելով այս ամենից՝ հատկապես XXI դարի սկզբին մարդկության բնապահպանական հիմնախնդիրների նկատմամբ բնապահպանական մշակույթը մղվեց առաջին պլան: Մինչև այդ գոյություն ունեցած և նորաստեղծ բնապահպանական երևույթները սահմանափակող միջոցներն ու չափորոշիչները սկսեցին լրացվել մարդու և նրան շրջապատող միջավայրի գոյության նոր, ավելի առաջադեմ ու արդյունավետ այլ ձևերով ու միջոցներով:

Բնապահպանական հիմնախնդիրների լուծման գերակա, առաջնային ուղղությունը դարձավ մարդու կողմից ստեղծված արտադրանքի բնակազմական հատկանիշների ներդրումը միջավայր, այսինքն՝ նախագծման մշակութային ներդրվեց բնապահպանական մոտեցումը: Ընդհանրապես, դեռևս 1970-ական թվականներին առաջացած բնապահպանական դիզայնի ուղղվածությունը «Մարդ-բնություն» համակարգում հարաբերությունների ներդաշնակությունն է և այդ հարաբերության մեջ մարդու պատասխանատվության ներդրումն ու ապահովումը:

Բնապահպանական դիզայնի խնդիրն է դիզայնի նախագծման տիրույթների և օբյեկտների ստեղծման գործընթացներում կիրառվող նյութերի բնապահպանական մաքրության ապահովումը, արտադրության և սպառման գործընթացների բնապահպանական մաքրությունը՝ այդ գործընթացներում հաշվի առնելով թափոնների օգտահանման և շրջապատող միջավայրի հիմնախնդիրների՝ հօգուտ մարդկության լուծման անհրաժեշտությունը: Այս համալիր մոտեցումների արդյունքում պետք է ապահովվել բնության պահպանության և արդի մշակույթի պահանջներն ու մոտեցումները, ինչպես նաև լուծել տվյալ խնդիրների պահանջները:

Խոշոր առումով դիզայնում բնապահպանական մոտեցումն ինչ-որ չափով նաև հակազդեցություն է գիտատեխնիկական զարգացման նկատմամբ: Սա համաշխարհային բնապահպանական շարժումների ուղղություններից մեկն է, որի խնդիրն է շրջապատող միջավայրի պահպանումն ու վերականգնումը: Դիզայնում բնապահպանական մոտեցման էությունն այն արտադրանքի ստեղծումն է, որը համընկնում է ու ներդաշնակ է շրջապատող միջավայրի հետ, և որը ենթադրում է բնության վրա դրականորեն ազդող, բնությունը չաղտոտող այլընտրանքային միջոցների օգտագործում: Այն նաև էներգետիկ միջոցների արդյունավետ օգտագործման, ոչ թունավոր, արդեն վերամշակված կամ վերամշակման ենթակա թափոնների և նրանց օգտագործման հնարավորությունների ստեղծումն է ու ծառայության ժամկետի լրանալուց հետո վնասակար ազդեցությունների չեզոքացումը, նվազեցումը կամ բացասական ժխտողական երևույթների լրիվ վերացումը:

Աշխարհում հասարակության հիմնական ուժերն այսօր նպատակաուղղված են նյութերի և ռեսուրսների առավելագույն տնտեսմանը, արտադրանքի երկարակեցության ապահովմանը, այնպես որ այդ երկարակեցությունն ու նյութական ծախսի հարաբերակցությունը լինեն օպտիմալ, բարենպաստ և հաշվի առնեն նրանց արդյունքների, երկրորդային հումքի օգտահանման հնարավորությունը, ինչպես նաև ծառայության ժամկետը լրանալուց հետո հնարավոր լինի չեզոքացնել և հեռացնել մարդուն շրջապատող միջավայրից:

Այս բոլորով հանդերձ, պետք է նշել, որ դեռևս չի ձևավորվել ամբողջական ուսմունք բնապահպանական դիզայնի մասին, սակայն բացվել են նոր հորիզոններ, գեղագիտական, մշակութային նոր լծակներ բնապահպանական դիզայնի զարգացման համար: Այսօր արդեն գիտական, ստեղծագործական, հետազոտական և ամենօրյա տարբեր նախագծման գործընթացներում լայն կիրառություն է գտել «բնապահպանական դիզայն» եզրույթը: Բնապահպանական դիզայնի հիմնախնդիրները հարաբերակցվում են արտադրության ամենատարբեր ոլորտների, ճարտարապետության, արդյունաբերության, ժամանակակից գիտական հետազոտությունների հետ:

Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ «Բնապահպանական դիզայն» եզրույթը նշանակում է ոչ միայն ինքը՝ դիզայն գործունեությունը կամ այդ գործընթացը, այլ ներառում է նաև ճարտարապետական նախագծման եղանակները, միջոցներն ու գործունեության արդյունքները: Այն արտահայտում է դիզայնի էությունը՝ որպես նախագծային ստեղծագործական մոտեցում, որը

ներառում է ճարտարապետական նախագծման գեղարվեստական և տեխնիկական, ինչպես նաև բնապահպանական բոլոր սկզբունքները:

Օգտագործված գրականություն

1. Дизайн, Иллюстрированный словарь-справочник //Г. Б. Минервин, В. Т. Шимко, А. В. Ефимов. – Москва, Архитектура – С, 2004
2. **Медведев В. Ю.** Сущность дизайна: учебное пособие – 3-е издание, испр. и доп. – СПб.: СПГУТД, 2009.
3. **Уваров А. В.** Экологический дизайн: опыт исследования процессов художественного проектирования, Москва, МВХПУ, 2010.
4. **Моисеев Н. Н.** Современный рационализм, Москва, 1995.
5. **Борев Ю. Б.** Эстетика, Москва, Высшая школа, 2002.
6. **Glazacheva A.** Ecodesign: Projection of the Environment //Ecology and Forests for Public Health: Proceedings of the International Conference. Oslo, Norway, 2009.
7. **Kofler W.** Sustainability and some arguments for an additional approach for science for survival // International Conference on <<Environment: Survival and Sustainability>>: Abstracts. Nicosia – Northern Cyprus, 2007.

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Հողվածում բնապահպանական դիզայնը ներկայացվում է որպես մարդկային հասարակության զարգացման որոշակի մակարդակ: Վերլուծվել են դիզայնի համամարդկային ամենատարբեր նվաճումներն ու այն հատկանիշների համակցությունները, որոնք արտահայտում են մշակույթի և արվեստի անցած փուլերը, ներկան և կողմնորոշումը դեպի ապագան:

Բնապահպանական դիզայնը ներկայացնում է մարդուն շրջապատող առարկայական միջավայրի խնդիրները, լուծում մարդու կյանքի և գործունեության համար արտադրության միջոցներով ստեղծված ներդաշնակ առարկայական միջավայրի ձևավորման սոցիալ-մշակութային, կենցաղային, տեխնիկական և գեղագիտական հիմնախնդիրները: Այսինքն՝ դիզայնն ընկալվում է նաև որպես գեղարվեստական նախագծման արդյունք:

Այսօր դիզայնի խնդիրն է ծառայել կոնկրետ մարդուն, սպառողին և նրա անմիջական շրջապատին: Այսինքն՝ դիզայնը մարդու ստեղծագործ գործունեության արդյունքն է և իրականացվում է մարդու համար, ծառայում է մարդուն:

Հողվածում հիմնավորվում են բնապահպանական դիզայնի կենսաբանական հնարավորությունները նպատակահարմար օգտագործելու բազմաթույթ միջոցները: Բերվում են տարբեր գիտնականների ու մասնագետների կարծիքներ դիզայն հասկացության մասին: Վերլուծվում են բնապահպանական դիզայնի գործընթացներում բնության պահպանության և արդի մշակույթի

պահանջների ու մոտեցումների խնդիրները: Հիմնավորվում է նաև բնապահպանական դիզայնի մասին ամբողջական ուսմունքի մշակման անհրաժեշտությունը:

Տարվ «բնապահպանական դիզայն» եզրույթի բացատրությունը՝ ներկայացվում են նրա նախագծային ստեղծագործական բնույթը, դիզայնի տվյալ տարբերակի էությունը, նրա մեջ ներառվող նախագծման գեղարվեստական, տեխնիկական, բնապահպանական սկզբունքները, ճարտարապետական նախագծման եղանակները, միջոցներն ու գործունեության արդյունքները:

Բանալի բաներ – բնապահպանություն, դիզայն, մշակույթ, արվեստ, մարդ, գեղագիտություն, ճարտարապետություն, բնություն:

ЭКОЛОГИЧЕСКИЙ ДИЗАЙН КАК СОВРЕМЕННОЕ НАПРАВЛЕНИЕ

ЛИЛИТ МЕЛИКЯН

В статье экологический дизайн представлен как определенный уровень развития человеческого общества. Проанализированы самые различные достижения человечества в области дизайна и совокупность тех признаков, которые отражают прошедшие этапы культуры и искусства, их настоящее и ориентиры на будущее.

Экологический дизайн представляет проблемы окружающей человека природной среды, решает социально-культурные, бытовые, технические и эстетические проблемы формирования гармоничной предметной среды, созданной средствами производства для жизни и деятельности человека. То есть дизайн воспринимается также как результат художественного проектирования.

Сегодня задача дизайна – служить конкретному человеку, потребителю и окружающей его среде. Иными словами: дизайн – результат творческой деятельности человека, осуществляется для человека, служит человеку.

В статье обосновываются различные средства целесообразного использования биологических возможностей экологического дизайна. Приводятся мнения различных ученых и специалистов о понятии дизайна. Анализируются вопросы охраны природы и требований и подходов современной культуры к процессам экологического дизайна. Обосновывается также необходимость разработки целостного учения об экологическом дизайне.

Давая объяснение термина “экологический дизайн”, раскрываются его творческий проектный характер, сущность данного варианта дизайна, используемые в нем художественные, технические, экологические принципы проек-

тирования, способы, средства архитектурного проектирования и результаты деятельности.

Ключевые слова – экология, дизайн, культура, искусство, человек, эстетика, архитектура, природа.

ENVIRONMENTAL DESIGN: A MODERN TREND

LILIT MELIKYAN

This article presents environmental design as an established development stage in human society. All different intercontinental design achievements and fusion of parameters expressing culture and art perspectives of various stages in the past, present and future are analyzed as well.

Environmental design puts forward environmental material problems surrounding human beings. It solves with the help of industrial facilities fundamental problems dealing with sociocultural, commonplace, engineering and aesthetic issues in order to create a harmonious material environment essential to human life and activities. This means that environmental design is as well perceived as a result of esthetic design.

Today the main issue of design is to serve human beings, consumers and their immediate environment. In other words, design is the outcome of human activities and is implemented for humans and serves them.

The article substantiates the diverse means of reasonable application of the biological potentiality of environmental design. Melikyan also refers to multiple views of various design scientists and specialists concerning the conception of design. Protection of nature, human requirements and tendencies of modern culture in environmental design planning are also considered. The necessity for enhancing the entire doctrine of the environmental design is established.

Melikyan providing the article with an elucidation of the term *environmental design* discloses its creative nature. The essence of this particular alternative, which encompasses artistic, engineering, environmental principles, methods, ways and the undertaking results of the architectural design and the outcome of the activity.

Key word – ecology, design, culture, art, human being, aesthetics, architecture, Nature.

**ԽԱՉԱՏՈՒՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ «ՀՈՒՇԵՐ ՀԻՆ ԵՐԵՎԱՆԻՑ»
ՔԱՆԴԱԿԱՇԱՐԸ**

ՆԱՐԵ ՆԱԴԱՐՅԱՆ

Իսաչատուր Իսկանդարյանի արվեստը շատ ընդգրկուն է՝ բազմակերպ, բազմապլանային, դասական ու արդիական արվեստի անհատական ընկալումներով: Նրա մեջ միաժամանակ ապրում էր մի քանի արվեստագետ. նա զբաղվում էր քանդակ, գեղանկար, գրաֆիկա եռամասնությամբ, որոնցից ամեն մեկը յուրովի ուշագրավ և մեծանշանակ է: Նա սքանչելի պարզությամբ է քանդակում մարդկային հոգու խորությունը: Իր հերոսների հանդեպ տաժաժ սերը, մարդկային բնավորությունների ու կյանքի երևույթների մեջ ներթափանցելու և կյանքի մասին ոգևորությամբ խոսելու ցանկությունն օգնում են, որպեսզի Իսաչատուր Իսկանդարյանը հրաժարվի մինչ այդ ժանրային քանդակագործության մեջ հաճախ կիրառվող կերպարի նկարագրական մակերեսային լուծումից, պատմողական մոնոտոն բնույթից: Իսաչատուր Իսկանդարյանի կերտած գաղափարներն օտարված գաղափարներ չեն, ոչ էլ առասպելացված: Դրանք, կարծես, կյանքի ընթացքից պատահաբար անջատված, քանդակագործի հուշերում տպավորված և նրա ձեռքով անմիջապես ստեղծված իրական հերոսների պատկերներ լինեն, որոնք զբոսնում են հանրային պարտեզներում ու պուրակներում, զրուցում են, դանակ-մկրատ սրում, լրագիր կարդում, նվագում, կոշիկ մաքրում, ջուր վաճառում... «Մինուտչիկ Ալեքսանը», «Ծաղկավաճառը», «Դանակ-մկրատ սրողը», «Թուֆ թափ տվողները», «Ջրավաճառ Զատիկը», «Երվանդի ֆայտոնը», «Թերթի կրպակը», «Երաժիշտները», «Լարա-խաղացը», «Ներկարարը», այդ ամենի վառ ապացույցն են: Այս աշխատանքները «Հուշեր հին Երևանից» շարքի լավագույն օրինակներից են: Հայ քանդակագործներից Իսկանդարյանը, թերևս, միակն է, ով ստեղծել է հին Երևանին նվիրված մանրաքանդակների շարք:

Աշխատանքները միաֆիգուր և բազմաֆիգուր արձանիկներ են, ժանրային կոմպոզիցիաներ, կենցաղային տեսարաններ՝ հումորով համեմված: Իր «Հուշեր հին Երևանից» շարքի մասին նա ասում է. «Աստաֆյանով ման էի գալիս, փոքր տղա էի, էս բոլորը լցվեցին հուշապարկս, և ուզեցի անմահացնել: Կոմպոզիցիաների վերածեցի: Ուրախ եմ, որ դրանք դարձան բրոնզածույլ: Իմն

են: Եվ ինձ ոչ ոք չի կարող կրկնօրինակել, իսկույն կիմացվի»¹: Իսկանդարյանը նաև «Հուշեր հին Երևանից» շարքի մասին խոսելիս նշում է հետևյալը. «Ինձ հարցնում են հաճախ: Ինչո՞ւ եմ ես ստեղծում հին Երևանցու քանդակաշարը, իսկ ես պատասխանում եմ, որ նրանց կերպարներով եմ հիշում իմ երիտասարդության քաղաքը»²:

Խաչատուր Իսկանդարյանի խոսքերն ավելի շոշափելի դարձնելու համար ներկայացնենք «Հուշեր հին Երևանից» շարքում ընդգրկված մի քանի քանդակներ, որոնցից է, օրինակ, «Մինուտչիկ Ալեքսան»-ը (բրոնզ, 1980): Նրան նկարագրելիս Իսկանդարյանը նշում է, որ Մինուտչիկ Ալեքսանը «աղբար» էր, նորեկ հայ: Բարբառով էր խոսում և լուսանկարելիս ասում էր. «Քիչ մը սպասեք, քիչ մը սպասեք», և հետո միայն նկարում էր³: Նա առանձնահատուկ վերաբերմունք ուներ լուսանկարիչների հանդեպ. քաղաքի բուլվարներում զբոսնելիս ներշնչվել էր լուսանկարիչների կերպարներով, քանի որ նրանց ֆոտոխցիկի միջոցով արտացոլվում էր մեր ժամանակի Երևանն իր գողտրիկ անկյուններով:

Աշխատանքում քանդակված է երեք կերպար, և այստեղ հետաքրքիրն այն է, որ ուշադրության կենտրոնում ոչ միայն գլխավոր հերոսն է՝ Մինուտչիկ Ալեքսանը (ըստ երևույթին, Մինուտչիկ Ալեքսան էին անվանում իր՝ «Քիչ մը սպասեք...» արտահայտության համար, որը համազոր է ռուսերեն «минута» բառին. այստեղից էլ Մինուտչիկ անվանումը), այլ նաև լուսանկարվողները, որոնց մոտ մի փոքր կաշկանդվածություն է նկատվում եռոտանի ֆոտոխցիկից: Մինուտչիկ Ալեքսանի կերպարն ստեղծելիս քանդակագործը կարծես լցված է եղել հարազատության զգացումով, քանի որ նրա կերպարը բավականին անկաշկանդ շարժումնով է լուծված: Կարծում ենք, այդ ամենն այն բանի արդյունքն է, որ Իսկանդարյանն ուներ Մինուտչիկ Ալեքսանի արհեստանոցում արված ընտանեկան լուսանկար, որտեղ ինքը փոքր էր՝ հազիվ ութ տարեկան, բայց, փաստորեն, փոքրիկի հուշերում պահպանվել էր Մինուտչիկ Ալեքսանի վառ կերպարը: Քանդակում ծեփը մոտենում է իմպրեսիոնիստ

¹ Տե՛ս **Մկրտչյան Շ.**, Տաղանդը չի ծերանում.../ «Երևան 7 օր», Երևան, 2004, 11-14 սեպտեմբերի, էջ 6:

² **Իսկանդարյան Խ.**, Պատգամ, Երևան, 2014, էջ 11:

³ Տե՛ս **Քաղդազյողյան Մ.**, «Տնավարի» զրույց հին Երևանի մասին/ «Ժամանակ», Երևան, 2007, 25 հոկտեմբեր, էջ 7:

քանդակագործների կիրառած, այսպես կոչված «երփնագրային ծեփվածքին»: Ստեղծագործությունը գերծ է դասական կոմպոզիցիայի համար կիրառվող հատուկ շրջափակ հավաքվածությունից, սեղմ ու պարփակ լուծումից: Այն ստեղծված է կոմպոզիցիոն-տարածական ազատ դասավորությամբ, գեղարվեստական կերպարների խարակտերային՝ սուր ու սրամիտ բնութագրերով: Հեղինակը կարողացել է իրապաշտական եղանակներով կերպավորել Մինուսյիկ Ալեքսանին և լուսանկարվողներին: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ թեև Իսախանյանն ուներ մի շարք հաջողված դիմաքանդակներ, այնուամենայնիվ, աշխատանքում խուսափել է միտքը դեմքի օգնությամբ տեղ հասցնելուց: Հեղինակը Մինուսյիկ Ալեքսանի և լուսանկարվողների հոգեվիճակները պատկերել է պլաստիկ հնարներով, ծավալների ու գծերի լեզվով:

Հաջորդ մանրաքանդակը կոչվում է «Լոպազ» (բրոնզ, 1977): Իսախանյանն իր այս հերոսին նկարագրելիս նշում է. «Լոպազը տեսուչի նման մի բան էր: Նա Ղանթարի բազարբաշին էր, որը տնօրենի պես պաշտոն էր: Շատ լոպազ մարդ էր՝ բարձրահասակ, երկար սապոգներով: Շուկայի տնօրենը օրվա մեջ մի քանի անգամ անվճար մաքրել էր տալիս իր փայլուն սապոգները: Թույլ չէր տալիս, որ կեսօրից հետո ձուկ վաճառեն, թե՛ հնացել է, որ երեկոյան տանի տուն: «Լոպազ»՝ ասում էի մտքումս: Այսօր էլ նա իմ հիշողության մեջ է իր հագուկապով, կեպին միշտ գլխին և փայլեցրած սապոգներով»⁴:

Հետաքրքրություն ցուցաբերելով իմպրեսիոնիստական ուղղության հանդեպ՝ Իսախանյանը, սակայն, այս աշխատանքում կիրառում է պատկերավորման իր հասկացությանը համապատասխանող այն սկզբունքը, որն աչքի է ընկնում որոշակիությամբ: Աշխատելով իր հիշողությամբ՝ նա զարմանալիորեն ճշգրիտ գտել է այն հորինվածքային սխեման և պլաստիկ լուծումը, որը պայմանավորված է բնորդի խառնվածքով: Աշխատանքն աչքի է ընկնում կոմպոզիցիոն սուղ միջոցներով ու հնարներով. քանդակում տիրոջ կերպարով հանդես եկող «Լոպազը» ունի ծիգ կեցվածք, ձեռքերը կոնքին է դրել, աջ ոտքը վեր է բարձրացրել, գլուխը հակված չէ դեպի կոշիկ մաքրողը, թվում է, թե մտքով օտարված է հեռուներում, բայց միևնույն ժամանակ հետևում է կոշիկ մաքրողի աշխատանքին: Քանդակագործը կարողացել է շատ սուր հակադրությամբ ցույց տալ այն իրականությունը, որը, երևի թե, միշտ առկա կլինի. այս քանդակում դա ուժեղի և թույլի, տվյալ դեպքում՝ լոպազի և կոշիկ մաքրողի հակադրությունն է: Աշխատանքում պատկերված «Լոպազը», իսկապես,

⁴ Իսախանյան Խ., Պատգամ, էջ 10:

չափազանց հանդուգն կերպարանք ունի: Խաչատուր Իսկանդարյանը կարողացել է պատկերել մի կերպար, որն ունի հոգեբանական որոշ խորություն, խարակտերային-տիպական գծեր, թեև թվում է, որ արտաքինը գերակշռում է ներքինի համեմատությամբ, բայց լուրջ կերպարում կան որոշակի և անհատական գծեր: Քանդակագործը ստեղծել է ավարտուն, կուռ, կոմպոզիցիոն տեսակետից կառուցիկ, հավաք ու կշռադատված հորինվածք:

Խաչատուր Իսկանդարյանի «Հուշեր հին Երևանից» շարքի մեջ է մտնում նաև «Ծաղկավաճառը» (բրոնզ, 1983): Նա հին Երևանի հայտնի կերպարներից էր և, անշուշտ, անբաժանելի էր քաղաքի դիմագծից: Նրան Իսկանդարյանը քանդակել է մի փոքր կոացած կեցվածքով, նիհար կառուցվածքով, լայն թևքերով: Դասական քանդակին բնորոշ պլաստիկական ներդաշնակ ձևերն օժտվել են գրեթե իմպրեսիոնիստական թարմությամբ: Խաչատուր Իսկանդարյանի կերտած ծաղկավաճառը (հավանաբար նա Կարաբալան էր) առևտրական չէր, այլ այն մարդն էր, ով ծաղիկ էր առաջարկում իր սրտի ջերմությամբ, խոսք ու զրույցով: Քանդակում պատկերված ծաղկավաճառն իր ձախ ձեռքում պահում է ծաղկեփնջերով լի զամբյուղը, իսկ աջով առաջ է պարզում ծաղիկը: Այս մանրաքանդակում հեղինակի ուշադրության կենտրոնում են ոչ միայն ծաղկավաճառը, այլ նաև այն երկու արտիստիկ կանանց կերպարները, որոնց ծաղկավաճառը ծաղիկ է պարզել: Այդ կանանցից մեկը, ում Կարաբալան վարդ է նվիրում, ըստ երևույթին, Արուս Ոսկանյանն է: Նման մտածողության արդյունք է այն հանգամանքը, որ Կարաբալան հաճախ է կարմիր վարդ նվիրել ամեն օր թատրոնից Աբովյան փողոցով ոտքով տուն վերադարձող Հայաստանի ժողովրդական դերասանուհուն, ում նա սիրում էր խենթի պես: Եվ Իսկանդարյանն իր այս մանրաքանդակում չէր կարող շրջանցել այս խենթ սիրահարի ռոմանտիկ պատմությունը: Աշխատանքում նկատվում է զգացմունքների զուսպ, բայց կենդանի դրսևորում: Ծաղկավաճառի և կանանց կերպարներն աչքի են ընկնում ուրվագծային սահուն ռիթմով, գեղարվեստական կերպարի սուբյեկտիվորեն սրված՝ «ոգետեսական» մեկնաբանությամբ: Օգտագործելով իր մտահղացմանը համապատասխանող նյութ՝ բրոնզ, որն օժտված է լույսի անդրադարձման ընդունակությամբ, քանդակագործը կարողացել է աշխատանքին տալ ուրվագծերի հստակություն:

Իսկանդարյանը յուրաքանչյուր քանդակի համար որոնում է կոմպոզիցիոն և պլաստիկական ներդաշնակ ձևեր՝ պայմանավորված բնորդի խառնվածքով: Այդ սկզբունքի կիրառման ցայտուն օրինակներից է «Դանակ-մկրատ սրողները» (բրոնզ, 1984): Խոսելով դանակ-մկրատ սրողների մասին՝ Իսկան-

դարյանը հիշում է, որ նրանք անցնում էին փողոցից փողոց, բակից բակ ու կանչում՝ «դանակ-մկրատ սրե՛մ»...

Այդ մարդիկ նրան պարթևահասակ էին թվում. հուժկու, որ կարողանում էին իրենց ուսերին առնել պտտվող անիվով ծանր սարքը, գալ, հասնել մինչև իրենց դուռը և սրել խոհանոցային դանակները հին ծանոթի պես: Նրանք զրուցասեր էին, սպասված ու սիրված մարդիկ մեր քաղաքում⁵: Նրանց կերպարներում Իսկանդարյանը դրոշմել է ջերմություն, համբերատարություն և իրենց գործի նկատմամբ վարպետություն: Քանդակում Իսկանդարյանը ներկայացրել է երկու կերպար. որոնցից մեկը, հավանաբար, վարպետն է, իսկ մյուսը՝ աշակերտը: Մանրաքանդակում վարպետը կարծես պատկերված լինի սևեռուն հայացքով, որը ուշիուշով հետևում է իր աշակերտի աշխատանքին՝ պատրաստ նրան ճիշտ ուղղություն ցույց տալու: Հետաքրքիրն այն է, որ թեև մենք նշում ենք, որ վարպետն ունի սևեռուն հայացք, բայց աչքերը հստակ հաղորդված չեն: Այստեղ նման տպավորություն է թողնում կերպարի հայացքին ենթարկված գլխի մի փոքր թեքվածքը: Հեղինակն ուշադրությունը կենտրոնացրել է կերպարների բնութագրական շարժումներին, ֆիզիկական ու հոգեկան հաճախ գրեթե անտեսանելի կապին:

Հաճելի տպավորություն է թողնում ուրախությամբ համակված թուփ թափ տվողների քանդակը (բրոնզ, 1986): Իսկանդարյանի հուշերում թուփ թափ տալու օրը Երևանում տոն էր, և դա է պատճառը, որ նրա քանդակում իսկապես մեծ տոն է պատկերված: Այս առիթով Իսկանդարյանը նշում է. «Թուփը կարծես Երևանի ծաղիկը լիներ: Ամեն բակում թթենի կար և տարբեր գույնի էին լինում՝ սև, սպիտակ, կարմիր: Թուփը որ հասնում էր, մեկը բարձրանում էր ծառը, մյուսներն էլ չարսավը պահում էին, թուփը թափ էին տալիս, միասին ուտում: Երևանցու համար թթենին ուրիշ հմայք ուներ: Սպասում էին թթի հասնելուն, որ հարևաններով հավաքվեին, թափ տային, միասին վայելեին քաղցր թուփը»⁶: Վերոնշյալ խոսքերից պարզ է դառնում, որ Իսկանդարյանը պետք է անդրադառնար այս կարևոր «տոնին» ևս: Եվ դա է պատճառը, որ նա քանդակում ներկայացրել է մի իրադարձություն, որը լի է տոնին բնորոշ ուրախությամբ, իրարանցումով ու ջերմությամբ: Քանդակում գլխավոր հերոսը կարծես ծառը լինի, որի շուրջը հավաքվել են մարդիկ: Կերպարները բավական հետաքրքիր լուծումներ են ստացել, քանի որ թվում է, թե պար են գալիս ծառի

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 21:

⁶ **Քաղաքայության Մ.**, «Տնավարի» գրույց հին Երևանի մասին, էջ 7:

շուրջը, բայց միևնույն ժամանակ նրանք կարծես անշարժացած լինեն՝ հայացքներն ուղղած դեպի թթենին ու այն տղան, որը ջանասիրաբար փորձում է ճիշտ թափահարել թթենու ճյուղերը, որպեսզի բերքն առատորեն լցվի սավանի մեջ: Կենսաթրթիռ է այս քանդակախումբը, հարուստ տրամադրությամբ, պատկերվող, միջավայրի բներանգով: Այն կարծես հարևանների համերաշխ կյանքի մի բնորոշ դիպված լինի, դիտված շարժման մեջ, բնական միջավայրում, տիպաժների բազմազան արտահայտություններով, բայց և պատմողական ասպեկտով:

Խաչատուր Իսկանդարյանի «Հուշեր հին Երևանից» շարքի մեջ է ընդգրկված նաև «Երաժիշտները» (բրոնզ, 2008) քանդակը: Պատմելով իր կերտած երաժիշտների մասին՝ նա ասում է. «Պատանությանս տարիներից մինչ այսօր հիշողությանս մեջ են Երևանի Անգլիական այգու կիրակիները: Այդպես էր կոչվում Սունդուկյանի անվան թատրոնի հարակից այգին, որը, ասում էին, իր ճեմուղիներով անգլիական դրոշի նմանություն ուներ: Այդ տարիներին ամեն կիրակի երևանցիները տոնականորեն էին տրամադրվում: Օրն անցկացնում էին քաղաքային այգիներում: Ես սիրում էի հաճախել Անգլիական այգի, որտեղ փայտաշեն էստրադա կար: Բեմահարթակին նվագում էր զինվորական նվագախումբը: Իսկ այգու մյուս ծայրին նվագածուների նստարանն էր: Աշուղներն էին այնտեղ նստում, ժողովուրդը հավաքվում էր նրանց շուրջը, ունկնդրում երգն ու գրույցը: Այսպես բովանդակվում էր աշխատողի կիրակին, մինչև օրն իրիկնանում էր: 2008թ. ես քանդակեցի աշուղների այն եռյակին, ովքեր իրենց երգերով գրավում էին մարդկանց: Մտածել եմ այն տեղադրել Անգլիական այգում: Կրկին կհնչեն ժողովրդական երգն ու նվագը: Իհարկե, տեղադրված ռադիոսարքերի միջոցով ձայնագրություն կլսենք»⁷: Անցնելով քանդակախմբի վերլուծությանը՝ նկատում ենք, որ քանդակված երաժիշտներն իրենց գործի նվիրյալներն են: Այս քանդակում Իսկանդարյանը կարողացել է իրենց գործի մեջ վարպետացած կերպարների պատկերել: Հետաքրքիր է, որ երաժիշտներն ունեն դեմքի մանրակրկիտ մշակում, քանի որ վերը նշված ոչ մի քանդակում դեմքերը չունեին մանրակրկիտ մշակումներ, և դրա պատճառը ոչ թե քանդակագործի ոչ լուրջ կամ հպանցիկ վերաբերմունքն էր իր աշխատանքներին, որտեղ թեման մնում էր չբացահայտված, այլ այդպիսով նա ձգտում էր հասնել իմպրեսիոնիստական առավել թարմ ու կենդանի տպավորության: Իսկ այս քանդակախմբում դեմքերի մանրակրկիտ մշակումը կարծես

⁷ Իսկանդարյան Խ., Պատգամ, էջ 25:

շեշտում է երաժիշտների հաստատուն տեղն ու դերը հասարակության կյանքում: Աշխատանքում քանդակագործը ամեն մեկի դեմքի ու դիրքի մեջ բնավորության յուրահատուկ գծեր է նշմարել: Այսպիսով, «Երաժիշտները» քանդակախմբում նկատում ենք, որ Իսկանդարյանին չի գոհացնում մանրացված ձևը, նա պահանջ է զգում ավելի ավարտված պատկերման, նոր խնդիրներ են առաջանում՝ հասնել մոնումենտալ ձևի, հակիրճախոս լինել: Իսկանդարյանն առաջին անգամ է դնում հակիրճության պահանջը: Սա վարպետի համար մի նոր փորձ էր՝ հասնելու էլ ավելի խոր ու վճռական ընդհանրացման, մոնումենտալ ու դեկորատիվ ձևին տիրանալու համար:

Հանդիսականի վրա հետաքրքիր տպավորություն է թողնում նաև «Թերթի կրպակը» (բրոնզ, 2008) քանդակը: Իսկանդարյանի հուշերում թերթի կրպակները կարևոր դեր են ունեցել մեր կյանքում: Նա գրում է. «Հիշում եմ Երևանի կրպակները, որտեղ թերթ էին վաճառում: Քաղաքում ընդամենը 3-4 թերթի կրպակ կար: Իմ քանդակած թերթի կրպակը Թարխանովսկի (Գնունի) և Աստաֆյան փողոցների հատման անկյունում էր գտնվում: Պատերին հայտարարություններ էին կպցնում: Ես ու հայրիկս էլ կրպակից էինք թերթ գնում: Հերթ էինք կանգնում: Նոր եկողը հարցնում էր. «Վերջն ո՞վ է»: Մեծ հայրենականի տարիներին հաղթական լուրերի սպասող մեր քաղաքացիների համար թերթի կրպակը դարձել էր փողոցի գլխավոր վայրը, որտեղ առավոտյան թերթերի համար հերթեր էին գոյանում: Մարդկանց թվում էր՝ եթե լավ լուրն առաջինն իրենք կարդան ու տարածեն, օրն իրենց համար նշանակալի կդառնար: Նրանք բարի լուրերի սպասողներն էին, նրանք կարողանում էին լավատես դարձնել համաքաղաքացիներին: Այդ մարդիկ նաև մեր քաղաքի ընթերցասեր հասարակությունն էին: Թերթերի տակ միշտ մի գիրք ունեին միասին ընթերցելու կամ միմյանց փոխանցելու համար»⁸: Իսախատուր Իսկանդարյանի նկարագրությունը և «Թերթի կրպակը» մանրաքանդակը դիտելիս իսկապես զգում ես այն մթնոլորտը, որը տիրում էր թերթի կրպակների մոտ: Քանդակում թերթի կրպակը պատկերված է գլանաձև, իսկ կրպակի շուրջը հավաքված մարդիկ կարծես օգնում են, որպեսզի այդ անշուք կրպակը մեծ կարևորություն ձեռք բերի. չէ՞ որ, ըստ Իսկանդարյանի, կրպակում էին գտնվում հաղթական լուրեր և հետաքրքիր նորություններ պարունակող թերթերը: Այստեղ շատ հետաքրքիր է կրպակին կարևորություն հաղորդող ընթերցասեր հասարակության պատկերումը ևս, որը տարիքային տարբեր խմբերից էր բաղկացած:

⁸ Նույն տեղում, էջ 31:

Քանդակում կան թե՛ ծեր, թե՛ երիտասարդ և թե՛ նույնիսկ մանուկ կերպարներ, որոնց, ինչպես նշեցինք, հետաքրքրում էին կյանքի անդորրությունն ապահովող լուրերն ու նոր իրադարձությունները: Ուշադրություն է գրավում փոքրիկի կերպարը, որը թեև աննկատ է, բայց լրացնում է քանդակը: Ըստ երևույթին, մանուկը հենց ինքը՝ հոր հետ կրպակ այցելած հեղինակն է: Էտյուդային ազատ մաներայով ծեփված այս աշխատանքն ունի հորինվածքային հավաք և կուռ կազմություն, որում պատկերված մարդկանց բնորոշ դիրքերը, խոսուն, էքսպրեսիվ շարժումները լի են կենդանի բնականությամբ:

Խաչատուր Իսկանդարյանի «Հուշեր հին Երևանից» քանդակային շարքում տեղ գտած աշխատանքները, ինչպես տեսանք, կատարված են կերպարային ամբողջականությամբ, հումորով, որտեղ ակներև են հեղինակի սուր դիտողականությունը և մանրամասները նկատելու կարողությունը: Իսկանդարյանի քանդակների գեղարվեստական արժեքն այն է, որ նա կարողացել է իր հերոսներին պատկերել պարզ ու բնական ձևով, ինչպես նրանք կան առօրյա կյանքում: Իր այս աշխատանքներում նա ներկայացնում և «հերոսացնում» է հին Երևանի շարքային բնակիչներին, որոնք լուսանկարում ու լուսանկարվում էին, թերթ, ջուր ու ծաղիկ էին վաճառում, ֆայտոն էին վարում, կոշիկ մաքրում, թուփ թափ տալիս, դանակ-մկրատ սրում և այլն: Նրանք անկրկնելի երանգ, «համ ու հոտ» էին տալիս քաղաքին ու ստեղծում ջերմության ու մտերմության յուրահատուկ մթնոլորտ: Եվ, վերջապես, նրանք Իսկանդարյանի «ստեղծած» քաղաքում դարձել էին անփոխարինելի զարդեր, թանկագին մասունքներ՝ հարգանքի և սիրո արժանի հմայիչ կերպարներ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Խաչատուր Իսկանդարյանը, թերևս, միակ քանդակագործն է, ով ստեղծել է հին Երևանին նվիրված մանրաքանդակների շարք: Պլաստիկական տարբեր եղանակներով կատարված այդ գործերը ոչ միայն խոր բովանդակություն ունեն, այլև ազգագրական արժեքներ են: «Մինուտչիկ Ալեքսանը», «Ծաղկավաճառը», «Դանակ-մկրատ սրողը», «Թուփ թափ տվողները», «Երվանդի ֆայտոնը», «Թերթի կրպակը», «Երածիշտները» այդ շարքի լավագույն աշխատանքներից են:

Քանալի բառեր – Խաչատուր Իսկանդարյան, քանդակագործ, հին Երևան, շարք:

**СЕРИЯ СКУЛЬПТУР ХАЧАТУРА ИСКАНДАРЯНА "ВОСПОМИНАНИЯ О
СТАРОМ ЕРЕВАНЕ"**

Наре НАДАРЯН

Хачатур Искандарян – единственный из скульпторов, кто посвятил старому Еревану серию произведений. Выполненные с использованием различных приемов пластики, эти работы не только обладают глубоким смыслом и очарованием, но и заключают в себе этнографическую информацию. Лучшими работами в этой серии являются "Минутчик Алексан", "Продавец цветов", "Точильщик ножей и ножниц", "Трясущие шелковицу", "Фазтон Ерванда", "Газетный киоск", "Музыканты".

Ключевые слова – Хачатур Искандарян, скульптор, старый Ереван, серия.

**"MEMORIES OF OLD YEREVAN" KHACHATUR ISKANDARYAN'S
SCULPTURAL SERIES**

NARE NADARYAN

Khachatur Iskandaryan is the only sculptor, who has created a series of small-scale sculptures dedicated to age-old Yerevan. These small-scale plastic sculptures accomplished in different plastic ways have deep meaning, charm, and are of ethnic value as well. "Minutchik Alexan", "Florist", "Grinder knives and scissors", "Shaking mulberry", "Shay Yervand", "Newsstand", "Musicians" are among the best in this series.

Key words – Khachatur Iskandaryan, sculptor, old Yerevan, series.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ Հայարփի – Հայ հոգիի թեման Հովհաննես Թումանյանի և Վահան Թեքեյանի ստեղծագործություններում	3
--	---

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱԴԱԼՅԱՆ Սաթենիկ – Բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների կառուցվածքային-գործառական առանձնահատկությունները՝ ըստ Նար-Դոսի արձակի լեզվի	11
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Կարինե – Գերմաներենի եղանակավորող JA մասնիկի իմաստագործառական առանձնահատկությունները և նրանց արտահայտման միջոցները հայերենում	25
ՊԵՏՐՈՍՅԱՆ Հասմիկ – Բնության երևույթ, առարկա անվանող բաղադրիչներով բայական դարձվածային միավորները հայերենում, ռուսերենում և անգլերենում	39
ՍԱԶԱԴԴԻ Սեյդե Շոիրե – Համադանի հին բարբառի որոշ բառերի ուսումնասիրությունը	48

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ Շավարշ – Դիտորդական առաքելությունների էվոլյուցիան և դրա ազդեցությունն ընտրությունների լուսաբանման վրա	57
ՅԱՆԻԿՅԱՆ Յանա – Մեդիա-չափումների գործընթացի իրականացման հիմնական հասկացությունները	73

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՆՋՈՐՅԱՆ Հայկ – Արդյունաբերական դարաշրջանի սկզբնավորումը. հասարակական կարգի արդիականացման ծրագրերը	81
ՍԻՄՈՆՅԱՆ Հասմիկ – Արևմտահայ քաղաքական մտքի դիրքորոշումը Հայաստանի Առաջին հանրապետության գոյության նկատմամբ	91
ՎԱՍԻԼՅԱՆ Սուրեն – ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1988թ. հուլիսի 18-ի նիստի որոշումը	103

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Մարիաննա – Սոցիալական կապիտալը էթնիկության համատեքստում (մոսկվայաբնակ հայ գործարարների օրինակով)	114
ՊՈՂՈՍՅԱՆ Վարդգես – Քաղաքակրթական մատրիցը որպես հասարակական զարգացման դոմինանտ	122

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՍԼԱՆՅԱՆ Աշոտ, ԽԱՉԱՏՐՅԱՆ Գագիկ – Կրոնական ահաբեկչություն.	
--	--

առասպել, թե՛ իրականություն	131
ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ Ստեփան – «Քաղաքական մշակույթ» հասկացությունը և հիմնական սահմանումները	142
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ	
ԱՄԻՐՅԱՆ Գայանե – Հասարակության հոգևոր կյանքի դրսևորման օրինա- չափությունները	152
ԲՈՅԿՈՍտանիսլավ, ՄԱԳՈՄԵԴՈՎԱ Անիսատ – Կոնստանդնուպոլսի կոնսու- լտների գաղափարախոսության և պրակտիկայի հաղթահարումը գլոբա- լացման պայմաններում	161
ՍԱՀԱԿՅԱՆ Ռազմիկ – Մարդկային պատմության և սոցիալական իրակա- նության վերլուծության տեսական հայեցակետերը	186
ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	
ԱՍԱՏՐՅԱՆ Աննա – Մեծ հայրենականը և հայ կոմպոզիտորները	198
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Նատալյա – Ս. Բալասանյանի «Շաքունթալան» հնդեվ- րոպական մշակույթային երկխոսության համատեքստում	211
ՄԱՐԳԱՐՅԱՆ Անահիտ – «Անհատականությունների կենդանի պատկերա- սրահ». Գագիկ Հովունցի «Տասը պիես-մոնոգրամ» դաշնամուրային շարքը	228
ՄԵԼԻՔՅԱՆ Լիլիթ – Բնապահպանական դիզայնը որպես արդիական ուղ- ղություն	252
ՆԱԴԱՐՅԱՆ Նարե – Խաչատուր Իսկանդարյանի «Հուշեր հին Երևանից» քանդակաշարը	259

СОДЕРЖАНИЕ

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

- ХАЧАТРЯН Айарпи** – Тема души армянина в произведениях Ваана Текеяна и Ованнеса Туманяна 3

ЯЗЫКОЗНАНИЕ

- БАДАЛЯН Сатеник** – Структурно-функциональные особенности многокомпонентных сложных предложений в прозе Нар-Доса 11
- ОГАНЕСЯН Каринэ** – Семантико-функциональные особенности модальной частицы и возможные варианты ее перевода 25
- ПЕТРОСЯН Асмик** – Глагольные фразеологические единицы с компонентами, обозначающими явления и объекты природы в армянском, русском и английском языках 39
- САДЖАДДИ Сейеде Шохре** – Исследование некоторых слов древнего говора Хамадана 48

ЖУРНАЛИСТИКА

- ГЕВОРГЯН Шаварш** – Эволюция наблюдательских миссий и их влияние на освещение выборов 57
- ЯНИКЯН ЯНА** – Основные понятия реализации процессов медиа-измерения .. 73

ИСТОРИОГРАФИЯ

- КОНДЖОРЯН Гайк** – Зарождение индустриальной эры: проект модернизации общественного строя 81
- СИМОНЯН Асмик** – Позиция западноармянской политической мысли по отношению к существованию Первой республики Армении 91
- ВАСИЛЯН Сурен** – Решение Президиума Верховного Совета СССР, принятое 18 июля 1988 года 103

СОЦИОЛОГИЯ

- АБРААМЯН Марианна** – Социальный капитал в контексте этничности (на примере проживающих в Москве армянских бизнесменов) 114
- ПОГОСЯН Вардгес** – Цивилизационная матрица как доминанта общественного развития 122

ПОЛИТОЛОГИЯ

- АСЛАНЯН Ашот, ХАЧАТРЯН Гагик** – Религиозный терроризм: миф или реальность? 131
- АСАН-ДЖАЛАЛЯН Степан** – Понятие политической культуры и ее основные определения 142

ФИЛОСОФИЯ

АМИРЯН Гаяне – Закономерности проявления духовной жизни общества	151
БОЙКО Станислав, МАГОМЕДОВА Анисат – Преодоление идеологии и практики консюмеризма в условиях глобализации	161
СААКЯН Размик – Теоретические концепции анализа человеческой истории и социальной реальности	186

ИСКУССТВОВЗНАНИЕ

АСАТРЯН Анна – Великая отечественная и армянские композиторы	198
АРУТЮНЯН Наталья – «Шакунтала» С.Баласаняна в контексте индо-европейского культурного диалога	211
МАРГАРЯН Анаит – “Живая галерея индивидуальностей”: фортепьянный цикл “Десять пьес-монограмм” Гагика Овунца	228
МЕЛИКЯН Лилит – Экологический дизайн как современное направление	252
НАДАРЯН Наре – Серия скульптур Хачатура Искандаряна "Воспоминания о старом Ереване"	259

ԿԱՆԹԵՂ
Գիտական հոդվածներ
КАНТЕХ
Научные труды
KANTEGH
Articles

Խմբագիր՝ Ազատուհի Սահակյան
Ռուսերեն տեքստերի խմբագիր՝ Սվետլանա Մարդանյան
Անգլերեն տեքստերի խմբագիր՝ Սիրարփի Կոյունջյան
Շապիկի ձևավորումը՝ Վարդան Գաբրիելյանի
Համակարգչային էջադրումը՝ Վերա Պապյանի

Խմբագրության հասցեն՝ Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պող. 24/4,
հեռ. 58-18-51, հեռապատճեն՝ 58-11-09

Адрес редакции: Ереван 0019, пр. Маршала Баграмяна 24/4,
тел. 58-18-51, факс 58-11-09

Address: 24/4 Marshal Baghramian av., Yerevan 0019, Armenia,
tel. 58-18-51, fax 58-11-09

Էլ. փոստ՝ instart@sci.am
Эл. почта: instart@sci.am
E-mail: instart@sci.am

Պաշտոնական կայքէջը՝ <http://Kantegh.am>
Официальный сайт: <http://Kantegh.am>
<http://Kantegh.am>



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում
Ֆորմատ՝ 60x84 1/16, թուղթ՝ օֆսեթ, տպաքանակ՝ 130:
Երևան, Սայաթ-Նովա 24 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 1) 54.49.82, 53 65 88, 62.38.63 (տպարան)
Էլ. փոստ՝ info@asoghik.am